

Գիրքը նվիրում եմ ծնողներիս՝
Հանրապետության վաստակավոր ուսուցիչ,
սպարմագեր-իրավագեր
Հարություն Գաբրիելի Պետրոսյանի
և մանկավարժ
Խազալ Հովհաննեսի Հարությունյանի
սպաժառ հիշատակին

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГЕГАМ ПЕТРОСЯН

**ЗАКАВКАЗЬЕ В
ДИПЛОМАТИЧЕСКИХ
ПЕРИПЕТИЯХ: СТАНОВЛЕНИЕ
АРМЯНСКОЙ НЕЗАВИСИМОЙ
ГОСУДАРСТВЕННОСТИ
(февраль 1917 - июнь 1918 г.г.)**

**Ереван
Издательство ЕГУ
2018**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀՈՐՉԱՆՈՒՏՈՒՄ. ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ
(1917 թ. ՓԵՏՐՎԱՐ – 1918 թ. ՀՈՒՆԻՍ)**

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2018

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Պ 505

**Հրապարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
գիտական խորհուրդը**

Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս **Ա. Ա. Մելքոնյան**
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., արտակարգ և
լիազոր դեսպան **Վ. Ա. Բալթուրոյան**
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., արտակարգ և
լիազոր դեսպան **Ա. Զ. Կիրակոսյան**
քաղաք. գիտ. դոկտ., պրոֆ. **Ա. Փ. Ենգոյան**
բանասիր. գիտ. թեկնածու,
դոցենտ **Ա. Վ. Սաֆարյան**

Խմբագիր՝ Լ. Ավետիսյան

Պեպրոսյան Գ. Հ.

Պ 505 Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ
պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս) /
Գ. Հ. Պետրոսյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2018, 268 էջ + 12 ներդիր:

Գրքում քննության են առնվում Տրապիզոնի, Բաթումի թուրք-անդրկովկասյան և մաս-
նավորապես հայ-թուրքական դիվանագիտական առաջին և երկրորդ բանակցային ողջ
գործընթացները Առաջին աշխարհամարտի տարիներին տարածաշրջանում աշխարհաքա-
ղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական
շահերի բախման բարդագույն պայմանների համատեքստում: Լուսաբանվում են աշխար-
հաքաղաքական բարդ պայմաններում Հայոց առաջին անկախ պետության կերտման
դժվարին ճանապարհը և Օսմանյան Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչ-
ման շարժառիթներն ու նպատակները:

Նախատեսված է միջազգայնագետների, դիվանագետների, պատմաբանների, քա-
ղաքագետների և ընթերցող լայն շրջանների համար: Կարող է օգտակար լինել միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներին:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2335-0

© ԵՊՀ հրատ., 2018

© Պետրոսյան Գ., 2018

Իմաստութիւնը ոչ յուսալքման, ոչ էլ աջ ու չափս ամբաստանելու մէջ է: Ընկերային կեանքի փոթորկայոյզ վայրկեաններին մեծագոյն առաքինութիւնը մտքի ու գործի հաւասարակշռութիւնը պահպանելն է: Ոչ լալ պէտք է, ոչ զայրանալ, այլ՝ հասկանալ: Հասկանալուց յետոյ միայն կարելի է ուղղել անցեալի սխալները եւ գծել ապագայ կեանքի ճշմարիտ ճանապարհը: Հասկանա՛լ, - իսկ հասկանալու համար անհրաժեշտ է տեղեակ լինել իսկական փաստերին եւ ազատ մնալ խուժանափարական յոխորտանքներից ու քեթեւ, չիմնատրուած եզրակացութիւններից:

Ս. Վրացեան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2018 թվականին հայ ժողովուրդը նշում է աշխարհաքաղաքական զարգացումների և վայրիվերումների բարդագույն պայմաններում ծնունդ առած Հայաստանի առաջին հանրապետության հարյուրամյա հոբելյանը, որը մեծ խորհուրդ ունի: Այն ձեռք բերվեց ազգային զարթոնքի, ժողովրդական-ազատագրական պայքարի, ազգամիջյան լարված հարաբերությունների, ինչպես նաև դիվանագիտական և ռազմական դիմակայությունների պայմաններում:

Չափազանց կարևոր է 1917 թ. Փետրվարյան հեղափոխության և Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ 1918 թ. մայիսի վերջին, երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ստեղծման գիտական ուսումնասիրությունը:

Այդ հիմնահարցի վերաբերյալ հրատարակվել են հայ և օտար հեղինակների բազմաթիվ աշխատություններ: Ըստ էության, այդ կարևորագույն ժամանակահատվածի վերաբերյալ գրեթե չկա որևէ դրվագ, որ դուրս մնացած լինի պատմաբանների ուշադրությունից: Սակայն որքան էլ արտառոց թվա, առ այսօր հրապարակի վրա չկա հայ միջազգայնագետ պատմաբանների կողմից կատարված մի հատուկ ուսումնասիրություն, որը խորքային, համապարփակ ու նորովի ներկայացներ Հայաստանը ռազմական և դիվանագիտական բանակցային գործընթացների մեջ ներքաշելու ու Հայոց անկախություն «շնորհելու» Օսմանյան կայսրության շարժառիթները և հեռահար նպատակներն ու դրանցից բխող կնճռոտ հարցերը: Մինչդեռ

այդ հիմնախնդրի վերհանումը ունի արդիական մեծ հնչեղություն:

Հիմնահարցը քննության է առնվում Առաջին աշխարհամարտի տարիներին տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման բարդագույն պայմանների համատեքստում: Աշխատությունում վեր են հանվում Տրապիզոնի, Բաթումի՝ թուրք-անդրկովկասյան և մասնավորապես հայ-թուրքական դիվանագիտական առաջին և երկրորդ բանակցային ողջ գործընթացները, Օսմանյան Թուրքիայի կողմից ռազմաքաղաքական մարտավարության և դիվանագիտական փակուղիների պայմաններում Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի և նրա արտաքին հարաբերությունների բաժնի վիթխարի ջանքերը: Հայտնի իրողություն էր, որ տարածաշրջանում ստեղծված դժվարին մարտահրավերների պայմաններում հայ դիվանագիտությունն ունեցել է խարխափումներ, որոշ սխալներ և այլն, որոնք այսօր կարիք ունեն մորովի և հանգամանալից վերլուծության ու մեկնաբանության, որն անկասկած քաղաքական ու գիտական խիստ կարևոր նշանակություն ունի հատկապես անցյալի քաղաքական դասերը հաշվի առնելու և դրանք չկրկնելու առումով:

Աշխատությունում հանգամանալից լուսաբանվում է աշխարհաքաղաքական բարդ պայմաններում Հայոց առաջին անկախ պետության կերտման դժվարին ճանապարհը: Ներկայացվում են Օսմանյան Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները:

Հեղինակ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

1. Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծումը (1917 թ. փետրվար-հոկտեմբեր)

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը ցնցեց ոչ միայն բուն Ռուսաստանը, այլև անգամ հսկայածավալ կայսրության հեռավոր ծայրամասերը, այդ թվում՝ Կովկասը:

Ողջ Հայաստանով մեկ նույնպես ծայր առան ինքնաբերի, ինչպես նաև կազմակերպված ցույցեր, քայլերքեր և այլն:

Հետհեղափոխական ժամանակաշրջանում տեղի ունեցան հայ ժողովրդի համար շրջափուլային, բախտորոշ նշանակության պատմական կարևորագույն իրադարձություններ: Գլխավորը, իհարկե, 1918 թ. մայիսի վերջին հայկական անկախ պետականության վերականգնումն էր, որը ձեռք բերվեց ազգային զարթոնքի, ժողովրդական և ազատագրական պայքարի, ազգամիջյան լարված հարաբերությունների, ինչպես նաև դիվանագիտական և ռազմական դիմակայությունների պայմաններում:

Փետրվարյան հեղափոխության հետևանքով Ռուսաստանում իշխանությունն անցավ Պետական դումայի ժամանակավոր կոմիտեին, իսկ մարտի 3-ին վերջինիս փոխարեն ստեղծվեցին ժամանակավոր կառավարություն և բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներ, որով և երկրում հաստատվեց երկիշխանություն: Մարտի 7-ին Կովկասի փոխարքան և կենտրոնական իշխանության մյուս բոլոր ներկայացուցիչները, չսպասելով երկրամասի կարգավիճակի մասին ժամանակավոր կառավարության որևէ որոշման, հեռացան Թիֆլիսից: Մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը

Կովկասի փոխարքայության փոխարեն ստեղծեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ), որի կազմի մեջ ընդգրկվեցին Պետական դումայի հինգ անդրկովկասցի անդամներ (Վ. Խառամով, Մ. Պապաջանյան, Պ. Պերկերզև, Մ. Ջաֆարով և Կ. Աբաշիձե)*: Մարտի 18-ին հասնելով Թիֆլիս՝ իր գործունեությունը սկսեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն, որն օժտված էր գերագույն իշխանության իրավասությամբ¹: Նրան լիազորված էր երկրամասի հետագա գործունեությունը կազմակերպելու, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով գրավված շրջաններում քաղաքացիական վարչություն կազմելու ու կառավարելու գործը: Նույն օրը՝ մարտի 18-ին, ՕԶԱԿՈՄ-ի հատուկ հրահանգով հանձնարարվում էր տեղերում ստեղծել իշխանության նոր մարմիններ՝ գործադիր կոմիտեներ, որոնց վրա էր դրվում հողային, աշխատանքային, պարենավորման և այլ հարցերի կազմակերպումը²: Սակայն Անդրկովկասյան հատուկ կոմիտեին հաջողվեց իրականացնել այս ծրագրերի միայն մի մասը: Դրա պատճառը երկրամասում շարունակ խորացող քաղաքական, տնտեսական, սոցիալական ու կառավարման ճգնաժամն էր: Անդրկովկասյան հատուկ կոմիտեն չկարողացավ կարգավորել նաև տարածաշրջանում ազգամիջյան հարաբերությունների հարցերը, որոնք առանձնակի սրության էին հասել դեռ ցարիզ-

* Ժամանակավոր կառավարությունը, ընդառաջելով վրաց մենշևիկների ցանկությանը, որոշ ժամանակ անց Պ. Պերկերզևի փոխարեն Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կոմիսար նշանակեց Ա. Չխենկելուն:

¹ Տե՛ս Վ. Հ. Մելիքյան, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 61:

² Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 313, ց. 1, գ. 1, ք. 70:

մի օրոք և գնալով սպառնում էին վերաճել ազգամիջյան ընդհարման: Փետրվարյան հեղափոխությունը «Կովկասը կը մատնէր ազգամիջեան խառնարանի մը,- գրում է Կ. Սասունին:- Յեղափոխութեան եւ համամարդկային իտէալներու անուան տակ, ազգային պայքարն էր որ կը մղուէր: Վրացին, թուրք-թաթարը եւ հայը կովկասեան բեմի վրա իրենց տեղն ու դիրքը կորոշէին»³:

Երկրամասն ուներ չափազանց խայտաբղետ ազգային կազմ, հասարակական-քաղաքական բազմապիսի ուժեր, որոնց շահերը ոչ միայն խիստ հակասական էին, այլև երբեմն թշնամական: Ժամանակավոր կառավարությունը, հաշվի առնելով այս հանգամանքը, որոշեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն կազմել ազգային սկզբունքով: Այսինքն՝ ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում ստեղծում էր իր տեղական մարմինը: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Ինքը, կեդրոնական իշխանութիւնը հաշուի էր առած տեղական ազգութեանց շահերը եւ ջանացած էր չափով մը գոհացում տալ անոնց»⁴: Սակայն Անդրկովկասյան հատուկ կոմիտեն իր կառավարման ուր ամիսների ընթացքում երկրամասում չկարողացավ կայուն ու վերահսկելի իրավիճակ ստեղծել: Ավելին՝ տեղերում կառավարման նոր մարմիններ ստեղծելու նրա անհաջող ու անվճռական փորձերն էլ ավելի նպաստեցին անիշխանության տարածմանն ու հաստատմանը. «Անդրկովկասին վե-

³ Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պեյրոս, 1966, էջ 141-142:

⁴ Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 5:

րաբերող քիչ թե շատ կարելուր նշանակութիւն ունեցող ոչ մէկ հարց չէր կարող լուծում ստանալ... ազգային հարցի լուծումը իր ամբողջութեան մեջ յետաձգուած էր մինչեւ Սահմանադիր ժողով»⁵: Իշխանության հին կառույցների վերացումը և նորերի ստեղծումն առաջ բերեցին խառնաշփոթ ու խիստ անկայուն վիճակ, և Ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ կոմիտեն շատ շուտով զրկվեց հեղինակությունից և հեղափոխությունը ղեկավարելու ունակությունից:

Շարունակ վատթարացող քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանները և անիշխանության հասած կառավարման ճգնաժամը անհրաժեշտություն առաջացրին տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով 1917 թ. վերջերին ստեղծել նաև երրորդ իշխանությունը (բազմիշխանություն)՝ հանձնա հայոց, վրաց և թաթարների Ազգային խորհուրդների: Լեոն այդ առնչությամբ գրում է. «Դրանք իսկապես ազգային կառավարություններ էյին, յուրացնում էյին գերագույն վարչական գործառնություններ. տուրքեր նշանակել, գորաժողով հայտարարել և այլն: Այդ ազգային կառավարություններով իրապես սկիզբ էր դրվում յերկրի բաժանման յերեք ազգությունների մեջ, այնպես վոր կենտրոնական կովկասյան կառավարությունը ստիպված էր լինում շատ անգամ այդ ազգային անջատականությունների ցանկություններին և վորոշումներին հարմարվել»⁶:

⁵ «Ալեմ» ամսագիր, Փարիզ, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 72:

⁶ Լեո, Անցյալից, Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց. – Հայ հեղափոխական դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. – Հեղափոխություն, Թիֆլիս, 1925, էջ 363:

Քաղաքական բարդ ու լարված պայմաններում ձևավորված Ազգային խորհուրդները, ի հակակշիռ իշխանության մյուս մարմինների, աստիճանաբար ձեռք բերեցին լայն ժողովրդականություն և ազդեցություն ոչ միայն Անդրկովկասում, այլև նրա սահմաններից դուրս: Դրանցից առանձնապես եռանդուն գործունեություն ծավալեց Հայոց ազգային (կենտրոնական)* խորհուրդը**, որը ձևավորվեց 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում գումարված արևելահայերի համախորհրդակցության (համագումարի) ժամանակ⁷: Վերջինիս մասնակցում էին հայ հասարակության գրեթե բոլոր խավերը՝ քաղաքական կուսակցությունների, մտավորականության, հոգևոր դասի ներկայացուցիչները: Հոկտեմբերի 2-ի նիստը նախագահող Հ. Քաջազնունին հրապարակում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (բոլշևիկների) Թիֆլիսի կոմիտեի (քարտուղար՝ Ա. Միկոյան) հայտարարությունը. «Թե այդ կուսակցությունը (բոլշևիկյան-Գ. Պ.), քե ինչպես մաս Թիֆլիսի կոմիտեն, մաս Շուշվա և

* Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը՝ որպես գերագույն գործադիր մարմին, հրահանգներով և ցուցումներով համակարգում էր տարածաշրջանի, Ռուսաստանի խորհրդային և հակախորհրդային պետական կազմավորումների, Ուկրաինայի և այլ երկրների հայաշատ քաղաքների Հայոց ազգային խորհուրդների գործունեությունը:

** Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նստավայրը հայաշատ Թիֆլիսում էր: Այն արևելահայերի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական խոշոր կենտրոն էր: Այստեղ էին կենտրոնացել արևելահայ մտավորականության սերունդը և տարածաշրջանի հայ քաղաքական գործիչների հիմնական մասը:

⁷ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ.՝ Ա. Վիրաբյան.- Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2004, էջ 159-225:

Ալեքսանդրապոլի իրենց կազմակերպությունները բոյկոտ են հայտարարել ազգային համախորհրդին և կարգադրել, որ իրենց անդամները նրան չմասնակցեն»⁸: Բոլշևիկյան կոմիտեն հրավիրվելիք հայկական ազգային խորհրդակցության վերաբերյալ սեպտեմբերի 19-ի իր բանաձևում նշում է. «.... եռանդուն կերպով բողոքել այդ դավաճանության դեմ, նշանակել այն որպես նացիոնալիստական, հակաբանվորական և հակառուլյուցիոն»⁹:

Համահավաքը քննարկեց Ժամանակավոր կառավարությանը առնչվող և հայ ժողովրդի առջև ծառացած էական մի շարք հարցեր, որոնք հրատապ էին տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակում: Ռուսական բանակը ազատագրել էր Արևմտյան Հայաստանը, ռուսական պետական կառավարման համակարգը մուտք էր գործել ազատագրված հայկական նահանգներ, և, բացի այդ, հետփետրվարյան յոթ ամիսների ընթացքում երկրում խորացող ռազմական, քաղաքական ու տնտեսական ճգնաժամի հետևանքով հասունանում էր հեղափոխության պոռթկման նոր վտանգ:

Համախորհրդակցությունը լսեց և քննարկեց քաղաքական, տնտեսական, վարչական կառավարման, ազգամիջյան հարաբերությունների, փախստականների և պարենավորման, իշխանության և ռազմաճակատի ամրապնդման, դպրոցների ազգայնացման և այլ հարցեր¹⁰: Այնտեղ ներկայացվեցին նաև

⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 21, ք. 8:

⁹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 270:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, ք. 1:

Հայոց ազգային բյուրոյի* հաշվետվությունը (գեկուցողներ՝ Ա. Խատիսյան, Ն. Աղբալյան), այդ մարմնի ղեկավարած կամավորական շարժումը, հայկական կոտորածների շարժառիթները, արևմտահայերի նկատմամբ վերաբերմունքը, ռուսական կողմնորոշումը ընդունելու իրարամերժ մոտեցումները, Հայաստանի ինքնավարության հարցում ցարական Ռուսաստանի կեղծ խոստումները, անհաջողության և ձախողումների պատճառները և ապագա անելիքները Փետրվարյան հեղափոխությունից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակում¹¹։

Ա. Խաչատրյանը, անդրադառնալով Ազգային բյուրոյի գործունեության կամավորական շարժման հարցի քննարկմանը, խիստ անաչառ գնահատական է տալիս. «Թէ Թուրքիայի քաղաքականութեան և հայերու կոտորածի վերաբերեալ արտայայտութիւնները՝ իբր թէ կովկասահայերու կամաւորական

* Հայոց ազգային բյուրոն ստեղծվել է 1912 թ. Թիֆլիսում, Ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների համագումար-խորհրդակցությունում։ Նրա կազմում ընդգրկվել են հայ ազգային գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների, մտավորականների և հոգևոր դասի ներկայացուցիչներ։ Նպատակն էր աջակցություն ցույց տալ Ամենայն հայոց կաթողիկոսին Հայկական հարցի լուծումը պաշտպանելու գործում և սերտ կապ պահպանել արտասահմանյան ազգային պատվիրակությունների և Կ.Պոլսի պատրիարքարանի հետ։ Ազգային բյուրոն հիշյալ բոլոր հիմնարկությունների հետ աջակցում էր հայնպաստ քարոզչությանը թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում։ Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի կազմում կազմակերպել է հայ կամավորական զինված ջոկատներ՝ Օսմանյան կայսրության դեմ կռվելու համար։ Լայն գործունեություն է ծավալել նաև Թուրքիայի կողմից ցեղասպան քաղաքականության հետևանքով հայրենագրված հայ փախստականներին օրհանով, սննդամթերքով և այլ անհրաժեշտ պարագաներով ապահովելու գործում։ 1917 թ. հոկտեմբերի 13-ին Թիֆլիսում իրավիճակը համախորհրդակցության վերջին նիստով Ազգային բյուրոյի գործունեությունը դադարեցվեց։

¹¹ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 4, 214-223։

շարժումն է պատճառը այս ահաուր կոտորածին և այլն, միանգամայն գուրկ են պատմական հիմքէ և կը հաստատեն այսպէս մտածողներու տգիտութիւնը թուրք ծրագրի և դիւանագիտութեան նկատմամբ»¹²:

Համախորհրդակցությունը քննարկեց նաև «ազգամիջյան և ինքնորոշման» հարցերը: Իրողություն է, որ համախորհրդակցությունը պաշտպանում էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությունը և Անդրկովկասն ու Հայաստանը ընդունում էր մի ընդհանուր պետության սահմաններում, սակայն ակնարկում էր նաև ինքնավարություն և ազգային պետականություն ունենալու անհրաժեշտության մասին, ազգամիջյան հարցի լուծումը տեսնում էր ազգերի ինքնորոշման իրավունքի կենսագործման մեջ: Համահավաքում «ազգամիջյան և ինքնորոշման մասին» բանաձևում ասվում էր. «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետականության հիմունքներով և սկզբունքներով, անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»¹³: Համախորհրդակցության նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ «պետականության հիմունքներն ու սկզբունքները» կարող էին և պետք է լինեին ինքնավարության որևէ ձև կամ կարգավիճակ: Ընդ որում, հարցի լուծումն ակնկալվում էր միայն Ռուսաստանի սահմանադիր ժողով հրավիրելուց հետո այդտեղ մշակված և ընդունված որոշումների հիման վրա: Հարցի նախապատրաստության ուղղությամբ

¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644, ք. 11:

¹³ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 211:

կարևոր աշխատանք էր կատարվել 1917 թ. ամռանը Պետրոգրադում կայացած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցել էին նաև Ալ. Խատիսյանը (Խատիսով) և Ա. Շահխաբունյանը (Շահխատունի): Վերջինս առաջարկության նախագիծ էր մշակել Անդրկովկասում տեղական ինքնակառավարման (գեմատվոյին) համակարգ հաստատելու և երկրամասը նոր սահմանաբաժանման ենթարկելու մասին: Փաստորեն, համախորհրդակցությունը հայոց մեջ համոզմունք ձևավորեց մտածելու նաև հայկական անկախ պետականության անհրաժեշտության մասին:

Անշուշտ, Հայոց ազգային բյուրոյի գործունեության պատմությունը առանձին ուսումնասիրության նյութ է: Ընդամենը նշենք, որ համախորհրդակցությունում այդ հարցերի՝ անկաշկանդ ու անկեղծ մթնոլորտում կայացած քննարկումները և քննադատությունները վեր հանեցին անցյալի սխալները՝ պատմական դասեր քաղելով, որի շնորհիվ նոր իրադրության պայմաններում կյանքի կոչվեց համազգային միասնական պատասխանատու մարմին՝ ավելի կայուն ու զերծ հավակնությունների պառակտիչ ախտանիշից:

Այսպիսով, պատմական դեպքերի բերումով համախորհրդակցությունը իրականացրեց իր հիմնական և գլխավոր նպատակը, այն է՝ ստեղծեց համազգային միասնական պատասխանատու մարմին՝ հանձին Հայոց ազգային խորհրդի, որը փորձելու էր լուծել հայության առջև ծառացած բազմազան և բազմաբնույթ խնդիրները: Դրանով դադարեց Հայոց ազգային բյուրոյի գործունեությունը: Համախորհրդակցության վերջին նիստում հոկտեմբերի 13-ի երեկոյան միահամուռ հա-

մաճայնությամբ առաջարկվում է ընտրել ազգային հարցերի կառավարման երկու մարմին՝ Ազգային ժողով և Ազգային խորհուրդ: Ազգային ժողովը լինելու էր գերագույն օրենսդիր մարմին Անդրկովկասի և հայկական գավառների համար: Այն բաղկացած էր 35 անդամներից, որոնցից 25-ը առաջադրված էին չորս կուսակցություններից, հինգը՝ Արևմտահայ ազգային խորհրդից, մեկական թեկնածու՝ Ամենայն հայոց կաթողիկոսի, Պետրոգրադի, Մոսկվայի, Նոր Նախիջևանի (ներառյալ Ռոստովի) և Բաքվի հայկական կոմիտեների կողմից¹⁴: Սակայն պատմական դեպքերի բերումով Հայոց ազգային ժողով գումարվեց միայն մեկ անգամ՝ 1918 թ. ապրիլի 15-ից 18-ը Թիֆլիսում¹⁵: Նիստում քննարկվեց Անդրկովկասի անկախությունից (ապրիլի 22) հետո Սեյմի հայ խմբակցության անդամների և Հայոց ազգային խորհրդի փոխհարաբերությունների հարցը:

Հայոց ազգային խորհուրդը Ազգային ժողովի գերագույն գործադիր մարմինն էր, որն ուղենշելու էր արևելահայոց քաղաքականությունը թե՛ Անդրկովկասում և թե՛ ամբողջ պետության մեջ: Այն բաղկացած էր 15 անդամներից (մախսագահ՝ Ա. Ահարոնյան, քարտուղար՝ Ն. Աղբալյան), որոնցից 12-ը կուսակցությունների ներկայացուցիչներ էին, 3-ը՝ անկուսակցականներ¹⁶: Ինչպես նշվեց, իրադարձությունների բերումով Ազգային ժողով գումարվեց ընդամենը մեկ անգամ, և Հայոց ազգային խորհուրդը իր ձեռքում կենտրոնացրեց հայկական քաղաքական շահերի ներկայացուցչության և ազգային հարցերի իրավասության լիազորությունները: Այս խորհուրդը, փաստո-

¹⁴ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ(1912-1920 թթ.), էջ 223-224:

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 1-22:

¹⁶ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ(1912-1920 թթ.), էջ 224:

րեն, Անդրկովկասում իշխանության միակ մարմինն էր՝ օժտված լայն լիազորություններով: Իր գործառույթները իրականացնելու նպատակով Հայոց ազգային խորհուրդը ձևավորեց տարբեր բնագավառների՝ տնտեսական, ֆինանսական, զինվորական, գաղթականական, արտաքին հարաբերությունների և այլ բաժիններ: Արտաքին հարաբերությունների բաժինը ղեկավարում էր Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը¹⁷: Բաժինը բանակցում էր տարածաշրջանի և այլ երկրների հետ: Այսպիսով, պատմական դեպքերի բերումով Հայոց ազգային խորհուրդը փաստացի իրականացնում էր օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթներ, ինչը ապագա հայկական անկախ պետականության ստեղծման հիմք դարձավ: Հենց այս մարմինն էր, որ 1918 թ. մայիսի 30-ին ստանձնեց Անդրկովկասի հայկական գավառների կառավարումը:

¹⁷ Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 363-364:

2. Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական դրությունը (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. փետրվար)

1917 թ. հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) բոլշևիկյան հեղաշրջումը նոր ցնցումներ առաջացրեց Ռուսաստանում. երկրի մասնատման լուրջ սպառնալիք էր ստեղծվել: Դիշտ է, փետրվարյան հեղափոխությունը տապալեց միապետությունը, սակայն այդ շրջանում Ռուսաստանի միասնությանը դեռևս լուրջ վտանգ չէր սպառնում: Իշխանությունը գրաված բոլշևիկների ծայրահեղականությունն ու անհանդուրժողականությունը երկիրը մղեցին քաղաքացիական պատերազմի՝ Ռուսաստանը բաժանելով թշնամական ճակատների: Այդ առնչությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը նկատում է. «.... այն ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի, Լենինի: Երեքն ալ համահավասար ուժեղ, երեքն ալ նոյնքան հավակնություններ ունեին, որ տերը պիտի դառնան ամբողջական Ռուսաստանի, բայց երեքն ալ միմյանց թշնամի»¹⁸: Հոկտեմբերյան հեղաշրջմամբ բոլշևիկները հրաժարվեցին Փետրվարյան հեղափոխության և Ժամանակավոր կառավարության հռչակած ժողովրդավարական արժեքներից ու զարգացման տեսլականներից:

Երկրամասի ազգային-քաղաքական հիմնական ազդեցիկ ուժերն ու կուսակցությունները հեղաշրջումն ընդունեցին որպես դավաճանություն և հրաժարվեցին բոլշևիկների իշխանու-

¹⁸ **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր, Թեհրան, 1982, էջ 262:

թյունը ճանաչելուց: Թեև Կովկասը դե յուրե դեռևս Ռուսաստանի մի մաս էր համարվում, սակայն գոյատևում էր ինքնուրույն և գրեթե անկախ: Կովկասի հետ Ռուսաստանից կտրված վիճակում հայտնվեց նաև հայ ժողովուրդը:

Բուլղարիայի գլխաված հեղաշրջումը, բնականաբար, քաղաքական իրավիճակի էական փոփոխությունների հանգեցրեց նաև Անդրկովկասում: Ստեղծված նոր պայմաններում երկրամասի կայունությունը պահպանելու միակ ուղին և երաշխիքը դիտվում էին քաղաքական կողմնորոշումը դեպի Ժամանակավոր կառավարությունը և տեղական ինքնակառավարման խելամիտ կազմակերպումը մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Բանի որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ութ ամիսների ընթացքում չէր կարողացել հաստատել կառավարման կայուն վարչակարգ, անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու Անդրկովկասի նոր իշխանություն: Երկրամասի ազգային-քաղաքական ուժերի և կուսակցությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ, առանց լուրջ տարաձայնությունների, Հատուկ կոմիտեն 1917 թ. նոյեմբերի 15 (28)-ին Թիֆլիսում իշխանությունը փոխանցեց նոր կառավարությանը՝ Անդրկովկասյան կոմիսարիատին, որին էր հանձնվում ամբողջ Անդրկովկասի կառավարումը:

Կառավարությունը կազմվելու էր ազգային ներկայացուցչականության սկզբունքով, սակայն վրաց մենշևիկները, լավագույնս դասեր քաղելով Փետրվարյան հեղափոխությունից, քաղաքական պայքարից մեկուսացրին «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը՝ հապճեպ ստանձնելով կո-

միասարիատի առանցքային պաշտոնները և իրենց գերիշխող դերն ապահովելով¹⁹, իսկ մենշևիկ Ե. Գեգեչկորին՝ որպես կոմիսարիատի նախագահ, միաժամանակ ստանձնեց արտաքին հարաբերությունների ու աշխատանքի նախարարությունների կոմիսարների պաշտոնները: Կառավարությունում հայերին տրվեցին արտաքին հարաբերությունների նախարարության գծով կոմիսարի քարտուղարի (Միք. Թումանյան) և երեք նախարարության՝ ֆինանսների (Խ. Կարճիկյան), պարենավորման (Գ. Տեր-Ղազարյան), խնամատարության (Հ. Օհանջանյան), կոմիսարների պաշտոնները: Երեք օր անց Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր առաջին ուղերձում կոչ արեց համատեղ ուժերով լուծելու ներքին և արտաքին երեք կարևոր խնդիրներ՝ 1. Սահմանադիր ժողովի հրավիրում, 2. ազգային հարց, 3. Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքում:

Սակայն նոր կառավարությունը ի վիճակի չեղավ որևէ դրական փոփոխություն բերելու երկրամասի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառներում: Այդ ժամանակաշրջանում ազգամիջյան բախումներն էլ ավելի սուր բնույթ էին ստացել: Բացահայտ էին հայ ժողովուրդի շահերը ոտնահարող վրաց-թաթարական գործարքները: Հայերի, վրացիների և կովկասյան թաթարների հակամարտության և տարածայնությունների պատճառները գլխավորապես այդ ժողովուրդների քաղաքական տարբեր կողմնորոշումների ու տարածքային սահմանների հարցերն էին:

¹⁹ Տե՛ս Վ. Մելիքյան, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Եր., 2010, էջ 247:

Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր առաջին կոչում թեև հայտարարում էր, որ, որդեգրելով ռուսական հեղափոխության հայտարարած՝ ազգությունների լիիրավ ինքնորոշման տեսակետը, կոմիսարիատը միջոցներ կձեռնարկի շուտափույթ և արդարացիորեն վճռելու Անդրկովկասի ազգային խնդիրը²⁰, սակայն նրա առաջին իսկ քայլերը նոր դժվարությունների հաղիպեցին: Նոյեմբերի 24-ին հրապարակված դեկրետով, որի հեղինակը ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելին էր, Անդրկովկասում կազմվում էին զեմստվոներ՝ ինքնակառավարման տեղական մարմիններ, բայց միայն այն նահանգներում ու գավառներում, որտեղ սահմանները ազգային հատկանիշներով վերանայելու խնդիր չկար: Դեկրետի ծանոթագրությունում նշվում էր, որ վարչական սահմանների տեսակետից անվիճելի են ճանաչվում Բաքվի, Քութայիսի և Սև ծովի նահանգները, Բաթումի և Դաղստանի շրջանները, Սուխումի և Ջաբաթալայի գավառները, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի, Սդնադի, Թելավի, Թիանթի Դուշեթի, Գորու և Ախալցխայի գավառները, Կարսի նահանգի Արդահանի և Օլթիի գավառները:

Դեկրետում միաժամանակ ամրագրված էր, որ դրա հրապարակման օրից մեկ ամսվա ընթացքում Անդրկովկասյան կոմիսարիատը վիճելի նահանգներում և գավառներում կատարում է վարչական սահմանների բաժանում՝ նոր հաստատված տարածքներում ստեղծելով զեմստվոյին հաստատություններ²¹: Ըստ դեկրետի, փաստորեն, սահմանների տեսակետից

²⁰ Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 19 նոյեմբերի 1917 թ.:

²¹ Տե՛ս «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 2 դեկտեմբերի 1917 թ.:

վիճելի էին ճանաչվում Երևանի նահանգը, Գանձակի նահանգի Գանձակի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշիի, Չանգեգորի և Կարեազիմոյի գավառները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները²²: Վիճելի էին հայտարարված նաև մյուս նահանգների այն բոլոր գավառները, որոնցում հայերը բացահայտ մեծամասնություն էին կազմում:

Դեկրետով ամրագրված վրաց-թաթարական համագործակցությունը խոչընդոտում էր հայերի տարածքային պահանջները արդար լուծելու հնարավորությունները: Ըստ այդմ՝ դեկրետը նոր վեճերի և առճակատումների առիթ տվեց՝ էլ ավելի սրելով հայ-վրացական ու հայ-թաթարական հարաբերությունները: «Սի ամանի մեջ ամփոփուած երեք ժողովուրդները մնում էին իրարու հակառակ եւ մույնիսկ թշնամի»²³, - գրում է Ռուբեն Տեր-Սիմեայանը:

Ներքին հակասություններին ու հակամարտություններին շուտով ավելացավ նաև արտաքին ճնշումը Օսմանյան կայսրության կողմից: Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումից երկու օր անց կովկասյան ռամաճակատի թուրքական բանակի հրամանատար, ֆերիք (գեներալ) Վեհիբ Մահմեդ փաշան մամակ-առաջարկով դիմեց ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Մ. Պրժևալսկուն՝ առաջարկելով «հանուն մարդասիրության վերջ տալ եղբայրասպան պատերազմին» և կնքել զինադադար: Քողարկելով զինադադարի առաջարկի իրական դրդապատճառներն ու նպատակները՝ թուրքական

²² Տե՛ս մույն տեղը: Նաև **Վ. Մելիքյան**, Իշխանության հարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան Կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, էջ 137:

²³ **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 134:

հրամանատարությունը մտադիր էր շարունակել վաղօրոք մշակված իր ռազմատենչ ու զավթողական պլանները: Դեպի Կովկաս ռազմական արշավանք ծավալելու համար օսմանյան բանակին անհրաժեշտ էր ժամանակ շահել և համախմբել ուժերը: 1917 թ. նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 4) զինադադարի կնքման առաջարկը դրվեց Անդրկովկասյան կոմիսարիատի քննության²⁴, և որոշվեց «ընդառաջ երթալ այս առաջարկին», ուստի ճակատի զորավար Ե. Վիշինսկուն հանձնարարվում է համաձայն իրեն տրված լիազորությունների սկսել զինադադարի բանակցություններ²⁵: Դեկտեմբերի 5-ին (18) ստորագրվեց Երզնկայի (Էրզինջանի) զինադադարը²⁶, որով պատերազմող կողմերի միջև սահմանագիծ էր հաստատվում Սև ծովից մինչև Վանա լիճը²⁷: Նախքան զինադադարի կնքումը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, կովկասյան ճակատի առանձին զորամասերում ծայր էին առել ռազմաճակատի քայքայումն ու դասալքությունը: Այդ առիթով ականատես Ա. Խաչատրյանը գրում է. «Ռուս յոգնած և բարոյալքուած բանակը փոխանակ պահելու իր դիրքերը, սպասելով վերջնական հաշտութեան, կը լքէ իր դիրքը և «դէպի տուն» նշանաբանով կը դիմէ դէպի Ռուսաստան: Այս քայքայումն ինքնին արդէն մեծ վտանգ մըն էր Հայաստանին ու հայ ժողովուրդին: Վերադարձող զօրքը ոչ միայն կոչնչացնէր շատ բան, այլ, որ **աւելի վատթարն է, իրենց մթերքը կուտային թուրքերուն և զենքը՝ քիւրտերուն:**

²⁴ Տե՛ս Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 145-181:

²⁵ Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 67:

²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, ք. 121:

²⁷ Տե՛ս «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, մարտ-ապրիլ, էջ 82:

Այսպես, ճակատը կը պարպուէր ռուս զինուորներէն և երկրի պաշտպանութիւնը կը յանձնուէր հայերուն»²⁸ (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են. - Գ. Պ.): Վտանգի տակ էին դրվում ոչ միայն պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի գրաված վեց վիլայեթները, այլև ողջ Արևելյան Հայաստանը: Հայությունը կրկին դեմ առ դեմ հայտնվում է ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առաջ:

Երզնկայի զինադադարից հետո կովկասյան ճակատի (կովկասյան ճակատը ձգվում էր Տրապիզոնից մինչև Ուրմիա լիճ՝ 750 կիլոմետր երկարությամբ) ռուսական զորքերի դասալքությունը զանգվածային բնույթ ստացավ: Դճակատը դատարկվում էր արագորեն, և թուրքական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում: Դասալիքներին փոխարինում էին նոր կազմավորվող հայկական ազգային զորամասերը, որոնք մեն-մենակ էին մնում թշնամու դեմ: Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի որոշմամբ ձևավորվեց 50 հազարանոց գունդ՝ գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ²⁹, որի առաջնահերթ առաքելությունն էր պաշտպանել Արևմտյան Հայաստանը: Այդ օրերին գնալով աճում էր Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի հեղինակությունը: Նա եռանդուն կերպով համախմբեց հայոց բոլոր ուժերը՝ դիմակայելու ներքին ու արտաքին թշնամուն, ու նաև փորձեց արագ զարգացող դեպքերի ընթացքը շրջել հնարավորինս ի նպաստ հայերի: Վրացական ուժերի դիմադրությունն անհուսալի էր, քանի որ ձևական բնույթ ունէր, թէև վտանգը նրանց էլ էր

²⁸ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 68:

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, ք. 465:

սպառնում: Այդ առիթով Լ. Շանթը գրում է. «Վրաստանը չէ կրած, մասնատրապէս, օսմանեան թուրքերու լուծը, եւ չէ ենթարկուած այն անձանց ու մոլեգնոտ գազանութիւններուն ու ոչնչացման, ինչպէս հայերս ենք եղած:

Եւ այս իրողութեան հետեւանքն այն է, որ ոչ միայն անոնք չունին թուրքի ատելութիւնը, այլ եւ մեծ վախ մը չունին Թուրքիայի կովկասեան ձգտումներու սպառնալիքէն, նոյնիսկ կը հաւատան, որ հիմա իսկ Թուրքիայի հետ կապուելով կրնան ազատուիլ ռուսներու ճանկէն: Եւ ատոր համար ալ մշտական յարաբերութեան, բաց ու ծածուկ համաձայնութիւններու եւ առուտորի մէջ էին Թուրքիայի հին ու նոր վարիչներուն հետ, թէ պատերազմի նախօրեակին, թէ պատերազմի ելեւեջներու միջոցին, թէ զինադադարի շրջանին»³⁰: Կովկասյան թաթարները ոչ միայն չէին պատրաստվում կովի մասնակցելու, այլև անհամբերությամբ սպասում էին ցեղակից թուրքական բանակի օր առաջ ժամանելուն: Ռուբեն Տեր-Սիմասյանը դեռ 1917 թ. նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 9) Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդում ասել էր. «Զինադադարը միջոց է, որով աշխատում են (թուրքերը - Գ. Պ.) Կովկասի թաթարներին ոտքի հանել»: Նրանք թուրքերի ներխուժման ու հաղթանակի մեջ էին տեսնում իրենց ազգային-քաղաքական տենչերի իրականացումը: Ա. Խաչատրյանը գրում է. «Կովկասի թաթարների վերաբերմունքը Կովկասի գործերում սկզբէն սկսած շատ որոշ է, մարդիկ վրացիներու պէս չեն թաքցնել իրենց մտադրութիւններն ու ձգտումները, որ է. նախ՝ միանգամ ընդմիշտ անջատուել Ռուսաստանէն և երկրորդ՝ յառաջապահին դառնալ օս-

³⁰ Լեւոն Շանթ, Մեր անկախութիւնը, Եր., 2011, էջ 136:

մաններուն՝ Կովկասին տիրելու համար: Այս երկրորդ կէտի իրագործման համար անհրաժեշտ էր մէջտեղէն վերացնել հայերու յարուցած արգելքը, որ կրնայ կատարուել հայերու ջախջախումով և բնաջնջումով, որ և օսմաններուն ալ բուն նպատակակէտն էր և անոնց կողմէն թելադրուած թաթարներուն: Հոս ուրեմն Կովկասի թաթարներն ու օսմանեան թուրքերը կը միանան իրարու ընդհանուր համաթուրք իդեալին շուրջ»³¹:

Օսմանյան կառավարությունը Երզնկայի գինադադարը և կովկասյան ճակատից ռուսական զորքերի հեռանալը ճարակորեն օգտագործեց իր ռազմատենչ ու զավթողական պլանները իրականացնելու համար: Ստեղծված նպաստավոր պայմանները նա փորձեց օգտագործել երկու հիմնական՝ **դիվանագիտական և ռազմական** ճանապարհով: Մեծ խորաքափանցություն պետք չէր հասկանալու համար թուրքերի ակնհայտ մտադրությունը. դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ դրանով նախ փորձում էին ժամանակ շահել թուրքական բանակի ուժերը համախմբելու և համալրելու համար, իսկ մյուս կողմից՝ թուլացնելու երկրամասի ժողովուրդների, մասնավորապես հայության դիմադրողական ոգին: Թուրքերը, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, որդեգրել էին դիվանագիտական բանակցությունները ռազմական հաջողություններով ամրապնդելու քաղաքականությունը, որը նրանք կիրառեցին նաև Հայաստանի նկատմամբ: Առաջ անցնելով նշենք, որ այս ռազմավարությու-

³¹ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 64:

նը արդարացրեց իրեն. Թուրքիան, բռնազավթելով հայկական տարածքները, ճնշում գործադրելով հայ-թուրքական բանակ-ցային գործընթացների վրա (1918 թ.՝ Տրապիզոն, Բաթում, 1920 թ.՝ Ալեքսանդրապոլ և այլն), յուրացրեց Արևմտյան Հա-յաստանի վեց վիլայեթները և Արևելյան Հայաստանի զգալի մասը:

Երզնկայի զինադադարի կնքումից մի քանի օր անց թուր-քական կառավարությունը դիմեց Անդրկովկասյան կոմիսարի-ատին՝ հաշտության բանակցություններ սկսելու առաջարկով: Ուշագրավ է թուրքական կողմի առաջարկած հարցադրումը, թե՛ «Ի՞նչ կը մտածէ Անկախ Անդրկովկասի կառավարութիւնը հաշտության պայմաններու մասին Թուրքիոյ հետ», և թե՛ «Էն-վեր փաշան մտադիր է անկախ Անդրկովկասի մայրաքաղաքը դրկել պատուիրակներ հաշտության դաշնագիր կնքելու հա-մար»: Ալ. Խատիսյանը, անդրադառնալով երկու անգամ կրկնված «անկախ» արտահայտությանը, գրում է. «.... տա-ճիկները կուգէին ներշնչել կովկասեան իշխանութեան, թէ իրենք կը կամենան գործ ունենալ միմիայն անկախ կառավա-րութեան մը հետ: Տաճիկներու համար անկախ Կովկասը մի բաղձալի պատենշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ: Թիֆլիսի մէջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզեր բացահայտօ-րէն խօսիլ Ռուսիայէն անջատուելու մասին: Յամենայն դէպս ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը եւ այդ գաղափարի հրահրումը եկան Թուրքիայէն»³²:

Անդրկովկասյան կոմիսարիատի մի քանի նիստերում ծա-վալված բուռն քննարկումներից հետո որոշվեց թուրքական

³² «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, փետրվար, էջ 110-111:

կողմին հայտնել, որ հաշտության կնքման առաջարկի վերջնական պատասխանը հայտնելու են երեք շաբաթից՝ Սահմանադիր ժողովի որոշումներից, Ռուսաստանի բոլոր կառավարությունների հետ խորհրդակցելուց և նրանց կարծիքը ստանալուց հետո: Սակայն կոմիսարիատը դեռ տեղյակ չէր, որ բոլշևիկները հունվարի 5-ին (18) ցրել էին Սահմանադիր ժողովը: Մինչև կոմիսարիատի պատասխանն ստանալը թուրքական բանակը Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, խախտելով Երզնկայի զինադադարը, 1918 թ. հունվարի վերջին հարձակման անցավ ճակատի ամբողջ երկայնքով՝ շարժվելով դեպի Անդրկովկաս: Ռուս-թուրքական պատերազմի (հիմնական ծանրությունն ընկած էր հայկական ուժերի վրա: Վրացիների մասնակցությունը չնչին էր, իսկ մուսուլմանական դիվիզիան ընդհանրապես չէր մասնակցում): Թուրքերը հարձակման պատրվակ էին բռնում հայերի կողմից Արևմտյան Հայաստանում մահմեդական ազգաբնակչության նկատմամբ իբր կիրառվող հետապնդումներն ու բռնությունները³³: Մեհմեդ Վեհիբ փաշան «.... ընդարձակ գրութեամբ մը կղիմէ ռուս հրամանատար Օղիշելիձէին,- գրում է Ա. Խաչատրյանը,- թուելով այն բոլոր սպանութիւններն ու բռնութիւնները իսլամներու վրայ, որ իբր թէ հայերը կը կատարեն Երզնկայի մէջ և իր շրջանում: Հակառակ զօրավար Օղիշելիձէի հերքումին, թէ հայերու գործած բռնութիւններու մասին իր ստացած բոլոր տեղեկութիւնները խիստ չափազանցուած են եւ բնաւ չեն համապատասխանէր իրականութեանը (փետրուար 12), Վեհիբ փաշան կը հեռագրէ, թէ

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 5-7:

իր բանակը յառաջ կը քալէ օգնութեան հասնելու նահատակուող իսլամներուն և այլն»³⁴:

Այդ հաղորդագրութիւնից ակնհայտ է դառնում նաև, թէ ինչպիսի խորամանկութեամբ էր Մեհմեդ Վեհիբ փաշան փորձում կովկասյան թաթարներին ոտքի հանել հայերի դէմ: Այս ամենն էլ ավելի լարեց և խորացրեց թշնամական հարաբերությունները հայերի և կովկասյան թաթարների միջև:

Չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական նոր իրադրության պայմաններում 1918 թ. փետրվարի 10-ին (23) Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը (օրենսդիր մարմին, պառլամենտ), որն ընդունեց կոմիսարիատի հրաժարականը և նրա փոխարեն կազմեց նոր կառավարություն՝ բաղկացած զանազան նախարարություններից³⁵: Այս իրողությամբ, փաստորեն, Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից, սակայն համապատասխան հայտարարություն չարվեց. շարունակում էին Անդրկովկասը համարել Ռուսաստանի մի մասը: Անդրկովկասյան սեյմը ձևավորվեց ազգային ու քաղաքական շահերով խիստ հակադիր երեք առավել ազդեցիկ՝ վրաց-մենջևիկյան, «Հայ հեղափոխական դաշնակցություն» և թաթար «Մուսաֆաթ» կուսակցությունների ներկայացուցիչների փոխհամաձայնությամբ:

Փետրվարի 15-ին (28) Անդրկովկասյան սեյմը թուրքերի առաջարկների և երկրամասի ռազմական ու քաղաքական իրավիճակի հարցերի բազմակողմ և բուռն քննարկումներից հետո որոշեց դիվանագիտական բանակցություններ սկսել ոչ միայն Թուրքիայի, այլ նաև վերջինիս դաշնակից Գերմա-

³⁴ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 69:

³⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 39:

միայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ միաժամանակ³⁶: Նույն օրը Սեյմն այդ որոշման մասին հեռագրով տեղեկացրեց Մեհմեդ Վեհիբ փաշային³⁷: Ռուսական քաղաքական շրջաններում մեծ վրդովմունքով ու զայրույթով ընդունեցին թուրքերի հետ հաշտության դիվագիտական բանակցություններ սկսելու Անդրկովկասյան սեյմի հայ անդամների համաձայնությունը: Սեյմի հայ ներկայացուցիչ Ալ. Խատիսյանը այդ առիթով գրում է. «... անոնք (ռուսները - Գ. Պ.) կը մոռնային, որ ոչ թե մենք էինք Ռուսիայէն հեռացեր, այլ ինքը Ռուսիան էր լքեր մեզ»³⁸:

Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով Սեյմի ձևավորած հանձնաժողովը մշակեց հաշտության գլխավոր հիմնադրույթները, որոնք հաստատվեցին փետրվարի 16-ի (մարտի 1) նիստում: Դրանք էին.

1. Ստեղծված իրադրության պայմաններում Անդրկովկասյան սեյմը իրեն իրավասու էր համարում Թուրքիայի հետ կնքել հաշտություն (սա պարունակում էր բոլշևիկյան Ռուսաստանից անջատվելու սաղմեր):
2. Չեռնամուխ լինելով հաշտության բանակցություններին՝ Անդրկովկասյան սեյմն իր առջև խնդիր էր դրել Թուրքիայի հետ կնքելու վերջնական հաշտություն:
3. Կնքվելիք հաշտության պայմանագրի հիմքում պետք է դրվեր նաև ռուս-թուրքական պետական այն սահմանների վերահաստատումը, որոնք գոյություն ունեին մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը:

³⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 32-34:

³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, ք. 122-123:

³⁸ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 24:

4. Պատվիրակությունը ձգտում էր Արևելյան Անատոլիայի ինքնորոշմանը, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը թուրքական պետականության շրջանակներում³⁹:

Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի ընդունած «հայերի առավելագույն պահանջները» հիմնականում բխում էին Անդրկովկասյան սեյմի առաջարկություններից՝ որոշ մասնակի տարբերություններով:

Դիվանագիտական բանակցությունների վայր ընտրվեց Տրապիզոնը (որպես չեզոք գոտի): Փետրվարի 16-ի նույն նիստում հաստատվեց նաև պատվիրակության կազմը, որի մեջ հայ ժողովրդի ներկայացուցիչներից ընդգրկվեցին Ալ. Խատիսյանը, Հ. Քաջազունին և Մ. Թումանյանը (պատվիրակության քարտուղար): Նրանց խորհրդականներն էին Լեոն (Հայկական հարցի գծով), Ռուբեն Տեր-Մինասյանը (ռազմական գծով) և Մ. Բունիաթյանը (ֆինանսական գծով): Հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, Անդրկովկասյան սեյմի հաշտության պատվիրակությունը, ըստ Թուրքիայի հետ ձեռք բերած նախնական համաձայնության, ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելիի գլխավորությամբ մեկնեց Տրապիզոն և տեղ հասավ փետրվարի 23-ի երեկոյան⁴⁰:

Թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների վրա ճնշում գործադրելու նպատակով Թուրքիան դեռևս շարունակում էր կիրառել իր ավանդական քաղա-

³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 43, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, էջ 83-84:

⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, ք. 123:

քականությունը: Թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից՝ շարունակում ռազմական առաջխաղացումը: Այս առիթով Ա. Խաչատրյանը գրում է. «Վեհիբի բանակը կը շարունակէ իր յառաջ խաղացումը դէպի Կարին, և թուրք ու քիւրդ հրոսախումբերով արիւն ու ատեր սփռելով իր արշաւանքի երկու կողմերը: Զօրավար Լեքեղինսկին հարկ կը տեսնէ դիմում ընել Վեհիբ փաշային խնդրելով, որ դադարեցնէ իր յառաջ խաղացումը, որովհետեւ նոյն շրջանի թէ բանակի զինուորները և թէ քրիստոնէայ ազգաբնակչոյքիւնը խուճապի մատնած է և ահաւոր աղէտներ յառաջ կուգան: Այս դիմումին իբր պատասխան փետրուար 22-ին գօրավար Օղիշելիճէն կը հաղորդէ Լեքեղինսկուն, թէ Վեհիբ վճռական կերպով յայտներ է, որ պէտք է յառաջ խաղայ՝ մինչև որ հանդիպի ռուս զօրքի:

Եւ Օղիշելիճէն գօրք կը խնդրէ՝ գոնէ Կարին պաշտպանել կարողանալու համար:

Վեհիբի այս վճռական արտայայտութեամբ այլևս ոչ մէկ տարակոյս տեղիք կը մնար կարծելու, թէ թուրքերին պէտք է արգելուեն իրենց ծրագիրը գործադրելէ, այսինքն ամբողջ Կովկասը գրաւելէ, քանի որ ինչպէս ամենուն, նոյնպէս և Վեհիբին շատ լաւ հայտնի էր, որ Կովկասում ռուս զօրք չկայ, ուրեմն հիւսիսային Կովկասը պիտի լինէր իրենց ապագայ սահմանը: Բայց թուրք դիւանագէտներին ու ռազմավարներին ոգևորողն այս պարագային միայն երկրակալական անյազ ձգտումը չէր, այլ նոյնպէս ամենուն յայտնի համիլաւմական ու համաթրքական շողշողուն հեռապատկերի իրականացման հնարաւորութիւնը»⁴¹:

⁴¹ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 69-70:

Փետրվարի 17-ի (մարտի 3) երեկոյան, երբ Անդրկովկասյան պատվիրակությունը պատրաստվում էր մեկնելու Տրապիզոն, Բրեստից անակնկալ ստացվում է ՌՍՖՍՀ արտժողկոմի տեղակալ Լ. Կարախանի (հայազգի) հեռագիր-հաղորդագրությունը այն մասին, որ Խորհրդային Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկում*, առանց հաշտության պայմանները քննարկելու, ստորագրել է դաշնագիր Թուրքիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ⁴²: Դաշնագրի 4-րդ հոդվածում, որը վերաբերում էր Կովկասին, ասված էր. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի մահանգներից (Արևմտյան Հայաստան – Գ. Պ.) և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային:

Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն մաս Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավական և միջազգային իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ»⁴³: Փաստորեն, այդ հաշտության դաշնագրով Խորհրդային Ռուսաստանը, առանց Անդրկովկասի մասնակցության ու համաձայնության, Թուրքիային էր զիջում Կարսի,

* Բրեստ-Լիտովսկի դաշնագրով Խորհրդային Ռուսաստանից անջատվեցին Լիտվան, Կուլանդիան, Էստլանդիան և Բելոռուսիայի մի մասը: Ուկրաինան և Բելոռուսիան ճանաչվում էին որպես ինքնուրույն պետություններ:

⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս III, ք. 398:

⁴³ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 426:

Բաթումի ու Արդահանի մարզերը, այսինքն՝ արմատապես փոփոխության էին ենթարկում Կովկասի 1914 թ. սահմանները՝ հոգուտ Օսմանյան կայսրության: Թուրքիային էր հանձնվում ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև Անդրկովկասի գրեթե կեսը: Փաստորեն հողս էին ցնդում Անդրկովկասյան սեյմի մշակած՝ Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցությունների գլխավոր հիմնադրույթները և, հետևաբար, բանակցային ողջ գործընթացը:

Նույն օրը Անդրկովկասյան սեյմի ներքին գործերի կոմիսար, պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին և կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին, ի լուր աշխարհի բոլոր երկրների կառավարությունների, Թիֆլիսից հաղորդեցին, որ Անդրկովկասը հայտարարում են Ռուսաստանից անջատված, հետևաբար չեն ճանաչում Բրեստ-Լիտովսկի հաշտության ամարդար դաշնագիրը և մերժում են ընդունել այդ պայմանների ստորագույցիչ դրույթները: Սակայն Մեհմեդ Վեհիբ փաշան, հենվելով այդ դաշնագրի վրա, պահանջում էր անհապաղ թուրքերին հանձնել Կարսը, Բաթումը և Արդահանը: Նա դառնում էր էլ ավելի անգիջող իր պահանջներում ու վերաբերմունքում: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում թուրքերն էլ ավելի մեծ ուժգնությամբ էին շարունակում ռազմական ուժով ամրագրել իրենց անօրինական, անարդարացի պահանջները: Նման պայմաններում, այնուամենայնիվ, Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը փետրվարի 27-ին (մարտի 12) սկսեց իր աշխատանքները՝ հույս ունենալով պահպանել 1914 թ. սահմանները⁴⁴: Հենց այս հարցի շուրջ էլ Տրապիզոնում բանակցություններ ընթացան կողմերի միջև:

⁴⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 104:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐԲ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՊԵՉՈՆՈՒՄ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ

1. Տրապիզոնի բանակցություններում թուրքերի կողմից Անդրկովկասն անկախ հռչակելու շարժառիթներն ու նպատակները. Հայկական հարցի արժարժումները

Ինչպես նշվեց նախորդ գլխում, Անդրկովկասի կառավարության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու և հաշտության դաշնագիր կնքելու առաջարկի նախաձեռնողն Օսմանյան կառավարությունն էր: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ այդ ամենը Թուրքիայի ղեկավարության կողմից նախապես մշակված, ծրագրված ռազմաքաղաքական մարտավարություն էր, որով նա փորձում էր անդրկովկասյան ժողովուրդներին (բացառությամբ ցեղակից և կրոնակից կովկասյան թաթարների) փակուղի մղել՝ իրականացնելու իր ռազմավարական նպատակները և տարածքային ազդեցության գոտիներով ապահովագրելու իր անվտանգությունը հարևան հյուսիսից՝ Ռուսաստանից: Ըստ այդմ՝ Թուրքիան ձգտում էր իր ռազմական հաջողությունները բանակցող կողմերին պարտադրելու ճանապարհով դիվանագիտական բանակցությունների նժարը իր օգտին թեքելու քաղաքականություն վարելու: Դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ նա փորձում էր նախ շեղել, մոլորության մեջ գցել, ապա թուլացնել Անդրկովկասի կառավարության և ժողովուրդների, մասնավորապես հայության զգոնությունը և դիմադրողական ոգին: Թուրքերը ձգտում էին նաև հաշտության, որպեսզի հընթացս ժամանակ շահեին և հա-

մախմբելին իրենց ռազմական ուժերը պատերազմի ճակատներում⁴⁵:

Օսմանյան Թուրքիան իր ավանդական քաղաքականություներ գործադրեց Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների թե՛ նախօրեին, թե՛ ընթացքում և թե՛ հետագայում: Թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից ակտիվորեն շարունակում էին զենքի ուժով պարտադրել և ամրագրել իրենց անօրինական պահանջները: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Բոլոր պարագաներում ալ թուրքերու գործելակերպը նոյնն էր, բանակցիլ և միժամանակ պատերազմիլ իրենց կամքը լիովին պարտադրելու համար: Թէ որքան ծանր կերպով անոնք (թուրքական ռազմական արշավանքները - Գ. Պ.) կանոդադառնային միաժամանակ տեղի ունեցող հաշտութեան մեր բանակցութեանց (Տրապիզոնի - Գ. Պ.) վրայ: Նոյն պատմութիւնը յետագային ինձ հետ կրկնուեց երկու անգամ եւս նոյն թուի մայիսին Պաթումի մէջ եւ 1920 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի մէջ»⁴⁶:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը* փետրվարի 23-ի (մարտի 8) երեկոյան հասավ Տրապիզոնի նա-

⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, ք. 11:

⁴⁶ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, ապրիլ, էջ 83:

* Պատվիրակությանը տեղափոխում էր ռումինական «Կառլոս թագավոր» հաժամավր: Նրա կազմը բազմանդամ էր՝ 40 հոգի: Նրանցից 11-ը պատվիրակության անդամներ էին, իսկ 29-ը՝ խորհրդականներ, քարտուղարներ, պատմագետներ, ռազմական գծով սպաներ և այլն: Այս ամենից բացի՝ նրանց ուղեկցում էր նաև Անդրկովկասի տարբեր ազգերի 50 ներկայացուցիչներից կազմված պահակախումբ: Փաստորեն, պատվիրակության անդամների և նրանց ուղեկցողների թիվը հասնում էր 90-ի: Նման մեծաքանակ կազմը վկայում էր Անդրկովկասի երեք գլխավոր ազգերի ներկայացուցչների

վահանգիստ, իսկ թուրքական հանձնախումբը միտումնավոր ձգձգում էր իր ժամանումը, և դեռևս հայտնի չէր, թե երբ էր տեղ հասնելու: Նրանց նպատակն ակնհայտ էր. մինչև թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունների սկսվելը մի կողմից հնարավորինս շատ տարածքներ զավթել, իսկ մյուս կողմից բարոյահոգեբանական ճնշում գործադրել Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության վրա: Թուրքերի որդեգրած այդ ավանդական քաղաքականությունը շարունակական եղավ Տրապիզոնի դիվանագիտական բանակցային բոլոր գործընթացներում:

Ստեղծված իրավիճակում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը իրավունք չունեի անգամ ափ իջնելու և ստիպված էր մինչև Կոստանդնուպոլսից թուրքական պատվիրակության ժամանումը չորս օր մնալ իրեն փոխադրող ռումինական «Կառլոս թագավոր» հաժանավի վրա⁴⁷: Այդ անչությանը Լեոն (Հայկական հարցի գծով խորհրդական) գրում է. «Իսկ վորքան ստորացում ամբողջ պատվիրակության համար: Որեր են անցնում, քյուրք պատվիրակությունը չկա ու չկա, իսկ

միջև սուր հակասությունների և միմյանց նկատմամբ անվստահության մասին և այլն: Թուրքերից մեկը Տրապիզոնում հեզնել էր. «Եթե «բանակցային կողմի» ամբողջ ազգաբնակչությունն է եկողը, շատ քիչ է, իսկ եթե միայն պատվիրակությունն է, շատ-շատ է»: Տե՛ս **3. Авалов**, Независимость Грузии в международной политике 1918-1921 г.г., воспоминания. Очерки. Paris, 1924, էջ 34:

Տրապիզոնում պատվիրակությանը հատկացվել էր հարուստ հույն Թերֆիլատիսի տունը: Խորհրդաժողովի աշխատանքները ընթացել են թուրքական պատվիրակության նստավայրում: Հաշտության խորհրդաժողովում տեղի են ունեցել վեց լիակատար նիստեր և ոչ պաշտոնական փոխադարձ այցելություններ, ինչպես նաև մասնավոր գրույցներ: 38 օրվա ընթացքում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը ունեցել է 46 նիստ:

⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 100:

մեր Կարլուշկայի մեջ արդեն սով է սկսվում: Վո՛չ ավի ենք իջնում, վոչ հետ ենք գնում: Ափ իջնողները միայն մեր թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) ընկերակիցներն են: Գնում են, ամբողջ ուրը մնում, յերեկոյան վերադառնում ուրախ ու գոհ, ինչպես ավետյաց յերկրից»⁴⁸:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության՝ Տրապիզոն ժամանելու պահին քաղաքն արդեն գրավված էր թուրքական զորքերի կողմից: Այն այլևս չեզոք քաղաք չէր, այլ թուրքական, նրանք «զգում էին իրենց իբրև իրենց տանը, դրության տները»⁴⁹:

Երկու օր անց՝ փետրվարի 25-ին (մարտի 10), հետևեցին Մեհմեդ Վեհիբ փաշայի երկու հայտնի սպառնալից հեռագրերը, որոնցով նա Անդրկովկասի կառավարությունից պահանջում էր զորքերը անհապաղ դուրս բերել Կարսից, Արդահանից և Բաթումից:

Պատվիրակությունը մեկուսացվել էր արտաքին աշխարհից, և այդ դրությունը գրեթե պահպանվեց Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ողջ ընթացքում: «.... Արտաքին պայմանները , - գրում է Լեոն,- գնալով ավելի ու ավելի աննպաստ ելին դառնում մեր պատվիրակության համար: Ամենից առաջ հենց այն վոր մեր Կարլուշկան, մնալով անփող ու անպարեն: ... Մեզ համար, հարցն, ի հարկե, այդ դեպքերը չեյին, այլ այն, վոր մենք մնացինք աշխարհից կտրված, գերիներ թյուրքերի ձեռքին: Մենք մեզ զգում եյինք անտանելի դրության մեջ: Գլխավորն այն էր, վոր մենք ռադիո հեռա-

⁴⁸ Լեո, նշվ. աշխ., էջ 381:

⁴⁹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

գիր չունեյինք և չէյինք կարողանում վոչ լուր՝ ուղարկել, վոչ ստանալ»⁵⁰:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ընդհանուր նիստը լսեց ստեղծված իրավիճակի և հետագա անելիքների մասին հարցը: Երկար քննարկումներից հետո որոշվեց, որ հաջորդ օրը՝ փետրվարի 27-ի (մարտի 12) առավոտյան, պատվիրակությունը կվերադառնա Բաթում, քանի որ թուրքական պատվիրակության հետ հարաբերությունները խալառ բացակայում էին, և դեռևս հայտնի չէր, թե մա երբ է ժամանելու Տրապիզոն⁵¹: Սակայն նիստի ավարտից քիչ անց թուրքական կողմը գրավոր տեղեկացրեց, որ Կոստանդնուպոլսից արդեն Տրապիզոն է ժամանել հինգ հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ Օսմանյան կայսրության ռազմածովային ուժերի շտաբի պետ Հուսեյն Ռաուֆ բեյի (ծագումով՝ չերքեզ) նախագահությամբ: Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը վերանայեց իր որոշումը, իսկ թուրքերը թույլատրեցին նրանց նավից ցամաք իջնել: Նույն օրը պատվիրակությանը հայտնի դարձավ, որ թուրքերը գրավել են Էրզրումը⁵²: «Փողոցով անցնող թյուրք զորաբաժինների յերգերի մեջ,- գրում է Լեոն,- բարձրաձայն շեշտվում էր «ալլեման-ոսմանի» յեղբայրությունը: Մեր պատվիրակությունը կուչ էր յեկել, զգում էր ծանրացած մթնոլորտի ճնշումը: Իսկ մեր թուրք (թաթարներ - Գ. Պ.) ընկերակիցները փայլում էյին ուրախությունից, շարունակ կանգ էյին առնում Թյուրքիայի մեծ քարտեզի առաջ»⁵³: Այդ-

⁵⁰ Լեո, նշվ. աշխ., էջ 383-384:

⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 100:

⁵² Տե՛ս նույն տեղը:

⁵³ Լեո, նշվ. աշխ., էջ 385:

պիսի բարոյահոգեբանական լարվածության և փոխադարձ անվստահության պայմաններում սկսվեց Տրապիզոնի հաշտության բանակցային գործընթացը, որը տևեց փետրվարի 27-ից (մարտի 12) մինչև ապրիլի 1-ը (14):

Թուրքական պատվիրակության ժամանումից հետո Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին այցելեց Հուսեյն Ռաուֆ բեյին: Վերջինս հաճոյախոսությունից հետո նրան առաջարկեց քննարկել հաշտության բանակցությունների տեխնիկական և կազմակերպչական ձևաչափի հարցերը: Նա նախ կտրուկ բացառեց ռուսերենի օգտագործումը՝ որպես բանակցային ընդհանուր լեզու, այնուհետև պահանջեց բացատրություն, թե ինչու է ռուս գեներալ Ե. Լեբեդինսկին (կովկասյան ռազմաճակատի հրամանատար) ընդգրկված Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության կազմում: Ա. Չխենկելին հակադարձեց՝ ասելով, որ «գեներալ Ե. Լեբեդինսկին ենթարկվում է միայն Անդրկովկասյան սեյմին: Թուրքերը դրանով բավարարվեցին»⁵⁴: Հուսեյն Ռաուֆ բեյն առաջարկեց նաև, որ հաշտության խորհրդաժողովի նախագահողը լինի իրենց պատվիրակությունից, քանի որ այն տեղի է ունենալու թուրքական տարածքում, իսկ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության անդամներն ընդամենը իրենց հյուրերն են: Իրականում թուրքերը խստիվ բացառեցին Ա. Չխենկելու՝ հաշտության խորհրդաժողովի աշխատանքները հերթով նախագահելու առաջարկը: Հարցը չսրելու նպատակով պատ-

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 101:

վիրակությունը ընդունեց թուրքերի առաջարկը, սակայն գրավոր հայտնեց իր բողոքը⁵⁵:

Նույն օրը կայացան երկու պատվիրակությունների ներկայացուցիչների փոխայցելությունները և մասնավոր զրույցները, որոնց ընթացքում «.... այնուամենայնիվ միշտ,- գրում է Ալ. Խատիսյանը,- զգացվում էր թուրքերի հետ մեր հարաբերությունների անորոշությունը»⁵⁶: Այդ ժամանակ էլ թուրքական կողմը հասկացնել տվեց, որ լուրջ մտադրություն չունի դիվանագիտական բանակցություններ վարելու Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հետ: Հայտնի դարձավ նաև, որ նրանք Տրապիզոն են եկել ոչ թե հաշտություն կնքելու, այլ ընդամենը տնտեսական, առևտրական ու այլ դաշնագրեր կնքելու համար: Թուրքական պատվիրակությունը Տրապիզոնի հանդիպումը ներկայացնում էր որպես հաշտության խորհրդածոյով և ոչ թե դիվանագիտական բանակցություններ: Նրա անդամները պնդում էին, որ հարցի լուծումը ամրագրվել է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրում, և բոլորովին անհրաժեշտություն չկա դիվանագիտական բանակցություններ վարելու: Փոխարենը Անդրկովկասի պատվիրակությունը պետք է անվերապահորեն և անհապաղ Թուրքիային հանձնի Արդահանը, Բաթումը, Կարսը՝ իրենց գավառներով, հակառակ պարագայում թուրքական բանակը հարկադրված կլինի դաշնագրով համաձայնեցված սահմաններին հասնելուց հետո ռազմական ուժով շարունակել առաջխաղացումը դեպի

⁵⁵ St'u Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 140-141:

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 102:

Անդրկովկաս: Այդ առիթով Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության քարտուղար Մ. Թումանյանը գրում է. «Թուրքերը բնաւ չեն ուզեր մեր ժողովն անուանել «հաշտութեան կոնֆերանս», այնպէս, որ մեզի համար հաշտութիւն՝ անոնց համար կոխի է, այս պատճառով ալ անոնք միշտ կաշխատեն անուանել պարզաբար «Տրապիզոնի կոնֆերանս»»⁵⁷:

1918 թ. մարտի 1-ին (14) տեղի ունեցավ Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի պաշտոնական բացումը: Նիստը նախագահող Հուսէյն Ռաուֆ բեյը քաղաքավարական ձևերի տակ թաքնված երկդիմի, կեղծ, առերես սիրալիրությամբ ողջունեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությանը՝ հայտարարելով, որ թուրքական կառավարությունն անկեղծ ցանկություն ունի բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Անդրկովկասի ձևավորվելիք հանրապետության հետ⁵⁸: Նենգափոխելով պատմական իրողությունը և ճշմարտությունը՝ Հուսէյն Ռաուֆ բեյը հայտարարեց. «Թուրքիայի և Անդրկովկասի ժողովուրդների բոլոր ռազմական գործողությունները ցարիզմի դեմ երկու հարյուր տարվա ընդհանուր փառապանծ պատմության ընթացքում ավելի են կապել այդ ժողովուրդներին: Այդ ժողովուրդները կապող շղթա են ոչ միայն պատմական և աշխարհաքաղաքական հարաբերությունները, այլ ավելի շատ ազգակցական կապերը, որոնք բխում են մեր ընդհանուր անցյալից: Հենց այդ պատճառով անդրկովկասյան և թուրք ժողովուրդները կազմված են այժմ մույն կրոնից

⁵⁷ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 73:

⁵⁸ Տե՛ս Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 114:

ու ազգություններից և ունեն գրեթե միանման պատմություն»⁵⁹: Փաստորեն, թուրքական պատվիրակության նախագահը, նենգափոխելով ամբողջ պատմական ճշմարտությունը, վիրավորում էր Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ոչ կրոնակից և ոչ ցեղակից հայերի ու վրացիների ազգային արժանապատվությունը, ինչը «բնականաբար,- գրում է Ալ. Խատիսյանը,- շփոթութիւն եւ տհաճութիւն պատճառեցին մեզ»⁶⁰: Բեյը փորձում էր իբր ապացուցել անցյալում անդրկովկասյան ու Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրերի պատմական ընդհանրությունը:

Այնուհետև մարտի 2-ի (15), 3-ի (16) և 4-ի (17) հաշտության բանակցություններում Հուսեյն Ռաուֆ բեյն արել է այնպիսի հայտարարություններ, որոնք այլևս անհնարին էին դարձնում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու հնարավորությունը: Նա, շրջանցելով հաշտության դաշնագիր կնքելու լիազորությունների և պայմանների մասին հարցը, պատվիրակության անդամներին հայտարարել է, որ դիմում է նրանց ոչ թե իբրև պետության պատվիրակների, այլ ընդամենը Օսմանյան կայսրության՝ մայր երկրի գիրկը վերադարձող անջատված տարածքների ժողովուրդների ներկայացուցիչների⁶¹ (նկատի ուներ Բաթումի, Արդահանի և Կարսի հանձնումը Թուրքիային):

Հուսեյն Ռաուֆ բեյը բանակցությունների ժամանակ հրապարակայնորեն հայտարարեց, որ Թուրքիայի կառավարու-

⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 101, նաև գ. 9, ք. 61-65, արձանագրություն N 19:

⁶⁰ Տե՛ս Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 32:

⁶¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 101:

թյունը չի ճանաչում Անդրկովկասը՝ որպես ինքնուրույն պետություն, և առաջարկեց պատվիրակությանն անել որոշակի հայտարարություն առ այն, թե որն է իրենց հանրապետության ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպության էությունը⁶², արդյոք առկա՞ են այն բոլոր պայմանները, որոնք պահանջում է միջազգային իրավունքը պետություն կազմելու համար: Անշուշտ, միամտություն կլինի կարծել, թե թուրքական պատվիրակությունն իրագեկ չէր, որ, միջազգային իրավունքի չափանիշերին համաձայն, Անդրկովկասն իր անկախության մասին դեռևս հայտարարություն չէր արել: Սակայն թուրքական կողմը, խախտելով նույն միջազգային իրավունքի նորմերը, առաջարկել էր հաշտություն կնքել Անդրկովկասի հետ: Այդ ամենն արվում էր այն պայմաններում, երբ Անդրկովկասը թեև ձևականորեն, սակայն իրավական առումով դեռևս Խորհրդրդային Ռուսաստանի մաս էր կազմում, և թուրքական կառավարությունն ու Գերմանիան միասին Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցություններ էին վարում Խորհրդային Ռուսաստանի հետ⁶³:

Մարտի 7-ին (20) Տրապիզոնի հաշտության բանակցությունների 4-րդ նիստում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, ի պատասխան թուրքական կողմի հայտարարությունների, նշեց, որ Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ստեղծվել է նոր ինքնուրույն կառավարություն, որն այժմ պատասխանատու է Սեյմի առջև, և այն, փաստորեն, մի պետություն է, որն

⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 74:

⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 179-180:

արդեն մտել է միջազգային հարաբերությունների ոլորտ: Նա մասնաշաղկապ է, որ Թուրքիայի կառավարությունն ինքն է առանձին բանակցություններ վարելու և հաշտության դաշնագիր կնքելու առաջարկ արել, հետևաբար նա ճանաչել է Անդրկովկասյան ինքնուրույն իշխանության գոյությունը, որը ներկայացնում է պետություն⁶⁴: Այնուհետև Ա. Չխենկելին հաշտության խորհրդաժողովի նիստում, ի պատասխան Ռաուֆ բեյի, պաշտոնապես հայտարարեց, որ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը չի ճանաչում բոլշևիկյան Ռուսաստանի իշխանությունը և մարտի 3-ին նրա ստորագրած Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի՝ Կովկասին վերաբերող դրույթները, քանի որ այն իրավական ոչ մի հիմք չունի և կնքվել է առանց իրենց գիտության ու համաձայնության, ուստի ոչ մի պարտավորեցնող ուժ չունի միջազգային իրավունքի տեսանկյունից: Ա. Չխենկելին մասնաշաղկապ է հայտարարեց, որ Տրապիզոնի հաշտության բանակցությունները նույնպես միջազգային-իրավական բնույթի ակտ են, չնայած Անդրկովկասը պաշտոնապես չի հռչակել իր անկախությունը և տերություններին դեռևս նոտաներ չի հղել այդ մասին⁶⁵, սակայն պետականության կարգավիճակ է ձեռք բերել, և այդ գործընթացն սկսված է:

Առարկելով Ա. Չխենկելուն՝ Հուսեյն Ռաուֆ բեյը հանդես եկավ պաշտոնական նոր հայտարարությամբ. **կտրուկ պահանջեց, որ մինչև Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի ավարտն Անդրկովկասի կառավարությունը հրապարակայնո-**

⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 159:

⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 180-181:

րեն հռչակի իր անկախությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան, և միջոցներ ձեռնարկի, որպեսզի մյուս պետությունները ճանաչեն իրեն⁶⁶: **«Մենք էլ ձեզ կճանաչենք սուվերեն պետություն, -** հայտարարում է Հուսեյն Ռաուֆ բեյը: **- Մենք մեծ ուրախությամբ կաջակցենք ձեզ սեփական պետություն կազմելու, որը մեր շահն է ընդդեմ Ռուսաստանի:** Դրա փոխարեն մենք ձեզ կօգնենք ինչպես կամենաք, օրինակ՝ զորքեր կուղարկենք ձեզ համար ընդդեմ բոլշևիկների: Դա պետք է նաև Հայկական հարցի համար. կօգնենք հայկական տերիտորիայի կազմումին (իմա՝ պետություն – Գ. Պ.) Կովկասի սահմանում»⁶⁷: Ավելի ուշ՝ ապրիլի 1-ին (14), Տրապիզոնում Հուսեյն Ռաուֆ բեյը Ալ. Խատիսյանի հետ մասնավոր զրույցի ժամանակ հայտնում է. «Մենք չենք ուզում հայկական շահերը լրիվ անտեսել: Մենք չենք ուզում Կովկասը բաժանել երկու մասի, այլ երեք մասի: Սրան դուք կարող եք վստահել միանգամայն»⁶⁸: Անշուշտ, Հուսեյն Ռաուֆ բեյի դիվանագիտական հաճոյախոսությունը բխում էր Թուրքիայի շահերից և ուներ խորքային լուրջ դրդապատճառներ:

Այնուհետև Հուսեյն Ռաուֆ բեյը մարտի 7-ի հաշտության բանակցությունների 4-րդ նիստում վերապահում է անում՝ հայտարարելով, որ երբ կնքվում էր Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից չէր անջատվել, ուստի հաշտության այդ դաշնագիրը պարտադիր է Անդրկովկասի համար, և եթե վերջինս այսօր հռչակի իր անկախությունը, ապա այդ փաստը հետադարձ ուժ չի ունենա,

⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 178-181:

⁶⁷ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

⁶⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 108:

քանի որ Անդրկովկասն իրավունք չունի վիճարկելու նրա օրինականությունը⁶⁹: Դրանով թուրքական կողմը պարզորոշ հասկացնել տվեց, որ Անդրկովկասն անկախ հռչակելու դեպքում անգամ Բաթումը, Արդահանը և Կարսը՝ իրենց գավառներով, իրավականորեն չեն կարող երկրամասի մաս կազմել: Փաստորեն, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը հայտնվեց դիվանագիտական փակուղու առջև. թուրքական կողմը կտրուկ մերժեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի՝ Կովկասին վերաբերող դրույթները չճանաչելու՝ Ա. Չխենկելու մարտի 7-ի հայտարարությունը:

Ակնհայտ է, որ Անդրկովկասն անկախ հռչակելու թուրքական պատվիրակության պնդումները և ճնշումները ունեին Թուրքիայի շահերից բխող, գավթողական նկրտումներով պայմանավորված լուրջ դրդապատճառներ: Երկու պատվիրակությունների նախագահների մասնավոր զրույցների ժամանակ Հուսեյն Ռաուֆ բեյը Ա. Չխենկելուց չթաքցրեց, թե ինչով է պայմանավորված Անդրկովկասն անկախ հռչակելու Թուրքիայի վճռականությունը: «Թուրքիան,- ասում է նա,- ատելի է Ռուսաստանի համար, և նրան (Թուրքիային – Գ. Պ.) անհրաժեշտ է Կովկասի անկախությունը որպես բուֆեր Ռուսաստանի դեմ: Եթե Կովկասը կարող է այդ դերը կատարել, ապա կարելի է խոսել ամրոցները (Բաթում, Կարս – Գ. Պ.) նրան վերադարձնելու մասին: Սակայն հարց է, թե արդյոք կարո՞ղ է Կովկասը դառնալ ամուր ինքնուրույն միասնություն (իմա՝ պետություն – Գ. Պ.), և երկրորդ՝ կարելի՞ է վստահ լինել, որ հավատարմորեն կպաշտպանի Թուրքիայի շահերը:

⁶⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 101:

...Կովկասն անկախ պետք է լինի, որովհետև երկյուղում ենք, թե հարմար առիթի դեպքում Կովկասը դարձյալ կշրջվի Ռուսաստանի կողմը: Չէ՞ որ Ռուսաստանը մի 20 տարի հետո նորից կհառնի: Եվ մի՞թե Ռուսաստանը կարող է հրաժարվել ողջ երկիրը վառելիքով ապահովող Բաքվից»⁷⁰:

Անտարակույս, թուրքերն ունեին մտավախություն, թե արդյոք անկախության հռչակումից հետո կարո՞ղ է ստեղծվել Անդրկովկասի ինքնուրույն միասնական ամուր պետություն, որը կծառայեր իբրև բռնիքի՝ պատմե՜շ, Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Սակայն մնան հավանականությունը քիչ իրատեսական էր, որովհետև առկա էին մի շարք լուրջ հանգամանքներ և խոչընդոտներ: Օսմանյան կայսրությանը քաջ հայտնի էին այդ երկրամասի երեք գլխավոր ազգերի միջև եղած խոր հակասությունները և հակամարտությունները, որոնց գլխավոր պատճառը նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն էին ու տարածքային վեճերը, որոնք երբեմն վերածվում էին ազգամիջյան արյունալի բախումների: Թուրքերին հայտնի էր մաս վրացիների և կովկասյան թաթարների բացահայտ հակառուսական դիրքորոշումը (անվիճելի էր կովկասյան թաթարների թուրքական կողմնորոշումը), սակայն նրանք վստահ չէին, թե արդյոք վրացիները կարո՞ղ են թուրքական կողմնորոշում որդեգրել: Իսկ հայերը ավանդականորեն ռուսական կողմնորոշում ունեին, և թուրքերը մտավախություն ունեին, որ Արևելյան Հայաստանը կարող է Ռուսաստանի մաս կազմել, որը լիովին հակասում էր իրենց շահերին: Վերջապես, մնան իրավիճակում Թուրքիան վստահ չէր, որ վրաց-թաթարական հակառու-

⁷⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 101:

սական կողմնորոշումը կարող է բավարար լինել՝ սեփական ուժերով պաշտպանվելու Ռուսաստանից: Այդ ամենը հաշվի առնելով՝ բուրքերը վճռական էին տրամադրված Բաթումը, Արդահանը և Կարսը որպես ռուսներից պաշտպանվելու ամրոցներ պահելու հարցում: Ավելի ուշ Հուսեյն Ռաուֆ բեյը Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահի հետ մասնավոր գրույցի ժամանակ դարձյալ կրկնում է իր մտահոգությունը. «10-20 տարի հետո Ռուսաստանը ամրապնդվելուց հետո վերադառնալու է Կովկաս, հետևաբար Անդրկովկասը պետք է հասկանա Թուրքիային և նրան ընդառաջ գնա»⁷¹: Թուրքիան, օգտվելով մնացած նպաստավոր պահից, ձգտում էր տարածքային զավթումներով վերջնականապես ապահովելու իրեն Ռուսաստանից սպասվող վտանգից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր սահմանների համար: Այդ իսկ պատճառով նա հայտարարում է, որ Կարսը, Արդահանը և Բաթումը պետք է մնան իր տիրույթում՝ իբրև ռազմական ամրոցներ⁷²: Կարսը պետք է մնար Էրզրումի պաշտպանության համար, իսկ Բաթումը՝ որպես ռազմական ուժեղ բազա Սև ծովում Ռուսաստանի և Բուլղարիայի դեմ, որը սպառնալիք էր Կոստանդնուպոլսին: Խ. Կարճիկյանը գրում է. «Կովկասի գրավումը քաղաքական մի ծրագիր է և անհրաժեշտություն Տաճկաստանի համար: Բաթումի ու Կարսի գրավումն առաջին փուլն է՝ դյուրացնելու այդ»⁷³:

⁷¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 104:

⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, ք. 5:

⁷³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, ք. 1:

Այսպիսով, Թուրքիայի ակնհայտ նպատակն էր, Անդրկովկասն անկախ հռչակելով, այն վերջնականապես, փաստացի և իրավականորեն կտրել Ռուսաստանից և թույլ, անօգնական այդ երկրամասը զավթելով՝ այն ներառել իր ազդեցության ոլորտը և այսպիսով ապահովել իրենց անվտանգությունը Ռուսաստանից:

Բնավ պատահական չէր, որ մարտի 7-ի (20) Տրապիզոնի հաշտության բանակցությունների 4-րդ նիստում թուրքական պատվիրակությունը պաշտոնապես մերժեց մաս Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության պահանջները Արդահանի, Բաթումի և Կարսի գավառների նկատմամբ: Հուսեյն Ռաուֆ բեյը հայտարարեց, որ հաշտության դաշնագիր կնքելու համար դիվանագիտական բանակցությունները կարող են սկսվել միայն այն ժամանակ, երբ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը կիրաժարվի այդ երեք գավառների նկատմամբ հավակնություններից: Պատվիրակության թաթար ներկայացուցիչ Մ. Հաջինսկին, պաշտպանելով թուրքական կողմի պնդումները, հայտարարել է. «Ինձ համար մի բան պարզ է, որ թուրքերի համար կարևորը մեր անկախության հռչակումն է, միայն մեր անկախությունը կտա հնարավորություն բանակցությունների համար: Բրեստի հաշտությունը նրանց համար անխախտելի է. հաշտություն կնքելու համար հարկավոր է անկախության հռչակումը (Անդրկովկասի – Գ. Պ.) և Կարսից, Արդահանից, Բաթումից հրաժարվել: Եվ ուրիշ ոչինչ»⁷⁴:

⁷⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 101:

Չուշացան Տրապիզոնում թուրքերի հետ դիվանագիտական բանակցությունների ընթացքում քննարկված մի շարք այլ հարցերի շուրջ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության (բացառությամբ պատվիրակության կովկասյան թաթարների ներկայացուցիչների) հակադարձումների ու անհամաձայնությունների ծանր հետևանքները: Անդրկովկասի կառավարությունը իր պատվիրակությանը հղած հեռագրում տեղեկացնում էր. «Թուրք զորքերը մտան Կովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւն չի կարելի այսպիսի պայմաններում. երկդիմի դրութիւն մը կստեղծուի, պէտք է կեցնել զօրքի առաջ խաղացումը»⁷⁵: **Տրապիզոնի հաշտության բանակցություններում իրենց այդ անօրինական, անարդարացի և զավթողական պահանջները պարտադրելու նպատակով թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության վրա բարոյահոգեբանական ճնշում գործադրելու և խուճապի մատնելու նպատակով շարունակում էին իրենց ռազմական գործողությունները՝ վիճելի տարածքները գրավելու համար:** «Ֆրոնտից եկած ամեն մի վատ լուր,- գրում է Ալ. Խատիսյանը,- ուժ էր տալիս թշնամուն»⁷⁶:

Այդպիսին էր թուրքական դիվանագիտության մարտավարությունը Տրապիզոնի հաշտության բանակցություններում: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Ես գտնում եմ, որ նման պայմաններում այլևս անհնար է շարունակել բանակցությունները, և անհրաժեշտ է դուրս գալ դժոխսային պայմաններից»⁷⁷: Իսկ պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին Անդրկով-

⁷⁵ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 73-74:

⁷⁶ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

⁷⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 100-101:

կասի խաղաղարար պատվիրակության համար ստեղծված դրությունը բնութագրեց որպես բանտային պայմաններ⁷⁸:

Այս իրավիճակում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը Տրապիզոնում ձգտում էր ուղիներ որոնելու՝ շարունակելու դիվանագիտական բանակցությունները թուրքերի հետ: «Նախ որովհետև, - գրում է Ա. Խաչատրյանը, - Չխենկելին և իր ընկերները գիտեին, որ «Ճակատի դրութիւնը շատ գէշ է: Մեր զօրքն ու հրամանատարներն իրենց պարտականութեան բարձրութեան վրայ չեն: Երկիրն անիշխանութեան մատնւած է, կռուել չեն կարող»։ Երկրորդ Չխենկելին կը խոստովանէ. - «Հոս եկանք շատ անպատրաստ կերպով: Մեր տկարութիւնը մեր մեջէն միութեան բացակայութիւնն է»:

Եւ, իրաւ է, ինչ կը ներկայացներ Կովկասի պատուիրակութիւնը՝ կովկասեան ցեղերու խառնուրդ մը, որոնք միայն ցեղային ատելութիւն ունէին իրարու դէմ միայն իբր պատմական փաստ յիշելով, այլև իրենց ազգային ձգտումներով ու շահերով տրամագծօրէն իրարու հակառակ էին: Եւ թուրքերը շատ մօտէն գիտէին այս բանը, ուստի առանց կարևորութիւն տալու զանազան դիմումներուն՝ յառաջ խաղացումը կասեցնելու՝ Կովկասի սահմաններում բուռն ուժով յառաջ կը տանէին իրենց նուաճումը, միւս կողմէն, անուշ և երկդիմի խօսքերով կզբաղցնէին պատուիրակութիւն, աշխատելով միշտ աւելի խորացնել անոնց միջև եղած արդէն բացած ճեղքը»⁷⁹:

Այսպիսով, **Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում աճող դիվանագիտական ճնշմամբ և տարածքային ռազմական**

⁷⁸ Տե՛ս նույն տեղը:

⁷⁹ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 74:

գավթումներով թուրքական պատվիրակությունը շարունակում էր պարտադրել իր ամենագլխավոր պահանջները՝ Անդրկովկասը հանդիսավորությամբ հռչակել անկախ, անվերապահորեն ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, անհապաղ Օսմանյան կայսրությանը հանձնել Բաթումը, Արդահանը, Կարսը՝ իրենց գավառներով:

Այնուհանդերձ, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը ստեղծված հակամարտ տրամադրությունների և ձգտումների պայմաններում փորձում էր դուրս գալ դիվանագիտական փակուղուց ու շարունակել բանակցությունները և հաշտության բանակցությունների օրակարգ մտցնել Անդրկովկասյան սեյմի հաստատած՝ Թուրքիայի հետ հաշտության 3-րդ և 4-րդ գլխավոր հիմնադրույթները:

Մինչ այդ Հուսեյն Ռաուֆ բեյի հանձնարարությամբ երկու պատվիրակությունների փոխայցելությունների և մասնավոր զրույցների ժամանակ շոշափվեց փետրվարի 16-ին (մարտի 1) Անդրկովկասյան սեյմի հաստատած 4-րդ հիմնադրույթը, որում ամրագրված էր, որ պատվիրակությունը կողմ է Արևելյան Անատոլիայի ինքնորոշմանը, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը թուրքական պետության շրջանակներում⁸⁰: Հուսեյն Ռաուֆ բեյն և թուրքական պատվիրակության առաջին քարտուղար Իսմայիլ Համի բեյը Ալ. Խատիսյանի և Հ. Քաջագնունու հետ մասնավոր զրույցների ժամանակ ներկայացրին Հայկական հարցի «լուծման» իրենց առաջարկը: Հուսեյն Ռաուֆ բեյը առաջարկում էր Թուրքիայի

⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 43, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, т. 84:

և Անդրկովկասի բնակչության փոխանակություն: Թուրքական կողմը պնդում էր, որ Արևմտյան Հայաստանի 300 հազար հայ փախստականներին հարկ է թողնել Արևելյան Հայաստանում, իսկ նրանց փոխարեն Արևմտյան Հայաստան մշտական բնակչության տեղափոխել նույնքան մահմեդական բնակչություն⁸¹: Դա նշանակում էր, որ թուրքական կողմը մերժում էր Հայկական հարցի լուծման պահանջը: Բնականաբար, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազունին կտրուկ մերժեցին, «որովհետև անգրում է Ալ. Խատիսյանը,- կը գրկէր մեզ իրաւունքէ պահանջել Թրքահայաստանը, որ թուրքերը կուզէին տեղաւորել Անդրկովկասէն տարւած մահմեդական տարրեր»⁸²: Հուսէյն Ռաուֆ բէյը հայ պատվիրակների առարկության առիթով պաշտոնապես հայտարարեց. «Հայերը չհամաձայնեցին իրենց (թուրքերի – Գ. Պ.) պահանջներին, նրանք՝ ռուսահայերը (արևելահայերը – Գ. Պ.), նույնպես կարող են ենթարկվել կոտորածի, ինչպես տաճկահայերը (արևմտահայերը – Գ. Պ.)»⁸³: Ի դեպ, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության պատվիրակության նախագահի այդ պաշտոնական հայտարարությունը մեկ անգամ ևս փաստում է, որ Արևմտյան Հայաստանում և այլ հայաբնակ վայրերում ցեղասպանություն և հայրենազրկում է կատարվել: Օսմանյան կառավարությունը, դեռ 19-րդ դարի կեսերից սկսած, Արևմտյան Հայաստանի բնակչության ժողովրդ-

⁸¹ Տե՛ս Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 32:

⁸² Նույն տեղում:

⁸³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, ք. 1:

դագրական կազմը հիմնովին փոխելու հեռահար նպատակով պարբերաբար և հետևողականորեն իրականացնում էր իր ավանդական քաղաքականությունը, այն է՝ ոչ միայն բացառել ցեղասպանության պատճառով հայրենագրկված արևմտահայ փախստականների վերադարձն իրենց հայրենի օջախներ, այլև Արևմտյան Հայաստանում բնակեցնել Անդրկովկասի և այլ երկրամասերի մահմեդական բնակչությանը և միջազգային հանրությանը հրամցնել, թե Արևմտյան Հայաստանում չկա մի տարածք, որտեղ հայերը մեծամասնություն են կազմում: Թուրքիայի ղեկավարությունը հուսադրում էր քրդերին, որ Արևմտյան Հայաստանը հայկական տարրերից իսպառ մաքրելուց հետո իրական պայմաններ կստեղծվեն քրդական ինքավարություն ստեղծելու համար: Քրդերը, հրապուրված պետականություն ունենալու հեռանկարով, Արևմտյան Հայաստանում և հայաշատ այլ վայրերում դարձան Հայոց ցեղասպանության և հայրենագրկման ամենագործուն մեղսակիցները: Թուրքերի հետ նրանք տիրացան Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող հայության ողջ ունեցվածքին: Ցեղասպանության և հայրենագրկության «հետևանքով Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական էթնիկական տարրը ձեռք բերեց գերակշիռ դիրք և կազմեց մեծամասնություն: Կարծես թե իրականացնում էր երիտթուրքերի կողմից քրդերին խոստացած ինքնավար Քրդստան ստեղծելու գաղափարը: Սակայն, իրականում հենց այդ ժամանակվանից սկսած, թուրքական պետության համար օրակարգի անհետաձգելի հարց էր դառնում նաև «քրդական պրոբլեմի» լուծումը: Նկատի ունենալով Օսմանյան

կայսրության մեջ բնակվող քրդական տարրը, «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարներից մեկը գրել է, որ «մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից»»⁸⁴:

Այսօր, ինչպես բունդերանգ, ցեղասպանության սպառնալիքը ուղղվել է մասնավորապես Արևմտյան Հայաստանում բնակվող քրդերի դեմ (Արևմտյան Հայաստանը քրդերը համարում էին իրենց «հայրենիքը»):

Տրապիզոնում երկու պատվիրակությունների փոխադարձ այցելությունների և մասնավոր գրույցների ժամանակ թուրքական կողմը չէր թաքցնում Օսմանյան կառավարության պաշտոնական դիրքորոշումը. «Այլևս թույլ չեն տա հայերին վերադառնալ Թուրքահայաստան»⁸⁵: Նրանք հայտարարեցին նաև, որ Հայկական հարցը «Թուրքիայի համար բացարձակապես ընդունելի չէ և նույնիսկ ավելորդ է Թուրքահայաստանի ինքնավարության մասին խոսելը. այնտեղ (Արևմտյան Հայաստանում – Գ. Պ.) հայեր չկան և չեն լինի, քանզի որտեղով անցնում է թուրք զինվորը, այնտեղ այլևս հայ չի մնա»⁸⁶: Դրա համար էլ թուրքերը խորհուրդ էին տալիս Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության վրաց և թաթար անդամներին այլևս չբարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը, այլ «լեզու գտնեն և գործեն համերաշխ առանց հայերի»⁸⁷:

Հուսեյն Ռաուֆ բեյը և նրա պատվիրակության անդամներն անգիջում ու վճռական էին իրենց բոլոր պահանջներում: Տրապիզոնի մարտի 8-ի (21) հաշտության բանակցությունների

⁸⁴ Տե՛ս Վ. Բալթուրդյան, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008, էջ 227:

⁸⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 103:

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ Նույն տեղում:

5-րդ նիստում նա կտրուկ մերժեց և անթույլատրելի համարեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության առաջարկը՝ Անդրկովկասյան սեյմի հաստատած 4-րդ գլխավոր հիմնադրույթը՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը օրակարգ մտցնելը, և այն պաշտոնապես որակեց «միջամտություն Թուրքիայի ներքին գործերին»⁸⁸: Նա զայրույթով հայտարարեց, որ «վերջին դարերի թուրքական պատմության ամբողջ ընթացքում մեծ պետությունները Թուրքիային խեղդել են այդ հարցով (Հայկական – Գ. Պ.)»⁸⁹: Այնուհետև Հուսեյն Ռաուֆ բեյը գրավոր վերջնագիր ներկայացրեց Ա. Չխենկելուն՝ պահանջելով պատասխանել ամենակարճ ժամկետում՝ 3-4 օրվա ընթացքում⁹⁰: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Այս հայտարարությունը ուժեղ ազդեցություն գործեց պատվիրակության վրա: Հարցի լրջության պատճառով հայտարարվեց, որ անհրաժեշտ է մեծ ընդմիջում՝ հետագա քայլերի մասին սեփական կառավարություններին հարցում անելու համար»⁹¹:

Տրապիզոնում ժամանակավորապես ընդհատվեցին հաշտության դիվանագիտական բանակցությունները, սակայն շարունակվեցին Հայկական հարցի շուրջ երկու պատվիրակությունների փոխադարձ այցելությունները և մասնավոր զրույց-

⁸⁸ BOA. ՄԵ., f. 21, dos. 7/4, nr. 9, (Թուրքիայի կառավարությանը կից օսմանյան արխիվ): Շնորհակալություն ենք հայտնում թուրքագետ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արսեն Ավագյանին՝ բարյացակամ վերաբերմունքի և թուրքական (օսմանյան) արխիվներից մեզ նյութեր տրամադրելու համար:

⁸⁹ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 143.

⁹⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 102:

⁹¹ Նույն տեղում:

ները, որոնց ընթացքում թուրքական կողմը դարձյալ շարունակում էր համառորեն մերժել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը և վճռականորեն պնդել իր գլխավոր պահանջները: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը մնաց երկու պատվիրակությունների մասնավոր գրույցների շրջանակներում: Հ. Քաջագունու հարցադրմանը Ա. Չխենկելին պատասխանեց. «Մասնավոր գրույցների ժամանակ ամեն անգամ (Հուսեյն Ռաուֆ բեյից – Գ. Պ.) ստանում եմ նույն ձևական պատասխանը. «Դա Թուրքիայի գործն է»»⁹²: Ալ. Խատիսյանի հետ գրույցի ժամանակ վերջինս ասել է, որ «ամեն մի հայի մեջ նստած է եղել մի ռուս լրտես»⁹³, «հայերը դավաճանել են Թուրքիային, որ մինչև պատերազմը (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.) թուրքերն առաջարկել են իրենց հետ միության մեջ լինել ռուսների դեմ, այնքան էին նրանց (հայերին – Գ. Պ.) վստահում: Բայց հայերը փախչում էին բանակից, գնում էին Ռուսաստան և կռվում էին թուրքերի դեմ: Նրանց մոտ գտնում էին ռումբեր, արկեր, քնդանոթներ և ծածկագրեր՝ Անգլիայից ու Ֆրանսիայից, որ դարձյալ բերվում էին Ուրֆայով (Կիլիկիա): Եթե թուրքերը հայերի դեմ միջոցներ չձեռնարկեին, ապա ռուսներն արդեն Կոստանդնուպոլսում և Ալեքսանդրեթում կլինեին»⁹⁴:

Նույն օրը՝ մարտի 8-ի (21) երեկոյան, կայացան Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության մի քանի ընդհանուր նիստեր: Ա. Չխենկելու առաջարկությամբ ստեղծվեց մի հա-

⁹² Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 142.

⁹³ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 311:

⁹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 105:

տուկ հանձնախումբ՝ կազմված պատվիրակության 17 անդամներից և Հ. Քաջազնունու, Գ. Լասխիշվիլիի և Ի. Հայդարովի գլխավորությամբ՝ նրանց Թիֆլիս գործուղելու՝ Սեյմին և կառավարությանը զեկուցելու հաշտության խորհրդաժողովում ստեղծված երկու պատվիրակությունների առճակատումների, անհամաձայնությունների մասին և նրանցից նոր լիազորություններ ու հանձնարարականներ ստանալու՝ թուրք-անդրկովկասյան ընդհատված բանակցությունները շարունակելու համար: Սակայն հատուկ հանձնախումբը «իր կողմից, գրում է Ալ. Խատիսյանը, ոչ մի հանձնարարական կամ գաղափար չի ուղարկում, այլ միայն ներկայացնում է գործի սեփական միակ կողմը»⁹⁵:

Հաջորդ օրը՝ մարտի 9-ին (22), հատուկ հանձնախումբը մեկնեց Թիֆլիս: Մարտի 12-ին (25) Թիֆլիսում հրավիրված՝ Անդրկովկասյան սեյմի նախագահության, կառավարության և խմբակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողովում հանձնախմբի ղեկավարներ Հ. Քաջազնունին, Գ. Լասխիշվիլին և Ի. Հայդարովը ներկայացրին Տրապիզոնում կայացած հաշտության բանակցությունների հինգ նիստերի արձանագրությունները, դիվանագիտական բանակցային գործընթացներում ստեղծված անհամաձայնությունները և հակամարտությունների ամբողջ պատկերը⁹⁶: Նրանք հաղորդեցին նաև, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը իր հանձնախմբի անդամներին «հանձնարարել է Սեյմին տեղեկացնել բանակցությունների իրավիճակի մասին, իսկ պատվիրակու-

⁹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 102:

⁹⁶ Տե՛ս BOA, ԿԲ., f. 21., dos. 7/3, nr. 1-5:

քյունն ինքը (հատուկ հանձնախումբ – Գ. Պ.) չունի ընդհանուր կարծիք այն մասին, թե ինչ փոփոխություններ կարելի է մտցնել Սեյմի հաստատած դրույթներում»⁹⁷: Իրազեկումից հետո միացյալ ժողովում ծավալվեց մտքերի փոխանակություն երկու հարցերի շուրջ՝ առաջին՝ Անդրկովկասի անկախության հռչակման, և երկրորդ՝ փետրվարի 16-ին (մարտի 1) Սեյմի հաստատած 3-րդ և 4-րդ հաշտության գլխավոր հիմնադրույթները վերանայելու և Թուրքիային որոշ զիջումներ անելու:

Առաջին հարցի քննարկման ժամանակ Սեյմի բոլոր խմբակցությունները, բացառությամբ «Մուսաֆաթի», մահմեդական սոցիալիստական դաշինքի (բլոկի) և Ռուսաստանի մահմեդականների կուսակցության, արտահայտվեցին Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելու դեմ՝ առաջարկելով, որ այն առանձին հատուկ կետով ամրագրվի ապագա հաշտության դաշնագրում⁹⁸: Մահմեդական խմբակցության ներկայացուցիչ Մ. Մեհտիկը, պաշտպանելով Թուրքիայի պահանջը, հայտարարում է, որ եթե Անդրկովկասն անկախ չհռչակվի, ապա իրենց խմբակցությունը կիրաժարվի Տրապիզոնի հաշտության բանակցություններին սատարելուց⁹⁹:

Միացյալ ժողովում հնչեցին Սեյմի նախագահության, կառավարության անդամների՝ Ի. Ծերեթելիի, Խ. Կարճիկյանի, հատուկ հանձնախմբի ղեկավարներ Հ. Քաջազնունու, Գ. Լասխիշվիլիի և այլոց կարծիքներն Անդրկովկասն անկախ հռչակելու պարագայում երկրամասում սպասվող տարածքային

⁹⁷ Նույն տեղում, որ. 1-3:

⁹⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹⁹ Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 145:

սահմանների, քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ առճակատումների ու դժվարությունների լրջագույն հետևանքների մասին: Ի. Ծերեթելին, դեմ արտահայտվելով Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելուն, նշեց, որ այդ դեպքում «ստիպված կլինենք որոշել Անդրկովկասի պետության տարածքային սահմանները, և քանի որ այդ սահմաններում կներառվեն վեճի առարկա երեք մարզերը (Բաթում, Արդահան, Կարս – Գ. Պ.), ո՛չ Թուրքիան, ո՛չ ղաշնակցային այլ տերություններ չեն ճանաչի մեր անկախությունը, և մեր առաջարկությունը կդիտեն որպես վերջնագիր»¹⁰⁰:

Այնուհետև երկրորդ հարցի շուրջ սկսվեց բանավեճ՝ Թուրքիային զիջումներ անելու առավելագույն և նվազագույն չափը որոշելու համար, որպեսզի հնարավորություն ստեղծվի Տրապիզոնում թուրքական պատվիրակության հետ շարունակելու ընդհատված դիվանագիտական բանակցությունները: Սակայն Սեյմի անդամ Ի. Ծերեթելիի առաջարկով միաձայն ընդունվեց, որ նպատակահարմար չէ զիջումների հարցը քննարկել ու որոշում կայացնել միացյալ ժողովում, այլ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելիին պետք է լիազորել լայն իրավունքներով, իսկ պատվիրակության մյուս անդամները կունենան նրա խորհրդականների կարգավիճակ: Նրան իրավունք էր վերապահվում իր իսկ պատասխանատվությամբ ինքնուրույն քայլեր կատարելու այս կամ այն զիջումների համար, իսկ ավելի կարևոր խնդիրների դեպքում՝ հարցում անելու Սեյմին և կառավարությանը: Որոշվեց նաև, որ Տրապիզոնի հաշտության

¹⁰⁰ BOA, ՄԵ., f.21, dos. 7/3, nr. 3:

բանակցությունների պաշտոնական քայլերը կատարվելու են Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության անդամների ընդհանուր նիստերում նախապես քննարկելուց ու հավանության արժանանալուց հետո¹⁰¹: Ա. Չխենկելուն իրավունք վերապահվեց հաշտության դաշնագիր ստորագրել Թուրքիայի հետ: Սակայն հետագա իրադարձությունները մեկ անգամ ևս ապացուցեցին, թե Սեյմի՝ մեծամասնություն կազմող վրացական ներկայացուցիչները մարտի 13-ին (26) ինչու Ա. Չխենկելուն նման լայն իրավունքներով լիազորեցին: Իրականում Ա. Չխենկելին և նրա պատվիրակությունը ոչ թե նպաստեցին Անդրկովկասին սպառնացող վտանգը կանխելուն, այլ, շրջանցելով հայկական խնդիրները, ընդամենը պաշտպանեցին վրացական շահերն ամբողջ դիվանագիտական բանակցությունների ընթացքում, որը ցավալի հետևանքներ ունեցավ ոչ միայն հայերի, այլև իրենց՝ վրացիների համար:

Մարտի 16-ին (29) հատուկ հանձնախումբը վերադարձավ Տրապիզոն: Նույն օրն էլ հրավիրվեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության 39-րդ ընդհանուր նիստը, որտեղ լսվեց հատուկ հանձնախմբի անդամների զեկույցները Թիֆլիսի միացյալ ժողովում ու Սեյմում քննարկված հարցերի և ընդունված որոշումների մասին¹⁰²: Նույն օրը՝ երեկոյան, Ա. Չխենկելիի հետ մասնավոր գրույցի ժամանակ Հուսեյն Ռաուֆ բեյը Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունից պահանջեց մինչև մարտի 21-ը (ապրիլ 3) պատասխան տալ¹⁰³:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Տե՛ս նույն տեղը, որ. 3-5:

¹⁰³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 104:

Մարտի 18-ին (31) Տրապիզոնում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ընդհանուր նիստում (նախագահող՝ Ա. Չխենկելի) քննարկվեց Սեյմի հաստատած 3-րդ և 4-րդ հաշտության հիմնադրույթների վերանայման և Թուրքիային որոշ զիջումներ անելու հարցը: Այն իր աշխատանքն սկսեց Սեյմի 4-րդ գլխավոր դրույթի՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը թուրքական պետականության շրջանակներում հարցի քննարկումից, որտեղ նոր տարաձայնություններ առաջացան պատվիրակության անդամների միջև:

Ընդհանուր նիստում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ հանգամանալից, փաստարկված զեկուցումներով հանդես եկան Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազնունին: Ալ. Խատիսյանը նախ ներկայացրեց հարցի համառոտ պատմությունը, այնուհետև՝ 1915 թ. ցեղասպանության և հատկապես Տրապիզոնում կատարված ոճրագործությունների մասին մանրամասներ, ապա կարևորեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնախնդրի լուծման անհրաժեշտությունը: Տարածքների մասին խոսելիս Ալ. Խատիսյանը նշում է, որ Արևմտյան Հայաստանում հայերը հետապնդում են ինչպես էթնիկ, այնպես էլ քաղաքական, տարածքային նպատակներ. «Սա նկատի առնելով՝ մենք պետք է հասնենք այն բանին, որ որոշվի անգամ նվազագույն տարածք՝ խիստ որոշարկված սահմաններով, որտեղ հայ բնակչությանը և Թուրքիայի՝ այդտեղ բնակվող մյուս ժողովուրդներին պետք է տրվեն ինքնավար (ինքավարության) իրավունքներ: Այդպիսի տարածք կարող է լինել Բայազետի սանջակը, Էրզրումի վիլայեթը, Մուշի սանջակը և Բիթլիսի վիլայեթի հյուսիսային մասը՝ առանց

Բատմանսուի (Տիգրիսի վերին հոսանք – Գ. Պ.) հարավային շրջանի»¹⁰⁴: Վերջում Ալ. Խատիսյանը հայտնեց, որ հայերի ցանկությունն է իրենց հայրենիքում ստանալ մի անկյուն, որտեղ կարող են ապրել ինքնավար կյանքով՝ թուրքական կառավարության հովանու ներքո: Եզրափակելով իր խոսքը՝ զեկուցողը նշում է. «...Վանա լիճը՝ Մուշի, Ալաշկերտի և Վանի երեք դաշտավայրերով, հայ ժողովրդի ուշադրության կիզակետն է: ... Իր ներքին գործերը վարելու համար այդ շրջանի բնակչությունը պետք է օգտվի ինքնակառավարման իրավունքներից՝ օրենսդիր ներկայացուցչական ժողովով և ընտրովի կենտրոնական գործադիր մարմնով: Նրան է տրվում ինքնակառավարվող տարածքում բնակվող բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներից միլիցիա կազմավորելու իրավունքը: ... Հայ-թուրքական հարաբերությունների ամենամռայլ պայմաններում հայերի շրջանում անշատողականության գաղափար անգամ չէր ծագում: Ինքնակառավարվող Հայաստան՝ Թուրքիայի սահմաններում. այսպիսին էր թուրքահայերի մշտական կողմնորոշումը»¹⁰⁵:

Ալ. Խատիսյանը կարևորել է նաև ցեղասպանության պատճառով հայրենագրկված արևմտահայ փախստականների վերադարձը իրենց հայրենի օջախներ. «Այժմ ես և իմ ընկեր Քաջազնունին ելույթ ենք ունենում ռուսահայերի անունից՝ որպես Անդրկովկասի սեյմի անդամ պատվիրակներ, մենք գիտենք մեր եղբայրների ցանկությունները, և մենք նաև գիտենք, որ առանց Թուրքիայում Հայկական հարցը լուծելու անհնար է

¹⁰⁴ BOA, ՄԵ., f. 21, dos. 7/4, nr. 1:

¹⁰⁵ Նույն տեղում, nr. 2:

Անդրկովկասում կարգուկանոն հաստատելը. Անդրկովկասը և այնտեղ բնակվող ժողովուրդները չեն կարողանա վերացնել ներքին տարաձայնությունները միմյաց միջև, եթե հայերին թուրքիայում տեղավորելու հարցը և հայ փախստականների՝ տուն վերադառնալը չստանան իրենց դրական լուծումը: Այսպիսին են Արևելյան Անատոլիայի հայերին տեղավորելու գործի հիմնական դրույթները: Ցավոտ հարցի լուծման այս միջոցը ամենավճռական ձևով, ի դեպ, կլուծի Անդրկովկասում բնակվող թուրքահայերի՝ հայրենիք հանգիստ վերադառնալու հույժ կարևոր հարցը»¹⁰⁶: Այնուհետև որոշ դրույթներ լուսաբանելու համար Ալ. Խատիսյանը բերում է Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների, հատկապես այդտեղի հայերի քանակի մասին ընդհանուր վիճակագրական տվյալներ: Դրանք քաղված էին 1914 թ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հրատարակած «Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու»-ից և 1913 թ. գերմանացի գիտնական Յ. Լեփսիուսի հրապարակած տվյալներից: Ըստ դրանց՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում ընդհանուր բնակչությունը կազմում էր 2 600 000, իսկ հայերի թիվը հասնում էր 1 034 400¹⁰⁷-ի: Եզրափակելով իր խոսքը՝ Ալ. Խատիսյանը նշում է, որ ներկայացված հիմնավորումները էական հիմք են թափանցելու հիմնահարցի մանրամասների մեջ. «Ինչ վերաբերում է հայերի պահանջները կենսագործելու միջոցին, ապա պետք է հուսալ, որ Թուրքիայի և Անդրկովկասի համար ընդունելի պատվավոր խաղաղությունը կնքելու գործն իր ձեռքը վերցրած անդրկով-

¹⁰⁶ BOA, ՄԵ., f. 21, dos. 7/4, nr. 5 (Նկատի ունի Արևմտյան Հայաստան):

¹⁰⁷ Տե՛ս BOA, ՄԵ. f. 21, dos. 7/4, nr. 7:

կայան ժողովրդավարությունը, հատկապես Վրաստանի և մահմեդականների ժողովրդավարությունը կանեն այն, ինչ առաջ չէր հաջողվում միջազգային դիվանագիտությանը, և թուրքահայերի պատմության մեջ կբացվի լուսավոր նոր էջ»¹⁰⁸:

Ա. Չխենկելին, արձագանքելով Ալ. Խատիսյանի գեկուցմանը, ընդհանուր նիստի մասնակիցներին հիշեցնում է, որ «մենք ունենք Օսմանյան պատվիրակության՝ մարտի 8-ի պատասխանը, որը վերաբերում է հայկական հարցին (կարդում է): Մենք Սեյմում ունենք այս հարցի հայտնի դրվածքը, որն արտահայտված է մեր 4-րդ թեզիսում: Առաջարկում են պատվիրակությանը հարցի դրվածքը փոխելու հնարավորության պաշտոնական քննարկմամբ զբաղվել»¹⁰⁹: Կարծես թե Ա. Չխենկելին ուղղորդում էր պատվիրակության անդամներին 4-րդ հիմնադրույթը հանել օրակարգից: Իսկ Հ. Քաջազնունին, հակադրվելով Ա. Չխենկելուն, նշեց, որ խաղաղության դաշնագրի ստորագրման հետ միաժամանակ սուլթանը հատուկ պայման է հայտարարում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը սուլթանի իշխանության (ինքնավարության) ներքո՝ ունենալով սեփական կառավարություն և միլիցիա: Ինքնավար Արևմտյան Հայաստանը սուլթանին ամենամյա տուրք է վճարելու: Իսկ ինքնավարության սահմանների, տարածքները բնակեցնելու, կառավարման ձևի և այլ հարցերը կձևակերպվեն, «եթե լինի օսմանյան պատվիրակության սկզբունքային պատասխանը՝ քննարկման և համաձայնության հարց դարձ-

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ BOA, ՄԲ., f. 21, dos. 7/4, nr. 8:

նել Թուրքահայաստանի հիմնախնդիրը վերը նշված ուղղությամբ:

Թուրքիայի կողմից պարտավորության ձևը և հայտարարության ձևը դիվանագիտական տեխնիկայի հարց են, ինչին մենք էական նշանակություն չենք տալիս»¹¹⁰:

Սակայն վրաց և թաթար պատվիրակության անդամներն իրենց ելույթներում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցում ընդհանուր առմամբ դրսևորեցին մերժողական կեցվածք: Գ. Լասխիշվիլին հայտարարեց. «Մենք հնարավորություն չունենք հայկական հարցի լուծմանը հասնելու: Այդ պատճառով ես կարծում եմ, որ Մեյմի դրույթներից 4-րդ կետը պետք է հանել: Մենք պետք է բացատրենք թուրքերին, որ սամիջամտություն չէ իրենց գործերին, որ Անդրկովկասը չի կարող հանգիստ ապրել և ազատ զարգանալ, եթե Թուրքիայի սահմաններում հայկական հարցը լուծում չստանա: Ես կարծում եմ, որ Թուրքիայի հետ պետք է կնքվի հատուկ համաձայնագիր համաներման և փախստական հայերի՝ Թուրքիա՝ իրենց լքած գավառները վերադառնալու մասին: Սրանից ավելի, դժբախտաբար, մենք ոչինչ անել չենք կարող»¹¹¹: Խաղաղարար պատվիրակության անդամ Խաս-Մամեդովը, պաշտպանելով թուրքերի պահանջները, իր ելույթում հայտարարել է. «Այժմ ես կխոսեմ ոչ թե որպես խաղաղարար պատվիրակության անդամ, այլ որպես անդրկովկասցի, որպես հասարակական և քաղաքական գործիչ: Ես նույնպես կարծում եմ, որ այն ձևը, որով շարադրվել էին Մեյմի պահանջները Հայաստանի

¹¹⁰ Նույն տեղում:

¹¹¹ Նույն տեղում, որ. 9:

վերաբերյալ, ոչ այլ ինչ է, քան միջամտություն Օսմանյան պետության ներքին գործերին»¹¹²: Իսկ վրաց պատվիրակ Գ. Գվազավան, առարկելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարին, հայտարարում է. «Միակ բանը, որ հնարավոր է, համընդհանուր համաներման պահանջն է փախստականների... և այլոց նկատմամբ: Սա հսկայական նշանակություն կունենա հայ փախստականների համար: Այդ պատճառով ես առաջարկում եմ ամբողջովին հանել 4-րդ կետը»¹¹³: Մ. Հաջինսկին նույնպես հակադրվեց Հ. Քաջագնունուն՝ դրանք որակելով առավել վերջնագրային, քան նույնիսկ Մեյմի պահանջների 4-րդ հիմնադրույթն է, և առաջարկեց հարցը դնել «գոնե պատերազմող կողմերի քաղաքացիների համար համաներման և հայ փախստականների՝ Թուրքիա վերադառնալու ձևով»¹¹⁴: Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ գրեթե նույն մերժողական ելույթները հնչեցին խաղաղարար պատվիրակության մյուս անդամների կողմից, և արդյունքում հիմնախնդիրը տեղափոխվեց «համաներման» դաշտ, որը նույնպես Թուրքիան մերժեց:

Ալ. Խատիսյանը իր եզրափակիչ ելույթում, առարկելով նախորդ բանախոսներին, մեկ անգամ ևս համառոտ ներկայացրեց հիմնախնդրի քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, անվտանգության խիստ կարևորությունը ոչ միայն հայերի, այլ նաև Անդրկովկասի ժողովուրդների համար: Ալ. Խատիսյանը, չհամաձայնելով նախորդ բանախոսների հետ, «առաջարկում է ցույց տալ Օսմանյան պատվիրակությանը, որ

¹¹² Նույն տեղում, որ. 15:

¹¹³ Նույն տեղում, որ. 14:

¹¹⁴ Նույն տեղում, որ. 9:

Անդրկովկասի պատմիրականությունը նպատակ չի ունեցել հատուկ դիպչելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, և նշել այն հիմքերը, որոնցով Հայկական հարցը կարգավորելու համար մտավ Անդրկովկասի պատմիրականության առաջ քաշած դրույթների մեջ: Մենք պետք է մեր պատասխանում առաջին հերթին նշենք Անդրկովկասն ու Օսմանյան կայսրությունը բնակեցնող ժողովուրդների բարեկամական հարաբերությունները, և երկրորդ հերթին այն, որ Անդրկովկասի սահմաններում մի քանի հարյուր հազար թուրքահպատակ հայ փախստականներ կան, որոնց հետագա ճակատագիրը անքակտելիորեն կապված է Անդրկովկասի երկրամասի պարենային, տնտեսական և այլ շահերին, և Թուրքիայում Հայկական հարցի այս կամ այն լուծումից է կախված Անդրկովկասի ներքին կյանքի հանգիստ կազմակերպումը: Ես համաձայն չեմ Գ. Գվազավայի հետ, որը առաջարկություն մտցրեց 4-րդ կետը հանելու մասին, քանզի այս կամ այն կետը կարող է հանել միայն Մեյմը: Մեյմի տված նոր լիազորությունները մեր նախագահին իրավունք չեն տալիս հիմնադրություններից այս կամ այն կետը հանելու: Եթե մեզ առաջարկում են, ինչպես դա արեց Գ. Լասխիշվիլին, Հայկական հարցի լուծումը հետաձգել մինչև համաշխարհային նոր խորհրդաժողովը, ապա, իմ խորին համոզմամբ, այդ ժամանակ Հայկական հարցի լուծումը կարող է ավելորդ լինել, որովհետև եթե բանակցությունները չհանգեցնեն ցանկալի արդյունքների, ապա դա կարող է բերել հայերի նոր ջարդերի»¹¹⁵: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի ինք-

¹¹⁵ BOA. ՄԲ., f. 21, dos. 7/4, nr. 21:

նավարության հիմնահարցը շարունակեց մնալ երկու պատվիրակությունների անպտուղ քննարկումների թեմա:

Այսպիսով, ստեղծված պայմաններում ակնհայտ էր, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության երկու հայ անդամներ Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազունին չէին կարող դիվանագիտական դաշտում որևէ դեր խաղալ և քիչ թե շատ ազդեցություն գործել բանակցային գործընթացների վրա: Այնուամենայնիվ, հայ պատվիրակները փորձեցին բարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը, որը թուրքերի և խաղաղարար պատվիրակության որոշ անդամների կողմից որակվեց որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Երկու պատվիրակությունների մասնավոր գրույցների ժամանակ թուրք պատվիրակները բացահայտ հայտարարեցին, որ իրենց պայմանները չընդունելու պարագայում իրենք ոչ միայն կկոտորեն Թուրքիայի տարածքում բնակվող շուրջ 200 հազար հայերին, այլև չեն խնայի կովկասահայերին: Այսքանով էլ փակվեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը Տրապիզոնի բանակցություններում:

2. Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը Տրապիզոնի բանակցություններում (1918 թ. մարտ-ապրիլ)

Ինչպես վերը նշվեց, Տրապիզոնի դիվանագիտական բանակցային գործընթացներում առանցքային տեղ էին գրավում նաև տարածքային և սահմանային խնդիրները:

Օսմանյան Թուրքիայի կողմից տարածքային նոր զավթումները և աճող դիվանագիտական ճնշումը Տրապիզոնում գտնվող Անդրկովկասյան խաղարար պատվիրակությանը հարկադրեցին վերանայելու նաև Սեյմի՝ 1918 թ. փետրվարի 16-ին (մարտի 1-ի) հաստատած 3-րդ հիմնադրույթը, որում ամրագրված էր՝ կնքվելիք հաշտության դաշնագրում պետք է դրվի ռուս-թուրքական պետական այն սահմանների վերահաստատումը, որոնք գոյություն ունեին մինչև Առաջին աշխարհամարտը¹¹⁶: Սակայն ստեղծված ծանր և աննպաստ պայմաններում Անդրկովկասյան խաղարար պատվիրակությունը բանակցային փակուղուց դուրս գալու համար հարկադրված էր Թուրքիային տարածքային որոշ զիջումներ անել:

1918 թ. մարտի 19-ին (ապրիլի 1) Անդրկովկասյան խաղարար պատվիրակության երկու ընդհանուր բանակցային նիստերում քննարկվեց Սեյմի 3-րդ հիմնադրույթը վերանայելու և Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը: Այստեղ բխվում էին երկրամասի երեք գլխավոր ազգությունների շահերը. վրացիները չէին ուզում Թուրքիային զիջել Բաթումը, իսկ

¹¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 84:

հայերը՝ Կարսը: Վրաց և թաթար պատվիրակության անդամները բանակցային նիստերում ոչ թե դնում էին տարածքների փոխզիջումների հարցը, այլ փորձում էին իրենց տարածքները պահպանելու հաշվին թուրքերին զիջել հայկական հողերը: «Վրացիների համար,- գրում է Լեոն,- շատ պարզ էր խնդիրը, պետք էր տալ Կարսը և պահել Բաթումը: Թուրքերն էլ (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) միացան այդ առաջարկության: Բայց ի՞նչ անել Կարսի շրջանի 100 հազար հայությունը, ի՞նչ պես պաշտպանել Յերևանի նահանգը և մանավանդ նրա հաղորդակցության միակ ճանապարհը, յերկաթուղին, վոր բավական յերկար տեղ քերում է Արփաչայի ավիը և այսպիսով կրնկներ թյուրքերի վոչ թե թնդանոթային կամ հրացանային կրակի տակ, այլ ատրճանակների գնդակների տակ: Այս նկատառումները, վորոնց պաշտպանողը յես էյի խորհրդակցական ժողովներում, բերին այն եզրակացության, վոր, յեթե կարելի յես սակարկություններ անել, պետք է ընդունվի դրա համար այն սկզբունքը, վոր Թյուրքիային զիջվեն միայն թուրքաբնակ յերկրները: Բաթումը և Կարսը վորոշվում էր չզիջել»¹¹⁷: Այդ առաջարկությունների հիման վրա սահմանային տեղագրություն կազմելու նպատակով Անդրկովկասյան խաղաղար պատվիրակությունը ստեղծեց երեք անձից բաղկացած հանձնախումբ, որի մեջ մտան պատվիրակության՝ Հայկական հարցի գծով խորհրդական Լեոն, վրացի պատմագետ Յ. Ինգորավան և կովկասյան ռազմաճակատի շտաբի մի ռուս սպա, որը լավատեղյակ էր սահմանների տեղագրությանը¹¹⁸: «Սկսեցինք աշ-

¹¹⁷ Լեոն, նշվ. աշխ., էջ 386:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղը:

խատել,- գրում է Լեոն,- բայց առաջին իսկ քայլերից դժվարություններ հարուցանում էր վրացական տենդենցիան – որքան կարել յե շատ բան տալ Կարսի շրջանից՝ Արդահանի և Բաթումի շրջաններում զիջողություն քիչ անելու համար: ... Բայց և այնպես, «իմ ու քո»-ի խիստ հարցեր էյին բարձրանում: Այսպե՞ս պիտի յերեք ազգերն ընդհանուր ույժերով յերկիրը պաշտպանեյին: Յես չեյի ծածկում իմ զարմանքն ու դիմադրում էյի չափազանց անդեն մանր-մունր ազգայնական սակարկություններին: Այս մասին, ի հարկե, իմաց տրվեց Չխենկելիին, վոր ինձանից բացատրություն պահանջեց և ստացավ սպանիչ մանրամասնություններով»¹¹⁹:

Ինչպես վերը նշվեց, Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը դարձավ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամների տարածայնությունների ու բուռն վիճաբանությունների առանցքային թեման: Պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, հիմք ընդունելով պատվիրակության ընդհանուր բանակցությունների նիստերում հնչած կարծիքները, կազմեց Թուրքիային տարածքային զիջումներ անելու իր նախագիծը, որն էլ հրապարակեց մարտի 21-ի (ապրիլի 3) նիստում: Ըստ այդ նախագծի՝ Թուրքիային էր հանձնվելու Օլթիի ամբողջ գավառը, Արդահանի գավառի կեսից ավելին և Կարսի ու Կադզվանի շրջանների զգալի մասը¹²⁰: Նախագծին դեմ արտահայտվեցին խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: Վերջինս գրում է. «Սա մեր բողոքի պատճառն է դառնում: Երե-

¹¹⁹ Նույն տեղում, էջ 386-387:

¹²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 104:

կոյան կողմ կազմվում է վերջնական նախագիծը, ըստ որի՝ 34 հազար վերստից հանձնվում է 8 հազարը: Մենք դժգոհ ենք մնում, որովհետև այն ամենը, ինչ տրվում է (Թուրքիային – Գ. Պ.), տրվում է մեր հաշվին և ոչինչ՝ Բաթումի շրջանի հաշվին»¹²¹:

Մարտի 23-ին (ապրիլի 5) Տրապիզոնի հաշտության բանակցությունների 6-րդ նիստում Ա. Չխենկելին հրապարակեց Թուրքիային տարածքային զիջումներ անելու ծրագիրը, որն էլ ուղարկվեց Կոստանդնուպոլիս¹²²: Մինչև այնտեղից պատասխան ստանալը հայտարարվեց ընդմիջում, սակայն շարունակվեցին թուրք-անդրկովկասյան պատվիրակությունների փոխայցելությունները և մասնավոր գրույցները վիճելի մի քանի հարցերի շուրջ: Այդ հանդիպումների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ բեյը, անդրադառնալով Հայկական հարցին, հայտնել է. «Եթե Անդրկովկասի կառավարությունը ցանկանում է Թուրքիայի հետ բարեկամություն հաստատել և խաղաղություն կնքել, նա պետք է տարածքներ զոհաբերի և մի կողմ դնի Հայկական հարցը: ... Ճիշտ է, հայերը խոսում են Թուրքիայի սահմաններում Հայաստանի ինքնավարության մասին, **բայց դա ինքնիշխանության վաղուց հայտնի նախաբանն է. այդպես եղավ Բալկաններում թուրքական գավառների հետ:** Այժմ էլ Թուրքիայում կա արքայազն Սաբահ Էդրիհի* «Թուրքիայի այդ դավաճանի» կուսակցու-

¹²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 105:

¹²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, ք. 188:

* Աբդուլ Համիդի քրոջ որդին: 1900 թ. տեղափոխվելով Եվրոպա՝ ստեղծեց «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնության լիգա» կազմակերպությունը, սկսեց հրատարակել «Առաջադիմություն» թերթը: Նա դարձավ Թուրքիայի բազմաթիվ ազգություների կենտրոնախույս ձգտումների

թյունը: Այդ պատճառով կարծում եմ, որ Անդրկովկասի հայերը պետք է ընդհանրապես հանեն 4-րդ կետը»¹²³ (խոսքը Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի այն հոդվածի մասին է, որի համաձայն՝ Կարսի մարզում պետք է կայանար հանրաքվե): **Հաջորդ օրը՝ մարտի 24-ի (ապրիլի 6) ուշ երեկոյան, Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության տարածքային զիջումների ծրագրի պատասխանը տրվեց Հուսեյն Ռաուֆ բեյի վերջնագրով.** «Պարո՛ն նախագահ, օսմանյան կայսրության կառավարությունը պնդում է 1918 թ. մարտի 21-ի իր արած հայտարարությունը և խնդրում է Անդրկովկասի հարգելի պատվիրակությանը վերջնական պատասխան տալ իրեն այդ մասին 48 ժամվա ընթացքում»¹²⁴: Վերջնագրից երևում է, որ թուրքական կողմին չէր բավարարել Անդրկովկասյան պատվիրակության՝ տարածքային զիջումների ծրագիրը:

Փաստորեն, թուրքերը վերջնագրով պահանջում էին անվերապահորեն ճանաչել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և անհապաղ ազատել Թուրքիային տրվելիք բոլոր շրջանները: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության թաթար անդամները պահանջեցին անհապաղ ընդունել թուրքական վերջնագիրը: Այդ առնչությամբ պատվիրակության՝ Հայկական հարցի գծով խորհրդական Լեոն գրում է. «Մեր թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) ընկերակիցները, վրո՛նք փրփուրը բերանին ապացուցում էյին, թե Թյուրքիան

գաղափարախոսը: 1908 թ. հեղաշրջումից հետո վերադառնալով Թուրքիա՝ իր շուրջը համախմբեց երիտթուրքերից դժգոհ տարրերին: Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 263:

¹²³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 105:

¹²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 152, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 155-156:

հենց այժմ իսկ իրավունք ունի գրավել ստացած յերկրները, քե
չպետք է առհասարակ անհաճո բան անել նրան, այլ խոսել
հաշտ ու քաղցր լեզվով»¹²⁵:

Վրաց պատվիրակության անդամները Ա. Չխենկելի
գլխավորությամբ հայերից գաղտնի դիվանագիտական բա-
նակցություններ էին վարում թուրքերի հետ՝ Բաթումը չհանձնե-
լու համար: Հուսեյն Ռաուֆ բեյը Ալ. Խատիսյանի հետ մասնա-
վոր գրույցի ժամանակ հայտնել էր, որ վրացիները վեց անգամ
խնդրել են Բաթումը զիջել իրենց, սակայն իրենք չեն համա-
ձայնել, իսկ աջարներն էլ ուղղակի հայտարարել են, որ Բա-
թումի խնդիրը իրենց գործն է, և իրենք թույլ չեն տա տնօրինել
իրենց քաղաքը¹²⁶: Սակայն Հուսեյն Ռաուֆ բեյը Ալ. Խատի-
սյանին ասել էր նաև, որ իրենք ոչ մի զիջում չեն անի և Բաթու-
մից ոչ մի պայմանով չեն հրաժարվի:

Թուրքական վերջնագիրը ծանր իրավիճակ էր ստեղծել.
այն չընդունելու պարագայում պատերազմական գործողու-
թյուններն ավելի էին սաստկանալու, և Թուրքիան զավթելու էր
Անդրկովկասը: Անդրկովկասյան խաղաղար պատվիրակու-
թյունն իր ընդհանուր նիստում որոշեց շատ տարածքներ զիջել
Թուրքիային: Մարտի 25-ին (ապրիլի 7) Ա. Չխենկելին հեռա-
գիր հղեց Թիֆլիս իր կառավարությանը՝ նշելով, որ անհրա-
ժեշտ է առավելագույն տարածքային զիջումներ անել Թուրքի-
ային: Պետք է թուրքերին հանձնել ամբողջ Կարսի նահանգը,
Արդահանի շրջանի հյուսիսային մասերը և Բաթումի նահանգի
Արդվինի շրջանը: Ա. Չխենկելին, եզրափակելով հեռագիրը,

¹²⁵ **Լեռ**, նշվ. աշխ., էջ 390:

¹²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 108:

նշում էր. «Ես համոզված եմ, որ թուրքերը չեն զիջիր ե՛ւ Պաթու-
մը: Վեհիպ փաշան որոշապես ըսաւ այդ, բայց տարբերութիւնը
այն է, որ անոնք գոնէ կը սակարկեն անոր շուրջ: Գալով Կար-
սին՝ զայն պահպանել դիւանագիտական ճամբով բացարձա-
կապէս անկարելի է: Կարսի մասին թուրքերը խօսիլ անգամ
չեն ուզեր: Ես գիտեմ, որ հարցին այս կերպ դրուիլ կը սպառ-
նայ Անդրկովկասի եւ Սէյմի միութեան, բայց դժբախտաբար,
ուրիշ ելք չկայ: Թուրքերը շատ լուրջ կերպով սկսած են պատե-
րազմ մղել»¹²⁷:

Թուրքերն իրենց վերջնագիրն ամրագրեցին Անդրկովկա-
սյան ռազմաճակատում տարածքային նոր զավթումներով:
Դեռ մարտի 23-ին (ապրիլի 5), խախտելով Բրեստ-Լիտովսկի
հաշտության դաշնագիրը, նրանք ներխուժել էին Անդրկովկա-
սի սահմանները, գրավել Սարիղամիշը, Արդահանը և Բաթումի
գավառի որոշ մասը¹²⁸: Փաստորեն, թուրքական զորքերը ար-
դեն գրավել էին այն տարածքները, որոնք Անդրկովկասյան
կառավարությունը համաձայնել էր զիջել Թուրքիային:
Նրանք, շարունակելով իրենց որդեգրած ռազմաքաղաքական
մարտավարությունը, մի կողմից բանակցում էին Անդրկովկա-
սյան խաղաղարար պատվիրակության հետ, իսկ մյուս կողմից,
կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր
հրամանատար Վեհիբ փաշայի գլխավորած զորաբանակով
նոր տարածքներ զավթելով, ճնշում էին գործադրում դիվանա-
գիտական բանակցային գործընթացների վրա և պարտադրում
իրենց անարդար պահանջները վերջնագրի լեզվով: Ա. Չխեն-

¹²⁷ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 34:

¹²⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 105:

կելիի հետ մասնավոր գրույցի ժամանակ Վեհիք փաշան սպառնացել էր, որ ամենակարճ ժամանակահատվածում պետք է ավարտվեն թուրք-անդրկովկասյան բանակցությունները, այլապես թուրքական զորքերն արյունոտ բախումներ կունենան Անդրկովկասում, և այդ ժամանակ ընդհանրապես անիմաստ կլինի որևէ բանակցություն վարել¹²⁹: Այս իրավիճակում Անդրկովկասյան կառավարությունը խաղաղարար պատվիրակությանը հեռագրով հրահանգեց, որ «պետք է յայտնել թուրք պատուիրակութեան, թէ քանի որ թուրք զորքերը մտած են Անդրկովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւնները պէտք է դադրին եւ այս մասին պիտի հաղորդի Անդրկովկասի ժողովուրդներուն»¹³⁰: Նույն օրը երեկոյան Անդրկովկասյան կառավարությունը երկրորդ հրահանգը հղեց խաղաղարար պատվիրակությանը, որ համաձայն է զիջելու Կարսի նահանգը և Արդվինի շրջանը, սակայն հայերը դիմադրում են և չեն ուզում Կարս քաղաքը հանձնել թուրքերին¹³¹:

Ստեղծված չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական մոտ իրադրության պայմաններում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունն առաջին անգամ իր ընդհանուր նիստում բարձրաձայնեց՝ «ավելի լավ է շատ արագ ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը»¹³²: Պատվիրակության անդամները, բացառությամբ թաթարների, երկյուղում էին, որ թուրքական զորքերն առաջ են շարժվում և վի-

¹²⁹ Տե՛ս նույն տեղը:

¹³⁰ Ա. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 35:

¹³¹ Տե՛ս նույն տեղը:

¹³² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 105:

ճելի ողջ տարածքները կգրավեն զենքի ուժով և հաշվի չեն առնի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը:

2018 թ. Ստամբուլում լույս տեսած «Առաջին համաշխարհային պատերազմը և Ադրբեյջանը (Օսմանյան արխիվային փաստաթղթեր)» վավերագրական ժողովածուն, որտեղ ներառված են բազմաթիվ ու բազմաբնույթ արխիվային վավերագրեր, փաստում է կովկասյան թաթարների անվերապահ աջակցությունը Օսմանյան Թուրքիային: Բերենք մեկ-երկու օրինակ: Այդ օրերին Հարավային Կովկասի շեյխուլ իսլամ Ախունդ Մուլլա Մուհամմեդ Փիշնամագզադեն Տրապիզոնում Օսմանյան պատվիրակության նախագահին ուղղված նամակում գրում է. **«Մեր ազգը (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) միայն մեկ ցանկություն ունի, այն է՝ միավորվել մեր մեծ եղբայր Օսմանյան Բարձր պետության հետ և հնարավորինս շուտ Անդրկովկասում (Հարավային Կովկաս) հյուրընկալել օսմանյան բանակին»**¹³³: Իսկ մարտի 15-ին մահմեդականների Ազգային խորհրդի գործադիր կոմիտեն կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշային հղած նամակում պատրաստակամություն է հայտնում. **«Գյանջայի նահանգի Ադրաշի շրջանի ձեր 70 հազար թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) որդիները մեր վաղեմի հայրենիք հանդիսացող Թուրքիայի և փառավոր սուլթանի սուրբ դրոշի տակ մտնելու որոշում են ընդունել և պատրաստ են իրենց հոգիները տալու»**¹³⁴:

¹³³ Birinci Dünya Savaşı ve Azerbaycan (Osmanlı Arşiv belgeleri), İstanbul, 2018, s. 446:

¹³⁴ Նույն տեղում, էջ 444:

Ա. Չխենկելին ակտիվորեն շարունակում էր ուղիներ որոնել՝ դիվանագիտական բանակցությունների միջոցով կանխելու Բաթումից ութ կիլոմետր հեռու գտնվող թուրքական գորքերի ռազմական գործողությունները:

Մոտենում էր Թիֆլիսից թուրքական վերջնագրին պատասխանելու վերջին ժամկետը (մարտի 26-ին (ապրիլի 8)), որով վերջնականապես որոշվելու էր «պատերազմի կամ խաղաղության» հարցը¹³⁵: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Ընդհանրապես տրամադրությունը շատ ծանր էր ու մռայլ. զգացվում էր, որ մենք միասնական չենք և թույլ ենք, որ բանակը չի կարող մեզ սատարել, և դրա համար էլ մենք կարծես հանձնվում ենք «հաղթողների ուղորմածությանը»¹³⁶:

Այս չափազանց ծանր ու աննպաստ պայմաններում Անդրկովկասյան խաղարար պատվիրակությունը կանգնած էր երկրճտրանքի առաջ. կա՛ն ընդունել Թուրքիայի վերջնագիրը, կա՛ն խզել դիվանագիտական բանակցությունները և վերադառնալ Թիֆլիս: Ընդհանուր նիստերում երկար ու բուռն քննարկումների և վիճաբանությունների հետևանքով խաղարար պատվիրակությունը որոշեց ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշանագիրը, և մարտի 26-ին (ապրիլի 8) Ա. Չխենկելին հեռագրեց Թիֆլիս՝ Անդրկովկասյան սեյմին և կառավարությանը. «Արդահանը վերցված է, Կարսի ճակատագիրը կլուծվի մոտ օրերս, Բաթումի երկաթուղագիծը հավանաբար կկտրեն. թուրքերը գտնվում են Բաթումից ութ վերստի վրա: Մեր տակտիկան՝ չշտապել, մինչև որ պատրաստվենք,

¹³⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 106:

¹³⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 104:

չարդարացավ. մեր գորքերն ու նրանց առաջնորդները իրենց բարձրության վրա չեն կանգնած: Երկիրն առանց իշխանության ու կարգապահության չի կարող պատերազմել: **Անհրաժեշտ եմ գտնում իսկույն նեթ լիազորություն ստանալ՝ ընդունելու Բրեստ-Լիտովսկու հաշտության դաշնագիրը**»¹³⁷: Փաստորեն, Ա. Չխենկելին դարձավ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ընդունելու կողմնակիցը: Այդ մասին հայ պատվիրակներ Ալ. Խատիսյանը և Հ. Քաջագունին հեռագրով տեղեկացրին Անդրկովկասյան սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցությանը. «Մեր պարտքն ենք համարում դաշնակցություն կուսակցության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ **ստեղծված իրավիճակում Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի ճանաչումը չարյաց փոքրագույնն է**»¹³⁸ :

Սակայն մինչև Սեյմի և կառավարության կողմից հարցի քննարկումը Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանը հայտնի դարձավ, որ դրանց անդամները հակված չեն ընդունելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Ա. Չխենկելին Ի. Ծերեթելիից, Ն. Ժորդանիայից, Ն. Ռամիշվիլիից և Ե. Գեգեչկորիից ստացել էր հեռագրեր, որոնցում նրանք հայտարարում էին, թե «Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ճանաչելու առաջարկությունը բացարձակապես անընդունելի են համարում. կարծում են, որ այդ արարքը քաղաքական և ազգային ինքնասպանություն է Վրաստանի և մենչևիկների կուսակցության համար, և որ իրենք գերադասում

¹³⁷ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 223, ք. 3:

¹³⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 107:

են նվաճված լինել, և այդ պատճառով էլ ոչ մի կերպ չեն կարող համաձայն լինել Ա. Չխենկելիի և խաղաղարար պատվիրակության առաջարկությանը»¹³⁹:

Հաջորդ օրը Ա. Չխենկելին Հուսեյն Ռաուֆ բեյին տեղեկացրեց, որ պատրաստ է Կարսը հանձնելու թուրքերին և անձամբ համաձայն է ու պնդում է ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, սակայն ինքը պետք է ստանա Անդրկովկասյան սեյմի և կառավարության համաձայնությունը, որից հետո թուրքական կողմին կտեղեկացնի իրենց որոշման մասին մինչև մարտի 28-ի (ապրիլի 10) երեկոյան ժամը 7-ը¹⁴⁰: Սակայն, Թիֆլիսից Սեյմի և կառավարության վերջնական պատասխանը նշված ժամանակում չստանալով, Ա. Չխենկելին, օգտվելով իր արտակարգ լիազորություններից, մարտի 28-ին (ապրիլի 10) ընդունեց թուրքական վերջնագրի պայմանները և գրավոր պատասխանեց պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ բեյին. «Անդրկովկասյան հաշտության պատվիրակությունը, ի պատասխան օսմանյան պատվիրակության նախագահի 1918 թ. ապրիլի 6-ի մամակի, պատիվ ունի հայտարարելու, որ ինքը ընդունում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և պատրաստ է դրա հիման վրա շարունակելու հետագա բանակցությունները»¹⁴¹:

Մարտի 31-ին (ապրիլի 13) թուրքական պատվիրակության նախագահը Ա. Չխենկելուն հաղորդեց՝ իր կառավարությունը, տեղեկանալով, որ Անդրկովկասյան խաղաղարար

¹³⁹ Նույն տեղում:

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղը, ք. 106:

¹⁴¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 152, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, т. 2 160:

պատվիրակությունը ճանաչել է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, անհրաժեշտ է համարում իր դաշնակիցներ Գերմանիայի, Ավստրիայի և Բուլղարիայի մասնակցությունը թուրք-անդրկովկասյան բանակցություններին և միաժամանակ գտնում է, որ **Անդրկովկասը հնարավորինս շուտ պետք է հռչակի իր անկախությունը**¹⁴²: Թուրքական կողմը դրանով իհարկե փորձում էր դյուրացնել Անդրկովկասի գրավումը:

Հենց նույն օրը հայտնի դարձավ, որ Վեհիբ փաշան մարտի 30-ին (ապրիլի 12) վերջնագիր էր ներկայացրել Բաթումի պարետ, գեներալ Գեդևանովին, որ եթե մինչև մարտի 31-ի (ապրիլի 13) ժամը 16-ը կամովին չհանձնեն քաղաքը՝ զինամթերքով հանդերձ, և դուրս չբերեն զորքը, ապա ինքը կհրամայի ուժբակոծել և գրոհով վերցնել այն¹⁴³:

Ա. Չխենկելին երկու բարեխոս էր գործուղել՝ Վեհիբ փաշային խնդրելու հետաձգել Բաթումի ուժբակոծումը մինչև Անդրկովկասյան սեյմից պատասխան ստանալը, սակայն Վեհիբ փաշան մերժել էր: Այդ մասին Ա. Չխենկելին հեռագրեց Բաթում՝ Միլիվանիին և խորհուրդ տվեց առանց դիմադրության թուրքերին հանձնել Բաթումի ռազմական ամրոցը: Այդ որոշմանը խստորեն հակադրվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամ Ալ. Խատիսյանը, որը հետագայում այդ առնչությամբ գրում է. «Ես կտրուկ, անվերապահ հայտարարեցի, որ նա (Ա. Չխենկելի – Գ. Պ.) իրավունք չունի դա անելու, որ դա կառավարության իրավունքն է, ոչ թե նրա:

¹⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 152, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 162:

¹⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 107:

Ներկա էր Քաջագունին: Այս առիթով Ա. Չխենկելին ինձ հայտնեց, որ ինքը մասնավոր խորհուրդ է տվել: Ես հայտարարեցի. խաղաղարար պատվիրակությանը տրվող մասնավոր խորհուրդները բացարձակապես անընդունելի են: Չխենկելին մասն առա, որ ինքը հեռագրել է Բաթումից ուղարկել վրացի սպաներ և Բաթումի քաղաքային ինքնավարությունից մեկ ներկայացուցիչ ... ամրոցը և քաղաքը հանձնելու պայմանները պարզելու համար: Այս ամենին Վեհիբ փաշան պատասխանել է, որ ինքը որպես զիջում կարող է ... իր զորքերը չմտցնել քաղաք: Չխենկելին հեռագրում ընդհանրապես հիմնավորում էր իրադրությունը որպես «անելանելի իրադրություն» ներկայացնող ինչ-որ պառակտիչ մամակով, մատնանշում էր Գեգեչկորին՝ որպես իր տեղեկատվության աղբյուրի: Այս վիճակում մենք ստիպված էինք միայն տեղեկանալ նրա տված ցուցումների մասին, որոնք թուրքերին ցույց էին տալիս մեր անօգնականությունը»¹⁴⁴:

Նույն օրը՝ կեսօրին, Ն. Չխենիձեի ղեկավարությամբ Թիֆլիսում հրավիրվեց Անդրկովկասյան սեյմի նախագահության, կառավարության և կուսակցությունների խմբակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողովը, որտեղ քննարկվեցին թուրքական վերջնագրի պայմանները, այսինքն՝ պատերազմի կամ խաղաղության հարցը: Ե. Գեգեչկորին Անդրկովկասյան կառավարության անունից հայտարարեց, որ ռազմական հրամանատարության համոզմամբ բանակը հուսալի վիճակում է և

¹⁴⁴ Նույն տեղում:

կարող է թուրքերի հարձակումից պաշտպանել Բաքումը¹⁴⁵։ Իսկ Ի. Ծերեթեփին հայտնել էր, «որ ավելի լավ է մեռնել ռազմի դաշտում, քան մահացու հարված հասցնեն մեզ»¹⁴⁶։ Երկար ու բուռն քննարկումների արդյունքում միացյալ ժողովը միաձայն ընդունեց հետևյալ որոշումների նախագիծը.

1. Պատերազմ հայտարարել Թուրքիային՝ հանուն Անդրկովկասի սահմանների պաշտպանության,
2. Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ետ կանչել Տրապիզոնից,
3. Ջենքի տակ առնել երկրի՝ զենք կրելու ունակ բոլոր մարդկանց,
4. Արտակարգ մի կոչ ուղղել ժողովրդին՝ բացատրելով հաշտության բանակցությունների ամբողջ ընթացքը, շեշտելով պատերազմի հրամայականությունը,
5. Սեյմի հաստատմանը ներկայացնել այս որոշումների նախագիծը¹⁴⁷։

Նույն օրը՝ երեկոյան, հրավիրվեց Անդրկովկասյան սեյմի նիստ, որտեղ հնչեցին բազմաթիվ կրակոտ, ռազմաշունչ, հուզիչ ու սուր քննադատական ելույթներ Օսմանյան Թուրքիայի և նրա վերջնագրի պայմանների և միացյալ ժողովի ընդունած որոշումների նախագծի մասին։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Անդրկովկասյան ողջ ազգաբնակչությանն ուղղված կոչից մի հատված. «Մեզնից պահանջում էին

¹⁴⁵ Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 163-164։

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 164։

¹⁴⁷ Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 76, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 163-166։

ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ կնքուած է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտութեան ու հաւանութեան: Պահանջում էին իրենց հանձնելու մեր լաւագոյն նաւահանգիստը՝ Բաթումը: Մենք ամեն բան արինք բանակցութիւնների ու խաղաղ ճանապարհի միջոցով համոզելու համար թիւրք կառավարութեանը, որ նա հրաժարուի Բաթումից: Յանուն խաղաղութեան մենք բազմաթիւ զիջումներ արինք. բայց չէինք կարող հրաժարուել Բաթումից, որը մեր միակ ելքն է դէպի ծովը և միակ ճանապարհը քաղաքակիրթ Եւրոպայի հետ հաղորդակցելու: Մեր բոլոր ջանքերն ի դերեւ ելան, հանդիպելով Թիւրքիայի յամառութեանը: Յաւիտենական ստրկութեան օղակն է ձգուած մեր բոլոր ժողովուրդների վզին:

Թո՛ղ ուրեմն ջախջախուի թշնամու յառաջխաղացումը՝ բախւելով մեր վճռականութեանը – մինչեւ մեր վերջին շունչը պաշտպանելու այնքան սերունդների արիւնով ներկուած մեր երկիրը: Ամենքն ի գէն: Ամենքն ի պաշտպանութիւն ազատութեան ու հայրենիքի»¹⁴⁸:

Սակայն հետագա իրադարձությունները եկան մեկ անգամ ևս փաստելու, որ այդ հուզիչ և ռազմաշունչ կոչը, մեղմ ասած, անկեղծ չէր ոչ միայն վրացիների, այլև հատկապես կովկասյան թաքարների կողմից: Նիստում մահմեդականների խմբակցությունը հայտարարեց, որ իրենց ազգակիցները կրոնական ընդհանրության պատճառով հրաժարվում են թուրքերի դեմ հայտարարված պատերազմին մասնակցելուց¹⁴⁹: Անժխտելի իրողություն է՝ թե՛ Անդրկովկասյան սեյմը և թե՛ կա-

¹⁴⁸ **Յ. Իրազեկ**, Մօսիկ անցեալից, Պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէյրոս, 1956, էջ 18:

¹⁴⁹ Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 392:

ռավարությունը ծանոթ էին մահմեդականների այդ մտայնությանը, բայց և այնպես Սեյմում նրանց «յայտարարութիւնը սառ ջուր մը կը լեցնէր ոգևորուած տրամադրութեան վրայ»¹⁵⁰: Սեյմի անդամ Ի. Ծերեթելին «ղիմում ե ֆրակցիային (մահմեդական - Գ. Պ.) և շարտում ե նրա դեմքին «ղավաճաններ» անունը»¹⁵¹:

Կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին իր կրակոտ ելույթում հայտարարեց. «Կառավարությունը կարծում է, որ չի մարել Անդրկովկասյան դեմոկրատիայի ազատության ոգին, որ «վառողամանում դեռ վառող կա», որ եթե մենք թույլ ենք, ապա ոչ այնքան, որպեսզի մեզ ստրուկներ դարձնեն: Այդ պատճառով էլ մենք մտածում ենք, սեյմի՝ քաղաքացի անդամներ, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը կնշանակեր, որ Անդրկովկասը՝ որպես անկախ հանրապետություն, կդադարի գոյություն ունենալուց և կդառնա թուրքական իմպերիայի գավառը: Կառավարությունը նման խայտառակություն չի կարող թույլ տալ: Կառավարությունը կհավաքի իր բոլոր ուժերը, իր ամբողջ հզորությունը, որպեսզի անհրաժեշտ հակահարված տա թուրքական կառավարության բռնի շահախնդրությանը»¹⁵²:

Ուշագրավ է Անդրկովկասյան սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցության անդամ Մ. Հարությունյանի ելույթը. «Նախ իբրև հայ և իբրև դաշնակցական ... մենք հավատացած ենք, որ Թուրքիան չի բավարար-

¹⁵⁰ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 77:

¹⁵¹ Լեռ, նշվ. աշխ., էջ 392:

¹⁵² Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 168.

վի այն պայմաններով, որոնք նա պահանջում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի համաձայն: Նա ավելի առաջ կգնա: Նա վստահ է ներքին հայտնի տարրերի աջակցության վրա: Եվ հենվելով այդ տարրերի և իր կազմակերպված ուժերի վրա, դիմացն ունենալով կազմալուծված զորամասեր՝ նա մտածում է հասնել Բաքու և մեկընդմիջտ իրականացնել Կոստանդինուպոլը Բաքվի հետ մուսուլմանական հոծ զանգվածներով միացնելու իր հին ծրագիրը...

Մենք համոզված ենք, որ առաջին հերթին հայերն են դատապարտված մահվան, իսկ երկրորդ հերթին՝ վրացիները, այնպես որ մեզ համար ոչ մի փրկություն չկա: Ես լիազորված եմ դաշնակցության խմբակցության կողմից հայտարարելու, որ մենք կտանք ոչ միայն զորակոչային տարիքը, այլ, հավանաբար, զենք կրելու ընդունակ մեր ամբողջ ժողովուրդը կվերցնի և կգնա ռազմաճակատ՝ մեր հողերը պաշտպանելու: Պարտվելու և մեռնելու դեպքում մենք՝ հայերս, կմեռնենք զենքը ձեռքներին»¹⁵³:

Կրակոտ և սուր քննադատական ելույթներից հետո այդ օրվա երեկոյան Սեյմը միաձայն հաստատեց միացյալ ժողովի որոշումների նախագիծը և հեռագրեց Տրապիզոն՝ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելուն. «Այսօր՝ երեկոյան, Անդրկովկասի սեյմի նիստում միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը. նկատի ունենալով այն, որ Անդրկովկասի սահման-

¹⁵³ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 174-177, տե՛ս նաև **А. Ставровский**, Закавказье после октября, Москва-Ленинград, 1925, էջ 25-26:

ների հարցի վերաբերյալ Թուրքիայի ու Անդրկովկասի միջև հաշտություն ձեռք չի բերված, Անդրկովկասյան պատվիրակությանն առաջարկվում է անհապաղ վերադառնալ Թիֆլիս»¹⁵⁴։ **Փաստորեն, Սեյմը պատերազմ հայտարարեց Թուրքիային այն դեպքում, երբ իրականում նա դեռ ակտիվորեն շարունակում էր իր ռազմական առաջխաղացումն Անդրկովկասի սահմաններում՝ զենքի ուժով լուծելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները։**

Սեյմի որոշման համաձայն՝ ամբողջ Անդրկովկասում պաշտոնապես հայտարարվեց ռազմական դրություն, իսկ պատերազմը ղեկավարելու համար ստեղծվեց արտակարգ լիազորություններով օժտված կոլեգիալ մարմին, որի մեջ մտնում էին կառավարության նախագահ, ռազմական նախարար Ե. Գեզեկորին, ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին և ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը¹⁵⁵։

Բայց և այնպես, երկրամասի երեք գլխավոր ազգությունների միջև առկա խոր հակասությունները և հակամարտությունները, որոնց գլխավոր պատճառը նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն էին ու ազգային-տարածքային սահմանների վեճերը, հնարավորություն չտվեցին Անդրկովկասում ստեղծելու միացյալ ճակատ՝ թուրքական ռազմական սպառնալիքին դիմակայելու համար։ Ինչպես վերը նշվեց, մահմեդականները Սեյմի նիստում հայտարարել էին, որ չեն կռվելու թուրքերի դեմ։ Թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական ծանրությունն ընկած էր հայկական ուժերի վրա (վրա-

¹⁵⁴ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 183-184:

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 183:

ցիների մասնակցությունը չնչին էր, իսկ մահմեդական դիվիզիան ընդհանրապես չի մասնակցել): Ալ. Խատիսյանի վկայությամբ՝ հասարակական կարծիք էր ձևավորվել, որ «վրացական զորամասերը, որպես կանոն, նահանջում են թուրքերի հարձակումների ժամանակ ... վրացիները բոլորովին պատրաստ չեն պատերազմին»¹⁵⁶:

Նույն օրը՝ մարտի 31-ի (ապրիլի 13) երեկոյան, առանց վրացական զորքերի որևէ դիմադրության, Բաթումը հանձնվեց թուրքական զորամասերին: Կամովին թուրքերին հանձնվեցին Բաթումի պարետը և վրացական առաջին դիվիզիայի հրամանատարը՝ իր շտաբով: Այնուհետև թուրքական զորքերը գրավեցին Աբասթումանը և շարունակեցին առաջխաղացումը Քութայիսի ու Թիֆլիսի նահանգներում: Այս առիթով Ա. Խաչատրյանը գրում է. «Կովկասի Հանրապետութեան այնքան մեծ աղմուկով յայտարարած պատերազմը կը վերջանար խայտառակ պարտութեամբ մը: Վրաց ճակատի վրայ դիմադրութիւնն այնքան թոյլ եղաւ, որ 48 ժամէն Բաթումի պէս ուժեղ բերդաքաղաք մը իր բոլոր ռազմական հարստութեամբ աւար կը դառնար օսմանեան չնչին ուժով յարձակող զօրքի ձեռքը և քանի մը օրուան մէջ օսմանեան զինուորներն արդէն Վրաստանի սիրտ՝ Քութայիսի նահանգումն էին»¹⁵⁷:

Կարսի շրջանում հայկական զորամասերը 10 օր շարունակ կատաղի դիմադրություն ցույց տվեցին թուրքերին: Բաթումի հանձնումից հետո Անդրկովկասյան սեյմը համոզվեց, որ

¹⁵⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 109:

¹⁵⁷ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 78:

այլևս ի վիճակի չեն համախմբելու երկրամասի բոլոր ուժերը և պատերազմը շարունակելու:

Ապրիլի 1-ին (14) կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին հեռագիր հղեց Ա. Չխենկելուն՝ հրահանգելով Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանն անմիջապես վերադառնալ Թիֆլիս: Այդ մասին Ա. Չխենկելին հայտնեց թուրքական պատվիրակությանը. «Անդրկովկասյան պատվիրակությունը, նկատի ունենալով իր կառավարությունից ստացված հրահանգները, պատիվ ունի հայտնելու օսմանյան պատվիրակությանը, որ ինքն անհրաժեշտաբար պետք է այսօր մեկնի Թիֆլիս»¹⁵⁸: Թուրքերը անշուշտ շատ լավ հասկացան, թե ինչու է Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը մեկնում Տրապիզոնից: Նույն օրը՝ երեկոյան, խաղաղարար պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս: Բաժանումից առաջ թուրքական պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ բեյը Հայկական հարցի մասին մեկժամանոց առանձնազրույց ունեցավ խաղաղարար պատվիրակության հայ անդամ Ալ. Խատիսյանի հետ:

Այսպիսով, Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «հաշտութեան փոխարէն Տրապիզոնէն մենք կը տանէինք մեր երկրին պատերազմ»¹⁵⁹:

¹⁵⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 152:

¹⁵⁹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 36 :

3. Պատերազմի և հաշտության հարցը Ալեքսանդրոպոլի արտակարգ խորհրդակցությունում. Անդրկովկասի անկախացումը (1918 թ. ապրիլ)

Ինչպես վերը նշվեց, Տրապիզոնի հաշտության խորհրդա-
ժողովի (1918 թ. մարտ-ապրիլ) դիվանագիտական բանակ-
ցային գործընթացներում առանցքային տեղ էր գրավել Թուր-
քիային տարածքային զիջումներ կատարելու հարցը:

Մարտի 24-ին (ապրիլի 6) հաշտության խորհրդաժողովում
Ադրկովկասյան խաղաղարար պատվիրակության ներկայաց-
րած տարածքային զիջումների ծրագիրը թուրքական կողմը
չընդունեց և պատասխանեց վերջնագրով¹⁶⁰: Նրանք պահան-
ջում էին անվերապահորեն ճանաչել Բրեստ-Լիտովսկի հաշ-
տության դաշնագրով իրենց նվիրաբերված բոլոր շրջանները և
անհապաղ ազատել: Դաշնագիրը չընդունելու պարագայում
պատերազմական գործողություններն էլ ավելի էին սաստկա-
նալու, և Թուրքիան բռնազավթելու էր Անդրկովկասը:

Ստեղծված չափազանց բարդ և լարված ռազմաքաղաքա-
կան նոր իրադրության պայմաններում խաղաղարար պատվի-
րակության նախագահ Ա. Չխենկելին, Տրապիզոնում ժամա-
նակին չստանալով Անդրկովկասյան սեյմի և կառավարության
վերջնական պատասխանը, մարտի 28-ին (ապրիլի 10) ընդու-
նեց թուրքական վերջնագրի պահանջները և գրավոր պատաս-
խանեց, որ պատրաստ է նոր բանակցություններ սկսելու՝ հաշ-
տության դաշնագիր կնքելու համար: Ի պատասխան այդ

¹⁶⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 152: Տե՛ս նաև Документы и материалы по
внешней политике Закавказья и Грузии, т. 2 155-156:

առաջարկի՝ թուրքական կողմը հայտնեց, որ անհրաժեշտ է համարում իր դաշնակիցներ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ մասնակցել թուրք-անդրկովկասյան բանակցություններին, իսկ **որպես անառարկելի պայման առաջադրեց Անդրկովկասը հռչակել անկախ, այսինքն՝ Ռուսաստանի**¹⁶¹ **ազդեցության գոտուց դուրս:**

Սակայն բոլորովին այլ էր Անդրկովկասյան սեյմի և կառավարության դիրքորոշումը թուրքական վերջնագրի նկատմամբ: Մարտի 31-ի (ապրիլի 13) երեկոյան Սեյմը հայտարարություն տարածեց, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջներն անընդունելի են, հետևաբար այլ որոշում չի կարող լինել, քան պատերազմը Թուրքիայի դեմ: Հենց դրանով էլ պայմանավորված՝ ապրիլի 1-ին (14) Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը իր կառավարության հրահանգով անմիջապես ետ կանչվեց Թիֆլիս: **Փաստորեն, Անդրկովկասյան սեյմը ընդհատեց Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ և պատերազմ հայտարարեց նրան այն դեպքում, երբ թուրքերը դեռ շարունակում էին իրենց ռազմական առաջխաղացումը Անդրկովկասի սահմաններում՝ զենքի ուժով լուծելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները:** «Նույն միջոցին,- գրում է Ա. Խաչատրյանը,- մեր սահմաններու վրայ կը շարունակուէր արիւնհեղութիւնը և օսմանեան բանակը կը շարունակէր իր յառաջ խաղացումը»¹⁶²: Նույն օրն էլ Անդրկովկասյան սեյմին և

¹⁶¹ Տե՛ս նույն տեղը, էջ 162:

¹⁶² Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 77:

կառավարությանը հայտնի դարձավ, որ Բաթումը հանձնվել է թուրքական զորամասերին:

Բաթումի անկումը ճակատագրական նշանակություն ունեցավ Անդրկովկասի ռազմաքաղաքական հետագա զարգացումների վրա. վրացիների համար պատերազմը անիմաստ դարձավ: Սկսվեց վրացական զորամիավորումների անկանոն մահանջը: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Վրաց իշխող կուսակցության մեջ ծայր էին տուած լուրջ տարակարծութիւններ պատերազմը շարունակելու մասին: Անոնք կը զգային որ իրենց ժողովուրդը չուզեր կռիլ Պաթումի անկումէն յետոյ: Միւս կողմէ, գտած էին միջոց մը ինքզինքնին ապահովելու համար թուրքերէն: Եվ այդ միջոցը համաձայնութիւնն էր Գերմանիոյ հետ: Այս պարագան բախտորոշ ազդեցութիւն մը ունեցաւ դէպքերու ընթացին վրայ»¹⁶³:

Իսկ Անդրկովկասի պաշտպանության ու ժողովուրդների փոխհարաբերությունների տեսակետից չափազանց աննպաստ էր հատկապես կովկասյան թաթարների խաղաղած դերը. նրանք թուրքերի հաղթանակն ու ռազմական ներխուժումը համարում էին իրենց ազգային-քաղաքական ձգտումների իրականացում: Թաթարները դեռ մարտի 31-ին (ապրիլի 13-ին) Անդրկովկասյան սեյմի նիստում հայտարարել էին, որ այդ պատերազմում իրենցից օգնություն և աջակցություն թող չսպասեն, որ իրենք չեն կռվելու ցեղակից թուրքերի դեմ¹⁶⁴:

Փաստորեն, թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական

¹⁶³ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 39:

¹⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, ք. 14:

**ծանրությունն ընկավ հայկական ուժերի վրա. այն վերածվեց
թուրք-հայկական պատերազմի:**

Այսպիսով հայերը մնում էին միայնակ թուրքերի դեմ՝ զրկված քաղաքական տարրեր կողմնորոշումներ և ազգային նեղ շահեր հետապնդող երկու հարևանների աջակցությունից, կտրված արտաքին աշխարհից և ներքին ու արտաքին հակառակորդներով շրջապատված:

Ստեղծված բարդ ու լարված իրադրության պայմաններում անհրաժեշտ էր անհապաղ քննարկել հետագա քայլերը Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ պատերազմի և հաշտության շուրջ: Անհրաժեշտ էր նաև ստուգել հայկական գործադիրությունների մարտունակությունը և ինքնապաշտպանական գործի հնարավորությունները: Այդ նպատակով Անդրկովկասյան սեյմի դաշնակցական խմբակցության և «Հայ հեղափոխական դաշնակցության» Արևելյան բյուրոյի նախաձեռնությամբ 1918 թ. ապրիլի 6-8-ը (19-21) Ալեքսանդրապոլում հրավիրվեց արտակարգ խորհրդակցություն¹⁶⁵: Բազմամարդ հավաքին մասնակցում էին Անդրկովկասյան սեյմի և կառավարության բոլոր հայ անդամները, Հայոց ազգային խորհրդի կազմը, կուսակցությունների ներկայացուցիչները, Երևանի, Կարսի մարզային կոմիսարները և Ալեքսանդրապոլի մի քանի ազգային գործիչներ: Խորհրդակցությունը նախագահում էր Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը¹⁶⁶:

Արտակարգ խորհրդակցությունը լսեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամներ Ալ. Խատիսյանի

¹⁶⁵ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 307-332:

¹⁶⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 307:

և Հ. Քաջագունու զեկուցումները Տրապիզոնի հաշտության դիվանագիտական բանակցային գործընթացների արդյունքների մասին¹⁶⁷: Այնուհետև քննարկման դրվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն անվերապահորեն ընդունելու թուրքերի պահանջը: Քննարկվող հարցի շուրջ հնչեցին երկու իրարամերժ կարծիքներ: Մի մասը գտնում էր, որ պետք է ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, քանի որ այլընտրանք չկա, իսկ մյուս մասը՝ ամեն գնով շարունակել պատերազմը և ոչ մի դեպքում չընդունել այն: Առաջին կարծիքին կողմնակից էին Հ. Քաջագունին, Ալ. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը (Պապաջանով): Հ. Քաջագունին մանրամասն ներկայացրեց իր գրավոր հիմնավորումը (ռուսերենով), թե ինչու հայերի համար չարիքի փոքրագույնն է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, և ինչու Թուրքիան բնավ չի հրաժարվի դրանից¹⁶⁸: Նա գտնում էր, որ «չճանաչել դաշնագիրը, նշանակում է պատերազմ հայտարարել նրան կամ ավելի շուտ շարունակել պատերազմը, որ փաստացի մենք շարունակում ենք հիմա: Մենք ի գործու չենք և չենք կարող կռվել թուրքերի դեմ»¹⁶⁹: Մ. Պապաջանյանը, պաշտպանելով Հ. Քաջագունու կարծիքը, իր ելույթում վստահեցնում էր, որ այս պատերազմում հայերը այլևս չպետք է իրենց հույսը կապեն հարևան վրացիների հետ. նրանք չեն կռվելու: Այնուհետև, անդրադառնալով հայկական զինուժի ու ռազմաճակատի անմխիթար վիճակին, նա կոչ էր անում ընդունելու այն. «Եթե ես համոզված

¹⁶⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 310-311:

¹⁶⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, ք. 113-120:

¹⁶⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, ք. 115:

լինելի, որ 2 ամիս կդիմանա Կարսը, այլ կերպ կխոսնի: Եթե չենք կարող պահել, պետք է լավ գնով զիջել»¹⁷⁰:

Այնուհետև ապրիլի 7-ի (20) արտակարգ խորհրդացույթյան երրորդ նիստում ընթերցվում է Ալեքսանդրապոլ չժամանած Խ. Կարճիկյանի գրավոր կարծիքը քննարկվող հարցի շուրջ, որն ուղարկել էր Թիֆլիսից¹⁷¹: Հ. Քաջագունու և Մ. Պապաջանյանի դիրքորոշմանն ու ներկայացրած գրեթե բոլոր փաստարկներին միանգամայն հակառակ կարծիք ուներ Խ. Կարճիկյանը: Նա ընդգծում էր. «Պատմական ամենախոր և ճակատագրական սխալը կատարած պիտի լինենք, եթե հիմա ընդունելու լինենք Բրեստի դաշնագիրը ու այդպիսով դադարեցնենք պատերազմը»¹⁷², քանի որ միևնույնն է, դա չէր կասեցնելու թուրքական առաջխաղացումը ու դառնալու է, հայ և վրացի ժողովուրդների բնաջնջման պատճառ: Խ. Կարճիկյանը համոզված չէր, որ հաշտությունը հնարավորություն կընձեռնի ժամանակ շահելու և գորքն ուժեղացնելու, քանի որ վստահ էր, որ Կարսը հանձնելուց հետո ժողովուրդն ու բանակը այնպես կբարոյալքվեն, որ «Ոչ մի զինվոր չի մնալ գեների տակ»¹⁷³: Վրացիների հետ զինակցության հարցում ևս Խ. Կարճիկյանի կարծիքը տարբեր էր: Նա խորհուրդ էր տալիս հռեռես չլինել վրացական ուժերի նկատմամբ և, ի դեմս նրանց, տեսնում էր դաշնակիցների: Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, Խ. Կարճիկյանը եթե կասկած չուներ թուրքերի ռազ-

¹⁷⁰ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 321:

¹⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, ք. 1-4:

¹⁷² Նույն տեղում, ք. 1:

¹⁷³ Նույն տեղում, ք. 3:

մական առաջխաղացման հարցում, ապա վրացիների՝ հայերին դաշնակից լինելու խնդրում սխալվում էր:

Խ. Կարճիկյանը ընդգծում էր, որ Ռուսաստանը չի հաշտվի Անդրկովկասը կորցնելու հետ, իսկ եթե անգամ մտադրություն չունենա Կովկաս վերադառնալու, «Եվ նա վերջնականապես հաշտվի Անդրկովկասի անջատման մտքի հետ, դրա հետ չի հաշտվելու հայությունը, որը միշտ պիտի գգա իր գլխեն տեղական քրքրության ու Տաջկաստանի կախված թուրք ու իր հայացքը հառելով դեպի հյուսիս, առիթներ պիտի փնտրե Ռուսաստանին ներս բերելու ու ազատագրելու:

... Եթե իսկապես Ռուսաստանը փորձե ներս գալու, բնական է որ Կովկասի քրիստոնեա ժողովուրդները չեն դուրս գալու ու զենքով դիմադրելու նրան»¹⁷⁴:

Խ. Կարճիկյանը, ընդհանրացնելով իր նկատառումները, ներկայացնում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն ընդունելուց հետո ուրվագծվող հնարավոր երեք իրավիճակ.

1. կա՛ն, դաշնագրին ոչ մի նշանակություն չտալով, Թուրքիան անմիջապես առաջ է շարժվելու և գրավելու է Անդրկովկասը, 2. կա՛ն կանգ է առնելու որոշված սահմաններում և հարկադրելու է Անդրկովկասն անկախ հայտարարել, ապա, փաստորեն, այն իր կազմի մեջ ներառել որպես Թուրքիայի մահանգ, և 3. կա՛ն նա գրավում է երկրամասը, եթե հայերը հրաժարվում են անկախություն հայտարարելուց ու մնում են որպես Ռուսաստանի մի մասը:

Ըստ Խ. Կարճիկյանի՝ 3-րդ իրավիճակն անխուսափելի է, քանի որ կովկասյան քաթարների համար դեռ հանդուրժելի էր

¹⁷⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, ք. 2:

անկախ Անդրկովկասը, իսկ երբ խնդիրը գա Ռուսաստանի կազմում մնալուն, տարակույս չկա, որ կովկասյան քաթարները ամեն միջոց ձեռք են առնելու, որպեսզի հրավիրեն Թուրքիային՝ միացնելու իրենց ազգակից պետությանը¹⁷⁵:

Եզրափակելով իր խոսքը՝ Խ. Կարճիկյանը անում է հետևյալ եզրահանգումը. «Ես գտնում եմ, որ պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի: Իսկ մեր անվերջ տատանումները և հասարակական գանազան խմբակցությունների ու օրգանների ազդեցության հոգուտ Բրեստի դաշնագրի, մեծապես թուլացնում է մեր դիմադրական ուժը, անվստահություն ներշնչում կռիվողներին և կազմալուծում առաջ բերում թիկունքում: Վճռականապես պետք է որոշել ու ցուցադրել, որ կռիվը շարունակվելու է և որ անհույս մի կռիվ չէ, որը անվիճելի կերպով տանում է մեզ դեպի կորուստ»¹⁷⁶:

Չնայած քննարկվող հարցի նկատմամբ լուրջ տարաձայնություններին՝ ապրիլի 8-ի (21) հիմնգերորդ՝ վերջին նիստում Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության ճնշող մեծամասնությունը որոշեց մերժել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և շարունակել պատերազմը ու ամրապնդել հայկական զինված ուժերն ու ինքնապաշտպանական գործը: Սակայն իմաստագրկվեց խորհրդակցության ընդունած որոշումը, երբ նույն օրը Թիֆլիսից ստացվեց հաղորդագրություն այն մասին, որ **վրաց Ազգային խորհուրդը որոշել է անկախու-**

¹⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, ք. 4:

¹⁷⁶ Նույն տեղում:

թյուն հայտարարել¹⁷⁷: Իսկ Անդրկովկասյան կառավարության թաթար նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և կնքել հաշտություն Թուրքիայի հետ, այլապես իրենք և Սեյմի մյուս թաթար անդամները դուրս կգան Սեյմից ու կառավարությունից և կհայտարարեն իրենց անկախությունը¹⁷⁸:

Այս հանգամանքները ստիպեցին խորհրդակցության մասնակիցներին շտապել Թիֆլիս և այնտեղ քննարկել ու որոշել անկախության և իշխանության հարցերը: Նրանք վերադարձան Թիֆլիս, «Ուր հայերի համար,- գրում է Ս. Վրացյանը, - ստեղծել էր չափազանց փափուկ դրություն. կամ նրանք պիտի համաձայնեին թուրքերի և վրացիների հետ և հրաժարվեին ո՛չ միայն Տաճկահայաստանից, այլև ամբողջ Կարսի նահանգից, առանց անգամ երաշխիք ունենալու գեթ յետագա ապահովութեան և կամ պիտի մերժեին տաճկական վերջնագիրը. այն ժամանակ վրացիներն ու թուրքերը անջատ հաշտութիւն պիտի կնքեին, Անդրկովկասի միութիւնը պիտի վերանար, և հայ ժողովուրդը պիտի մնար մենակ, կտրւած ամբողջ աշխարհից, շրջապատւած թշնամիներով...»¹⁷⁹:

Ինչպես վերը նշվեց, Բաթումի անկումից հետո երկրամասում ստեղծվել էր ռազմաքաղաքական չափազանց բարդ ու լարված նոր իրադրություն: Այդ պայմաններում Անդրկովկասյան սեյմը որոշեց վերսկսել ընդհատված դիվանագիտական բանակցությունները Օսմանյան Թուրքիայի հետ՝ հաշտության

¹⁷⁷ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 331:

¹⁷⁸ Տե՛ս Ս. Վրացյան, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրագիծ), Երեւան, 1920, էջ 10:

¹⁷⁹ Նույն տեղում:

դաշնագիր կնքելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ հռչակել Անդրկովկասի անկախությունը և նրա անջատումը Ռուսաստանից, որը Օսմանյան Թուրքիայի անվերապահ պահանջն էր: Վերջինս ուզում էր, որ Անդրկովկասն իր կարգավիճակին միջազգային-իրավական տեսք տա, այսինքն՝ իրեն անկախ հռչակի: Այլապես միջազգային իրավունքի սուբյեկտ Օսմանյան Թուրքիայի և Անդրկովկասի միջև դիվանագիտական բանակցություններն ու հնարավոր արդյունքները գուրկ կլինեին իրավական պարտավորեցնող ուժից¹⁸⁰: Թուրքիայի անվերապահ պահանջն էր, Անդրկովկասն անկախ հռչակելով, այն վերջնականապես, փաստացի և իրավականորեն կտրել Ռուսաստանից և թույլ, անօգնական այդ երկրամասը զավթելով՝ այն ներառել իր ազդեցության ոլորտը և այդպիսով ապահովել իր անվտանգությունը Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր համար:

Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախություն հռչակելու թուրքական ծրագրի նկատմամբ վրացիների շրջանում ձևավորվել էին քաղաքական երկու տարբեր կողմնորոշումներ՝ ռուսական և գերմանա-թուրքական: Առաջինի կողմնակիցները՝ Ն. Ժորդանիան, Ե. Գեգեչկորին և այլք, ցանկանում էին շարունակել պատերազմը և դեմ էին Անդրկովկասը Ռուսաստանից վերջնականապես անջատելուն: Երկրորդ՝ հաղթող հոսանքը (Ա. Չխենկելի, Ն. Ռամիշվիլի) գտնում էր, որ

¹⁸⁰ Տե՛ս Ա. Եսայան, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967, էջ 34:

Վրաստանի անկախության համար ռուսական վտանգն ավելի մեծ է, քան թուրքականը¹⁸¹:

Թաթարները Անդրկովկասյան սեյմում այլևս չէին թաքցրնում, որ ամբողջովին Թուրքիայի կողմն են: Նրանք, պաշտպանելով ու զարգացնելով թուրքերի տեսակետը, պահանջում էին Անդրկովկասը անհապաղ հռչակել անկախ և դադարեցնել պատերազմը: Նրանք հայտարարեցին. «Մոսկովմանական դեմոկրատիայի կրօնական զգացումը թոյլ չի տալիս նրան գործոն մասնակցություն ունենալու Թիւրքիայի դէմ մղող պատերազմի մէջ»¹⁸²:

Թաթարների համար Անդրկովկասի անկախությունը նշանակում էր երկրամասի անջատում Ռուսաստանից: «Այս գործը,- գրում է Ա. Խոնդկարյանը,- նրանք (թաթարները – Գ. Պ.)՝ այդ հեռուն նայող ու վերին աստիճանի զգուշատր քաղաքագետները՝ ուզում էին անպատճառ գլուխ հանել վրացիների ու հայերի մեղսակցութեամբ, որից յետո դէպքերի ընթացքը նրանց համար պարզ էր՝ Թիւրքիան գալու է Անդրկովկաս»¹⁸³:

Սեյմի վրաց դեկավարները Անդրկովկասի անկախության ծրագիրն առաջ քաշեցին այն համոզումով, որ նախ՝ այն կոյուրացնի հաշտությունը Թուրքիայի հետ՝ թիկունքում ապահովելով Գերմանիայի հովանավորությունը, որի հետ վաղուց գաղտնի բանակցությունների մեջ էին, և երկրորդ՝ **վերջ կտա հայերի՝ ռուսական և թաթարների՝ թուրքական քաղաքական կողմնորոշումներին**, ու Անդրկովկասի երեք գլխավոր ազգերին

¹⁸¹ **Յովհ. Քաջագունի**, Հ. Յ. Դաշնակցությունն անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, էջ 27:

¹⁸² **Յովհ. Քաջագունի**, նշվ. աշխ., էջ 26-27:

¹⁸³ «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 73:

կմիացնեն սեփական՝ անդրկովկասյան հայրենիքի սին գաղափարով:

Անշուշտ, հայերի համար անընդունելի էին թաթարների հեռահար ծրագրերը, և մյուս կողմից չէին բաժանում նաև վրաց մենշևիկ ղեկավարների «միամիտ» ակնկալիքները, որովհետև շատ լավ գիտեին, որ թաթարների նպատակը ոչ թե անկախ հայրենիքն է, այն էլ՝ հայերի ու վրացիների հետ, այլ ընդամենը Թուրքիայի գերիշխանությունը: Բացի այդ, առաջնորդվելով ինքնապաշտանական բնագրով, հայ ժողովուրդը չէր ուզում բաժանվել Ռուսաստանից:

Սեյմի հայ անդամներին միանգամայն հասկանալի էր, թե ինչպիսի ծանր հետևանքներ կունենա Անդրկովկասի անկախությունը հայ ժողովրդի համար, բայց և ընդդիմանալ վրացիներին և թաթարներին չէին կարող, քանի որ կհայտնվեին խիստ մեկուսացված վիճակում: Իսկ «Պատերազմի ամբողջ պատասխանատվությունը թուրքերուն հետ,- գրում է Ալ. Խատիսյանը,- Հ. Յ. Դաշնակցությունը իր վրա չէր կրնալ վերցնել, իսկ այդպէս, պիտի ըլլար, եթե ան գործէր հակառակ վրացիներուն»¹⁸⁴: Այդ հիմնական պատճառներն էին, որ Անդրկովկասյան սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցության» խմբակցությունը ստիպված էր համաձայնել անկախությանը: Եվ պատահական չէր, որ թե՛ խմբակցությունը և թե՛ Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը չեն ողջունել Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը և նրա անկախությունը:

Այդ առնչությամբ ուշագրավ է Հ. Քաջազունու ընդհանրական գնահատականը. «... մենք չէինք դուրսեան տէրը, ոչ

¹⁸⁴ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 40:

իսկ մեր սեփական բախտի տերը: ... Հենտ սրտով չէր, որ մենք արինք այդ: Բայց չանել չէինք կարող: Եթե հակառակ արտահայտուինք, Անդրկովկասեան դաշնակցական (դաշնային – Գ. Պ.) Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդուէր, վրացիներն ու ազրբեյջանցիներն իսկոյն պիտի հաշտուէին թուրքերի հետ ու թողնէին մեզ մենակ երես առ երես Վեհիպ փաշայի բանակի դէմ՝ մենակ, որովհետեւ Ռուսաստանը (ոչ բոլշեւիկեանը, ոչ հակաբոլշեւիկեանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթե նոյն իսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգւած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբեյջանցիները (ո՞վ գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալակը, Լոռին ու Փամբակը ամբողջովին գրավելու համար):

Մենք ամենքից աւելի կարիք ունէինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուզում՝ որ նա քանդուի, իսկ եթե քանդուելու է – որքան կարելի է ուշ քանդուի: Ահա թէ ինչու հարկադրւած էինք հետեւելու մեր դաշնակից դրացիների քայլերին»¹⁸⁵:

Կարճ ժամանակ անց Անդրկովկասյան սեյմում հաղթեց վրացիների՝ գերմանա-թուրքական քաղաքական կողմնորոշում ունեցող թեր¹⁸⁶: **Ապրիլի 9-ին (22) Սեյմը հանդիսավորութեամբ հայտարարեց, որ Անդրկովկասն անջատվում է Ռուսաստանից և կազմում է անկախ պետություն՝ Անդրկովկասի Դեմոկրատի-**

¹⁸⁵ **Յովհ. Քաջագունի**, նշվ. աշխ., էջ 28:

¹⁸⁶ Տես **Վ. Մելիքյան**, Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, «Հայագիտության հարցեր» հանդես, 2014, N 3, էջ 105-125:

տական Ֆեդերատիվ Հանրապետություն¹⁸⁷ (այն գոյատևեց ընդամենը մեկ ամիս չորս օր և լուծարվեց մայիսի 26-ին):

Սեյմի 22-րդ նիստում «Հայ հեղափոխական դաշնակցության» խմբակցությունը, ինչպես վերը նշվեց, թեև ներքուստ դժգոհ, բայց ստիպված հանդես եկավ Անդրկովկասի անկախության օգտին: Սեյմի անդամ Հ. Քաջազնունին խմբակցության անունից նիստում հայտարարեց. «Քաղաքացիներ, Սեյմի անդամներ. դաշնակցության ֆրակցիան, միանգամայն որոշակի կերպով գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ նա իր վրա է առնում ներկա պատմական մոմենտին, միանում է Անդրկովկասի ինքնուրույն պետության հայտարարմանը»¹⁸⁸:

Սեյմում հնչեցին նաև հայտարարություններ Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելու և նրա անկախության դեմ: Բանախոսներից ձախ էսէռ Լ. Թումանովը (Թումանյան) հայտարարեց. «Պետք է անկեղծորեն խոստովանել, որ Անդրկովկասի անկախության գաղափարը գալիս է թուրք իմպերիալիստներից... այդ հարցը Անդրկովկասի կենաց ու մահվան հարցն էր: Ինչու՞ դուք չեք դիմում հանրաքվեի օգնությամբ: Հավատացա՞՞ծ եք արդյոք դուք, որ եթե այդ հարցը վճռվեր ազատ քվեարկության ճանապարհով, ժողովուրդը չէր ասի՝ չեմ ցանկանում այն անկախությունը, որ գալիս է թուրքական սուլթանի մահակի տակից ... անկախություն, որը հռչակված է այնպիսի պայմաններում, ինչպիսին ներկայումս գոյություն ունի

¹⁸⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, ք. 28: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 221:

¹⁸⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, ք. 20, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 215:

Անդրկովկասում, դա նշանակում է անցում դեպի Թուրքիայի կողմից լրիվ ստրկացմանը: Անդրկովկասը չափազանց թույլ տնտեսական ուժեր ունի ներկայումս իր սեփական կողմնորոշումն ունենալու համար: Անդրկովկասի անկախ հռչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնորոշում դեպի Թուրքիան, և այդ փաստը դուր ոչ ոքից չէր կարողանա թաքցնել»¹⁸⁹:

Խորհրդային կառավարությունը արձագանքեց և նոտա հղեց Անդրկովկասյան սեյմին: Մոսկվայում Օսմանյան Թուրքիայի և Ստամբուլում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչներ չլինելու պատճառով ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Մոսկվայում գերմանական դեսպան Միխրբախին ուղղված 1918 թվականի մայիսի 15-ի նոտայում իր բողոքը հայտնեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեմ¹⁹⁰:

Հարկ է նշել, որ իմաստագրկվեցին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ընդունել-չընդունելու բոլոր քննարկումները, երբ հայտնի դարձավ՝ դեռ Անդրկովկասյան սեյմի վստահությանը չարժանացած¹⁹¹ կառավարության նոր մա-

¹⁸⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, ք. 11-12, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 207:

¹⁹⁰ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 434-435:

¹⁹¹ Երբ ապրիլի 9-ին (22) Սեյմը հայտարարեց Անդրկովկասյան հանրապետության անկախությունը և որոշեց վերսկսել հաշտության դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ, կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին, նկատելով այն որպես անվստահության դրսևորում, հրաժարական տվեց և հեռացավ քաղաքական հարթակից: Անդրկովկասյան սեյմի նախագահ Ա. Չխենկելին մույն օրը՝ երեկոյան, գրավոր դիմեց Ա. Չխենկելիին՝ ձևավորելու կառավարության նոր կազմ: Իրականում ապրիլի 9-ից (22) մինչև 13-ը (26) Ա. Չխենկելին Անդրկովկասը ղեկավարեց առանց Սեյմի լիազորության: Միայն ապրիլի 13-ին (26) Սեյմը վստահություն հայտնեց Ա.

խագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին, առանց կառավարության և հայկական կողմի իմացության, ապրիլի 10-ին (23) հրաման էր արձակել կարճ ժամկետում Կարսը դատարկելու ու առանց դիմադրության այն անհապաղ Օսմանյան Թուրքիային հանձնելու մասին¹⁹²:

Ինչպես վերը նշվեց, ապրիլի 1-ին (14) Տրապիզոնում ընդհատվել էին դիվանագիտական բանակցային գործընթացները Թուրքիայի հետ, սակայն Ա. Չխենկելին Թիֆլիսից շարունակում էր պահպանել հարաբերությունները և վերսկսել էր բանակցությունները թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի հետ: Ա. Չխենկելին ապրիլի 10-ի (23) երեկոյան հեռագրեց Վեհիբ փաշային, որ Անդրկովկասյան կառավարությունը ընդունում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և խնդրում է դադարեցնել ռազմական գործողությունները և վերսկսել դիվանագիտական բանակցությունները՝ Թուրքիայի

Չխենկելին և նրա կազմած կառավարությանը, որի ծրագիրն էր՝ անկախություն և հաշտություն: Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը կազմվեցին երեք գլխավոր ազգերի (հայեր, վրացիներ և կովկասյան թաթարներ) քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից՝ գրեթե հավասար թվով:

Կառավարության կազմում հայերից ընդգրկվեցին Ալ. Խատիսյանը (ֆինանսների նախարար), Հ. Քաջազնունին (պետական խնամատարության նախարար), Ա. Երզնկյանը (աշխատանքի նախարար) և Ա. Սահակյանը (պարենավորման նախարար): Իսկ երբ ապրիլի 11-ին (24) կառավարության հայ նախարարները տեղեկացան Կարսը թուրքերին հանձնելու Ա. Չխենկելի կարգադրության մասին, հայտարարեցին, որ իրենք անկարող են մնալ կառավարության մեջ: Ստեղծված կառավարական ճգնաժամը լուծվեց փոխադարձ համաձայնությամբ. հայ նախարարները վերադառնում են կառավարություն պայմանով, որ գեներալ Ի. Օղիշիլիձեն հեռացվում է պաշտոնից, Մ. Հարությունյանը նշանակվում է արտաքին գործերի նախարարի օգնական, սակայն վերջինս, առանց Ա. Չխենկելիի (միաժամանակ արտաքին գործերի նախարար) գիտության, ոչ մի կարգադրություն չպետք է աներ:

¹⁹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 109:

հետ ամենաարագ ժամկետներում հաշտություն կնքելու համար¹⁹³: «Մասնատրապէս հայկական շրջանակները,- գրում է Ալ. Խատիսյանը,- վրդովուած էին այդ գաղտնի եւ ինքնագլուխ բանակցութիւններէն. Այդ վրդովմունքը կատաղութեան հասաւ, երբ Չխենկելին ինքնագլուխ կերպով կարգադրած էր յանձնել Կարսը թուրքերուն»¹⁹⁴: Եվ հերթական անգամ հայկական կողմը կանգնեց կատարված փաստի առաջ: Ապրիլի 12-ին (25) թուրքական զորքերը գրեթե առանց կռվի գրավեցին հայկական ճակատը պաշտպանող միակ ամուր հենարանը՝ Կարսը: Այդ առնչությամբ Յ. Իրազեկը գրում է. «Կարսի անկումը աղետներից ահաւորագոյնն էր ամբողջ Անդրկովկասի և առաւելապէս հայերի համար: Ուստի, մասնատրապէս հայոց մէջ, վրդովմունքն ընդհանուր ու աննկարագրելի էր, իսկ առաջացրած յուսալքումն ու խուճապը հսկայական - թէ՛ բովանդակ հայութեան, թէ՛ մանաւանդ, զօրքի շարքերում: Առանձնապէս յանձնման ամբողջ արարարողութիւնը, իր ստոր ու դաւադրական բնույթով, չափազանց վիրատրական»¹⁹⁵:

Փաստորեն, Թուրքիան, խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի 4-րդ հոդվածի պայմանները, ռազմական ուժով գրավեց Բաթումը, Արդահանը, Կարսը: «Եվ միաժամանակ , - գրում է Ջ. Ավալովը, - ապացուցված էր, որ դեռ չկազմակերպված, ցնցված Անդրկովկասը զուրկ է ամենապարզ պատերազմական գործողություններ կատարելու կարո-

¹⁹³ Տե՛ս նույն տեղը: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 224:

¹⁹⁴ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 39:

¹⁹⁵ Յ. Իրազեկ, Մոսկի անցեալից, Պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, էջ 22:

դությունից»¹⁹⁶: Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը վերջնականապես համոզվեցին, որ այլևս ի վիճակի չեն համախմբելու երկրամասի բոլոր ուժերը պատերազմը շարունակելու համար:

Փաստորեն, Բաթումի անկումից հետո երկրամասում արագորեն իրար հաջորդեցին մի շարք բախտորոշ քաղաքական իրադարձություններ. Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից և հայտարարեց անկախ պետություն, Կարսը հանձնվեց թուրքերին, և նրանց հետ հաշտության բանակցությունների վերսկսման հարցը կրկին դարձավ օրակարգային:

Այսպիսով, Անդրկովկասյան սեյմի՝ ռազմաշունչ տրամադրությամբ հայտարարված պատերազմն ավարտվեց պարտությամբ, որի պատճառը, անշուշտ, երկրամասի երեք գլխավոր ազգերի միջև կուտակված ներքին և արտաքին խոր հակասություններն ու հակամարտություններն էին, նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տարածքային սահմանային վեճերը, միմյանց նկատմամբ անվստահությունը և անհանդուրժողականությունը, որոնք հնարավորություն չտվեցին երկրամասում ստեղծելու միացյալ ճակատ՝ թուրքական ռազմական սպառնալիքին դիմակայելու համար: Անկասկած ռազմական առումով ևս Անդրկովկասը ի վիճակի չէր լուրջ դիմադրություն կազմակերպել օսմանյան բանակի դեմ:

Պատմական դեպքերը, դիվանագիտական բանակցային գործընթացներն ու ռազմաքաղաքական իրադարձությունները ցույց տվեցին նաև, որ Սեյմը և կառավարությունը ժամանակին

¹⁹⁶ **3. Авалов**, Независимость Грузии в международной политике 1918-1921 г.г., воспоминания. Очерки. Paris, 1924, с. 33:

չկարողացան ապահովել Անդրկովկասյան երեք գլխավոր ազգերի շահերի ներդաշնակցությունը և ի վիճակի չէին ձևավորելու միասնական արտաքին քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն: Դրա հիմնական պատճառներից էին երեք գլխավոր ազգերի քաղաքական տարբեր կողմնորոշումները և դրանից բխող լուրջ հետևանքները: Յուրաքանչյուրը գործում էր իր ազգային շահերից ելնելով: Այդ իրողությունները մեկ անգամ ևս ապացուցեցին Անդրկովկասյան երեք հիմնական ազգերի՝ նույն պետության կազմում հետագա համակեցության անհնարինությունը:

Անդրկովկասում վերջին օրերին իրար հաջորդած քաղաքական իրադարձությունների բերումով Հայոց ազգային ժողով¹⁹⁷ գումարվեց ընդամենը մեկ անգամ՝ 1918 թ. ապրիլի 15-ից (28)-18-ը (մայիսի 1)* Թիֆլիսում¹⁹⁸: Հայոց ազգային ժողովի արտակարգ նիստերին մասնակցում էին Հայոց ազգային խորհրդի բոլոր անդամները և հայ քաղաքական կուսակցությունների անդամներ ու արևմտահայ ներկայացուցիչներ: Նիստերը նախագահում էր Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Մհարոնյանը:

Արտակարգ նիստերում քննարկվեց Անդրկովկասի անկախությունից (ապրիլի 22-ին), Կարսի անկումից հետո Սեյմի

¹⁹⁷ Տե՛ս մանրամասն **Գ. Պետրոսյան**, Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից (1917թ. փետրվար-հոկտեմբեր), «Հայագիտության հարցեր» հանդես, 2016, 2, էջ 51-58:

* Անդրկովկասի կառավարությունը ընդունել է որոշում՝ մտցնել Նոր Գրիգորյան տոմար՝ ապրիլի 17-18 գիշերվա ժամը 12-ին հաջորդ չորեքշաբթին համարելով մայիսի 1-ը: (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 109): Ապրիլի 18-ից հետո տեղի ունեցած դեպքերը կներկայացնենք նոր տոմարով:

¹⁹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 1-22:

«Հայ հեղափոխական դաշնակցության» խմբակցության և Հայոց ազգային խորհրդի փոխհարաբերությունների հարցը: Ա. Ահարոնյանը ապրիլի 15-ի (28) առաջին նիստի բացման խոսքում մտահոգություն հայտնեց. «Ազգային քաղաքականությունը վարում է Սեյմի հայ անդամների ֆրակցիան՝ առանց Ազգային խորհրդի որևէ մասնակցության», սակայն եղած ձախողումների համար լայն հասարակայնության կողմից «պատասխանատու են ճանաչվում» Հայոց ազգային խորհրդի անդամները¹⁹⁹:

Այս խնդիրն ավելի սուր բնույթ ընդունեց Կարսի անկումից հետո: Ազգային խորհրդի անդամ Ս. Մամիկոնյանն իր ելույթում փաստեց, որ Անդրկովկասյան սեյմի ձևավորումից հետո «Ազգային օրենսդիր մարմինը» փաստացի սահմափակել է Ազգային խորհրդի դերը, հեղինակությունն ու իրավունքները հայությանը վերաբերող առաջնային որոշումների կայացման հարցում, քանի որ կառավարության առջև հայության շահերը ներկայացնում էր Սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցության» խմբակցությունը, ինչը հանգեցրեց Հայոց ազգային խորհրդի հեղինակության նվազմանը²⁰⁰:

Հայոց ազգային ժողովը արձանագրեց, որ Սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցության» խմբակցությունը շրջանցել է Հայոց ազգային խորհրդի դիրքորոշումը Անդրկովկասի անկախության ապրիլի 9-ի (22) հայտարարության մասին: Սեյմի որոշումից հետո՝ ապրիլի 12-ին (24), Հայոց ազգային խորհուրդը հայտարարել էր, որ դեմ է Անդրկովկասի անկախության

¹⁹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 2:

²⁰⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 2-3:

նը. Սեյմը ոտնահարել է ժողովրդի իրավունքը, քանի որ նման ակտի համար հարկավոր էր հանրաքվե անցկացնել, և խորհուրդը անհրաժեշտ է համարել այդ մասին բարձրաձայնել մամուլում: Սակայն Ա. Ահարոնյանը նպատակահարմար չհամարեց դա, այլ առաջարկեց սպասել Հայոց ազգային ժողովի որոշմանը²⁰¹: Բուռն քննարկումների հետևանքով Ազգային ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ որոշեց. «Ազգային խորհրդի որոշումը հայտարարել մամուլի մեջ, որ ինքը (Ազգային ժողովը – Գ. Պ.) դեմ է Արդրկովկասի անկախ հայտարարելուն՝ համարել չեղյալ»²⁰²: Ապրիլի 16-ի (29) երկրորդ նիստում Ա. Ահարոնյանն իր կարծիքը հայտնեց Անդրկովկասի անկախության մասին. «Անկախության հարցը ինձ թվում է, որ ավելի աղետաբեր պիտի լինի մեզ համար, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունելը: Ահա՛ թե ինչու Թուրքիան պահանջ է դրել Անդրկովկասն անկախ հայտարարել և այդ պահանջը նա բանակցություններ սկսելու պայման է հայտարարել»²⁰³:

Ապրիլի 18-ի (մայիսի 1) վերջին՝ երրորդ նիստում Ազգային ժողովը քննարկեց Սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցության» խմբակցության և Հայոց ազգային խորհրդի փոխհարաբերությունների հարցը: Քննարկումն այնքան բուռն ու լարված էր, որ անգամ Հայոց ազգային խորհրդի շատ անդամներ հրաժարականի դիմում ներկայացրին: Բանն այն էր, որ Հայոց ազգային խորհուրդը Անդրկովկասի՝ վերջին օրերի քաղաքական բախտորոշ իրադարձություններին (Անդրկովկա-

²⁰¹ Տե՛ս նույն տեղը, ք. 4:

²⁰² ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 8:


²⁰³ Նույն տեղում:

սի անկախությունը, Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցային գործընթացի վերսկսումը, Կարսի անկումը) ոչ միայն չի մասնակցել, այլև անգամ տեղեկացված չի եղել: Ազգային ժողովը որոշեց. «Բոլոր քաղաքական բնույթ ունեցող խնդիրները նախապես քննության առնել Ազգային խորհրդի մեջ՝ համաձայն Ազգային համագումարի տված որոշումների»²⁰⁴: Դրանից հետո Ազգային խորհրդի անդամները հետ վերցրին իրենց հրաժարականի դիմումները²⁰⁵:

Այսպիսով, Ալեքսանդրոպոլի և Թիֆլիսի (Հայոց ազգային ժողովի) արտակարգ նիստերի քննարկումները մեկ անգամ ևս փաստեցին, որ երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական աննպաստ պայմաններում հայ քաղաքական ուժերը ուշացումով էին արձագանքում իրադարձություններին և ներկուսակցական, միջկուսակցական շահերի ու տարաձայնությունների հետևանքով էլ չկարողացան ժամանակին գործունեության ճկուն, միասնական տեսակետ մշակել, որն էլ, անշուշտ, բացասաբար ազդեց քաղաքական, դիվանագիտական գործընթացների վրա:

²⁰⁴ Նույն տեղում, ք. 21:

²⁰⁵ Տե՛ս նույն տեղը, ք. 22:




Salut de Trébizonde. Vue du pont Taba-hané, ریاضیای کره



Տրապիզոն




Ալեքսանդր Խատիսյան



Հովհաննես Քաջազնունի



Սիմոն Վրացյան




Համո Օհանջանյան



Ավետիս Ախարոնյան



Լեո



Արամ Մանուկյան



Միքայել Պապազանյան



Ակակի Չիքենկելի



Օտտո Գերման ֆոն Լոմոսկ



Էրիխ Լյուդենսկոյ



Նոյ ժորդանյան



Բրեստ-Լիտովսկի բանակցությունները



Բաքում, 1918 թ.



Անդրկովկասի պատվիրակությունը Բաթումի բանակցություններում



Բաթումի պայմանագրի կնքումը, 1918 թ. հունիսի 4

11. *Hydrophilus*

11. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 12. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 13. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 14. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 15. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 16. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 17. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 18. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 19. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.
 20. *Ulmus montanus* L. - *Ulmus* L.

[illegible][illegible]

上 下 左 右
 中 心 对 称
 正 交 性

1 4 11 8 11 4 11 3.

4. 30/1/1968

[illegible]

Shaw

A circular stamp with the number "14" in the center. The text "FEB 14 1964" is visible around the perimeter of the stamp.

Shu

110

Yazici isminin diğer sitema kş - 6

[illegible]

I think that you are more or less
 correct. I have been told that
 the first of the two is the only
 one that is still in the country
 to which I have been told to
 go. I have been told to go
 to the first of the two. I have
 been told to go to the first of the two.

Tiflis, le 13 Juin, 1919.

Excellence,

Par suite du démantèlement de la République Transcaucasienne, le Conseil National Arménien du Caucase, dans sa réunion du 29 Mai, en vertu des pouvoirs dont il est investi par le peuple arménien, a déclaré l'indépendance de l'Etat Arménien, et a institué la République Démocratique Arménienne.

Le Gouvernement de la République de l'Arménie a l'honneur d'en faire part à Votre Excellence, et de la prier de bien vouloir le porter à la connaissance du Gouvernement Imperial russe.

Veuillez croire, Excellence, à l'assurance de notre plus parfaite considération.

Président du Conseil National / *A. A. ...* /

Président du Gouvernement de la République Arménienne / *A. A. ...* /

Ministre des Affaires Etrangères / *A. A. ...* /

Secrétaire du Conseil National:

Des Excellences

Seigneurs Extraordinaires et Ministres Impérialistes
de la Maison Impériale Le Czar de Russie,

Constantinople.

Tiflis, le 13 Juin 1919.

Excellence,

Par suite du démantèlement de la République Transcaucasienne, le Conseil National Arménien du Caucase, dans sa réunion du 29 Mai, en vertu des pouvoirs dont il est investi par le peuple arménien, a déclaré l'indépendance de l'Etat Arménien, et a institué la République Démocratique Arménienne.

Le Gouvernement de la République de l'Arménie a l'honneur d'en faire part à Votre Excellence, et de la prier de bien vouloir le porter à la connaissance du Gouvernement Imperial russe.

Veuillez croire,

Excellence,

à l'assurance de notre parfaite considération.

Président du Conseil National:

Président du Gouvernement de la République Arménienne:

Des Affaires Etrangères:

Tiflis, le 13 Juin, 1919.

Excellence,

Par suite du démantèlement de la République Transcaucasienne, le Conseil National Arménien du Caucase, dans sa réunion du 29 Mai, en vertu des pouvoirs dont il est investi par le peuple arménien, a déclaré l'indépendance de l'Etat Arménien, et a institué la République Démocratique Arménienne.

Le Gouvernement de la République de l'Arménie a l'honneur d'en faire part à Votre Excellence, et de la prier de bien vouloir le porter à la connaissance du Gouvernement Imperial russe.

Veuillez croire, Excellence, à l'assurance de notre plus parfaite considération.

Président du Conseil National Arménien:

Président du Gouvernement de la République Arménienne:

Ministre des Affaires Etrangères:

Des Excellences

Seigneurs Extraordinaires et Ministres Impérialistes
de la Maison Impériale Le Czar de Russie,

Constantinople.



Ավետիք Իսահակյան

$\frac{w=36}{u_4 \cdot 10 / \text{viii}} 19.8$

4 Aug. 1918. J. M. P.

Thyunguungu Thyunguungu Munt
Thyunguungu Munt

J. G. Meyer

Zusatz kugelförmig.

Euer werter Herr Direktor,
 Ludwigshafen bei Rhein, am Sonntag
 den 10ten August 1896.
 Ich habe gedankt für Ihre
 gütliche Antwort.

7. 9.

1. জৈষ্ঠ পূর্ণিমা, ১. ৯. কৃষ্ণ
কৃষ্ণ পূর্ণিমা অষ্টমী, অষ্টমী
নবমী, দশমী. সো ১ ১
১১ ১২ ১৩ ১৪ ১৫ ১৬ ১৭ ১৮ ১৯ ২০ ২১ ২২ ২৩ ২৪ ২৫ ২৬ ২৭ ২৮ ২৯ ৩০

1. *Junco hyemalis*, wintered in the
 nest through the winter in
 the nest. So *Junco hyemalis* in
 winter: the nest was

[illegible][illegible]

2^o M. p. 1000.

fürstlich russk. Gen. Sekret.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**ԲԱԹՈՒՄՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱՆԿԱԽ
ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ. ԵՐԵՔ ԱՆԿԱԽ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ**

1. Անդրկովկասի արտաքին քաղաքական դրությունը Բաթումի դիվանագիտական բանակցության նախօրեին (1918 թ. ապրիլ)

Ինչպես վերը նշվեց, 1918 թ. ապրիլին Անդրկովկասում իրար հաջորդեցին ռազմաքաղաքական մի շարք ճակատագրական իրադարձություններ: Թուրքիան, խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի 4-րդ հոդվածի դրույթները, ռազմական ուժով գրավեց Բաթումը, Արդահանը, Կարսը: Նրա ճնշմամբ Արդրկովկասն անջատվեց Ռուսաստանից և հայտարարվեց անկախ պետություն: Դրանով Թուրքիան վերջնականապես փակեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի խնդիրը: Իսկ Անդրկովկասի անկախությունը Թուրքիայի ռազմաքաղաքական դեկլարությանը ոչ միայն ազատում էր Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի կապանքներից, այլ նաև տարածքային գավթումների նոր հնարավորություն էր ստեղծում:

Ի դեպ, Թուրքիայի ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան 1918 թ. մայիսի 10-ին Բաթումում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամների հետ գրույցի ժամանակ համոզում էր, թե «Դուք միանգամից չճանաչեցիք Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և դրանով մեզ համար առիթ ստեղծեցիք ձեզ նոր պահանջներ ներկայացնելու»²⁰⁶: Միամտություն կլիներ հավատ ընծայել Ջեմալ փաշայի խոսքերին: Հակառակ նրա պնդմանը՝ անկախ Անդրկովկասի հետ դիվանագիտական բանակցային գործընթացների վերսկսման քողի

²⁰⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

տակ Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը, թաքցնելով զինադադարի իրական դրդապատճառները և նպատակները, լայն հնարավորություն ստացավ շարունակելու վաղօրոք մշակված ռազմատենչ ու զավթողական պլանները. նախ շեղել, մոլորության մեջ գցել, ապա թուլացնել երկրամասի կառավարության և ժողովուրդների զգոնությունն (մասնավորապես հայերի) ու դիմադրողական ոգին, շարունակել և գրավել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններից դուրս նկատված ողջ Անդրկովկասը: Դրանով օսմանյան կառավարությունը թևակոխեց իր ռազմաքաղաքական առաջնահերթությունների իրականացման հաջորդ՝ նոր շրջանը: Այդ պայմաններում թուրքական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում, և այս անգամ արևելահայությունն էր հայտնվելու ցեղասպանության և հայրենագրկության սպառնալիքի առջև, ինչպես դա տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանում և մյուս հայաբնակ վայրերում:

Ստեղծված նպաստավոր նոր պայմաններում օսմանյան կառավարությունը դարձյալ կիրառեց վաղուց արդեն իրեն արդարացրած ավանդական ռազմաքաղաքական մարտավարությունը. մի կողմից բանակցել, իսկ մյուս կողմից, ռազմական ուժով Անդրկովկասից նոր տարածքներ զավթելով, ճնշում գործադրել դիվանագիտական բանակցային գործընթացների վրա և սպառնալիքով պարտադրել իր անարդար պահանջները վերջնագրի լեզվով:

Հարկ է նշել, որ այդ հնարքը Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը կիրառեց ոչ միայն Տրապիզոնի, այլ նաև Բաթումի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բա-

նակցային գործընթացների թե՛ նախօրեին, թե՛ ընթացքում և թե՛ հետագայում:

Սակայն քաղաքական տարբեր կողմնորոշում և տարբեր շահեր հետապնդող Անդրկովկասյան սեյմի և կառավարության անդամները չկարողացան ժամանակին արագ ու ճիշտ կողմնորոշվել Թուրքիայից սպասվող նոր ծանր հետևանքների սարդոստայնում: Ա. Ահարոնյանի գնահատմամբ. «Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը հեռու էին այդ սպառնալիքի ողջ լրջությունը գիտակցելուց և ի գործու չէին լուծելու իր առջև ծառացած այդպիսի ծանր պարտականությունը»²⁰⁷: Նրանք այն կարծիքին էին, որ Տրապիզոնի բանակցություններում Թուրքիայի՝ հաշտության դաշնագիր ստորագրելու երկու հիմնական պահանջները կատարված են. ստանալով Բրեստ-Լիտովսկի դաշնագրով նախատեսված Բաթումը, Արդահանը, Կարսը՝ թուրքերը կանգ կառնեն, կբավարարվեն դրանով, և վերջ կդրվի պատերազմին: Նման մտայնությունը հետևանք էր նաև այն բանի, թե Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուց և անկախ հայտարարելուց հետո թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունների վերսկսման հարցը արդեն դարձել էր օրակարգային: Անդրկովկասյան կառավարության նոր նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին դեռ 1918 թ. ապրիլի 10-ի (23) երեկոյան հեռագրել էր թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշային, որ իր կառավարությունը ընդունում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և խնդրում է դադարեցնել ռազմական գործողու-

²⁰⁷ Le Statute International de l'Arménie, Dictionnaire Diplomatique, Académie Diplomatique Internationale, t. vol 1, p. 197, 1934. (Շնորհակալություն Ա. Ենոբյանին՝ Փարիզից բերված նյութը տրամադրելու համար):

թյուններն ու վերսկսել Տրապիզոնում ընդհատված (ապրիլի 1-ի (14)) դիվանագիտական բանակցությունները՝ Թուրքիայի հետ ամենաարագ ժամկետներում հաշտություն կնքելու համար: «Մեր առաքելութիւնը այս անգամ,- գրում է Ալ. Խատիսյանը,- մեզ շատ դիրքին կը թւեր: Կը մտածէինք թէ պէտք է երթալ եւ ստորագրել դաշնագիր մը համաձայն Պրես-Լիթովսքի պայմաններուն»²⁰⁸: Սակայն նրանց բոլոր հույսերն ի դերս ելան, երբ հայտնի դարձավ, որ թուրքերին չի բավարարում զինադադարը, և նրանք չեն պատրաստվում վերսկսելու դիվանագիտական բանակցային գործընթացն Անդրկովկասի հետ: «Բայց միթե՞ տաճիկներն այժմ կուզէին բանակցել Անդրկովկասի հետ,- գրում է Յ. Իրազեկը,- ու իրենց յառաջխաղացութիւնը կանգնեցնել: Կարսի, ինչպէս և Բաքումի անկումով ամբողջ Անդրկովկասի բանալիները այլևս նրանց ձեռքերում էին գտնուում և, ուրեմն, ինչու՞ հաշտութեան գալ, երբ նուազագոյն զոհաբերութեամբ անգամ կարելի էր ուզած շրջանները գրաւել»²⁰⁹: Ապրիլի 12-ին (25)՝ Կարսը գրավելուց հետո, թուրքերը շարունակեցին իրենց ռազմական առաջխաղացումը՝ արդեն ներկայացնելով տարածքային մոր պահանջներ՝ ողջ Անդրկովկասը գրավելու և ներթափանցելու Իրան, միջինասիական երկրներ՝ իրենց երազած պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու համար: Դրանով Օսմանյան Թուրքիան սպառնում էր նաև կայսերական Գերմանիայի ռազմաքաղաքական և տնտեսական շահերին: Նա փակում էր Գերմանիայի ճանապարհը՝ ներթափանցելու դեպի Մերձավոր

²⁰⁸ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 49:

²⁰⁹ Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, Պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, էջ 23:

Արևելք, և միաժամանակ զրկում երկրամասի՝ վերջինիս խիստ անհրաժեշտ բնական հարստություններից օգտվելու հնարավորությունից: Այդ հանգամանքն առաջ բերեց Գերմանիայի խոր գայրույթը, և վերջինս որոշեց չափավորել թուրքերի ախորժակը և թույլ չտալ խախտելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Եվ վերջապես, երկրամասի ողջ երկաթուղային ցանցը խիստ անհրաժեշտ էր նաև կռվող կողմերից յուրաքանչյուրին և նպաստելու էր այն երկրին ուժեղացնելուն, որն այն կընդգրկեր իր ազդեցության ոլորտում: Կարսն ու Բաթումը գրավելով՝ թուրքերն արդեն բռնել էին երկաթուղու այն ծայրը, որ միացնում էր թուրքական ռազմաճակատն Իրանի հետ, իսկ այդ ճանապարհը տանում էր դեպի Բաքվի նավթը և Միջին Ասիա: «Ցավը, սակայն, այն էր,- գրում է Ջ. Ավալովը,- որ թուրքերի ներխուժումն Անդրկովկաս անմիջապես և ճակատագրականորեն առաջ էր բերում բազմապիսի և վտանգավոր բարդություններ: Իրան տանող երկաթուղին անցնում էր հայկական գավառներով. թուրքերը հրապուրվում էին այստեղ ևս շարունակելու հայերի բնաջնջման այն քաղաքականությունը, որ պատերազմի (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.) ընթացքում կիրառել են Թուրքիայում (Արևմտյան Հայաստան – Գ. Պ.): Եվ դրանով գործողության մեջ էին դրվում փոխադարձ ջարդը, թշնամությունը հայ և թաթար բնակչության միջև»²¹⁰: Այսպիսով դժվար չէ նկատել, թե ինչու երկրամասում բախվեցին երկու դաշնակիցների՝ Թուրքիայի և Գերմանիայի աշխարհաքաղաքական, տնտեսական շահերը:

²¹⁰ 3. Авалов, указ. соч., с. 48-49:

Գերմանիային Անդրկովկասում ռազմաքաղաքական խնդիրներից ոչ պակաս հետաքրքրում էր տնտեսականը, մանավանդ Առաջին աշխարհամարտի այն օրերին, երբ նրանք առանձնապես զգում էին վառելանյութի և այլ բնական պաշարների սուր պակաս: Այդ առնչությամբ Գերմանիայի գլխավոր շտաբի ղեկավար, գեներալ Է. Լյուդենդորֆը գրում է. «Մենք Բաքվի նավթի վրա հույս կարող ենք դնել միայն, եթե այն մեր ձեռքում լինի: Ես հիշում եմ, թե Գերմանիայում վառելանյութի ինչպիսի մեծ պակաս կար, ձմռանը ինչ դժվարությամբ ունեինք լուսավորության հետ կապված, և թե դրանք ինչպիսի հետևանքներ ունեցան մեզ համար: 7-րդ բանակի հարձակման անցնելուց հետո բանակի վառելիքի պաշարները սպառվեցին: Վառելիքի կարիքը շատ էր զգացվում: Ուկրաինայի երկաթուղին նույնպես նավթի կարիք շատ ուներ: Մենք փորձեցինք առավելագույնի հասցնել Ռումինիայի նավթի շահագործումը: Բայց և այնպես չէինք կարողանում այդ պակասը լրացնել: Այժմ դա հնարավոր էր թվում, եթե այն բերեինք Անդրկովկասից, հատկապես Բաքվից, եթե միաժամանակ լուծեինք փոխադրամիջոցի հարցը... Ամենավճռորոշ հարցը մնում էր այն, թե ինչպես հասնել Բաքու»²¹¹:

Դեռ Առաջին աշխարհամարտից առաջ գերմանացիներին մեծապես հետաքրքրում էին Վրաստանի բնական հարստություները (խիտ անտառները), առանձնապես՝ Ճիաթուրիի մանգանը, որը խիստ անհրաժեշտ էր Գերմանիայի մետաղաձուլարաններում: 1918 թ. մարտի 29-ին (ապրիլի 11) Տրապի-

²¹¹ Э. Людендорф, Мои воспоминания о войне 1914-1918 г.г., (Военные мемуары), Москва, Вече, 2014, с. 597.

զոն մեկնած գերմանական հատուկ դիվանագիտական հանձնախումբը բանակցեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելիի հետ՝ Ճիաթուրիի մանգանը գնելու և Գերմանիա արտահանելու առաջարկով: «Գերմանացիների կողմից,- գրում է Ալ. Խատիսյանը,- մարգանցի գործի ապշեցուցիչ արագ օգտագործման փաստը պարզորոշ վկայում է, որ նրանք հետևում էին մեր բանակցությունների ընթացքին և ոչ մի ավելորդ ժամ չկորցնելով՝ հայտնվեցին ընձեռած իրավիճակի օգուտները քաղելու: Գերմանական ճարպկության ապշեցուցիչ պատկեր. Բաթումում դեռ հրետանային համազարկեր են, Անդրկովկասի կառավարությունից և թուրքական կայսրությունից զինադադարի հրաման դեռ չկար և գերմանացիներն արդեն ուզում են սկսել առևտուրը»²¹²: Ջ. Ավալովի գնահատմամբ. «Այդ սև քարի (այդպես է վրացերեն կոչվում մանգանը) վրա էր կառուցվում գերմանա-վրացական հարաբերությունների շենքը, մտածում էինք մենք ոչ առանց հիմքի»²¹³: Այդ աջակցության դիմաց գերմանացիները խոստանում էին ապահովել և պաշտպանել Վրաստանի անվտանգությունը՝ նրա սահմանները:

Գերմանացիներին Արևելյան Հայաստանը տնտեսապես հետաքրքրություն չէր ներկայացնում, սակայն այդ տարածքով էր անցնում երկրամասի երկաթուղային հանգույցի մի մասը, որտեղ բախվում էին Թուրքիայի և Գերմանիայի ռազմաքաղաքական ու տնտեսական շահերը: Դրանից ելնելով՝ գերմանացիներն իրենց շահերից բխող խոստումներ էին տալիս՝

²¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 107:

²¹³ **З. Авалов**, указ. соч., с. 106:

«աջակցելու» հայերին: Սակայն թուրքերի հետ հակամարտության մեջ գտնվող, հայոց ցեղասպանության և հայրենագրության մեղսակից Գերմանիայի համար այլևս ընդունելի չէր դաշնակից Թուրքիայի հետ առանց այն էլ լարված հարաբերությունները խորացնելը: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը և քաղաքական իրադարձությունները, երկրամասում Քառյակ դաշինքի երկրների շահերի բախման պայմաններում հայկական դիվանագիտությունը ժամանակին չկարողացավ ապագան կանխատեսել և արագ ու ճիշտ նախապատրաստվել: Մեր կարծիքով՝ թուրքական ռազմական առաջխաղացումը կանխելու և Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը լուծելու նպատակով հայկական տարբեր պատվիրակությունների դիվանագիտական ջանքերը Բեռլինում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում²¹⁴ իրատեսական չէին, և բնական է, որ չարժանացան Գերմանիայի և նրա դաշնակիցների «շոշափելի» աջակցությանը: Հետագայում Ալ. Խատիսյանը խոստովանում է. «Մենք ուշացած էինք, ինչպես քանի մի անգամ ուշացանք մեր վերջին տարիներու պատմութեան մէջ: Պատճառը միշտ ալ այն էր, որ մենք գերազնահատեցինք մեր սեփական ուժերը եւ ստորագնահատեցինք թշնամիին ուժերը»²¹⁵:

Այսպիսով, Գերմանիայի աշխարհաքաղաքական և տնտեսական շահերն անհրաժեշտաբար նրան մղեցին իր հո-

²¹⁴ Տե՛ս ՀԱԱ (հայկական պատվիրակությունների արձանագրություններ), ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 9-125, գ. 12, ք. 22-102, գ. 13, ք. 7-9, ֆ. 4033, ց. 2, գ. 962, ք. 88, 93, 96-97 և այլն: Տե՛ս նաև **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, **Ա. Հայրունի**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, ԵՊՀ, 2013:

²¹⁵ **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 52:

վանավորության տակ առնելու Վրաստանն ու Ադրբեջանը: Գերմանիան պահանջեց Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարությունից դադարեցնել առաջխաղացումն ու տարածքային բռնազավթումները երկրամասում և դիվանագիտական բանակցային սեղանի շուրջ նստել Անդրկովկասի հետ: Նրա ճնշմամբ **1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների Թուրքիայի և Գերմանիայի միջև**²¹⁶: Ըստ դաշնագրի՝ Թուրքիային էին անցնում Անդրկովկասում նրա գրաված բոլոր հայկական տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Անդրկովկասի մնացած տարածքները՝ Վրաստանն ու Ադրբեջանը, անցնում էին Գերմանիայի ազդեցության ոլորտ: Եվ, այնուամենայնիվ, թուրքերը կարողացան հետագայում կորզել Անդրկովկասի երկաթուղով գորքերի անարգել տարանցման իրավունքը՝ իբր հյուսիսային Իրանում անգլիական գորքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար, մինչդեռ Թալեաթ-Էնվեր տանդեմը ձգտում էր դեպի Բաքու:

Հետագայում գերմանացիներին հայտնի դարձավ, որ թուրքական գորքերի անարգել տարանցումը ընդամենը դիվանագիտական հնարք է. նույն օրը՝ ապրիլի 27-ին, գերմանա-թուրքական դաշնագիրը շրջանցելու նպատակով Թուրքիան գաղտնի դաշինք կնքեց մուսաֆաթականների հետ, որով բաց-

²¹⁶ Տե՛ս Գ. **Пипия**, Политика Германии в Закавказье в 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971, էջ 10: Նույնի՝ Германский империализм в Закавказье 1910-1918 гг., Москва, 1978, էջ 101-102: Տե՛ս նաև Ա. **Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 9, տե՛ս նաև Հ. **Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 185:

վում էր թուրքերի ճանապարհը դեպի Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը: Հետագայում գերմանացիները հասկացան, որ խաբված են, բայց արդեն ուշ էր: Մինչև գերմանական զորքերի տարանցման նախապատրաստության ավարտը Էնվերի եղբայր Նուրի փաշան կարողացավ գրավել Բաքուն²¹⁷: Այդ քայլը նոր մարտահրավեր էր՝ ուղղված Գերմանիայի շահերին, որն ավելի էր խորացնելու առանց այն էլ լարված հարաբերությունները Թուրքիայի հետ: Եվ դա պատահական չէր: Շուտով, ի պատասխան Թուրքիայի, վրաց-գերմանական զաղտնի բանակցությունների արդյունքում Վրաստանը ստացավ Գերմանիայի «հովանավորի» հրավեր: Իսկ մի քանի ամիս անց՝ 1918 թ. օգոստոսի 27-ին, Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվեց Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ դաշնագիրը, որով Գերմանիան լուծում էր Բաքվի նավթի նկատմամբ իր պահանջների բավարարումը²¹⁸: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը կարողացավ իր ծրագրերն իրականացնել Անդրկովկասում:

Երկրամասն ազդեցության ոլորտների բաժանելու գերմանա-թուրքական դաշնագրի կնքման հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարությունը համաձայնեց Անդրկովկասի հետ նստել բանակցային սեղանի շուրջ: Փոխադարձ պայմանավորվածությամբ այս անգամ որոշվեց հաշտության բանակցությունները նշանակել Բաքումում:

²¹⁷ Տե՛ս Ե. Լյուենдорֆ, Мои воспоминания о войне 1914-1918 гг. (Военные мемуары), էջ 598:

²¹⁸ Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 9:

2. Անդրկովկասյան պետության կազմալուծումը. երեք անկախ հանրապետությունների ստեղծումը (1918 թ. մայիս)

1918 թ. մայիսի 1-5-ը Թիֆլիսում ձևավորվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության՝ Բաթում ուղարկվելիք բազմամյա կազմ՝ 45 հոգի²¹⁹: Նրանցից 6-ը պատվիրակության անդամներ էին, իսկ 39-ը՝ խորհրդականներ, քարտուղարներ, զինվորականներ և այլն: Նման մեծաքանակ կազմը վկայում էր Անդրկովկասյան երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչների միջև սուր հակասությունների և փոխադարձ անվստահության մասին: Պատվիրակությունը դարձյալ գլխավորում էր անկախ Անդրկովկասյան հանրապետության արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին, որը միաժամանակ ներկայացնում էր Վրաստանի շահերը: Վրաց պատվիրակության երկրորդ անդամը Ն. Նիկոլաձեն էր, գլխավոր խորհրդականները՝ Չ. Ավալովը և Ռիխիլաձեն, իսկ հայկական կողմից ներկայացված էին Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազնունին (խորհրդականներ՝ Ս. Վրացյան, Մ. Պապաջանյան, Հ. Օհանջանյան և ուրիշներ)²²⁰: Թաթարներից ընդգրկվեցին Մ. Հաջինսկին, Մ. Ռասուլ-Չադեն և այլք:

Թուրքական պատվիրակության նախագահն էր արդարադատության և արտաքին գործերի նախարար Հալիլ բեյը: Պատվիրակության կազմում էին նաև կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ

²¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 109: Նաև **3. Авалов**, նշվ. աշխ., էջ 34:

²²⁰ Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 19 մայիսի 1918 թ.:

փաշան, Թեֆիկ Սելիմը և Նապերդիին բեյը: Նրանց հետ ժամանեցին նաև երկրի ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան և մոտ 200 այլ պաշտոնյաներ՝ Բաթումի շրջաններում թուրքական կառավարման վարչություն ստեղծելու համար²²¹:

Գերմանիան ներկայացնում էր թուրքական կառավարությունում գերմանական հրամանատարության լիազոր ներկայացուցիչ, Թուրքիային ոչ ցանկալի, գեներալ ֆոն Լոսովը: Պատվիրակության կազմում էին նաև Վ. ֆոն Շուլենբուրգը, Օ. ֆոն Վեգենդոկը (քարտուղար): «Գերմանիան՝ Բաթումում, նշանակում էր մի սանձ Թուրքիայի բերնին, իսկ դա ամենակարևորն էր»²²², - գրում է Ջ. Ավալովը:

Դիվանագիտական բանակցություններին մասնակցելու համաձայնություն տրվեց նաև Հյուսիսային Կովկասի ու Դաղստանի մահմեդական ժողովուրդների պատվիրակներին (Հայդար բեյ Բամմատով և Ջ. Դեմիրխանով)²²³:

Մայիսի կեսին Գերմանիայի ռազմաքաղաքական կառավարությունը առաջարկել էր իր միջնորդությունը՝ Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանի հետ հաշտեցնելու և ապահովելու վերջինիս ներկայացուցչի մասնակցությունը Բաթումի դիվանագիտական բանակցություններին: Մոսկվայում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցիչ Միլերբախի միջոցով ներկայացված առաջարկին (նոտային) ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի ժամանակավոր տեղակալ Գ. Չիչերինը մայիսի 15-ի նոտայով պատասխանել էր. «Անհրաժեշտ է ռուսական կառավարության լիազոր ներկայա-

²²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II) ք. 306:

²²² **З. Авалов**, указ. соч., с. 37.

²²³ Տե՛ս **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 190:

ցուցչին ներգրավել այն բանակցություններին, որոնք Բաթումում տարվում են մեկ կողմից գերմանական և օսմանյան կառավարությունների և մյուս կողմից այսպես կոչված անդրկովկասյան կառավարությունների միջև:

Պնդելով, որ ռուսական կառավարության պատգամավորները պետք է մասնակցեն Բաթումում տեղի ունեցող բանակցություններին, Ժողովրդական Կոմիսարիատը շեշտում է, որ դա բնավ չի նշանակում, թե ռուսական կառավարությունը մտադիր է ճանաչել այսպես կոչված անդրկովկասյան կառավարությունը, ըստ որում ավելացնում է, որ առանց իր մասնակցության կնքված պայմանագիրը նա իրեն իրավունք չի վերապահի ճանաչել»²²⁴: Ի վերջո ռուսական կողմին չթույլատրվեց մասնակից դառնալ Բաթումի բանակցություններին:

Մայիսի 6-ի երեկոյան անկախ Անդրկովկասյան հանրապետության խաղաղարար պատվիրակությունը ժամանեց Բաթում՝ թուրքերի հետ հաշտության դաշնագիր ստորագրելու համոզումով: Սակայն պատվիրակությունը մեկնեց հանպատրաստից՝ չունենալով արտաքին միասնական քաղաքականություն և իբրև դրա հետևանք՝ նաև դիվանագիտական անհրաժեշտ ռազմավարություն: Բանն այն էր, որ Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը ի գործու չէին կյանքի կոչելու երկրամասի առջև ծառացած հրատապ և կարևորագույն առաջնահերթությունները: Ինչպես վերը նշվեց, դրա հիմնական պատճառներն Անդրկովկասյան երեք գլխավոր ազգերի միջև խորացող ներքին ու արտաքին հակասությունները և հակամարտություն-

²²⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության և տվետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, էջ 434-435:

ներն էին, որոնցից գլխավորներն էին նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տարածքային սահմանային վեճերը, միմյանց նկատմամբ անվստահությունը և անհանդուրժողականությունը: Այս ամենն անկարելի դարձրեց երկրամասում հավաքական միակամություն, ամուր և կայուն միասնական պետություն ստեղծելու հնարավորությունը: «Անդրկովկասի պետական-քաղաքական կեանքը,- գրում է Յ. Իրազեկը,- բոլորովին նմանում էր առակի սայլին, որին լծուած հայերը, վրացիներն ու թուրքերը (թաթարներ – Գ. Պ.) միանգամայն տարբեր շահեր ու տարբեր նպատակներ հետապնդելով, ոչ միայն իրար չէին օգնում, այլ ընդհակառակը, իրար խանգարում ու վնասում էին»²²⁵: Դժվար չէ նկատել, որ այդ ամենի պատճառով հնարավոր չդարձավ նաև ստեղծել միացյալ ճակատ՝ թուրքական տարածքային զավթումները կասեցնելու, ինչպես նաև միասնական արտաքին քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն բանեցնելու համար: Ահա թե ինչու թե՛ Տրապիզոնի և թե՛ Բաթումի դիվանագիտական բանակցային գործընթացներում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունների երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը գործում էր հանուն սեփական շահերի: Բանակցությունների ընթացքում տեղի էին ունենում ոչ պաշտոնական, անդրկուլիսյան հանդիպումներ, մասնավոր զրույցներ. թաթարները հանդիպում էին թուրքերի հետ, վրացիները՝ թուրքերի և գերմանացիների, հայերը՝ գերմանացիների: Սակայն, բացառությամբ թաթարների, հայ և վրաց պատվիրա-

²²⁵ Յ. Իրազեկ, Մոսկի անցեալից, Պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, էջ 15:

կության անդամների շահերը համընկնում էին. երկուսն էլ ձգտում էին թուրքերից անկախ և ազատ ապրելու: «Տարբեր վիճակի մեջ էին աղբբեջանցիները,- գրում է Ջ. Ավալովը:- Նրանք, ի դեմս թուրքերի, սկսել էին տեսնել իրենց ազգակիցների, որոնք կարող էին շատ հարցերում օգնել իրենց. ոչինչ չէր ստիպում խեթ հայացքով նայել Բաթումի բանակցություններին»²²⁶: Կովկասյան թաթարների մասնակցությունը թե՛ Տրապիզոնի և թե՛ Բաթումի հաշտության բանակցություններին ընդամենը դիվանագիտական խորամանկություն էր՝ քողարկելու իրենց աջակցությունը թուրքական ծրագրերի իրականացմանն Անդրկովկասում: Նրանց իրական նպատակն էր Թուրքիայի ազդեցության տարածմամբ Անդրկովկասում ապահովել իրենց շահերը:

Ահա այդպիսի բարդ ու լարված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում պետք է սկսվեին Բաթումի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացները, որտեղ ի սկզբանե ուրվագծվում էին նաև երկրամասի տարածքային նոր կորուստներ, առանց այն էլ ջլատված Անդրկովկասյան անկախ պետության լուծարման անխուսափելի գործընթաց: Հովհ. Քաջազնունու հավաստմամբ. «Սեյմի մեջ միշտ աճող ներքին անհամաձայնությունները այլ եւս չէր կարելի հաշտեցնել ոչ մի կոմպրոմիսով. պայթումը անխուսափելի էր ու անյապաղ»²²⁷:

Մինչ գերմանական պատվիրակության ժամանումը մայիսի 6-10-ը Բաթումում տեղի ունեցան թուրքական և Անդրկով-

²²⁶ **З. Авалов**, указ. соч., с. 36.

²²⁷ **Հովհ. Քաջազնունի**, Հ. Յ. Դաշնակցությունն անելիք չունի այլ եւս, էջ 29:

կայան խաղաղարար պատվիրակությունների համատեղ ճաշկերույթներ, փոխայցելություններ և մասնավոր գրույցներ²²⁸: Թուրքական պատվիրակության անդամները, Բաքում ժամանած Ջեմալ փաշան և թուրքական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ այդ ժամանակն օգտագործեցին ճշգրտելու, պարզելու Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության երեք գլխավոր ազգերի, առանձնապես հայ և վրացի ներկայացուցիչների ակնկալիքները, հավակնությունները, պահանջները և այլն, ինչպես նաև ապակողմնորոշելու նրանց: Միաժամանակ նրանք փորձեցին նաև բարոյահոգեբանական ճնշում գործադրել նրանց վրա և իրարանցում առաջացնել սկսվող դիվանագիտական բանակցություններում:

Մայիսի 6-ի երեկոյան՝ Վեհիբ փաշայի հրավիրած ճաշկերույթից հետո (մասնակցում էին մոտ 120 մարդ), տեղի ունեցավ Հալիլ բեյի և Ալ. Խատիսյանի մասնավոր առանձնագրույցը, որի ժամանակ Հալիլ բեյը փորձում է պարզել, թե արդյոք հայկական կողմը շարունակո՞ւմ է հավատարիմ մնալ ռուսական իր ավանդական կողմնորոշմանը: Նա, դիմելով Ալ. Խատիսյանին, ասում է. «Կովկասի անկախությունն ինձ շատ է հետաքրքրում, և ես Ռուսաստանի դեմ եմ գործելու, որ այդ պատճառով էլ Կովկասը պետք է տեսնել ուժեղ և միասնական, բայց իրենք երկյուղում են, որ մենք չենք կարող դրան հասնել»²²⁹: Նա գրույցի վերջում նշում է, որ իրենց շատ է հետաքրքրում նաև այն հարցը. «Թե մենք արդյոք կկարողանանք դիմակայել

²²⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II), ք. 306:

²²⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 109:

Ռուսաստանին, եթե նա շարժվի դեպի Կովկաս»²³⁰: Սակայն Հալիլ բեյի հարցը Ալ. Խատիսյանը թողնում է անպատասխան, և դրանով ավարտվում է նրանց կարճատև առանձնագրույցը:

Հաջորդ օրը՝ մայիսի 7-ին, թուրքական շոգենավի վրա ճաշկերույթի հրավիրվեցին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամները: Այդ ընթացքում թուրքական կողմը ջանասիրաբար փորձում էր բարոյահոգեբանական ճնշում գործադրել և խուճապի մատնել պատվիրակության հատկապես հայ անդամներին: Երիտթուրքական կենտրոնական կոմիտեի անդամներից դոկտոր Բահաեդդին Շաքիրը, դիմելով հայ պատվիրակներին, ասել է. «Հայերը կանգնած են մեր համախաճանկան և համաթրքական սրբազան իտեալներու իրականացման ճամբուն վրայ, եւ մենք անխուսափելիօրէն կը բախտինք անոնց հետ: Ատիկա վեր է եւ դուրս է մեր անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք հարկադրուած ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբուն վրայէն այն ամէնը, ինչ որ արգելք կը հանդիսանայ մեր ազգային սրբազան իտեալներուն: **Եվ յետոյ դուք միշտ ռուսներուն հետ էք. դուք անոնց առաջապահն էք. իսկ ռուսները մեր ռիսերիմ թշնամիներն են, պատմական թշնամիները: Մտածեցէք այս մասին, փոխեցէք ձեր հոգեբանութիւնը եւ օրիէնտացիան: Դուք թշնամի էք եւ ես ալ թշնամի եմ, բայց մենք ընկերակիցներ ենք. մենք կը հասկնանք կենդանի մարմնի կեանքը, եւ անոր մէջ չկայ մարդասիրութիւն կամ կամքի տկարութիւն»²³¹: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Ես հարկաւ պա-**

²³⁰ Նույն տեղում:

²³¹ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, օգոստոս, էջ 126:

տասխանեցի իրեն ինչ որ պէտք էր, բայց ակններս էր որ մենք կը խօսէինք տարբեր լեզուներով, ու մենք բաժնուեցանք առանց որեւէ կերպով համոզած ըլլալու զիրար»²³²:

Մայիսի 10-ին Ջեմալ փաշան Բաթումից մեկնելուց առաջ ցանկություն էր հայտնել Հալիլի ու Վեհիբի հետ այցելել Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչներին:

Ձ. Ավալովը այդ առնչությամբ գրում է. «Նրանք ցանկացել էին ավելի մոտիկից ծանոթանալ մեր պատվիրակների հետ: Երեքով պինդ նստեցին բազմոցին՝ ամբողջովին գրավելով այն: Սուրճը տրված է: Այս կողմը՝ փոքրիկ հյուրասենյակում, ամբողջ բազմությամբ տեղավորվել են անդրկովկասյան պատվիրակները: Ես հրավիրված եմ որպես «աշխատակից»։ Սկզբում ազատ խոսակցություն: Այնուհետև մեր հյուրերը խնդրում են՝ մեր ազգային հատվածներից յուրաքանչյուրն արտահայտվի անկեղծորեն»²³³: Ալ. Խատիսյանը խոսք է բացում թուրքական պետության շրջանակներում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի լուծման մասին: Ի դեպ, այդ հարցը դեռևս 1918 թ. ապրիլի 8-ին (21) Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի օրակարգից հանվել էր թուրքերի պահանջով՝ պաշտոնապես այն որակելով որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Ջեմալ փաշան Ալ. Խատիսյանին պատասխանում է. «Հայկական հարցի մասին կարելի է խոսել շաբաթներով, բայց ես, այնուամենայնիվ, մի քանի բառ կասեմ:Թուրքիային անմարդկային հարված էր

²³² Նույն տեղում:

²³³ **З. Авалов**, указ. соч., с. 50-51.

հասցված արտաքին ուժերի կողմից. սա բնական է, բայց բալկանյան ժողովուրդների և հայերի հասցրած հարվածները մահացու էին: Ահա թե ինչու ստիպված ինքնապաշտպանության միջոցներ կիրառվեցին: Եվ հայերի համար եկան սև օրեր: Ահա թե ինչու ես խորհուրդ եմ տալիս չբարձրաձայնել այդ հարցը և չդնել այն հիմա: Թողեք ժամանակը բուժի վերքերը: Չէ որ այժմ թուրքերի և հայերի միջև վստահություն չկա, իսկ առանց դրա բանակցություններն անհնար են: Պետք է հանել այդ հարցերը, պետք է դրանք վերացնել, և այդ ժամանակ մենք կկարողանանք համաձայնության գալ»²³⁴:

Այնուհետև Ալ. Խատիսյանը թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ Ջենալին, Հալիլին ու Վեհիբին հիշեցնում է նրանց «բարյացակամ» վերաբերմունքը 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման օրերին քրիստոնյաների և իր հայ ընկեր Գրիգոր Չոհրապի (հայ գրող, հրապարակախոս, փաստաբան – իրավագետ, հասարակական-քաղաքական գործիչ. 1908-1915 թթ. ընտրվել է Թուրքիայի մեջլիսի պատգամավոր) նկատմամբ: «Խատիսյանը, ըստ երևույթին, ցավոտ տեղը կոխեց,- գրում է Չ. Ավալովը, - Ջենալ փաշան լուրջ դեմք ընդունեց և խորհուրդ տվեց այդ հարցը չշոշափել»²³⁵: Իրողությունն այն էր, որ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման օրերին Հալիլի բեյը ձերբակալությունից խուսափելու համար պատասպարվել էր Գր. Չոհրապի բնակարանում: «Բայց երբ,- գրում է Ալ. Խատիսյանը, - 1915 թ. Չոհրապի կինը յուսահատօրէն դիմած էր Խալիլ պէյին, խնդրելով պաշտպանել իր ամուսինը, ան կտրուկ կերպով մեր-

²³⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

²³⁵ **З. Авалов**, указ. соч., с. 51:

ժամ էր որեւէ օգնութիւն ընծայել»²³⁶: 1915 թ. հայոց ցեղասպանության և հայրենագրկության առաջին օրերին Գր. Ջոհրապը ձեռքակալվեց, իսկ մայիսի 20-ին սպանվեց աքսորի ճանապարհին:

Բանակցությունների սկսման նախօրեին Բաթումում ակտիվորեն շրջանառվեց թուրքերի օժանդակությամբ վրացական պետություն ստեղծելու թեման: «Էմվեր փաշան,- գրում է Ալ. Խատիսյանը,- խնդրել էր ցույց տալ վրաց իշխաններին, որոնք կարող են կազմավորել վրացական կառավարություն: Նա ուզում էր անձամբ գնալ Քութայիսի, որպեսզի այնտեղ հռչակեր վրացական անկախ պետություն»²³⁷: Այդ նպատակով Թիֆլիս էր մեկնելու նաև Հալիլ բեյը²³⁸: Մայիսի 10-ին Բաթումում Ջենալը, դիմելով վրաց պատվիրակության անդամներին, նշում էր. «Թուրքերը վրացիների հետ որևէ խնդիր չունեն, այդ պատճառով էլ հաջողություն են մաղթում վրացական պետության կազմավորման գործում»²³⁹:

Հարկ է նշել՝ դեռ Առաջին աշխարհամարտի սկզբին Թուրքիայի և Վրաստանի միջև կնքվել էր վրաց-թուրքական հակառուսական գաղտնի դաշնագիր²⁴⁰, ըստ որի՝ թուրքերը պարտավորվում էին օգնել վրացիներին՝ անջատվելու Ռուսաստանից: Այդ նույն ժամանակ էլ Վրաստանի անկախության գործընթացն իրականացնելու նպատակով գաղտնաբար ստեղծվել էր «Վրաստանի ազատության կոմիտեն», որը վրաց ժողովրդին

²³⁶ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, օգոստոս, էջ 120:

²³⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

²³⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II) ք. 307:

²³⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

²⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, ք. 134:

նախապատրաստելու էր անկախության²⁴¹: Այդ գործընթացն ավելի ակտիվացավ 1917 թ. Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխության և Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ընթացքում թուրքական պատվիրակության նախագահ Ռատոֆ բեյն անգամ ակնարկում էր «Անդրկովկասը երեք մասի բաժանելու»²⁴² մասին:

Առաջին հայացքից թվում էր, թե Վրաստանի անկախության նախադրյալները գրեթե ստեղծվել են, և թուրքերը փորձում են օժանդակել դրա իրականացմանը: Սակայն հարց է առաջանում, թե ինչու թուրքերի համար դա դարձավ օրակարգային հատկապես Բաթումի դիվանագիտական բանակցությունների նախօրեին, երբ ռազմաքաղաքական իրավիճակն արմատապես փոխվել էր երկրամասում: Բանն այն է, որ թուրքերն արդեն բռնազավթել էին Բաթումը, Արդահանը, Կարսը և շարունակում էին իրենց ռազմական առաջխաղացումը՝ գրավելու ամբողջ Անդրկովկասը: Մինչդեռ թուրքերի այդ տարածքային բռնազավթումներն ամբողջովին հակասում էին դաշնակից Գերմանիայի շահերին, և վերջինիս ճնշմամբ Կոստանդնուպոլսում, ինչպես վերը նշվեց, կնքվել էր գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր (ապրիլի 27), որով Վրաստանն ու Ադրբեջանն անցնում էին Գերմանիայի ազդեցության ոլորտ: Իսկ դա հանգիստ չէր տալիս Թուրքիայի ղեկավարությանը, որովհետև այն հակասում էր վերջինիս աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին:

²⁴¹ Տե՛ս **Յ. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 14:

²⁴² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 108:

Կարծում ենք՝ պատահական չէր, որ Վրաստանում Գերմանիայի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշեց վրացիների անկախացմամբ սեպ խրել և խափանել վրաց-գերմանական ձևավորվող հարաբերությունները: Դրանով Վրաստանը, կորցնելով Գերմանիայի հովանավորությունը, ենթարկվելու էր գրավման Թուրքիայի կողմից, իսկ Գերմանիան էլ կորցնելու էր իր ազդեցությունը ոչ միայն Վրաստանում, այլ նաև ամբողջ երկրամասում: Թուրքերի կողմից այդ դիվանագիտական ծուղակի նախապատրաստումը չէր վրիպել վրացի և գերմանացի դիվանագետների ուշադրությունից, ուստի Բաթումում էլ ավելի եռանդուն կերպով շարունակվեց նրանց գաղտնի աշխատանքը: Թուրքական վերջնագրից խուսափելու համար անհրաժեշտ էր մինչև այն ներկայացնելը **«թուրքական արշավանքին հակազդել Գերմանիայի աջակցությամբ անկախ Վրաստանով»**²⁴³:

Առաջ անցնելով նշենք, որ երբ մայիսի 26-ի երեկոյան Հալիլ բեյը Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության որոշմամբ վերջնագիր էր ներկայացրել Ա. Չխենկելիին՝ փոխանցելու Անդրկովկասյան կառավարությանը, վերջինս գրավոր պատասխանել էր, որ այլևս հնարավոր չէ գոյությունը հանձնել ըստ պատկանելության, որովհետև անկախ Անդրկովկասյան պետություն այլևս գոյություն չունի. Սեյմը լուծարվել է չորս ժամ առաջ, իսկ Վրաստանն էլ հռչակել է իր անկախությունը²⁴⁴: Այդ քայլը վրացի և գերմանացի դիվանագետները

²⁴³ **З. Авалов**, указ. соч., с. 59.

²⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 56-62:

նախապատրաստել և իրականացրել էին Թուրքիայից գաղտնի: «Մեր անդրկուլիսյան գաղտնի աշխատանքը, - գրում է Ջ. Ավալովը, - անցավ աննկատ: Թվում է՝ ոչ ոք չի հասկանում, թե ինչ է լինելու այսօր և վաղը»²⁴⁵: Թուրքերը հասկացան, որ խաբված են: Թեև թուրք պատվիրակության համար այդ պահին անսպասելի էր անկախ Անդրկովկասի կազմալուծումը, բայց և այնպես դա նրանց հանկարծակիի չբերեց. նրանց վաղուց հայտնի էր, որ Անդրկովկասյան ազգերի միությունը արհեստածին է ու ժամանակավոր, հետևաբար չէր կարող երկար գոյատևել և իբրև բուֆերային պետություն-պատմեջ ծառայել Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Ուստի պատահական չէր նաև, որ այդ հարցի լուծումը թուրքերը տեսնում էին ռազմական ուժով ամբողջ Անդրկովկասը գրավելու ճանապարհով:

Հարկ է նշել նաև, որ այդ օրերին՝ մինչև Անդրկովկասյան պետության կազմալուծումը, վրացական մամուլը շատ հետևողականորեն նախապատրաստում էր հասարակական կարծիքը Վրաստանը անկախ պետություն հռչակելու վերաբերյալ: Նման բնույթի հոդվածներ էին հրապարակվում սոցիալ-դեմոկրատների օրգան «Էրթոբայի», ազգային դեմոկրատների «Սաքաբվելոյի» և սոցիալիստ-ֆեդերալիստների «Սախալխո-Սաքմեի» էջերում²⁴⁶:

Ինչևիցե, ակնհայտ էր նաև, որ Անդրկովկասյան պետության լուծարումը և Վրաստանի անկախության հռչակումն իրականացվեցին նպաստավոր այն պահին, երբ Գերմանիայի և Վրաստանի միջև արդեն պատրաստ էին մի քանի ռազմա-

²⁴⁵ Նույն տեղում, էջ 60:

²⁴⁶ Տե՛ս Է. Զոհրաբյան, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում, Երևան, 2000, էջ 98:

քաղաքական, տնտեսական, ֆինանսական, անվտանգության և այլ բնույթի փոխշահավետ համաձայնագրերի նախագծեր, որոնք գաղտնի ստորագրվելու էին Փոթիում: Այդ առնչությամբ Ջ. Ավալովը գրում է. **«Վրաստանի անկախությունն ու տարածքային ամբողջությունն ապահովվում են Գերմանիայի կողմից:** ... Ժամանակավոր համաձայնությունը Գերմանիայի հետ, որի վրա ջանասիրաբար աշխատում ենք (ավելի ճիշտ՝ համաձայնություններ. մի քանի վավերագիր կլինի), վրացական ժամանակավոր կառավարությունը Գերմանիային տրամադրում է օգտագործելու Վրաստանի նավահանգիստներում գտնվող բոլոր նավերը:

Եթե դաշնագիր կողմին հաճելի է, ինչու՞ չգիջել նրան այն, ինչ անգամ գոյություն չունի բնության մեջ: Ինչպե՞ս: Համաձայնություն վրաց նավերի մասին: Գերմանիայի հետ: ... **Եվ այսպես սեպը սեպով հանիր, բայց մենք թուրքերից պաշտպանվում ենք գերմանացիներով»**²⁴⁷:

Ի դեպ, մայիսի 28-ին Փոթիում ստորագրված վրաց-գերմանական գաղտնի համաձայնագրերը Բեռլինը չվավերացրեց, սակայն պատմական այդ վճռորոշ պահին գերմանական զինվորների ներկայությունը վրացական տարածքում Թուրքիայի ոտնձգություններից Վրաստանի սահմանների անվտանգության գրավական էր²⁴⁸: Շուտով Թիֆլիսում վրացական դրոշի կողքին բարձրացվեց նաև Գերմանիայի դրոշը:

²⁴⁷ 3. Авалов, указ. соч., с. 58-60.

²⁴⁸ St'u Российский государственный военный архив (այսուհետև՝ РГ ВА), ф. 39720, оп. 1, д. 49, л. 1-5:

Եվ, այնուամենայնիվ, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը դաշնակից Գերմանիայի հետ սուր հակասությունների և բախումների պայմաններում համառորեն շարունակեց իր աշխարհաքաղաքական և տնտեսական շահերի իրականացմանը միտված քայլերը երկրամասում:

Մայիսի 11-ին Բաթումի ակումբի շենքում տեղի ունեցավ հաշտության խորհրդաժողովի հանդիսավոր պաշտոնական, բացումը: **Թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունները ընթացան երկու փուլով.**

- I. մայիսի 11-26-ը՝ անկախ Անդրկովկասյան հանրապետության հետ մինչև վերջինիս լուծարումը,
- II. մայիսի 30-ից հունիսի 4-ը՝ Անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ միաժամանակ, սակայն յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին:

Հարկ է նշել, որ բանակցային գործընթացի հանդիսավոր բացումից հետո մինչև մայիսի 26-ը պաշտոնական բանակցային նիստեր այլևս չգումարվեցին, թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունները դարձյալ մտան փակուղի, բայց տեղի ունեցան ոչ պաշտոնական անդրկուլիսյան փոխադարձ հանդիպումներ ու բանակցություններ: Նիստը նախագահելու գործը ստանձնեց թուրքական պատվիրակության ղեկավար Հալիլ Բեյը: Նա իր ողջույնի խոսքն արտասանեց թուրքերենով՝ «Հիշելով Կովկասի գլխին ծագած «ազատության գեղեցիկ աստղը»: Թուրքիայի փափագը, բարիդրացիություն հաստատելու մասին և այլն»²⁴⁹: Պատասխան խոս-

²⁴⁹ 3. Авалов, указ. соч., с. 40.

քով հանդես եկավ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին:

Դիվանագիտական բանակցությունները դեռ չսկսած՝ հայտնի դարձավ, որ երկու պատվիրակությունների միջև առկա են սկզբունքային տարաձայնություններ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն իբրև բանակցությունների հիմք ընդունելու հարցի շուրջ: Իրողությունն այն էր, որ այդ դաշնագիրը որպես բանակցությունների միակ հիմք ընդունելով՝ Անդրկովկասը հարկադրված չէր լինի տարածքային նոր զիջումներ անելու Թուրքիային՝ բացառությամբ այնտեղ նախատեսված Բաթումի, Արդահանի և Կարսի: Այդ հանգամանքը կարևորելով՝ Ա. Չխենկելին իր ելույթում հայտարարեց, որ սկսվող բանակցությունները պետք է դիտել որպես Տրապիզոնի բանակցությունների ուղղակի շարունակություն, և Հալիլ բեյին հիշեցրեց, որ դեռևս 1918 թ. մարտի 28-ին (ապրիլի 10) Տրապիզոնում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը քուրքական վերջնագրին գրավոր հայտարարել է. «Ի պատասխան օսմանյան պատվիրակության նախագահի՝ 1918 թ. ապրիլի 6-ի գրության՝ պատիվ ունեմ հայտնելու, որ ընդունում եմ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և պատրաստ եմ հետագա բանակցությունները վարելու այդ դաշնագրի հիման վրա: Անդրկովկասյան պատվիրակության նախագահ, Արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելի»²⁵⁰: Բանակցային նիստում Հալիլ բեյը կտրուկ մերժեց Ա. Չխենկելիի առաջարկած՝ բանակցությունները վարելու հիմքը և հրապարակեց օսմանյան

²⁵⁰ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 160, 313-316.

կառավարության տեսակետը, ըստ որի՝ թուրքական կողմը հրաժարվում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի հիման վրա բանակցելու իր նախկին դիրքերից և առաջ է քաշում նոր պահանջներ: Հալիլ բեյը Ա. Չխենկելիին նաև հիշեցրեց, որ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ նա նման հայտարարություն արել է կայսերական կառավարությանը, բայց դա չի վավերացվել Անդրկովկասյան կառավարության կողմից, և հետ է կանչել իր պատվիրակությանը, որին հետևել են դիվանագիտական բանակցությունների խզումը և ռազմական գործողությունների վերսկսումը Թուրքիայի և Անդրկովկասի միջև²⁵¹: Հալիլ բեյն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ «Թուրքական բանակը Բրեստ-Լիտովսկի դաշնագրից հետո ոչ թե ռուսական բանակի, այլ Անդրկովկասյան գործերի դեմ է կռվել: Եվ քանի որ այդ պատճառով երկու կառավարությունների փոխհարաբերությունների բնույթն այժմ փոխվել է, ես չեմ կարող ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը՝ որպես ներկա բանակցությունների միակ հիմք»²⁵²: Հալիլ բեյը կտրուկ հայտարարեց նաև, որ թուրքական կառավարությունն այլևս չի կարող սահմանափակվել այն տարածքային ձեռքբերումներով, որոնք նախատեսված էին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով: Այդ առնչությամբ ուշագրավ է Ջ. Ավալովի գնահատականը. «Մենք շարունակում էինք հիմնվել նաև այս առարկության վրա, որ թուրքերը իրավունք չունեին պահանջելու Բրեստ-Լիտովսկի իրենց զիջումներից ավելին: Այստեղ մեր դիրքը բավականին թույլ էր, բայց և այնպես ստիպված էինք

²⁵¹ Տե՛ս նույն տեղը, էջ 314:

²⁵² Նույն տեղում, էջ 315:

համառել, որովհետև այդ էր Ա. Չխենկելու գլխավոր փաստարկը դեռևս Տրապիզոնի խորհրդաժողովի վերջից սկսած: Այս տեսակետը թուլացնում էր (այսինքն՝ չեն ծագել նոր հանգամանքներ, որ փոխելին մեր միջև եղած միջազգային դրությունը, ուստի չեն կարող լինել նաև նոր պահանջներ) այնպիսի փաստերի շնորհիվ, ինչպիսիք էին Սեյմի բարձրացրած ռազմահայրենասիրական ամբողջ աղմուկը՝ իբրև հետևանք այն բանի, որ թուրքերը չէին ցանկանում հրաժարվել Բաթումից և Կարսից, Սեյմի ընդունած մի շարք ռազմաշունչ բանաձևերը, պատվիրակությունը Տրապիզոնից հետ կանչելը և այլն:

Այս փաստարկների հետևանքով թուրքերը հնարավորություն ստացան պնդելու, որ Չխենկելու՝ Տրապիզոնում արած հայտարարությունը Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ընդունելու մասին «չեղյալ է հռչակված» Գեգեչկորու կառավարության կողմից, և որ Անդրկովկասյան հանրապետության կողմից պատերազմի վերսկսումը պատճառ եղավ միջազգային դրության փոփոխության, որը այժմ Թուրքիային իրավունք է տալիս նոր պահանջներ ներկայացնելու: Մի խոսքով՝ այս կետում մեր ոտքի տակի հողը ամուր չէր»²⁵³:

Ինչպես տեսնում ենք, Ա. Չխենկելիի դիվանագիտական ջանքերը որևէ դրական արդյունք չտվեցին: Իհարկե ավելորդ է ասել նաև, որ, միևնույնն է, թուրքերը որևէ այլ առիթ կգտնեին նախապես պատրաստված ռազմավարական հեռահար ծրագրերն իրականացնելու համար:

Ստեղծված իրավիճակում Հալիլ բեյն իրեն իրավունք վերապահեց բանակցությունների հիմք ընդունելու թուրքերի կող-

²⁵³ 3. Авалов, указ. соч., с. 46.

մից նախապես պատրաստված «Խաղաղության ու բարեկամության» մասին դաշնագրի նախագիծը, որտեղ, տարածքային պայմաններից զատ, ամրագրվում էին տնտեսական, առևտրական, ռազմաքաղաքական և այլ չափազանց ծանր պահանջներ: Իրողությունն այն էր, որ հարկադրական համաձայնությամբ Հալիլ բեյն Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանը հանձնեց մի կնքված ծրար, որում դաշնագրի նոր նախագիծն էր: Եվ դրանով փակվեց հաշտության բանակցությունների առաջին և վերջին լիազումար նիստը: «Երեկոյան մենք իմացանք թուրքերի պահանջների մասին, - գրում է Ալ. Խատիսյանը, - և հուսահատության մեծ սարսափ ապրեցինք»²⁵⁴: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության բոլոր հույսերն ի դերև ելան: Նրանք հասկացան, որ խաբված են, բայց արդեն ուշ էր:

Ուշագրավ է այդ իրադարձություններին Հովհ. Քաջազնունու տված գնահատականը. **«Քրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որի մասին մի ամիս առաջ, Տրապիզոնում, լսել անգամ չէինք ուզում, այժմ դառել էր մեր միակ ու ամենամեծ իղձը: Բայց թուրքերը մնում էին անողորմ, պինդ բռնել էին մեր կոկորդից, բաց չէին թողնում»**²⁵⁵:

«Օսմանյան կայսերական կառավարության և Անդրկովկասյան Դաշնության խաղաղության ու բարեկամության դաշնագրի» թուրքական նախագիծը բաղկացած էր 12 հոդվածից և 3 հավելվածից: «Փաստաթուղթը պարունակում է քաղաքական, տնտեսական, իրավական և ռազմական տեսակետներ, և

²⁵⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

²⁵⁵ Հովհ. Քաջազնունի, նշվ. աշխ., էջ 29:

որ ինքը (Հալիլ բեյ - Գ. Պ.) անձամբ Անդրկովկասյան պատվիրակության հետ վիճաբանություններ կսկսի քաղաքական հարցերի շուրջ... Այն հարցերը, որոնք վերաբերում են երկու երկրներին՝ կարծարծե՞ն երկու հետաքրքրվող կողմերը»²⁵⁶:

Հալիլ բեյը ներկայացրեց նոր ծանր պահանջներ ամբողջ Անդրկովկասի համար ընդհանրապես և Հայաստանի ու հայության համար մասնավորապես: Ըստ դաշնագրի նախագծի՝ Թուրքիան հավակնում էր տարածքային նոր բռնագավթումների: Նրանք, Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի ճշտված սահմաններից բացի, պահանջում էին Թիֆլիսի, Քութայիսի և Երևանի նահանգների ընդարձակ տարածքները, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով: Կարսի մարզից բացի՝ հավակնում էին զավթել նաև Ալեքսանդրապոլը, Էջմիածնի գավառի մեծ մասը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանը, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Հայաստան փաստորեն չէր լինի. մնում էր միայն լեռնային փոքր տարածություն Արագածի և Սևանա լճի միջև: Մյուս կողմից՝ կովկասյան թաթարները, «որոնց պաշտոնական պատվիրակներից զատ Բաթում էր եկել մի բազմամարդ պատգամաւորութիւն Սուլթանօվի գլխաւորութեամբ,- գրում է Ս. Վրացյանը,- պահանջում էին Ղարաբաղը, Չանգեզուրը, Դարալագեազն ու Բասարգեչարը, անգամ Երևան քաղաքը՝ վեհանձնօրէն հայերին թողնելով Էջմիածինը իբրև մայրաքաղաք»²⁵⁷:

Փաստորեն, թուրքական դաշնագրի նոր պահանջները լայն հնարավորություններ էին ստեղծում Թուրքիայի համար՝

²⁵⁶ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20, ք. 23, տե՛ս նաև **Հ. Ավետիսյան**, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Եր., 1998, էջ 60:

²⁵⁷ Տե՛ս **Ս. Վրացեան**, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրագիծ), էջ 13:

ոչ միայն ապահովելու իր ռազմաքաղաքական ազդեցությունն ամբողջ Անդրկովկասում, այլև սահմանակից դառնալու Ադրբեջանի և Իրանի այն տարածքներին, որոնց բնակչությունը հիմնականում ծագումով թուրք էին կամ թրքախոս: Այդտեղից ճանապարհ էր բացվում նաև դեպի Անդրկովկասյան և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների երկրամասեր: Այդ պահանջները դյուրացնում էին նաև Թուրքիայի ռազմական գործողությունների ծավալումը Հյուսիսային Իրանում՝ անգլիական զորքերի առաջխաղացումը կասեցնելու համար: Դա իրականացնելու նպատակով հաշվի էր առնվում նաև Անդրկովկասի երկաթուղով թուրքական զորքերի անարգել տարանցումը:

Նախագծի երկրորդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ռազմական օգնություն ցուցաբերել Անդրկովկասյան կառավարությանը՝ երկրի ներսում կարգուկանոն ապահովելու և արտաքին հարձակումներից երկիրը պաշտպանելու համար:

Երրորդ հոդվածով Անդրկովկասյան կառավարությունն իր հերթին պարտավորվում էր արմատախիլ անել իր տարածքում գործող զինված «բանդաները» և անհրաժեշտության դեպքում ապավինել Թուրքիայի աջակցությանը՝ զինաթափելու և ցրելու այդ կարգի բոլոր խմբավորումները²⁵⁸:

Ինչպես տեսնում ենք, 2-րդ և 3-րդ հոդվածների նախագծերի համաձայն՝ Անդրկովկասն իրականում հայտնվում էր կործանման եզրին. զրկվում էր ինքնիշխանությունից ու երկրի անվտանգությունն ապահովելու հնարավորությունից:

²⁵⁸ Տե՛ս Ա. Խաչատրյան, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրազիժ), էջ 81:

«Թաթարները ցնծութեան մէջ էին այդ առթիւ,- գրում է Վ. Մինախորյանը:- Հայերը ահաբեկուած՝ թէ՛ հողային նոր կորուստների եւ թէ՛ «զինուած խմբերը» արմատախիլ անելու առթիւ: Գալով վրացիներին, նրանց համար ոչ միայն խաչ էր դրում Տրապիզոնի բանակցութիւններից ժառանգութիւն մնացած ակնկալութիւնների վրայ, այլ եւ չքանում էր Վրաստանի կենսական շահերը պաշտպանելու հնարաւորութիւնը»²⁵⁹:

Ստեղծված իրավիճակը զարմանք և խոր զայրույթ առաջ բերեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության ոչ միայն հայ և վրացի անդամների, այլ նաև գերմանացիների շրջանում: Թուրքիայի այդ նկրտումները, ինչպես վերը նշվեց, հակասում էին նաև Գերմանիայի աշխարհաքաղաքական և տնտեսական շահերին երկրամասում: Երբ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ծանոթացավ դաշնագրի նախագծի հոդվածներին և հավելվածներին, սկսվեց երկու պատվիրակությունների միջև հուշագրերի և նոտաների փոխանակման անպտուղ գործընթացը, որը շարունակվեց մինչև անկախ Անդրկովկասյան պետության կազմալուծումը:

Մայիսի 13-ին ֆոն Լոսովի խորհրդով ու աջակցությամբ Ա. Չխենկելին հուշագիր ներկայացրեց Հալիլ բեյին, որտեղ հիմնավորում էր Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության պահանջները²⁶⁰. Թուրքերը առաջին հերթին պետք է հրաժարվեին Անդրկովկասում իրենց ծավալապաշտական ծրագրերից: Պատվիրակության պահանջները որքան էլ համո-

²⁵⁹ Վ. Մինախորեան, Բաթումի խորհրդածողովը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, ապրիլ, էջ 123:

²⁶⁰ Ст'ю Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 268-269:

զիչ ու արդարացի էին, բայց և այնպես խիստ ուշացած էին և չէին համապատասխանում ստեղծված իրավիճակին: Թուրքերը լավ էին հասկանում, որ դրության տերն են: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության առաջարկությունները զանց առնելու համար նրանք շարունակեցին իրենց ռազմական գործողությունները՝ Անդրկովկասից նոր տարածքներ զավթելով, ճնշում գործադրելով բանակցությունների վրա, ստեղծելով դիվանագիտական ծուղակներ, սպառնալով պարտադրել դաշնագրի նախագծի պահանջները վերջնագրի լեզվով: Փաստորեն, այդ նույն օրերին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը այն նույն վիճակում էր, որի մեջ հայտնվել էր Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ընթացքում:

Նույն օրը՝ առավոտյան, Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջագունին ֆոն Լոսովի հետ երկժամյա զրույցի ժամանակ վերջինիս մանրամասնորեն ներկայացրին հայության ծանր վիճակը ստեղծված նոր իրադրության պայմաններում: «Լոսովն ամեն ինչ լավ հասկացավ,- գրում էր Ալ. Խատիսյանը,- և ասաց, որ այդ մասին կհայտնի իր կառավարությանը, ... սակայն արդեն 3-րդ օրն է՝ հեռագրային կապ չունի... դիտմամբ են նրան (ֆոն Լոսովին - Գ. Պ.) գրկել Բեռլինի հետ խոսելու հնարավորությունից»²⁶¹:

Կեսօրին ֆոն Լոսովի խորհրդով և միջնորդությամբ Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջագունին հանդիպեցին նաև Հալիլ բեյին և Վեհիբ փաշային: Շուրջ երեք ժամ տևած բանակցությունների ընթացքում հիմնականում շոշափվեցին հայկական

²⁶¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

տարածքային հարցերը: Հայ պատվիրակները փորձում էին փոքր-ինչ մեղմել թուրքերի զավթողական ձգտումները, սակայն ապարդյուն: Հալիլ բեյը հայտարարեց. «Իհարկե, մեր պահանջները սարսափելի են, բայց հայերի արարքներն Երևանի և Բաքվի նահանգներում ստիպում են մեզ չեզոքացնել հայերի ազդեցությունը և մասնակցությունը Անդրկովկասյան կառավարության ճակատագրում. այդպիսին է երիտթուրքական կոմիտեի վերջին որոշումը»²⁶²: Այնուհետև նա հիշեցրեց հայ պատվիրակներին, «Որ այս պատերազմում (Առաջին աշխարհամարտ - Գ. Պ.) հայերը ջախջախված են Ռուսաստանի հետ միասին: Եվ դրա համար խորհուրդ ենք տալիս հայերին, որ դադարեցնեն հարձակումները և կոռեկտ պահեն իրենց»²⁶³: Վեհիբ փաշան նաև զգուշացնում էր՝ եթե հայերը մերժեն տրամադրել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին, ապա, միևնույնն է, ոչինչ չի կարող խանգարել իրականացնելու իրեն տրված առաջադրանքը. «Եթե ես նպատակ ունենայի գրաւել զօրքով Երևանի նահանգը, բնաւ պէտք չունէի դիմել խաբէութեան, քանի որ կրնայի յայտնապէս նոյնը կատարել ուզած բոլէին, չվախճալով, թէ պիտի հանդիպէի ուն լուրջ դիմադրութեան... Ձեր մերժումը կը բարդէ ու կը դժուարացնէ միայն խնդիրը, բայց չի կանգնեցներ իմ որոշումը, որովհետև եթէ դուք չհամաձայնէք յօժարական թոյլ տալ մեր զօրքի փոխադրութիւնը, այն ատեն պիտի կատարենմ ուժով, եթէ չտաք երկաթուղին, մենք կանցնենք հանդիսաւոր զօրանցքով»²⁶⁴:

²⁶² Նույն տեղում:

²⁶³ Նույն տեղում:

²⁶⁴ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 101:

Ինչպես տեսնում ենք, թուրքերը ոչ միայն անգլիջում էին, այլև անթաքույց սպառնում էին հայերին ռազմական ուժով: Այնուամենայնիվ, Հովհ. Քաջագունին ներկայացրեց հայ պատվիրակության տեսակետը. «Երբ դուք պահանջում եք Ախալքալաքը, Ախալցխան, Ալեքսանդրապոլը, Էջմիածինը և Սուրմալուն, երբ դուք պատրաստվում եք մահացու հարված հասցնել հայ ժողովրդի քաղաքական, գուցե և ֆիզիկական գոյությանը, մեր միջև չի կարող լինել ոչ մի համաձայնություն, ոչ մի հարցի շուրջ: Նախ պետք է որոշել սահմանների մասին հարցը, որի լուծումից կախված են մնացած հարցերը: Ես գիտեմ, որ մերժման դեպքում դուք կգործադրեք ուժ և դա մեզ սպառնում է պատճառել մեծ վնասներ: Բայց և այնպես, եթե դուք չիրաժարվեք հավակնություններից, ձեր գործերի անցման համաձայնությունը մենք չենք տա: Իմ ընկերն (Ալ. Խատիսյան - Գ. Պ.) ասաց ձեզ, որ դա շատ դժվար է, ես ասում եմ, որ դա անհնար է»²⁶⁵:

Նույն օրը՝ երեկոյան, տեղի ունեցավ նաև երկու պատվիրակությունների նախագահների հանդիպումը, որի ժամանակ Հալիլ բեյը դարձյալ նույն պատճառաբանությամբ համոզում էր, որ «Անգլիացիներն ուժեղացել են Իրանում, հետևաբար պետք է շուտափույթ գրավեն Թավրիզը: Այդ պատճառով էլ անմիջապես, առանց ոչ մի օր ժամանակ կորցնելու պետք է Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով թուրքական զորքեր ուղարկել Թավրիզ: Անդրկովկասյան կառավարությունը պետք է դա անմիջապես թույլ տա, քանի որ իրավիճակը կարող է

²⁶⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք.13:

ճգնաժամային դառնալ»²⁶⁶: Ա. Չխենկելին հակադարձում է Հալիլ բեյին, որ թուրքական զորքերի տարանցման համար ճանապարհ կբացեն այն ժամանակ, երբ Թուրքիան ճանաչի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Կարծիքն առայժմ այսպիսին է, որ եթե Գերմանիան երաշխավորում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, ապա մենք զորքերի (թուրքական - Գ. Պ.) տեղափոխության թույլտվություն կտանք: Լոսովն ինքն է այն կարծիքի, որ սկզբից պետք է լուծել տարածքային խնդիրները, հետո զորքերի տեղաշարժը թույլ տալ»²⁶⁷: Հալիլ բեյը հայտարարեց, որ ինքը հապաղում է Կոստանդնուպոլսին հարցում անել Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ճանաչման մասին, քանի որ իր կառավարությունն Անդրկովկասին կներկայացնի միաժամանակ երկու վերջնագիր՝ առաջին՝ տարածքները զիջելու, երկրորդ՝ թուրքական զորքերի համար ճանապարհ բացելու²⁶⁸:

Ուշ գիշերին Հալիլ բեյը և Ա. Չխենկելին բաժանվեցին: Վերջինս այն համոզումն ուներ, որ Անդրկովկասյան կառավարությունը կարող է թուրքական զորքերի տեղափոխելու թույլտվություն տալ միայն այն պայմանով, եթե թուրքերը հրաժարվեն տարածքային պահանջներից. երկու կողմերն էլ պարտավորվեցին հարցում անել իրենց կառավարություններին:

Մայիսի 14-ին, ի պատասխան Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության (մայիսի 13) հուշագրի, Հալիլ բեյը նույն «հիմնավորումով» Ա. Չխենկելուն ուղղված հուշագրով պահանջեց Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին տրամադրել

²⁶⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 110:

²⁶⁷ Նույն տեղում, ք. 111:

²⁶⁸ Տես նույն տեղը:

թուրքական զինված ուժերին՝ տարանցելու՝ Իրանում անգլիացիների գործողություններին հակազդելու համար²⁶⁹։ Իրականում այդ քողարկված տարանցումը միայն պատրվակ էր ամբողջ «Հայաստանը տիրելու»²⁷⁰, ապա, ճանապարհի բացելով դեպի Թիֆլիս, այնտեղից անցնելու և Բաքվի նավթին տիրելու ու վերջնականապես թուլացնելու Գերմանիայի ազդեցությունը Անդրկովկասում և այլն։

Մայիսի 15-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության միջոցով ֆոն Լոսովը հեռագիր հղեց Բեռլին՝ արտաքին գործերի նախարարությանը. «Ջուտ հայկական տարածքներ հանդիսացող Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ Թուրքիայի չափից դուրս պահանջները ցույց են տալիս, որ նրանք ձգտում են գրավելու Բրեստի դաշնագրով չնախատեսված տարածքներ, կողոպտելու տնտեսապես եկամտաբեր Կովկասը և լիովին իրականացնելու նաև հայերի քնաջնջումը Անդրկովկասում։

...Երեկոյան թուրքերը վերջնագրով պահանջեցին իրենց հանձնել Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին՝ այդ մասին նախօրոք չհայտնելով և չստանալով իմ համաձայնությունը։ Ես բողոքեցի դրա դեմ։ Կարևորագույն և ամենահրատապ հարցերը մեկ ժամում կարելի է կարգավորել իմ միջնորդական առաջարկի հիման վրա, որ հետևյալն է.

1. Թուրքերը պետք է Բրեստի դաշնագիրը ճանաչեն որպես հիմք,

²⁶⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 111։

²⁷⁰ **Serpil Sürmeli**, Türk-Gürcü İlişkileri (1918-1921), Ankara: AKDITYK Atatürk Araştırma Merkezi, 2001, s. 125.

2. Թուրքերի պահանջը զսպելու նպատակով Ախալցխայի մահմեդական շրջանը սահմանը ճշգրտելու պատրվակով փոխանակել Բաթումից հյուսիս ընկած վրացական շրջանի և Կարսից արևելք գտնվող զուտ հայկական մասի հետ, որով Կարս ամրոցը կմնա թուրքերին:

Առաջարկի ընդունվելուց հետո կարող է սկսվել թուրքական զորքերի տարանցումը Կարս-Ջուլֆա երթուղով, սակայն միայն Գերմանիայի ղեկավարությամբ և երաշխիքով: Ուստի խնդրում են Ձեզ ուղարկել փոքր հանձնախումբ, որը կաշխատի ինձ հետ Թիֆլիսում, ինչպես նաև գերմանական գումարտակ, որը կստանձնի Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա ընկած երկաթուղու կայարանների պաշտպանական և կարգապահական ծառայությունը ապահովելու գործը: Դա անվերապահորեն պահանջում են կովկասցիները, քանի որ նրանք մեծ անվստահություն ունեն թուրքերի նկատմամբ: Նրանք ամենայն վճռականությամբ մերժում են թուրքական ղեկավարության ազդեցությունը Կովկասյան երկաթուղում»²⁷¹: Ավելորդ է ասել, որ ֆոն Լոսովը՝ որպես Գերմանիայի ներկայացուցիչ Բաթումի հաշտության խորհրդաժողովում, մտահոգված էր ոչ թե հայերի և Հայաստանի հարցով, այլ իր երկրի շահերով Անդրկովկասում, չնայած երբեմն անկեղծորեն կրկնում էր այն միտքը, թե «Գերմանիան պատասխանատվություն ունի հայկական հարցում, եւ թե անհրաժեշտ է հայերի նոր կոտորածների առաջն առնել»²⁷²:

²⁷¹ «Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke». Herausgegeben und Eingeleitet von Dr. Johannes Lepsius. Der Tempelverlag in Potsdam, 1919, s. 383-384.

²⁷² **Արտ. Աբեղեան**, Վրաստանի անկախությունը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, սեպտեմբեր, էջ 79:

Ինչևէ, ֆոն Լոսովի վերը նշված այդ հեռագրին կարևորություն չտրվեց, և Գերմանիայի կառավարությունը գործնական քայլեր չձեռնարկեց՝ թուրքական ռազմական առաջընթացը կանխելու և Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները պահպանելու համար: Սակայն Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամները և հայ քաղաքական գործիչներն Անդրկովկասում ստեղծված ռազմաքաղաքական չափազանց բարդ ու լարված իրադրության պայմաններում չկարողացան արագ և ճիշտ գնահատել Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի միջև խոր հակասությունների և շահերի բախումից սպասվող ոչ նպաստավոր պայմանները հայության համար: Նրանք, Վրաստանի օրինակով ընդունելով գերմանական կողմնորոշումը²⁷³, շարունակեցին էլ ավելի ապավինել Գերմանիայի անպտուղ աջակցությանը: Ալ. Խատիսյանի գնահատմամբ. «Այսպիսի պայմաններու մէջ, շրջապատուած ամէն կողմէ թշնամիներով, մեր միակ յոյսը կը մնար գերմանացիներու միջամտութիւնը: Մենք քննութեան առնելով ստեղծուած կացութիւնը, եկանք այն եզրակացութեան, թէ ճիշդ է Հայոց Ազգային Խորհուրդի տեսակէտը. պատրաստեցինք քարտէսներ, թուական տեղեկութիւններ եւ գրաւոր զեկուցում՝ որոշելով յանձնել զանոնք զօր. Լոսովին եւ ընթացք տալ Ազգային Խորհուրդի հրահանգին անյապաղ: **Քաղաքականապէս մենք ուրիշ բան չէինք ընել, բայց եթէ կը հետեւէինք վրացիներու օրինակին**»²⁷⁴:

²⁷³ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, ք. 103:

²⁷⁴ Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, օգոստոս, էջ 125:

Իրականում հայերի օգտին Գերմանիայի պաշտոնական և ոչ պաշտոնական նախագգուշացումները Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը ընդամենը դիվանագիտական խաղեր էին, որոնցով փորձում էին ձերբազատվել հայոց ցեղասպանության և հայրենագրության մեղսակցության փաստից: Եվ պատահական չէր, որ Գերմանիան իր «օգնության դիմաց հայկական պատվիրակություններին (Բեռլինում և այլուր - Գ. Պ.) պատասխանում էր, թե իրենց օգնությունից առաջ հայերը պետք է հրաժարվեն Գերմանիայի մեղսակցության շուրջ ծավալած քարոզչությունից»²⁷⁵: Հարկ է նշել, որ Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը անթաքույց հասկացնում էր նաև Բաթումի և Բեռլինի հայ պատվիրակներին, որ երկրամասում ստեղծված բարդ ու հակասական իրադրության պայմաններում չի կարող հանուն հայերի վտանգել իր հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ:

Ինչպես վերը նշվեց, մայիսի 14-ին Հալիլ բեյը նույն «հիմնավորումով» պնդեց և պահանջեց թույլատրել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով գորքերի տարանցումը Իրան, սակայն այդ մասին Ա. Չխենկելին գրավոր տեղեկացվել էր հաջորդ օրը՝ մայիսի 15-ին՝ ժամը 6-ին, երբ Վեհիբ փաշան մախսոթք երեք ժամ էր տվել հայկական կողմին Ալեքսանդրոպոլը դատարկելու համար, սակայն, առանց պատասխանի սպասելու, նրանց գորքերն անցան Արփաչայը (Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով որոշված սահմանագիծը) և հայկական ուժերի մի քանի ժամ տևած անկանոն դիմադրությունից հետո գրավեցին Ալեքսանդրապոլը և շարժվեցին դեպի Ղարա-

²⁷⁵ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 34:

քիլիսա: Հայկական գորքերն ստիպված եղան անկանոն մահանջել. մի մասը՝ դեպի Ջաջուռ, իսկ մյուս մասը՝ երկաթուղու ուղղությամբ դեպի Արարատյան դաշտ՝ հակառակորդին թողնելով մարտական ողջ տեխնիկան և պարենը: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն հեռագիր հղեց Բաթում՝ հայ պատվիրակներին, որում մասնավորապես ասվում էր. «Խնդրում եմ ամենքին ներկա դեպքերի և պատերազմական գործողությունների ժամանակ պաշտպանել ամբողջ Կովկասի խաղաղ ազգաբնակչությանը, ինչպես նաև պատերազմական գործողությունների շրջանում և այլ վայրերում գտնվող հայ ժողովուրդը կոտորածներից, նաև հիմնավորց պատմական Էջմիածնի վանքը ու մեր նախնիների գահը, բոլոր նվիրական հուշարձաններով պահպանել ավերումից ու թալանից»²⁷⁶:

Երզնկայի, Էրզրումի, Սարիղամիշի, Բաթումի, Կարսի, Արդահանի, ինչպես նաև Ալեքսանդրոպոլի գրավումը միջազգային մի շարք մորմերի, իրավունքների ու զինադադարի պայմանների ոտնահարում էր, որը բանակցությունները վերջնականապես մտցնում էր փակուղի:

Բաթումում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության թաքար անդամները մեծ ցնծությամբ ընդունեցին Ալեքսանդրոպոլի գրավումը, որը քայլ առ քայլ ճանապարհ էր բացում դեպի Բաթու: Այդ առնչությամբ թուրք հեղինակ Ս. Սյուրմեօլին գրում է. «Թաթարները ցանկանում էին միավորվել Թուրքիայի հետ: Նրանց համար ազգակցական կապը բոլոր տեսակի կապերից վեր էր: Բացի դրանից՝ Բաթուն գտնվում էր բոլշևիկների ձեռքում, և այդ վտանգից ազատվելու

²⁷⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 94, ք. 23:

համար անհրաժեշտ էր Թուրքիայի օգնությունը»²⁷⁷: Ստեղծված պայմաններում «Տանջալի են մաս մեր զրույցները (Բաթումի դիվանագիտական - Գ. Պ.) կուլիսներում: Թաթարները ճգնում են մեզ Թուրքիայի սպառնալիքով»²⁷⁸, - գրում է Ալ. Խատիսյանը:

Անդրկովկասյան սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցության անունից Խ. Կարճիկյանը հեռագիր հղեց Բաթումում գտնվող խաղաղարար պատվիրակությանը, որ խնդրեն ֆոն Լոսովին՝ միջնորդի՝ թուրքական ռազմական առաջընթացը կանգնեցնելու: Պետք էր առաջ քաշել հետևյալ երեք պահանջները. 1. գերմանացիները պետք է պաշտպանեն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին, 2. հայկական զորքերը պետք է մնան իրենց դիրքերում՝ երկաթուղու երկու կողմերի վրա, 3. խաղաղարար պատվիրակության այդ երաշխիքները ստանալուց հետո պետք է կոչ հղեն ժողովրդին՝ հանգիստ մնալ իրենց տեղերում²⁷⁹:

Մայիսի 19-ին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ և վրացի անդամներն անմիջապես դիմեցին ֆոն Լոսովին և Հալիլ բեյին՝ այդ երեք պահանջները իրագործելու խնդրանքով: Սակայն ֆոն Լոսովը հայտնեց խաղաղարար պատվիրակության անդամներին, որ վստահ չէ, թե թուրքերը կհարգեն իր միջնորդությունը, բայց և այնպես այդ մասին կտեղեկացնի մաս իր կառավարությանը: Չուշացավ մաս Հալիլ բեյի և Վեհիբ փաշայի արձագանքը: Դիմելով խաղաղարար

²⁷⁷ **Serpil Sürmeli**, Türk-Gürcü İlişkileri (1918-1921), Ankara: AKDITYK Atatürk Araştırma Merkezi, 2001, s. 125.

²⁷⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 111:

²⁷⁹ Տես Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 57:

պատվիրակութանը՝ հայտնեցին. «Ի՞նչի են պետք ձեզ գերմանացիները: Մենք ինքներս կարող ենք ձեզ հետ համաձայնության գալ: Թող բնակչութիւնը մնայ իր տեղը»²⁸⁰: Ինչպես երևում է, նրանց կողմից այդ պահանջները իրականացնելու որևէ երաշխիք չտրվեց, և խաղաղարար պատվիրակությունը ստիպված այլևս որևէ կոչ չուղեց ժողովրդին: Ավելին՝ Ալեքսանդրապոլի գրավումից հետո թուրքական զորքերը շարունակեցին իրենց ռազմական գործողությունները՝ դրանք վերածելով թուրք-հայկական պատերազմի:

Ստեղծված չափազանց բարդ ու լարված պայմաններում Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը մայիսի 17-ին Բաթում էր գործուղել նոր պատվիրակություն (Հ. Օհանջանյան, Մ. Պապաջանյան)՝ պաշտոնապես դիմելու Գերմանիայի կառավարությանը՝ սատարելու Հայաստանին ֆոն Լոսովի միջոցով: Մայիսի 19-ին Ալ. Խատիսյանի, Հովհ. Քաջազնունու և Բաթում ժամանած նոր պատվիրակության անդամների խնդրանքով ֆոն Լոսովը գրուցել էր Հալիլ բեյի հետ՝ պարզաբանում ստանալու նախ Ալեքսանդրապոլի անսպասելի հրետակոծության, այն գրավելու, ապա ներկայացված երեք պահանջներն իրականացնելու վերաբերյալ: Սակայն Հալիլ բեյը նույն պատասխանն էր տվել, ինչ օրեր առաջ ասել էր Բաթումում Ալ. Խատիսյանի և Հովհ. Քաջազնունու հետ հանդիպման ժամանակ. «Հայերը պարտվել են ու պետք է հնազանդվեն: Հայերի գործերը շատ վատ են»²⁸¹:

²⁸⁰ Նույն տեղում:

²⁸¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 111:

Հայաստանի տարածքով քուրքական գորքերի առաջխաղացումը մեծ սպառնալիք էր ստեղծել նաև Վրաստանի համար, որը պահանջում էր հայ-վրացական միացյալ ճակատ կազմել՝ Թուրքիայի ռազմական առաջխաղացումը կանգնեցնելու համար: «Բայց արդեն ուշ էր: Անվերջ ընդհարումների հետևանքով, - գրում է Վ. Մինախորյանը, - հայերը այլևս հիմուսած էին: Որով՝ եթե կարելի էր նրանց դեռ վրացական ազգային շահեր պաշտպանելու համար օգտագործել, բնաւ հնարատր չէր նրանց հետ քաղաքականօրէն բախտ կապել: Ահա այդպիսի պայմանական ներդաշնակ ընթացք ստացան այդ օրերին հայ-վրացական յարաբերութիւնները»²⁸²:

Մինչդեռ Բաթումի դիվանագիտական բանակցությունների կուլիսներում այդ նույն օրերին ոչ միայն հայ, այլ նաև վրաց պատվիրակության անդամները հայտնվել էին կատարված փաստի առջև, որից միայն «երկու ելք կար՝, - շարունակում է Վ. Մինախորյանը, - կամ վերջ տալ դիվանագիտական խաղերին եւ խզելով յարաբերութիւնները գոնե վերջին պահին երկրի մէջ կամք ու շարժում ստեղծել՝ թշնամու դէմ պաշտպանելու համար, կամ զիջումների ճամբան բռնել:

Աւելորդ է ասել, որ վերջին ուղղությամբ էլ գնաց Չխենկելի քաղաքականութիւնը, մինչեւ սպառռուեցին զիջումներ անելու իրական հնարատրութիւնները»²⁸³: Այդ մասին է վկայում Ա. Չխենկելիի՝ մայիսի 18-ի նամակը՝ ուղղված Հայիլ բեյին. «Անդրկովկասի հանրապետության պատվիրակությունը անհրաժեշտ է համարել որքան կարելի է թեթևացնել ստեղծված

²⁸² Վ. Մինախորեան, Բաթումի խորհրդաժողովը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, ապրիլ, էջ 127:

²⁸³ Նույն տեղում, էջ 128:

լուրջ կացությունը և ձեռք է առել միջոցներ, որպեսզի **թուրքական զորքերի՝ Ալեքսանդրապոլ-Ջուֆա երկաթուղով Իրան տեղի ունենալիք փոխադրումը արգելքների չհանդիպի**»²⁸⁴։ Իրողությունն այն էր, որ այդ զիջումներն իրականացվեցին հայկական տարածքների և Ալեքսանդրապոլ – Ջուֆա երկաթուղու հաշվին։ Ի դեպ, թուրքական զորամասերը, օգտվելով հայ – վրացական միացյալ ճակատ ստեղծելու անհնարինությունից (թուրքերին հայտնի էր, որ վրացիները ի վիճակի չեն պատերազմ մղելու) և ռազմաճակատի անպաշտպանությունից, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեցին Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ, որտեղ դրսևորվեցին օսմանյան թուրքերի դեմ մեն-մենակ մնացած հայ ժողովրդի միասնական կամքը և հայկական զինված ուժերի հերոսամարտերը։

Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության՝ մայիսի 19-ին ֆոն Լոսովին ուղղված միջնորդության առաջարկի պաշտոնական գրավոր պատասխանը ի վերջո տրվեց հինգ օր անց՝ մայիսի 24-ին։ Այդ գրությամբ ֆոն Լոսովը տեղեկացրեց խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելիին, որ Հալիլ բեյը մերժել է իր միջնորդությունը²⁸⁵։ Իսկ հաջորդ օրը նա գրավոր հայտնեց նույն Ա. Չխենկելիին, որ հրաժարվում է իր հետագա մասնակցությունից Բաթումի դիվանագիտական բանակցություններին՝ տալով հետևյալ պարզաբանումը. «Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ ես ստացել եմ հավաստի տեղեկություններ, որոնց համաձայն՝ Անդրկովկասյան հանրապե-

²⁸⁴ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 286.

²⁸⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 306։

տությունը և Անդրկովկասյան կառավարությունը գտնվում են քայքայման շրջանում: Նկատի ունենալով այս հանգամանքը, որը չէր նախատեսված, ինչպես նաև այն, որ ես անհրաժեշտ լիազորություններ չունեմ Անդրկովկասյան համադաշնության լուծարման պարագայում շարունակելու բանակցությունները, քանի որ ինձ լիազորություններ էին տրված Անդրկովկասյան կառավարության հետ բանակցելու հիմքերով, ես պետք է խնդրեմ նոր հրահանգներ, և այդ առթիվ անհրաժեշտ է, որ անձամբ հարաբերության մեջ մտնեմ գերմանական համապասխան իշխանությունների հետ: Որպեսզի իզուր ժամանակ չկորցնեմ, ես որոշեցի այս երեկոյան մեկնել Բաթումից «Միննա Հորն» գերմանական շոգենավով»²⁸⁶: Մեղմ ասած, ֆոն Լոսովի պարզաբանումն ընդամենը դիվանագիտական խաղ էր: Նրան վաղուց հայտնի էր, որ Անդրկովկասյան հանրապետությունը արհեստածին է և չի կարող երկար գոյատևել: Մինչդեռ վրաց և գերմանացի դիվանագետները, ելնելով երկրամասում իրենց ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, անվտանգության և այլ շահերից, գաղտնի նախապատրաստեցին անկախ Անդրկովկասյան հանրապետության վերջնական կազմալուծումը: Բանն այն էր, որ նախապես համաձայնեցված և ստորագրելու պատրաստ գերմանա-վրացական մի քանի գաղտնի փոխշահավետ համաձայնագրերի նախագծեր իրականացնելու համար անհրաժեշտ էր՝ Վրաստանը նախապես հռչակվեր առանձին անկախ պետություն: Եվ պատահական չէր, որ ֆոն Լոսովը, Ա. Չխենկելիին հանձնելով իր գրավոր պարզաբանումը, նույն օրը՝ երեկոյան (մայիս 25), Բաթումից

²⁸⁶ Նույն տեղում, էջ 307:

գաղտնի մեկնեց Փոթի՝ պաշտոնապես ստորագրելու այդ համաձայնագրերի նախագծերը: Փաստորեն, դրանով գերմանական զինվորների ներկայությունը ապահովում էր Վրաստանի պաշտպանությունը, երկաթուղիների վերահսկողությունը և նրա սահմանների անվտանգությունը թուրքական ոտնձգություններից: Իսկ Գերմանիան, համաձայն տնտեսական մի քանի համաձայնագրերի, իրավունք էր ստանում շահագործելու Վրաստանի բնական հարստությունները²⁸⁷: Այդ իրադարձությունների առնչությամբ Ջ. Ավալովը հավաստում է. **«Արդեն անկարելի էր դառնում Անդրկովկասյան միացյալ արտաքին քաղաքականությունը: Ուստի և նրա ամեն մեկ մասը պարտավոր էր առանձնաբար մտածել իր մասին:** Մենք Բաթում եկանք այն վստահությամբ, որ Վրաստանը պատրաստ էր այդ քայլին: Իսկ որ նա պարտավոր էր գործել ինքնուրույնաբար, վերջնականապես պարզվեց այն բանից հետո, երբ թուրքերը գրավեցին Վրաստանի մուսուլմանաբնակ մասերը: Թուրքերին մենք ուժով դուրս քշել չէինք կարող: Միակ ելքը մնում էր գերմանական քաղաքականությունը: Իսկ դրա համար էլ անհրաժեշտ էր, որ հանդես գար անկախ Վրաստանը. համաձայնություն Գերմանիայի հետ և գերմանական որոշ աջակցություն: Օրվա գործնական վիճակը հարցը ստիպում է դնել այդպես: Այդ էր օրվա պահանջը: Ամենից առաջ, հենվելով Գերմանիայի վրա, պաշտպանվել թուրքերից և կազմակերպվել: ...Գերմանական պատվիրակության անդամների հետ ունեցած սրտաբաց գրույցների ժամանակ պատրաստվեց Վրաստանի արդեն պարզորոշ դիրքը՝ ի նախատեսություն Անդրկովկասյան

²⁸⁷ Տես РГ БА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 5:

միության անխուսափելի քայքայման: Միայն մի քանի մարդ իրագեկ էր այս գաղտնիքին»²⁸⁸: Այդ հարցը թաքուն պահվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամներից:

Մայիսի 25-ին Բաթում էր ժամանել Վրաստանի ազգային խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիան՝ Վրաստանի անկախության հռչակման շուրջ Ա. Չխենկելիի հետ խորհրդակցելու: Այստեղ էլ տեղի ունեցավ նրա, գեներալ Օդիշելիձեի, Հովհ. Քաջագնունու և Ալ. Խատիսյանի հանդիպումը: «Ժորտանիան պատմեց Թիֆլիսի մեջ իշխող տրամադրություններու մասին, - գրում է Ալ. Խատիսյանը, - հաղորդեց, որ հայերը կը շարունակեն պատերազմիլ թուրքերու հետ, որ թուրքերը սանձարձակօրէն կը շարունակեն իրենց առաջխաղացքը, եւ յայտնեց թէ այդպիսի պայմաններու մէջ վրացիներուն ուրիշ բան չի մնար, բայց եթէ յայտարարել Վրաստանի անկախութիւնը:

- Ինչպէ՞ս, բացազանչեցի ես. չէ՞ որ մենք ու դուք միասին պատերազմի մէջ ենք, ընդհանուր պատերազմի մէջ ընդհանուր թշնամիին դէմ: Ինչպէ՞ս կարող էք լքել մեզ, երբ մենք դեռ արիւն կը թափենք: Միթէ՞ ազնիւ բան է այս:

- Ազնիւ բան է այն, ինչ օգտակար է ժողովուրդին, - պատասխանեց Ժորտանիան:

- Այո՛, ըսի ես, իսկ մե՞նք:

- Մենք չենք կարող խեղդել ձեզ հետ միասին, - պատասխանեց Ժորտանիան: Մեր ժողովուրդը կ' ուզէ փրկել այն ինչ

²⁸⁸ 3. Авалов, указ. соч., с. 55-56.

որ կարող է: Դուք ալ պարտաւոր էք համաձայնութեան լեզու մը գտնել թուրքերուն հետ: Ուրիշ ելք չունիք»²⁸⁹:

Այսպիսով, դժվար չէ նկատել, թե ինչու էր Բաթումի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցութիւնների ընթացքում Վրաստանի և Գերմանիայի պատվիրակությունների կողմից ի սկզբանե նախապատրաստվում առանց այն էլ ջլատված Անդրկովկասյան անկախ հանրապետության վերջնական կազմալուծման գործընթացը: Վերջապես մայիսի 26-ի կեսօրին՝ ժամը 3-ին, Թիֆլիսի քաղաքային վարչության սրահում Անդրկովկասյան սեյմը իր արտակարգ և վերջին նիստում Բաթումի դիվանագիտական բանակցությունների հաշվետվութիւնը ներկայացնելուց հետո ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով, որ պատերազմի ու խաղաղության հարցում ի հայտ են եկել արմատական տարաձայնություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կազմող ժողովուրդների միջև, և դրանով իսկ անհնար է դարձել Անդրկովկասի անունից խոսող մէկ հեղինակավոր իշխանության հանդէս գալը, Սեյմը հաստատում է Անդրկովկասի (դաշնության) կազմալուծումը և վայր է դնում իր լիազորությունները»²⁹⁰: Փաստորեն, Վրաստանը անկախ հռչակելու լուրը արագացրեց վերջնագրի ներկայացումը²⁹¹: Նույն օրը՝ երեկոյան ժամը 9-ին, թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյը Ա. Չխենկելիին ներկայացրեց վերջնագիր՝ երեք օրվա ընթացքում իր առաջարկները (լիովին

²⁸⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 111: Տե՛ս նաև **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 65:

²⁹⁰ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 330.

²⁹¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 113:

ընդունել Բաթումում մայիսի 11-ին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության ներկայացրած բուրքական պայմանները) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ, այն դեպքում, երբ Սեյմը ընդամենը չորս ժամ առաջ կազմալուծվել էր, և այլևս անկախ Անդրկովկասյան հանրապետությունը գոյություն չուներ: Իսկ Վրաստանն էլ գերմանական պատվիրակության հետ գաղտնի համաձայնությամբ մեծ հանդիսավորությամբ նույն սրահում հոչակել էր իր անկախությունը²⁹²: Ինչպես վերը նշվեց, Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումը և Վրաստանի անկախության հոչակումն իրականացվեցին վերջինիս համար նպաստավոր այն պահին, երբ նրա ու Գերմանիայի միջև արդեն պատրաստ էին Փոթիում ստորագրվելիք ռազմաքաղաքական, տնտեսական, առևտրային, ֆինանսական, անվտանգության և այլ գաղտնի համաձայնագրերի փոխշահավետ մի քանի նախագծեր²⁹³:

Մայիսի 28-ին մուսուլմանների Ազգային խորհուրդը, ոգևորված Անդրկովկաս ներխուժած ցեղակից Օսմանյան Թուրքիայի անվերապահ աջակցությամբ ու հովանավորությամբ, հոչակեց «Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության» անկախության մասին, որը հենց այդ ժամանակ **թուրքերի կողմից առաջին անգամ կոչվեց «Ադրբեջան»**²⁹⁴:

Ի դեպ, Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության թաթար անդամները դիմել էին Հալիլ բեյին հետևյալ

²⁹² Տե՛ս **3. Авалов**, նշվ. աշխ., էջ 56-62:

²⁹³ Տե՛ս РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 1-4:

²⁹⁴ Տե՛ս **Ա. Միմոնյան**, Ձանգեգութի գոյապայքարը 1917-1920 թթ., Եր., 2017, էջ 78:

խնդրանքով. «**Հարգարժան պարոն, մեր ժողովուրդն (թաթարները – Գ.Պ.) անկախություն չի ուզում, մենք էլ չենք ուզում: Մենք ցանկանում ենք Օսմանյան պետության մի մաս կազմել**»²⁹⁵:

Այդ հանդիպման մասնակից Նաքի Քեյքուրունը (հետագայում՝ 1918-1920 թթ., Ադրբեջանի Հանրապետության Ազգային անվտանգության տնօրեն) գրում է, որ Հալիլ բեյը այդ պահանջին պատասխանեց հետևյալը. «**Մենք մեր սվիներ հասցրինք Կովկաս: Եթե դուք նույնիսկ չցանկանայիք միանալ մեզ, մենք ձեզ մեր սվինի ուժով կստիպեինք միանալ մեզ: Սակայն դրա հնարավորությունը չկա: Մեր միավորումը չեն ընդունի ո՛չ թշնամի (Ռուսաստան – Գ. Պ.), ո՛չ էլ բարեկամ (Գերմանիա – Գ. Պ.) պետությունները: Մենք ձեզ օգնում ենք և կշարունակենք օգնել: Անհրաժեշտ քանակությամբ զորք կուղարկենք, որ դուք անկախանաք և անկախ ապրեք: Բազմակողմանի աջակցություն կցուցաբերենք ձեզ: Մեր հայրենիքի պես կպաշտպանենք նաև ձեր հայրենիքը: Վերադարձեք ձեր տները և պաշտպանեք ձեր հռչակվելիք անկախությունը**»²⁹⁶:

Մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն (մայիսի 31-ին այն հրապարակվեց մամուլում)՝ դնելով ազգային անկախ պետականության շինարարության հիմքը: Անդրկովկասյան սեյմի կազմալուծումից հետո դադարեցվեցին նաև հաշտության խաղաղարար

²⁹⁵ Naki Keykurun, Azərbaycan istiklal mücadelesinden hatıralar (1905-1920), İstanbul, 1998, s. 111:

²⁹⁶ Նույն տեղում, էջ 112:

պատվիրակության լիազորությունները, և նախկին անկախ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամները Բաթումից վերադարձան Թիֆլիս²⁹⁷:

²⁹⁷ Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 28 մայիսի 1918թ.:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

1. Հայոց անկախ պետականության կերտումը (1918 թ. մայիս)

1918 թ. մայիսի 25-ի երեկոյան Բաթումում գտնվող Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին Թիֆլիսից հաղորդագրություն ստացավ այն մասին, որ վրաց Ազգային խորհուրդը Վրաստանի անկախության հռչակագիր է նախապատրաստել և մայիսի 26-ին՝ ժամը 1-ին, այն կներկայացնի Սեյմի քննարկմանը: Հաղորդագրությունում ասվում էր նաև, որ որոշման ընդունվելուց հետո պատվիրակության նախագահին Օսմանյան Թուրքիայի հետ առանձին բանակցություններ սկսելու մանդատ կուղարկվի²⁹⁸: Հարկ է նշել նաև, որ նույն օրը՝ երեկոյան, վրաց Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան Վրաստանի անկախանալու մասին հայտնել էր նաև Բաթումում հայ պատվիրակ Ալ. Խատիսյանին:

Լուրը անսպասելի չէր, բայց մեծ անհանգստություն և շփոթմունք առաջացրեց պատվիրակության հայ անդամների շրջանում: Նրանց մտահոգությունը անտեղի չէր: Վրաստանի անկախությամբ Թուրքիայի դեմ հայ-վրացական միասնական ռազմական ճակատ ստեղծելու (Բաթումի անկումից հետո վրացական զորքերը գրեթե չեն մասնակցել թուրքերի դեմ ռազմական գործողություններին) ճիգերը վերջնականապես դառնում էին անհնարին: Փաստորեն, Հայաստանը ամբողջապես մեկուսանում էր հարևաններից և մնում էր մեն-մենակ Օսմանյան Թուրքիայի դեմ: Այնինչ 1918 թ. մայիսի կեսերից Գերմա-

²⁹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 112:

միան գործնական լուրջ քայլեր էր ձեռնարկել՝ պաշտպանելու Վրաստանը Թուրքիայի ռազմական ոտնձգություններից և ապահովելու նրա տարածքային ամբողջականությունը: Ավելորդ է խոսել թաքարների մասին: Նրանց նպատակն էր ոչ միայն ապահովել Թուրքիայի ազդեցությունը Անդրկովկասում, այլև դառնալ ցեղակից օսմանյան պետության մաս²⁹⁹:

Ստեղծված ծանր ու վտանգավոր իրավիճակը մեղմելու նպատակով Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջագունին մայիսի 25-ին՝ երեկոյան ժամը 10-ին, «Միննա - Խորն» նավի վրա հանդիպեցին գերմանական պատվիրակության ղեկավար ֆոն Լոսովին (նա շտապում էր մեկնել Փոթի՝ մայիսի 28-ին ստորագրելու վրաց-գերմանական գաղտնի համաձայնագիր), որպեսզի խնդրեն նրան միջնորդել իր կառավարությանը՝ Վրաստանի օրինակով ընդունելու Հայաստանի հովանավորությունը, սակայն նրանց ջանքերը հաջողություն չունեցան: Ֆոն Լոսովը հայ պատվիրակների խնդրանքին արձագանքեց ընդամենը մի քանի խորհուրդներ տալով. նախ՝ պատվիրակություն ուղարկել Բեռլին՝ բողոքելու Թուրքիայից Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը (1918 թ. մարտի 3) կոպտորեն խախտելու համար, ապա՝ Հայաստանը հռչակել անկախ՝ բացառելով ռազմական բախումը թուրքերի հետ: Նա խորհուրդ տվեց նաև հաշտության դաշնագիր կնքել Օսմանյան Թուրքիայի և Քառյակ միության մյուս անդամ պետությունների հետ միաժա-

²⁹⁹ Տե՛ս **Naki Keykurun**, *Azerbaycan istiklal mücadelesinden hatıralar* (1905-1920), İstanbul, 1998, էջ 111-112, տե՛ս նաև **Serpil Sürmeli**, *Türk-Gürcü İlişkileri* (1918-1921), Ankara: AKDITYK Atatürk Araştırma Merkezi, 2001, էջ 125:

մանակ³⁰⁰: Հայ պատվիրակները այդ մասին անմիջապես հեռագրով տեղեկացրին Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդին և «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը:

Ինչպես վերը նշվեց, կայսերական Գերմանիայի համար Արևելյան Հայաստանը տնտեսապես հետաքրքրություն չէր ներկայացնում, հետևաբար նրան ձեռնտու չէր խորացնել առանց այն էլ լարված հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ: Գերմանիային հետաքրքրում էին Վրաստանի բնական հարստությունները և Բաքվի նավթը: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ վրաց և գերմանացի դիվանագետները, ելնելով երկրամասում իրենց ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, անվտանգության և այլ շահերից, գաղտնի նախապատրաստեցին անկախ Անդրկովկասյան հանրապետության վերջնական կազմալուծումը և Վրաստանի անկախության հռչակումը: **Կարծում ենք՝ ստեղծված իրավիճակում Անդրկովկասյան հանրապետության վերջնական կազմալուծումը և Վրաստանի անկախության հռչակումը հարցի լուծման միակ ելքն էին, որը միանգամայն բնական էր և ճիշտ:** Եվ այդ ամենը իրականացվում էր քաղաքական նպաստավոր այն պահին, երբ Վրաստանի ու Գերմանիայի միջև արդեն ստորագրության էր պատրաստ մայիսի 24-ին խմբագրված Ժամանակավոր գաղտնի դաշնագրի նախագիծը՝ ռազմաքաղաքական, տնտեսական, անվտանգության և այլ ոլորտների մասին:

³⁰⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 112:

Մայիսի 26-ի կեսօրին Բաթումում Մ. Պապաջանյանը առանձնագրույց է ունենում թուրքական պատվիրակության ղեկավար Հալիլ բեյի հետ: Վերջինս իրազեկում է, որ նույն օրը վերջնագիր է ներկայացնելու Անդրկովկասյան կառավարությանը, իսկ նրա գոյություն չունենալու դեպքում՝ Անդրկովկասյան երեք գլխավոր ժողովուրդների՝ հայերի, վրացիների և թաթարների ազգային խորհուրդներին՝ պատասխանի սպասելով 72 ժամ: Նա հայտնում է նաև. «**Եթե հայերը ցանկանան ընդունել թուրքական վերջնագիրը, ապա իրենք դեմ չեն լինի, եթե հայերը իրենց 10 հազար քառակուսի վերստի վրա կառուցեն առանձին պետություն, որին իրենք կճանաչեն և նրա հետ կկնքեն հաշտության դաշնագիր: Իրենք դարձյալ չեն առարկի, եթե հայերն ուզենան համադաշնություն հաստատել մուսուլմանների հետ**»³⁰¹:

Նույն օրը՝ երեկոյան, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության որոշմամբ Հալիլ բեյը Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահի անունով վերջնագիրը ներկայացրեց այն ժամանակ, երբ մի քանի ժամ առաջ կազմալուծվել էր անկախ Անդրկովկասյան հանրապետությունը, իսկ վրաց Ազգային խորհուրդը Վրաստանը հռչակել էր անկախ հանրապետություն: Քաղաքական զարգացումների այդ նոր պայմաններում Հալիլ բեյը հայտարարեց, որ խնդիրը փակված չէ. հասցեատերը փոխվել է, ուստի այժմ վերջնագիրը կներկայացնի Անդրկովկասյան երեք գլխավոր ժողովուրդների համապատասխան ազգային խորհուրդներին կամ կառավա-

³⁰¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 113:

բություններին առանձին-առանձին³⁰²: Եվ իսկապես, երեկոյան ժամը 10-ին թուրքական պատվիրակության նախագահի ներկայացրած վերջնագիրն ընդունեց ոչ թե անդրկովկասյան միացյալ պատվիրակությունը, այլ նրա հայ, վրաց և թաթար անդամներն առանձին-առանձին, որովհետև միացյալ պատվիրակությունը ներկայացնող Անդրկովկասյան սեյմը հրաժարվել էր պատերազմի ու խաղաղության հարցը քննարկելուց՝ այն թողնելով ազգային խորհուրդներին: Հալիլ բեյը պահանջեց 72 ժամվա ընթացքում ամբողջությամբ ընդունել կամ մերժել թուրքական վերջնագիրը՝ **սահմանային նոր փոփոխություններով**³⁰³:

Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամները թուրքական դաշնագրի նախագծի բովանդակությանը ծանոթ էին դեռ Բաթումի դիվանագիտական բանակցությունների առաջին օրերից (մայիսի 11-ից): Հալիլը ներկայացրել էր պահանջներ ամբողջ Անդրկովկասի համար ընդհանրապես և Հայաստանի ու հայության համար մասնավորապես: Ըստ դրա՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններից (Կարս, Բաթում, Արդահան) դուրս Թուրքիան պահանջում էր Թիֆլիսի, Քութայիսի և Երևանի նահանգներից ընդարձակ տարածքներ: Բաթումում շուրջ երկու շաբաթ տևած դիվանագիտական բանակցությունները համաձայնության չհանգեցրին, և Հալիլ բեյը մայիսի 26-ին, իր առաջարկած խաղաղության և բարեկամության դաշնագրին կցելով այդ նոր պահանջները, այն ներկայացրեց վերջնագրի լեզվով: Թուրքե-

³⁰² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, ք. 133:

³⁰³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 56:

րը հայերին տարածքային նոր պահանջներ էին ներկայացնում՝ հանձնել Ալեքսանդրապոլի ամբողջ գավառը, Երևանի և Էջիածնի գավառների մեծ մասը՝ Էջմիածին քաղաքով հանդերձ: Թուրքիան պահանջում էր նաև Շիրակի և Արարատյան դաշտավայրերը գրեթե ամբողջությամբ՝ հայությանը գրկելով ամենակենսական տարածքներից:

Եվ բնավ պատահական չէր, որ թուրքական պատվիրակությունը շտապեց վերջնագիրը ներկայացնել մայիսի 26-ին՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերի այդ ճակատագրական պահին: Իհարկե, նրանք համոզված էին, որ հայ զինվորների հերոսական դիմադրության պայմաններում չեն կարող պատերազմն արագ ավարտել: **Տվյալ պահին թուրքերին անհրաժեշտ էր վերջնագրի պարտադրանքով օր առաջ իրենցով անել Բրեստ-Լիտովսկի հաշտության սահմաններից դուրս գալթա՞ծ հայկական ընդարձակ տարածքները, ապա, հաշտության դաշնագիր ստորագրելով, ապահովել իրենց թիկունքը հայկական գորքերի ռազմական հարձակումներից և ճանապարհի հարթել՝ շուտափույթ հասնելու Բաքու: Ահա թե ինչու Օսմանյան Թուրքիան պետք է հանդուրժեր մի փոքրիկ Հայաստանի գոյությունը:** Եվ ամենևին էլ պատահական չէր, որ հաջորդ օրը՝ մայիսի 27-ի կեսօրին, Հալիլ բեյի և Վեհիբ փաշայի (թուրքական պատվիրակության անդամ, կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար) հրավերով Բաքումում տեղի ունեցավ հանդիպում Ալ. Խատիսյանի և Հովհ. Քաջագունու հետ: Ջրույցի ժամանակ Վեհիբ փաշան հայտնեց, որ մույն օրը կգրավեն Ղարաքիլիսան և այնտեղ կմնան չորս օր ու կապա-

սեն վերջնագրի պատասխանին: Վեհիբ փաշան ակնկալում էր վերջնագրի պատասխանը ստանալ հայկական կառավարության անունից: «Ինքը և Վեհիբ փաշան,- այնուհետև շարունակում է Հալիլը, - շատ լավ են գիտակցում հայերի և Հայաստանի դրությունը, բայց նաև հույս ունեն, որ հաշտության դաշնագիրը ստորագրելուց հետո համաձայնության կգան թուրքերն ու հայերը տարածքների հարցում: Հայերը թուրքերի շրջանում էլ բարեկամներ ունեն, և որ նրանք կօգնեն հայերին իրենց գործում»³⁰⁴: Նա հայ պատվիրակներին հորդորում է հաղորդել Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, որ եթե ընդունեն վերջնագիրը, ապա **«թուրքերը ոչինչ չունեն Անդրկովկասի սահմաններում Հայաստանի կազմավորման (իմա՝ պետության – Գ. Պ.) դեմ և որ Անդրկովկասյան դաշնությունը մոտակա ապագայի հարց է»**³⁰⁵: Ինչպես վերը նշվեց, այդ մասին մեկ օր առաջ (մայիս 26) Բաթումում Հալիլ բեյը առանձնազրույցի ժամանակ հայտնել էր նաև Մ. Պապաջանյանին:

Հայ պատվիրակների հետ հանդիպման ժամանակ Վեհիբ փաշան խոստովանում է, որ թուրք-հայկական ռազմաճակատներում (իհարկե առանց հիշատակելու Սարդարապատի հերոսամարտը) «Հայկական զորքերը լավ են մարտնչում: Անդրանիկը բացառիկ լավ է կատարում իր գործը. մոտ ապագայում կարող եք Եվրոպայում լավ զորք ունենալ: Ըստ Շեֆիկ փաշայի տեղեկության՝ նա նման կռիվ չէր տեսել թուրքական ոչ մի ռազմաճակատում: Չնայած մեր ուժերի տեխնիկական առավելություններին՝ չորս օր տևեց: Կովկասում դուք բռնելու եք

³⁰⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 113:

³⁰⁵ Նույն տեղում:

բուլղարների տեղը: Եվ իրենք մեծ հույս ունեն թուրք-հայկական ռազմական համաձայնագիր կնքելու»³⁰⁶:

Ինչպես տեսնում ենք, մայիսի վերջին մի քանի օրերի ընթացքում հայ պատվիրակության նկատմամբ անբարյացակամ, անգամ թշնամական վերաբերմունքը փոխվեց «բարեկամականի»: Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի կողմից Բաթում գործուղված (մայիսի 17) Մ. Պապաջանյանը փաստում է, որ մայիսի վերջին օրերին թուրքական պատվիրակները «հաշտության բանակցությունների ընթացքում ավելի լավ էին վերաբերվում մեզ»³⁰⁷: Նրանք հաճախ էին խոսում Կովկասում հայկական պետություն «ստեղծելու» մասին: Նման ակնարկ արվել էր նաև դեռևս 1918 թ. մարտի 7-ին և ապրիլի 1-ին Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Ռաուֆ բեյի կողմից³⁰⁸: **Դժվար չէ նկատել, որ մայիսի վերջերից հայերի և Օսմանյան Թուրքիայի հարաբերություններում նոր փուլ էր սկսվում:**

Ստեղծված չափազանց բարդ ու լարված նոր իրավիճակում հայ պատվիրակներն այլընտրանք չունեին, եթե ոչ ընդունել անմախաղեպ ծանր վերջնագիրը և կնքել հաշտություն ու փրկել արևելահայությանը նոր արհավիրքներից: Բայց և այնպես, առանց Թուրքիայի ռազմական և քաղաքական երաշ-

³⁰⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 113:

³⁰⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 233:

³⁰⁸ Տե՛ս Գ. Պետրոսյան, 1918 թ. Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը. Հայկական հարցի արծարծումները, «Հայագիտության հարցեր» հանդես, Եր., 2016, 3(9), էջ 51-53:

խիքների, այն հղի էր անկանխատեսելի բազմաթիվ ծանր հետևանքներով:

«Այստեղ վերջնագրի հարցի հետ միասին,- գրում է Ա-Դոն,- առաջին անգամ ծագեց հայկական հանրապետություն և կառավարություն յայտարարելու խնդիրը, որի անունից էլ պիտի ընդունելու ստորագրել վերջնագիրը»³⁰⁹: Սակայն կար մեծ մտավախություն, որ առանց քաղաքական ծանրակշիռ երաշխիքների Հայաստանի անկախության հռչակումը կարող էր Օսմանյան Թուրքիայի կողմից լուրջ սպառնալիքի տակ դնել արևելահայության ֆիզիկական գոյությունը. դեռ քարմ էին 1915 թվականի և նրան հաջորդած տարիներին Օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արևմտյան Հայաստանում և այլ հայաբնակ վայրերում իրագործված հայության ցեղասպանությունը և հայրենագրելու: Արևմտյան Հայաստանի ամբողջական հայաթափությունից հետո կործանման վտանգն սպառնում էր արդեն Արևելյան Հայաստանին: Ալ. Խատիսյանին և Հովհ. Քաջազմունուն մնում էր վերադառնալ Թիֆլիս՝ ստեղծված իրավիճակի մասին հանգամանորեն զեկուցելու Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդին, «Հայ հեղափոխական դաշնակցության» և մյուս քաղաքական կուսակցությունների խմբակցությունների հետ քննարկելու և ընդունելու քաղաքականապես իրատեսական որոշում: Հայ պատվիրակների խնդրանքով Հայլի բեյը ընդունեց վերջնագրի պատասխանի ժամկետը երկու օրով երկարաձգելու (մինչև մայիսի 30-ի երեկոյան ժամը 8-ը) առաջարկը:

³⁰⁹ **Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)**, Հայոթեան երկունքը, Եր., 2014, էջ 408:

Մայիսի 28-ի կեսօրին՝ ժամը 2-ին, նրանք Բաթումից վերադարձան Թիֆլիս³¹⁰:

Նրանց վերադարձից երկու օր առաջ՝ մայիսի 26-ի երեկոյան, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության՝ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի ու թաղային կոմիտեների համատեղ արտակարգ նիստում բուռն վիճարանություններից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվել էր բանաձև, որով առաջարկվել էր Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդին օժտել կառավարական գործառույթներով. «Ի նկատի առնելով այն, որ Անդրկովկասի սեյմի ինքնացրումից և Վրաստանի անկախություն հայտարարելուց հետո լուծվելու է և Անդրկովկասյան կառավարությունը, և հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին, ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, որ Հայոց ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, անցնի գործելու հայության կենտրոնում՝ ստանձնելով կառավարական գործառույթներ՝ օժտված դիկտատորական իրավունքներով հայ կյանքի բոլոր երևույթների և գործերի նկատմամբ»³¹¹: Ս. Վրացյանի գնահատմամբ. «Դաշնակցական ժողովը շատ ճիշտ էր գնահատել վայրկեանի էությունն ու նախատեսել անելիքը. **Յետագայ դեպքերը նոյն ուղղութեամբ էլ զարգացան**»³¹²:

³¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 113:

³¹¹ Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմող, առաջաբանի, ծանոթագ. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, խմբ.՝ Ա. Ս. Վիրաբյան, Կ. Հ. Խաչատրյան, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2009, էջ 23:

³¹² Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 15:

Մայիսի 28-ի կեսօրին Թիֆլիսում Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին իրազեկվեցին, որ Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի առավոտյան հրավիրված անտարակույս ամենաժանր ու պատասխանատու նիստում քննարկման է դրվել թուրքական վերջնագիրը ընդունելու կամ մերժելու հարցը: Երկար ու բուռն վիճաբանություններից հետո այն մերժվել է³¹³: Փորձենք հակիրճ ներկայացնել այդ նիստում թուրքական վերջնագիրը ընդունելու կամ մերժելու՝ հայ քաղաքական կուսակցությունների խմբակցությունների իրարամերժ տեսակետները և նրանց պատճառաբանություններն ու հիմնավորումները:

«Հայ ժողովրդական կուսակցությունը» կողմ էր արտահայտվել՝ հրապարակելով հետևյալ բանաձևը.

I. Երևանի և Գանձակի մահանգի՝ թուրքական գրավումից ազատ մնացած շրջանները ներկայումս կտրված են դրսի աշխարհից. մի կողմից շրջապատված են թուրքական զորքերով, մյուս կողմից՝ զինված աղբբեջանցիներով:

II. Հայկական զորքը, ինչպես պաշտոնապես տեղեկացնում է կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը, մեծ մասամբ կազմավորված է:

III. Հայկական զորամասը Երևանի մահանգում դեռ շարունակում է կռվել թուրքերի դեմ, բայց այն ևս անկարող է երկար դիմադրել ռազմամթերքի ու պարենի խիստ պակասի պատճառով:

³¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, ք. 235:

IV. Հայ ժողովրդի մեջ նկատվում են հուսալքվածություն և կռվելու տրամադրության բացակայություն, և մույնիսկ ցամ-կության դեպքում անկարող է կռվել թուրքական կանոնավոր զորքերի դեմ մանավանդ ռազմամթերքի և պարենի աղության պայմաններում:

V. Անհեռանկար կռիվները ավերիչ հետևանքներ են թողել հայ ժողովրդի կյանքի վրա. մա քայքայվում է ոչ միայն տնտե-սապես, այլև ֆիզիկապես, համատարած գաղթը սպառնում է կորստաբեր հետևանքներ ունենալ:

VI. Խաղաղություն կնքելու՝ թուրք կառավարության առա-ջարկած վերջնագիրը թեև շատ ծանր է և գրավական չէ, թե անպայման պատերազմը իսպառ վերջ կունենա, բայց չընդու-նելու դեպքում հետևանքը պարզ է. գեների ուժով նվաճելուց հե-տո մնացյալ հայկական շրջաններում հայ ժողովրդի հետ կվարվի հաղթողի իրավունքով, իսկ ընդունելու դեպքում հայ ժողովուրդը չի կորցնում այն հույսը, որ եթե ոչ մշտապես, գոնե ժամանակավորապես կդադարեն ռազմական գործողություն-ները. հայ ժողովուրդը կմնա իր տեղում, գաղթը կընդհատվի, և ապրելու մի որևէ հնարավորություն կստեղծվի, մինչև սպասվելիք համաեվրոպական վեհաժողովում հայկական խնդիրը կստանա իր լուծումը:

VII. Վերջնագրի ընդունումը կարող է հայերին հնարավո-րություն տալ ունենալու ազգային մի վոքը տարածք, որ կլինի ապագա ազգային կյանքի սաղմը:

Այս ամենը հաշվի առնելով՝ «Հայ ժողովրդական կուսակցության» խմբակցությունը որոշեց ընդունել թուրքական վերջնագիրը³¹⁴:

Սակայն վերջնագրի նկատմամբ ճիշտ հակառակ դիրքորոշում ունեին «Հայ հեղափոխական դաշնակցություն» և մյուս քաղաքական կուսակցությունները: Խորհրդի նիստում «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցության անունից Խ. Կարճիկյանը վերջնագրի չընդունումը հիմնավորում է հետևյալ պատճառաբանությամբ. վերջնագրի ընդունումը ոչ մի կերպ չի կանգնեցնի թուրքական ռազմական առաջխաղացումը և հայ զինվորներին զինաթափելու մտադրությունը. այդ է հուշում նրանց որդեգրած քաղաքական կուրսը, և հակառակը պնդելու երաշխիքներ չկան, իսկ հայկական զորքերի զինաթափումը սկիզբն է լինելու հայ ժողովրդի կոտորածի: Վերջագիրը ընդունելով՝ կկորցնենք մեր ինքնապաշտպանական ուժը: Դիմադրությունը շարունակելով՝ մուսաֆաթը ստիպված կլինի ավելի զիջող լինել հոգուտ հայ ժողովրդի՝ ի նկատի ունենալով այն, որ վրացիները նույնպես չեն ընդունի վերջնագիրը, հավանաբար ադրբեջանցիները՝ նույնպես, քանի որ շարունակում են դեմ արտահայտվել դրան: Վերջապես, վերջնագրի ընդունումը դեռ չի նշանակում, թե կռիվը դադարում է, որովհետև հայկական շատ ջոկատներ հնարավոր է՝ շարունակեն կռիվը: Վերջնագրի չընդունումը սպազա վեհաժողովում մեծ նշանակություն կունենա հայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Ահա այս բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, ինչպես մասն օտարների մի-

³¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 233:

ջամտության վրա առանձնակի հույս չդնելով՝ «**Հայ հեղափոխական դաշնակցություն**» **խմբակցությունը** առաջարկում է **չընդունել թուրքական վերջնագիրը**³¹⁵: Սակայն նիստի վերջում լուր ստացվեց, որ հայ պատվիրակներ Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին վերադարձել են Բաթումից և խնդրել են հարցի վերջնական որոշումը հետաձգել՝ երեկոյան նիստում համատեղ քննարկելու և ընդունելու քաղաքականապես իրատեսական որոշում³¹⁶:

Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի երեկոյան նիստում (Ժամը 5:30-7:00) օրակարգի գլխավոր հարցը դարձյալ թուրքական վերջնագիրն էր: Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին հանգամանորեն զեկուցեցին Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքի, Անդրկովկասյան հանրապետության կազմալուծման, Վրաստանի անկախացման և մասնավորապես Թուրքիայի կողմից պարտադրված վերջնագրից հետո երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական չափազանց բարդ ու լարված նոր իրավիճակի մասին: Ալ. Խատիսյանը իրագեկեց. «Մենք չգիտեինք հայկական գավառների վիճակն ու մեր դիրքը: Հետո իմացանք, որ ուլտիմատումն ուղղված է նաև վրացիներին, որ չէին սպասում: Մենք նորից տեսանք Վեհիբ փաշային և Խալիլ բեյին (մայիսի 27-ին – Գ. Պ.): Մեր հարցին. թե ինչու՞ բանակցությունների ընթացքում շարունակում եք ձեր արշավանքը, Վեհիբ փաշան պատասխանեց, որ դրանք միջոցներ են մեր պահանջները ընդունել տալու համար. գրավված են բոլոր կարևոր ռազմական կետե-

³¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 232:

³¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 235:

րը... Բայց մինչև ուլտիմատումի վերջանալը առաջխաղացում տեղի չի ունենա:

... Խաղաղ ժողովուրդը չի կռվում, շարունակեց նա, բայց հայ զինվորները փայլուն դիմադրություն են ցույց տալիս, իբրև արժանի հակառակորդներ: Սակայն որքան ձեր զորքերը քաջ լինեն, չեն կարողանալու մեզ հաղթել, որովհետև չունեք պետական ապարատ: **Եթե ուլտիմատումը չընդունեք, վերջացրեց նա, մենք կշարունակենք առաջ գնալ դեպի Թիֆլիս, Երևան:** Սահմանների մասին խոսեք Խալիլ բեյի հետ:

Խալիլն բեյն ասաց, որ իբր թե շատ է խոսել Թալեաթի հետ, բայց անօգուտ. **ուլտիմատումը պետք է ընդունել. հակառակ դեպքում ամեն ինչ կորած է:** Ճիշտ է ձեր երկիրը շատ փոքր է, բայց հայ ժողովուրդը աշխատասեր է»³¹⁷: Հարկ է նշել, որ դա Օսմանյան Թուրքիայի ավանդական մարտավարությունն էր. մի կողմից բանակցել, իսկ մյուս կողմից, Անդրկովկասից տարածքներ զավթելով, ճնշում գործադրել դիվանագիտական բանակցային գործընթացների վրա և սպառնալիքով, վերջնագրի լեզվով պարտադրել իրենց անարդար պահանջները:

Նիստը նախագահող Ա. Ահարոնյանը (Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նախագահ), դիմելով զեկուցողներ Ալ. Խատիսյանին և Հովհ. Քաջազնունուն, խնդրեց հայտնել իրենց վերջնական եզրակացությունը թուրքական վերջնագրի մասին: Ալ. Խատիսյանը իր եզրափակիչ ելույթում հայտարարեց. «Այս բոլոր հանգամանքները և մեր զինվորական դրության անհուսալիությունը այն վիճակն է ստեղծել մեզ համար,

³¹⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 235-236:

որ մենք հարկադրված ենք ընդունելու ուլտիմատումը: Կռիվը շարունակելով՝ մենք մեր հողը կկորցնենք, իսկ **ընդունելով՝ կդառնանք մի իրավական պետություն ապագայի ակնկալություններով**: Ռուսների վրա հույս չունի, Անգլիայից և Ֆրանսիայից օգուտ չի տեսել, միակ հույսը մնացել է Գերմանիան: Իհարկե ուլտիմատումը կարող է չփրկել մեր տերիտորիան, միակ երաշխիքը կարող է լինել չորս պետությունների ստորագրումը: Եթե տաճիկներին բնավ չենք հավատում, այն ժամանակ բանակցություններն ավելորդ են: Բայց ինքը կարծում է, որ **մենք ընդունելով ուլտիմատումը դառնում ենք օբյեկտ միջնորդության ապագայի հեռանկարներով**: Դրա համար անհրաժեշտ է, որ Ազգային խորհուրդը հայտարարի անկախություն, տեղափոխվի մի հայկական վայր, իհարկե ստորագրելով ուլտիմատումը: **Եթե չընդունենք, մեզ սպառնում է կոտորած»**³¹⁸: Ա. Սահարոնյանի նաև այն հարցումին՝ ի՞նչ երաշխիքներ կան, որ հայկական մնացած տարածքները թուրքերը չեն գրավի և ժողովրդին չեն կոտորի, Հ. Քաջազմունին հավելեց. **«Իմ խորին համոզումով, ուրիշ ելք չկա, բացի ուլտիմատումն ընդունելը, ոչ մի գարանտիա չկա»**³¹⁹: Շարունակվող բուռն քննարկումների հետևանքով ձայների ճնշող մեծամասնությամբ **թուրքական վերջնագիրը ընդունվեց**:

Ուշագրավ է այդ իրավիճակի՝ Ա.-Դոյի գնահատականը. «Ծանր բուլլեներ և դաժան ժամեր են գլորում Ազգային խորհրդի ժողովներում, ժողովները յաջորդում են իրար, խօսում, վիճում, հերքում, պատճառաբանում են դժար լուծելի

³¹⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 237:

³¹⁹ Նույն տեղում:

հարցի շուրջը, դրած է սեղանի վրա հայ ժողովրդի գլխատման ակտը. և պահանջում է, որ այդ ակտը սրբագործւի նոյն ինքն գլխատուղի կողմից: Կարելի է և չստորագրել, բայց զօրքը, հայ զօրքը, որ սկսել է հերոսական ճիգեր յայտ բերել, փառաւոր յաղթութիւններ տանել, զրկւած էր ամեն ինչից՝ հագուստից, ոտնամանից, հացից, նոյնիսկ ռազմամթերքից: Նա կորցրել է ամեն-ամենը, թողել է Էրզրումը, Կարս, Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա, թողել է ամեն ինչ թշնամու ձեռքը և այժմ դատարկածեռն կանգնել է թշնամու առաջ: Եւ Երևանի Ազգային խորհուրդը, ընդհանուր հրամանատար Նազարբեկեանը հեռագրում են.- Հաշտութիւն, հաշտութիւն:

Ժամանակը չի սպասում, դէպքերը զլորում են գահավէժ արագութեամբ, պէտք է վերջ տալ մաշող ու սպանող դրութեանը, և Ազգային խորհուրդը մայիսի 28-ի երեկոեան նիստում, որը վերջանում է գիշերայ ժամը 12 և կէսին, որոշում է տաճկական վերջնագիրն ընդունել, դնելով սակայն հետեալ պայմանները.

1. Էջմիածինը թողնել Հայկական Հանրապետութեան սահմանների մէջ,
2. Գրաւելիք վայրերի հայերին զինակոչի չենթարկել,
3. Հայկական Հանրապետութիւնը ներքին կարգապահութեան և սահմանների պաշտպանութեան համար պիտի ունենայ զինուորական ուժ,
4. Փախստական հայերը պիտի վերադառնան իրենց բնակավայրերը»³²⁰:

³²⁰ Ա.-Ղ.Ձ., նշվ. աշխ., էջ 408-409:

Նիստում որոշվեց Օսմանյան Թուրքիայի հետ հաշտության դաշնագիր ստորագրելու նպատակով Բաթում գործուղել նոր պատվիրակություն՝ հետևյալ կազմով՝ Ալ. Խատիսյան (նախագահ), Հովհ. Քաջագունի և Մ. Պապաջանյան՝ նրանց տալով անսահմանափակ լիազորություններ³²¹: Իսկ հաջորդ օրվան թողնվեց որոշելու, թե հաշտարար պատվիրակությունը Բաթումում ում անունից պետք է հանդես գա՝ Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի^օ, թե^օ կառավարության³²²: Մայիսի 29-ի նիստում կազմվեց հանձնաժողով (Ա. Ահարոնյան, Ն. Ադբալյան, Ալ. Խատիսյան և Հովհ. Քաջագունի)՝ մշակելու և խմբագրելու հայտարարությունը (**կոչ՝ ուղղված հայ ժողովրդին**): Նույն օրը՝ երեկոյան, հեռագիր հղվեց Հալիլին, որ Հայոց ազգային խորհրդի հաշտարար պատվիրակությունը արդեն մեկնել է Բաթում³²³:

Մայիսի 30-ին՝ առավոտյան ժամը 12-ին, Թիֆլիսում՝ Արամյանցի տանը, Ա. Ահարոնյանը հրապարակեց Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի հետևյալ հայտարարությունը. «Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ **Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կա-**

³²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114:

³²² Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), էջ 29:

³²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 238:

ռավարության բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»³²⁴: Մայիսի 31-ին այն հրապարակվեց մամուլում: Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը հայկական կառավարության ձևավորումը համարեց վաղաժամ. պետք է սպասել Բաթումի դիվանագիտական բանակցությունների արդյունքին, այսինքն՝ մինչև հայ-թուրքական հաշտության դաշնագրի ստորագրումը: Որոշվեց նաև յոթ օրից առանձին բանակցություններ սկսել թուրքական հրամանատարության հետ, եթե Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի՝ Բաթում մեկնած հաշտարար պատվիրակությունից մինչ այդ լուր չստացվի: Այդ նպատակի համար նույնիսկ հատուկ պատվիրակություն ստեղծվեց, որի կազմում էին գեներալ Թ. Նազարբեկյանը (նախագահ), Ա. Մանուկյանը և ուրիշներ³²⁵:

Դժվար չէ նկատել, որ այս հայտարարության մեջ բացակայում են «Հայաստան», «հանրապետություն» և «անկախություն» բառերը: Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի այդ հայտարարությունը հայ ժողովրդի մեջ ոչ մի արձագանք չստացավ³²⁶: Դեպքերի ականատես ու մասնակից Ս. Վրացյանը այդ առնչությամբ գրում է. «Նախ՝ հայ ժողովրդի համար ստեղծել էր այնպիսի անելանելի կացութիւն, որ անկախ պետութիւն կազմելը դառն հեզմանք միայն կարող էր թուալ: Երկրի մեծագոյն մասը տաճիկների ոտքի կոխան էր եղել, ժողովուրդը տնտեսապէս և ֆիզիքապէս քայքայւած կամ Վրաստան ու

³²⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 239:

³²⁵ Տե՛ս Հ. Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, էջ 129:

³²⁶ Տե՛ս «Զանգ» լրագիր, Եր., 7 հունիս 1919 թ.:

Հիւսիսային Կովկաս էր ապաստանել և կամ թափուել էր այն լղարիկ հողամասը, որ ապագայ Հայաստանի հանրապետութեան հիմքը պիտի դառնար: Ամեն տեղ լաց էր, թշառութիւն ու խուճապ... Ո՞վ սիրտ ունէր այս պայմաններում անկախութեան մասին մտածելու, ո՞վ պիտի իրականացներ և պաշտպանէր այդ անկախութիւնը:

Երկրորդ պատճառը հոգեբանական էր. այն, ինչ վրացին ու թաթարը շատ հեշտութեամբ իւրացրին անկախութեան գաղափարը, համեմատաբար թեթև սրտով բաժանեցին Ռուսաստանից, ռուսահայ մտաւորականի համար այդ քայլը մի ծանր ողբերգութիւն էր: Հայ մտաւորականի համար, ստեղծւած պայմաններում, անկախութիւնը հաւասար էր տաճիկ բռնապետութեան վերադարձին, հայ ժողովրդի նահատակութեան մի նոր շրջանի: Եւ դրանով է բացատրւում, որ Հայոց Ազգային Խորհրդի այն նիստը, ուր քննութեան առնուեց «անկախութիւնը», աւելի նման էր սգաւոր տան, ուր մնջեցեալ կայ դրած...»³²⁷: Ս. Վրացյանն այնուհետև հավելում է. «**Թեև իսկական առումով** (իմա՝ հայտարարւոյթյունը ը Գ. Պ.) **անկախութեան հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին**»³²⁸: Այնուամենայնիվ, անժխտելի իրողութիւն է, որ մայիսի 30-ի հայտարարւոյթյամբ դրվեց ազգային անկախ պետականութեան շինարարութեան հիմքը:

Սակայն մինչև 1919 թ. առաջին ամիսները նպատակահարմար չգտան Հայաստանը պաշտոնապես անկախ հռչա-

³²⁷ Ս. Վրացեան, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրազիժ), էջ 16:

³²⁸ Ս. Վրացեան, Հայաստանի հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 131:

կել³²⁹: Այդ հանգամանքը տեղիք տվեց կասկածների, թե Հայաստանը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, չի ուզում կտրվել Ռուսաստանից: Սակայն իրողությունն այլ էր: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ձգձգումը պայմանավորված էր երկրում ստեղծված ներքին ու արտաքին քաղաքական բարդ դրությամբ: Բանն այն է, որ հուսալքության ու անելանելիության զգացումով էր համակվել նաև հանրապետության ղեկավարությունը: **Գեո որոշված չէին Հայաստանի սահմանները:**

Անշուշտ, անկախության հռչակագրի հրապարակման ձգձգումը բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության վրա: Առաջ անցնելով նշենք, որ այդ հանգամանքը խոչընդոտ էր նաև մեծ տերությունների և Փարիզի խաղաղության վեհաժողովի առջև իրենց պահանջները ներկայացնելու առումով: Անկախության հռչակագրի պաշտոնական հրապարակման ձգձգումը պայմանավորված էր նաև Հայաստանի իշխանությունների դրսևորած անորոշ, դանդաղկոտ ու անվճռական կեցվածքով: Բացի այդ, օգտվելով այդ իրավիճակից, երկրի մահմեդական տարրերը առիթը բաց չէին թողնում լայն քարոզչություն ծավալելու և Հայաստանի անկախության դեմ շարունակ խռովություններ կազմակերպելու: 1919 թ. առաջին ամիսներին Կարսում, Վեդիում, Շարուրում, Նախիջևանում, Ջանգիբասարում ու Սուրմալուում մահմեդական տարրերը Թուրքիայի և Ադրբեջանի հրահանգներով հրաժարվեցին Հայաստանի Հանրապետության

³²⁹ Մանրամասն տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., 2011, էջ 199-206:

իշխանությունը ճանաչելուց և հայտարարեցին իրենց «անկախության» մասին: Քսանից ավելի մանր ու խոշոր մահմեդական «անկախ իշխանություններ», օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, փորձում էին ներսից քայքայել Հայաստանի Հանրապետությունը:

Որոշակի դժվարություն էր ստեղծվել նաև արևմտահայության ներգաղթի կազմակերպման գործում: Համաձայնության պետությունների հետ արևմտահայության ներգաղթի խնդիրների շուրջ բանակցելիս միշտ հարց էր ծագում, թե ինչ իրավունքով է Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջնորդում արևմտահայերի համար, արդյոք նա վայելո՞ւմ է փախստականների վստահությունը: Նման մոտեցումն անհիմն չէր: Հռչակագրի պաշտոնական հրապարակման ձգձգումը հայության շրջանում առաջ էր բերում տարակարծություններ: Ակնհայտ էր անկախության հարցում արևելահայերի և արևմտահայերի վերաբերմունքի տարբերությունը, որում, անշուշտ, էական դեր էր խաղում **ռուսական գործոնը**: Հայաստանի Հանրապետությունում ապրող արևմտահայերը չէին ցանկանում առնչվել Ռուսաստանի հետ: Եվ քանի որ անկախության հռչակագիրը պաշտոնապես դեռ չէր հրապարակվել, նրանք մտավախություն ունեին, որ արևելահայերը փորձում են ժամանակ շահել, չեն ուզում բաժանվել Ռուսաստանից: Ըստ այդմ՝ նրանք դեմ էին Արևելյան Հայաստանում բնակվելուն, եթե այն անկախ պետություն չէր հռչակվելու: Հայաստանի Հանրապետությունում արևմտահայ գաղթականությունը իրեն խորթացած էր զգում և գրեթե չէր մասնակցում երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանք կարծում էին, որ Հա-

յաստանի Հանրապետության կառավարությունը խտրական վերաբերմունք է դրսևորում արևմտահայ գաղթականության նկատմամբ: Եվ բնավ պատահական չէր, որ արևմտահայերը փաստորեն խուսափում էին գինվորագրվելուց, ինչը լուրջ խոչընդոտ էր ուժեղ, միացյալ բանակ ստեղծելու ճանապարհին:

Անկախության պաշտոնական հռչակման հապաղումը նույնպես արևմտահայերի կողմից որակվեց որպես Ռուսաստանին միանալու միտում: Այս հանգամանքը հայության երկու հատվածների միջև սեպ խրելու, միմյանցից խորթանալու մախաղրյալներ էր ստեղծում, որը նման ճակատագրական պահին միանգամայն անթույլատրելի էր: 1919 թ. ապրիլի 24-ին Ա. Սիարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում տեղեկացնում էր, որ Պողոս Նուբար փաշան և նրա շրջապատը բազմիցս ասել են, որ վախենում են, «... **թե թուրքահայությունը կույ կերթա ռուսահայերին: Քանի որ վերջիններս ավելի ուժեղ են քվով, տնտեսապես և ինստիտուցիոնալ,** «վախի» երկրորդ պատճառն այն է, **թե մենք ամբողջապես ընկերավարականներ ենք, թե դաշնակցությունը, որ իրենց կարծիքով իշխում է, և թե մեր միակուսակցությունը, ու վերջապես քաղաքական վախ, թե ռուսները վերջիվերջո կը զորանան կը զան կովկասյան Հայաստանը տիրելու, հեղհեղապես լավ չէ Թուրքահայաստանը գնա նրան միանալու, այլ լավ է մախ կազմակերպել թուրքահայ պետություն, որին և կզա միանալու իր հոժար կամքով կովկասահայ հանրապետությունը»³³⁰:**

Արևելահայերը, որքան էլ անկախ լինեին, չէին կարող հրա-

³³⁰ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, ք. 76:

Ժարվել Ռուսաստանի հովանավորությունից, նրա տնտեսական, քաղաքական ու ռազմական օգնությունից, որն իրենց ապահովության երաշխիք էին համարում: Իսկ արևմտահայերի անհանդուրժողականությունն այս հարցում ինչ-որ չափով կարելի էր հասկանալ: Նրանք, կորցնելով հայրենիքը և գաղթելով Արևելյան Հայաստան, հանրապետությունը կոչում էին սոսկ «Արարատյան»՝ գտնելով, որ հայրենի բուն օրրանը Արևմտյան Հայաստանի տարածքն է: Արևմտահայ գործիչների մեծ մասը ուներ արևմտամետ կողմնորոշում և հետամուտ էր միացյալ, անկախ Հայաստանի գաղափարի իրականացմանը:

Եվ վերջապես, անկախության հռչակագրի ընդունումը ձգձգելու հետևանքով Համաձայնության պետությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարևանների շրջանում ձևավորվել էր այն կարծիքը, թե «հայերը կողմնակից չեն անկախության»³³¹: Այդ կարծիքը առանձնապես լայն տարածում էր ստացել Ռուսաստանի հարավի (հակաբոլշևիկյան) ոչ խորհրդային պետական կազմավորումների հսկողության տակ գտնվող շրջաններում:

³³¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, ք. 434:

2. 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագիրը, հունիսի 4-ի հաշտության դաշնագիրը. Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները

Տրապիզոնում կայացած դիվանագիտական բանակցություններին (1918 թ. փետրվար 27 (մարտի 12) – ապրիլի 1 (14))³³² հաջորդել էին Բաթումի բանակցությունները (առաջին փուլ՝ մայիսի 11-26)³³³ Օսմանյան Թուրքիայի և Անդրկովկասյան անկախ հանրապետության միջև մինչև մայիսի 26-ին վերջինիս լուծարումը:

Բաթումի բանակցությունների **երկրորդ փուլը** սկսվեց մայիսի 30-ին և շարունակվեց մինչև հունիսի 4-ը՝ արդեն Անդրկովկասյան երեք անկախ հանրապետություններ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ միաժամանակ, սակայն յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին: Սրանով հայերի և Օսմանյան Թուրքիայի հարաբերություններում մի նոր փուլ էր սկսվում: Այդ առնչությամբ Ա. Խաչատրյանը գրում է, որ մայիսի վերջին օրերին «Յանկարծ նոր յեղաշրջում մը կը կատա-

³³² Տե՛ս **Գ. Պետրոսյան**, 1918 թ. Տրապիզոնի հաշտության խորհրդածրոյովը. Հայկական հարցի արծարծումները, «Հայագիտության հարցեր», 2016, թիվ 3, էջ 46-67: Տե՛ս նաև **նույնի** Թուրքիային տարածքային զիջումների հարցը Տրապիզոնի հաշտության խորհրդածրոյովում (1918 թ. մարտ-ապրիլ), «Հայագիտության հարցեր», 2017, թիվ 1, էջ 29-41:

³³³ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Դիվանագիտական բանակցությունները Բաթումում. Անդրկովկասյան պետության կազմալուծումը. երեք անկախ հանրապետությունների ստեղծումը (1918 թ. մայիս), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2017, № 3 (24), էջ 3-26:

րուի անոնց (թուրքերի – Գ.Պ.) տրամադրութեան մէջ»³³⁴: Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունները նոր բովանդակություն էին ստացել. օսմանյան կառավարությունը դրսևորում էր շահագրգռություն Արևմտյան Հայաստանի սահմաններից դուրս՝ Հարավային Կովկասում, հայկական պետություն ստեղծելու հարցում, չնայած նման ակնարկներ արվել էին դեռևս Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Ռաուֆ բեյի և այլոց կողմից³³⁵: **Սակայն հարց է ծագում՝ ինչու՞, և որո՞նք էին նրանց այդ բողարկված քաղաքականության հիմնական դրդապատճառները:** Այժմ փորձենք պատասխանել այդ հարցերին:

Օսմանյան Թուրքիան, կանխազգալով Քառյակ դաշինքի երկրների մոտալուտ պարտությունը Առաջին աշխարհամարտում, ձգտում էր Բաթումի դիվանագիտական բանակցությունների երկրորդ փուլում ստորագրվելիք հաշտության դաշնագրով օր առաջ ամրագրելու իր նկրտումները Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս՝ մեծ մասամբ հայկական ու հայաբնակ գավառների նկատմամբ և միաժամանակ իրավունք վերապահելու նաև զինաթափելու ու անհապաղ դուրս բերելու խորհրդային Բաքվից ու նրա արվարձաններից հայկական զինյալ ուժերը^{*}, որոնք բոլշևիկների հետ ռազմական միասնական

³³⁴ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 100:

³³⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 108:

^{*} Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստո-հունգարական զերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաների ու զինվորների մի մասը, հայրենիք տեղափոխվելու ուղիներ որոնելով, արգելափակվեց Բաքվում և նրա արվարձաններում կովկասյան թաթարների կողմից երկաթուղային ու-

ուժերով խոչընդոտում էին թուրքական բանակի մուտքը Բաքու^{**} (1918 թ. ապրիլի 25-ին Բաքվում ստեղծվել էր խորհրդային Ժողկոմխորհուրդ՝ բոլշևիկ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ): Ինքնըստինքյան հասկանալի էր, որ Օսմանյան Թուրքիան չափազանց երկյուղում էր այն բանից, որ իր դաշնակից կայսերական Գերմանիան նույնպես համառոտեն ձգտում էր տեր դառնալու Բաքվի նավթին, մանավանդ որ Առաջին աշխարհամարտի պատճառով նրա ռազմական արդյունաբերությունը առանձնապես զգուժ էր վառելանյութի և այլ բնական պաշարների սուր պակաս: Բայց և այնպես օսմանյան բանակը համոզված չէր պատերազմի շուտափույթ ավարտվելու մեջ: **«Անտարակոյս,- գրում է Ա. Խաչատրյանը,- օսմանեան գերագանց ուժի առջև վերջիվերջոյ տեղի պիտտար հայ բանակը, և անոնք կրնային գրաւել Երևան, բայց ասով պատերազմը պիտի չվերջանար և պիտի սկսուէր անջատամարտ, որ մեծ դժուարութիւններ պիտի յարուցանէր և շատ դանդաղեցնէր իրենց արշաւանքը դէպի Թաւրիզ ու Բագու, այն ինչ իրենց մեծ ծրագրի յաջողութեան համար անհրաժեշտ էր որքան կարելի է շուտով Կասպիս ծովն հասնել...»**³³⁶: Այդ պահին թուրքական հրամանատարությունը չէր կարող հաշվի չառնել առկա լուրջ խոչընդոտը՝ հայկական ուժեղ զորամասե-

ղիներով տեղաշարժը խոչընդոտելու պատճառով: Կովկասյան թաթարները դրանով փորձում էին խափանել նրանց միավորումը հայկական զինյալ ուժերին, տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 404:

^{**} Բաքվի հայկական զինուժը, հակառակորդին պարտադրելով իր վրա կենտրոնացնել թուրքական բանակի հիմնական խմբավորումները, կանխում էր Երևանին սպառնացող վտանգը: Մանրամասն տե՛ս **Գ. Ստեփանյան**, Համազասպ Սրվանձտյան, Երևան, 2016, էջ 494-655:

³³⁶ **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 102:

րը և մասնավորապես Դիլիջանի ձորերում գեներալ Անդրանիկ Օզանյանի ներկայությունը՝ իր մարտունակ ջոկատներով, որոնք թույլ չէին տալիս թուրքական զորքերի՝ Ղազախով անցումը Բաքու³³⁷:

Դժվար չէ նկատել, որ եթե ստեղծված պայմաններում թուրքական զորքերը Հայաստանի տարածքով շարժվեին Բաքու, քիկումքում, ի դեմս Հայաստանի, կունենային մի երկիր՝ թշնամական բանակներով: Այդտեղից էլ նրանց շտապողականությունը՝ հաշտություն կնքելու և Բաքումի դաշնագրով ապահովելու իրենց քիկումքը³³⁸: Ահա թե ինչու ստորագրվելիք հաշտության դաշնագրով Օսմանյան Թուրքիան այդ վտանգից ապահովագրվելու համար, ուզեր թե չուզեր, այդ մի փոքրիկ հատվածի վրա պետք է հանդուրժեր անկախ Հայաստանի գոյությունը, որը մի կողմից կապահովեր իրեն տեղի ուժերի հարձակումներից, իսկ մյուս կողմից հնարավորություն կտար դաշնակից Գերմանիայից արագ ու անարգել հասնելու նավթային Բաքու: Այնտեղ խորհրդային իշխանությունը վերացնելուց հետո նրանք անցնելու էին Հյուսիսային Կովկաս, այնուհետև՝ Միջին Ասիա և իրականացնելու էին իրենց երազած պանթուրական ծրագիրը:

Ինչպես տեսնում ենք, ամենևին էլ պատահական չէր օսմանյան կառավարության շտապողականությունը: Առաջ անցնելով նշենք, որ նրանց հեռահար ծրագրերն ամրագրվեցին հունիսի 4-ի Բաքումի հաշտության հիմնական դաշնագրի

³³⁷ Տե՛ս Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Երևան, 1996, գիրք Բ., էջ 159:

³³⁸ Տե՛ս Le Statut International de l'Arménie, Dictionnaire Diplomatique, Académie Diplomatique Internationale, 1934, h. 1, էջ 197:

5-րդ, 11-րդ ու դրան կից հավելվածի 1-ին, 2-րդ և այլ հոդվածներում, որոնց կանոնադառնանք ստորև:

Հինգշաբթի՝ մայիսի 29-ի ուշ երեկոյան, Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նոր պատվիրակությունը (նախագահ՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Հովհ. Քաջազնունի և Մ. Պապաջանյան) Թիֆլիսից գործողվեց Բաթում՝ վերսկսելու առանձին դիվանագիտական բանակցություններ Օսմանյան Թուրքիայի հետ հաշտության դաշնագիր կնքելու համար³³⁹: Հաջորդ օրը՝ մայիսի 30-ին՝ ժամը 14-ին, նրանք Բաթումում էին: Նույն օրը՝ երեկոյան ժամը 5-ին՝ մինչև թուրքական վերջնագրի ստորագրումը, տեղի ունեցավ առաջին հանդիպումը հայերի և թուրք պատվիրակության նախագահ Հալիլ Բեյի ու ռազմական ներկայացուցիչ, հիմնական բանակցող Վեհիբ փաշայի միջև³⁴⁰: Երկու պատվիրակությունների բանակցային լեզուն ֆրանսերենն էր: Հարկ է նշել նաև, որ Բաթումի բանակցությունները դարձյալ ընթանում էին թուրքական բանակի զավթողական առաջխաղացմանը զուգահեռ:

Հայկական պատվիրակությունը պատրաստվել էր թուրքական կողմին ներկայացնելու վերջնագրի պատասխանի երեք տարբերակ՝ ա) վերջնագրի վերապահումով ընդունում՝ մերժելով որոշ կետեր, բ) անվերապահ ընդունում և գ) մեղմված տարբերակ³⁴¹:

Շուրջ մեկ ժամ տևած բանակցությունների ժամանակ հայ պատվիրակները փորձեցին համոզել թուրքական կողմին վերադառնալ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահ-

³³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 238:

³⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114:

³⁴¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 55, գ. 8, ք. 114:

մաններին և զիջումներ անել հայկական որոշ տարածքների պահպանման և այլ հարցերում³⁴²: Սակայն նրանք շարունակեցին պնդել հայկական շահերը խստորեն ոտնահարող նախկին դաշնագրի նախագծի պայմանները, որի բովանդակությանն Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամները ծանոթ էին դեռ Բաթումի դիվանագիտական բանակցությունների առաջին օրերից (մայիսի 11-ից), որը մայիսի 26-ին ներկայացրել էին վերջագրի լեզվով՝ տարածքային նոր պահանջներով³⁴³: Ըստ այդ վերջնագրի՝ Օսմանյան Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, որն արդեն վերագրավված էր նրանց զորքերի կողմից, այլև արևելահայ տարածքների զգալի մասը՝ ողջ Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի գավառը և բոլոր երկաթուղիներն ու խճուղիները մինչև Երևան և Էջմիածնի գավառի մեծ մասը՝ Էջմիածին քաղաքով հանդերձ: Օսմանյան կառավարությունը պահանջում էր նաև Շիրակի և Արարատյան դաշտավայրերը գրեթե ամբողջությամբ՝ հայությանը գրկելով ամենակենսական տարածքներից: Լեոյի գնահատմամբ. «Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը, մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանի լճի չորս կողմը հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզման: Պետական սահմանն անցնում էր Յերևանի տակով. հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ յերկարությամբ յերկաթուղի: **Ենվեր փաշան գտել էր, վոր միայն այսպիսի չափ**

³⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114:

³⁴³ Մանրամասն տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայոց անկախ պետականության կերտման հարցի շուրջ (1918 թ. մայիս), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018, N 1 (25), էջ 5-6:

ունեցող Հայաստանը կարող է յերկյուղ չներշնչել Թյուրքիային: Իսկությունն այն էր վոր Թյուրքաց Հայաստանը վոչնչացնելուց հետո յերիտասարդ թյուրքերը վոչնչացնում էյին նաև ռուսաց Հայաստանը»³⁴⁴:

Ինչպես վերը նշվեց, թուրքական պատվիրակությունը միաժամանակ պահանջում էր հայերից ակտիվորեն միջամտել, որ հայկական գործառնները անհապաղ դուրս բերվեն խորհրդային Բաքվից ու նրա արվարձաններից: Հայ պատվիրակներն առարկեցին՝ նկատել տալով, որ այդ պահանջը կդիտվի միջամտություն խորհրդային Բաքվի ներքին գործերին³⁴⁵: Սակայն թուրքական կողմը աներկբա հայտարարեց, որ **հակառակ պարագայում հարցը կլուծվի ռազմական ուժով. «Եթե դուք չեք կարող, ուրեմն գորք է տարվելու: Կվնասի, կտուժեն»**³⁴⁶: Ինչպես տեսնում ենք, դարձյալ գործի դրվեց թուրքերի ավանդական գործելակերպը՝ ռազմական սպառնալիքով ճնշում գործադրել Բաթումի բանակցային գործընթացների վրա: Թուրքական ռազմական նոր սպառնալիքներից խուսափելու համար Մ. Պապաջանյանը նրանց դիմեց. «Թույլ տվեք, որ, նախ մեր բարոյական միջոցները գործ դնենք հայ զինվորներին զենքով հայրենիք տեղափոխելու, ճանապարհները բանալով: Հետո դուք արեք այն, ինչ որ կորոշեք»³⁴⁷: Եվ այնուամենայնիվ, թուրքական կողմը հայ պատվիրակներին

³⁴⁴ Լեո, նշվ. աշխ., էջ. 404:

³⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 55, տե՛ս նաև Ա-Ղ-ո, Հայոթյան երկուները, Երևան, 2014, էջ 410, տե՛ս նաև Հ. Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 131:

³⁴⁶ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 44:

³⁴⁷ Նույն տեղում:

հասկացնել տվեց նաև, որ հետագա բանակցությունները շարունակելու և դաշնագրի նախագծում հնարավոր որոշ տարածքային ու սահմանային զիջումներ կատարելու համար ավելի լավ է ընդունել վերջնագիրը, քանի որ վերջնաժամկետը լրանում է մեկ ժամ հետո³⁴⁸։ Իհարկե, Հալիլ բեյը «Ազնիվ խոսք տվեց սրբազրելու (տարածքային և սահմանային պահանջները – Գ.Պ.), որքան այդ հնարավոր է։ Մենք միաձայն որոշեցինք այդ ձևով ընդունել»³⁴⁹։ Նույն օրը՝ **մայիսի 30-ի երեկոյան ժամը 7-ին, պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանը ստորագրեց քուրբական վերջնագիրը**, որում ասվում էր. «... Հայաստանի պատվիրակությունը, օժտված լիազորություններով Հայոց ազգային խորհրդի, որն իրեն գերագույն իշխանության օրգան է հայտարարել, սույնով պատիվ ունի հայտնելու Չեզ... որ ընդունում է հաշտության և բարեկամության Չեր առաջարկած նախագիծը և, նկատի ունենալով Չեր... բանավոր համաձայնությունը, նա պտրաստ է անհապաղ վերջնական լիակատար հաշտություն կնքելու համար։ Պատվիրակության նախագահ»³⁵⁰։ Ի դեպ, այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը տեղեկացնում է, որ մայիսի 31-ի հայ-քուրբական դիվանագիտական բանակցություններից պարզվեց, որ այդ համաձայնությունը (վերջնագրի վերջնաժամկետի պահին Վրաստանի լռության պարագայում) Կոստանդնուպոլսում շատ լավ տպավորություն է թողել³⁵¹։

³⁴⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 55:

³⁴⁹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 55:

³⁵⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, ք. 2:

³⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 55:

Ավերորդ է ասել, որ թուրքական վերջնագիրը վերաբերում էր Անդրկովկասի բոլոր անկախ հանրապետություններին: Ժամանակին վերջնագիրը ստորագրեց նաև ադրբեջանական պատվիրակությունը: Մինչդեռ վրաց պատվիրակությունը, ունենալով կայսերական Գերմանիայի հովանավորությունը, սկզբում լռում էր և չէր ուզում ստորագրել: Նրանց վերջնաժամկետը նույնպես լրանում էր մայիսի 30-ին՝ երեկոյան ժամը 8-ին: «Այս պարագան,- գրում է Ալ. Խատիսյանը,- շատ գեշ տպաւորութիւն ձգեց թուրքերի վրայ»³⁵²: Եվ այնուամենայնիվ, վրաց պատվիրակությունն ուշացումով՝ հունիսի 1-ի գիշերվա ժամը 1-ին, Հալիլ Բեյին գրավոր տեղեկացրել էր, որ իրենք համաձայն են երկաթուղային համաձայնագրին, բայց տարածքային հարցերում՝ ոչ³⁵³: Այսինքն՝ վրացիները սկզբունքորեն ընդունում էին թուրքական վերջնագիրը, սակայն միայն Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններում: Դրանից հետո հայտնի էր դարձել, որ Վեհիբ փաշան, ի պատասխան այդ գրության, գիշերվա ժամը 2-ին հրաման էր արձակել երեք կողմից՝ Բաթումի, Նոթանեբի և Վորոնցովկայի ուղղություններով, արշավելու Թիֆլիսի վրա. վրաց պատվիրակությունը հարկադրված համաձայնել էր ստորագրել վերջնագիրը: Երկու ժամ հետո Վեհիբ փաշան հրաման էր արձակել չեղարկելու հարձակումը³⁵⁴: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը իր օրագրության մեջ արձանագրել է. «Վրացիները բացահայտ իրենց գեներն էին ճոճում: Վեհիբ փաշան և Խալիլը ասում էին՝ միթե վրացիներն իսկապես կարծում են, որ Վրաս-

³⁵² «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հոկտեմբեր, էջ 97:

³⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114, ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 55:

³⁵⁴ Տե՛ս նույն տեղը:

տանի պատճառով գերմանացիները կկռվեն Թուրքիայի դեմ: Դրա համար պետք է խելագար լինել: Մենք նրանց հետ միլիոնավոր անքակտելի կապեր ունենք»³⁵⁵: Փաստորեն, օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության պարտադրանքով վրացիները թուրքերին էին զիջելու Ախալքալաքի ու Ախալցխայի բացառապես հայաբնակ գավառները՝ բացի Ախուրիի ու Ջեքարի շրջաններից³⁵⁶:

Այսպիսով, թուրքական վերջնագրի ստորագրումն այլընտրանք չուներ: Դա հետևանք էր Հարավային Կովկասում ստեղծված աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական զարգացումների: Հետևապես ստեղծված իրավիճակում արևելահայության փրկության միակ ելքը թուրքական վերջնագրի ընդունումն էր և հաշտություն կնքելը, որքան էլ որ այն ծանր լիներ:

Հարկ է նշել, որ հարևան վրացիներն ու ադրբեջանցիները, օգտվելով Հայաստանի ծանր վիճակից, փորձում էին վերջինիս հաշվին Բաթումի դիվանագիտական բանակցային գործընթացներում հանդես գալ տարածքային և սահմանային պահանջներով:

Վերջնագրի ստորագրումից հետո՝ հաջորդ օրը՝ մայիսի 31-ի առավոտյան ժամը 10-ին, սկսվեցին հայ-թուրքական դիվանագիտական բանակցությունները: Հայկական պատվիրակությունը ներկայացրեց իր տարածքային և սահմանային պահանջները՝ հիմնավորումներով հանդերձ, և խնդրեց հեռագրով հաղորդել պաշտոնական Կոստանդնուպոլսին բավարարել

³⁵⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114:

³⁵⁶ Մանրամասն տե՛ս **Ա. Մելքոնյան**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 285-289:

դրանք: Նույն օրը՝ երեկոյան ժամը 5-ին, Հալիլ բեյը ներկայացրեց իր կառավարության փոփոխած նախագիծը³⁵⁷: Երեկոյան ժամը 6-ից մինչև հունիսի 1-ի գիշերվա ժամը 2-ը տևած բանակցությունների ժամանակ քննարկվեց դաշնագրի **նախաօրինակը**՝ տեքստում կատարելով աննշան փոփոխություններ և տարածքային որոշ զիջումներ հօգուտ հայերի: Հարկ է նշել, որ Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը ազդեցին Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքի վրա, և օսմանյան կառավարությունը հարկադրված էր տարածքային և սահմանային որոշ «զիջումներ» կատարել:

Ի սկզբանե հայտնի էր, որ այդ բանակցությունների ընթացքում օսմանյան պատվիրակությունը դիտարկելու է միայն Հայաստան-Թուրքիա տարածքային ու սահմանային հարցեր և խուսանավելու է հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանների բաժանման խնդրին անդրադառնալուց՝ այն թողնելով որոշելու երեք անկախ հանրապետությունների՝ Թիֆլիսում կայանալիք բանակցությունների ժամանակ³⁵⁸: Հայտնի էր նաև, որ վրացիները պահանջում էին հայկական ընդարձակ տարածքներ մինչև Ղարաքիլիսա, իսկ ադրբեջանցիները՝ մինչև Երևան:

Հունիսի 1-ին՝ ցերեկվա ժամը երեքին, հայկական պատվիրակությունը նախաստորագրեց դաշնագրի նախաօրինակը՝ հետագա դիվանագիտական բանակցություններում կողմերի միջև վերջնական համաձայնության գալու հեռանկարով: Նո-

³⁵⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114:

³⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 84:

քաներից Ալ. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը անմիջապես հեռախոսազրույց ունեցան Թիֆլիսում Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանի ու խորհրդի անդամ Խ. Կարճիկյանի հետ և նրանց իրազեկեցին, որ **դաշնագրի նախաօրինակը ստորագրել են անկախ Հայաստանի Հանրապետության անունից**. «Հալիլ բեյը, ինչպես հենց ինքը բացատրեց, ստորագրելով (նախաստորագրելով – Գ. Պ.) դաշնագիրը՝ դրանով իսկ **իր կառավարության անունից ճանաչեց մեր հանրապետությունն ու անկախությունը**»³⁵⁹: Իսկ Վեհիբ փաշան իր գրպանից հանեց «կտոր մը՝ կարմիր խաչ մը, գրում է Ալ. Խատիսյանը, - սպիտակ ֆոնի վրայ՝ եւ ըսաւ. «Ահա հայկական դրօշակի իմ նախագիծը: Դուք քրիստոնեաներ եք եւ կը պարծենաք այս խորհրդանշով. ես կը կարծեմ, թէ խաչը պետք է ըլլա ձեր խորհրդանշը»»³⁶⁰:

Հայ պատվիրակության անդամները խնդրեցին Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդին. «**Մինչև իրենց Թիֆլիս ժամանելը՝ պատրաստեն Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, որի անունից իրենք նախաստորագրել են դաշնագրի նախաօրինակը**, ինչը միանգամայն անհրաժեշտ է. այլապես ամեն բան անիմաստ կլիներ: Ուստի մենք բոլորս կարծում ենք, որ այդ հռչակումը պիտի կատարվի: Չի կարելի խոսել ինչ-որ «հայկական ծայրագավառների» մասին՝ ասես մենք ինչ-որ անձն հողակտոր ենք՝ անտեր ու անանուն: Հարկավոր է պատրաստել հռչակագիրը, համեստորեն հայտարարել այն, ընտրել կառավարություն, շտապ ուղարկել

³⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 86:

³⁶⁰ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 71:

այն Երևան, սկսել բոլոր գործողությունները, որոնք բխում են դաշնագրից, օգտվելով դրա (հյուպատոսի, ինչը չափազանց կարևոր է զավթված տարածքներում) իրավունքներից, ուղարկել պատվիրակություն Կոստանդնուպոլիս և սկսել կազմակերպել երկիրը»³⁶¹: Ալ. Խատիսյանը հեռախոսազրույցը եզրափակեց հետևյալ համոզումով. «Հզոր է հայոց հողի ոգին: Մենք կբերենք վատ հաշտության դաշնագիր, սակայն կբերենք նաև անկախ Հայաստան՝ տուն, բույն, որտեղ կբրձվի ժողովրդի միտքը: Այդ ամենը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր Պետությանը»:

Հաջորդ օրը՝ հունիսի 2-ին, Ալ. Խատիսյանը մաս Ա. Ահարոնյանին նամակով հանգամանորեն ներկայացրեց հայ-թուրքական բանակցությունների հետևանքով թուրքերի կողմից տարածքային և սահմանային որոշ զիջումների մասին: Նա իրազեկում է, որ Վեհիբ փաշան հայ պատվիրակությանը ուղարկեց տարածքային զիջումների **երկու տարբերակ. մեկն ուղղակի զիջում էր, մյուսը՝ փոխանակում**: Հայ պատվիրակությունը վճռականորեն արտահայտվեց **առաջին տարբերակի** օգտին՝ «զիջել» Ալազյազի լանջերն ու Ապարանը՝ 900 քառ. կմ, և Երևանի նահանգի մի մասը՝ 400 քառ. կմ: Ըստ **երկրորդ տարբերակի**՝ թուրքերը վերցնում էին Բորչալուի գավառի մեկ երկրորդը՝ Ախալքալաքի նահանգի և Կարազյոզների միջև՝ Թիֆլիսից 15 կմ-ի վրա գտնվող լեռնանցքը, և տալիս Հայաստանին շուրջ 2,5 հազար քառ. կմ³⁶²: Այս տարբերակը ամենևին

³⁶¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 63:

³⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 55-56, տե՛ս Հայոց պատմություն, Երևան, 2010, Հ. 4, էջ 23, **Հ. Ավետիսյան**, Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թվականի մայիս, էջ 132-133:

ընդունելի չէր հայկական պատվիրակության համար, որով-
հետև Հայաստանը կտրվում էր հարևան Վրաստանից: **Վերջ-
նական արդյունքում Հայաստանին լրացուցիչ տրվում էր ըն-
դամենը 1300 քառ. կմ տարածք՝ Համամլու-Աշտարակ խճու-
ղին և Երևանի նահանգի հարավային մասից մի փոքրիկ հո-
դակտոր:**

Բացի վերը նշված տարածքային փոփոխություններից՝
հայկական պատվիրակության ղեկավարական ջանքերի
շնորհիվ հաջողվեց փոքրիշատե մեղմել նվաստացնող դաշնա-
գիրը՝ նախաօրինակից հանել տալով մայիսի 11-ի դաշնագրի
նախագծից՝ 1. իրավունքը՝ միջամտելու Հայաստանի ներքին
գործերին, 2. բռնազավթած նահանգների հայ բնակչությունը
ներկա պատերազմի ընթացքում ազատվում է զինապարտու-
թյունից, 3. Բաքուն բոլշևիկներից ազատագրելու հայերի պար-
տավորությունը, 4. իրավունքը՝ սեփական ուժերով վերականգ-
նելու Հայաստանի երկաթգծերը և շարժակազմը: Թուրքերի
համաձայնությամբ մի շարք ընթացիկ հարցեր լուծվեցին հո-
գուտ Հայաստանի՝ դրանք, սակայն, չներառելով նախաստո-
րագրված դաշնագրում, քանզի դա ժամանակավոր էր: Դրանք
էին՝ 1. թույլատրել հայ զինվորներին ու փախստականներին
Ջուլֆայի տարածքով վերադառնալ Պարսկաստանից, 2. պար-
տավորվել չխոչընդոտելու փախստականների վերադարձը
Բաքում և Կարս, 3. փախստականներին թույլատրել անհա-
պաղ վերադառնալ Սուրմալու, Ալեքսանդրապոլ³⁶³ և այլն:
Առաջ անցնելով նշենք, որ երկու օր անց թուրքական պատվի-
րակությունը ղեկավարողներն հրաժարվեց իր որոշ համաձայ-

³⁶³ Տե՛ս նույն տեղը:

նություններից, ավելին՝ որոշակի շարժառիթներից ելնելով, ինչպես վերը նշվեց, դրանք ամրագրեց հունիսի 4-ի Բաքումի հաշտության դաշնագրի և նրան կից հավելվածի հոդվածներում (Բաքում բոլշևիկներից ազատագրելու հայերի պարտավորությունը, փախստականներին Բաքում և Կարս շուտավույթ վերադառնալ թույլատրելու հանձնառությունը և այլն):

Նույն օրը՝ հունիսի 2-ին, Ալ. Խատիսյանը հունիսի 1-ի Բաքումի հայ-թուրքական նախաստորագրված դաշնագրի մասին Նոթաներից հեռախոսազրույց ունեցավ նախ Կարսում գտնվող գեներալ Գ. Կորգանյանի հետ և խնդրեց նրան այդ ամենն ամբողջությամբ հաղորդել Արամին (Երևանի հայոց ազգային խորհրդի նախագահ) և Ալեքսանդրապոլ՝ հայկական զորամասի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանին³⁶⁴: Նա միաժամանակ Կարսի ճանապարհով բանազնացի միջոցով գեներալ Թ. Նազարբեկյանին ուղարկեց նախաստորագրված դաշնագրի գլխավոր կետերը՝ խնդրելով անել մի շարք կարգադրություններ ռազմական գործողությունները դադարեցնելու, հայկական զորքերը տարհանելու, ռազմագերիներին փոխանակելու վերաբերյալ³⁶⁵ և այլն:

Նախաստորագրված դաշնագրի գլխավոր կետերը հետևյալներն էին.

1. Սահմանը սկսվում է Ախալքալաքի նահանգի արևելյան անկյունից ու ձգվում է հարավ՝ Ադ-Բուլաղ կայարանի մոտով ուղիղ գծով և Ալազյազի գագաթով մինչև Էջմիածին, որը կմնա Հայաստանին, ապա՝ երկաթգծին

³⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 56:

³⁶⁵ Տե՛ս նույն տեղը:

գուգահեռ մինչև Ադ-Բուլադ, այնուհետև՝ դեպի Արփա
ու Շարուր:

2. Մեկ շաբաթվա ընթացքում հայոց և օսմանյան զորքերը
պետք է ետ քաշվեն իրենց տարածքները:
3. Պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիան իրա-
վունք ունի տեղափոխելու զորքերը Հայաստանի տա-
րածքով:
4. Ջուլֆայից փախստականներն ու զինվորները ազատ
մուտք են ստանում Հայաստան:
5. Պատերազմի դեպքում Հայաստանը կարող է պահել
մեկ դիվիզիա՝ տեղաբաշխելով Թուրքիայի գիտու-
թյամբ:
6. Ռազմագերիների փոխանակում:
7. Պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիային ան-
ցած տարածքներում հայերը կազատվեն զինապար-
տությունից:

Հայկական պատվիրակությունը, հիմք ընդունելով Հայոց
ազգային (կենտրոնական) խորհրդի ընձեռած լիազորություն-
ները, խնդրում է.

1. Դադարեցնել ռազմական գործողությունները Թուրքի-
այի դեմ:
2. Կապ հաստատել թուրքական հրամանատարության
հետ՝ երկու կողմերի զորքերն իրենց տարածքները վե-
րադարձնելու հարցում համաձայնեցնելու համար:
3. Թուրքական զորքերին թույլ տալ Դիլիջանով անցնել
Ղազախ:

4. Ռազմական գործողությունները դադարեցնելու հարցում համագործակցել Շևքի փաշայի հետ³⁶⁶:

Գեներալ Թ. Նազարբեկյանին ուղղված մամակը եզրափակվում է հետևյալ գրառումով. «Ձերմորեն շնորհավորում ենք Ղարաքիլիսայի ճակատամարտի առթիվ, որը գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի կողմից գովեստի և հիացական խոսքերի է արժանացել հայ զինվորների փայլուն գործողությունների համար»³⁶⁷:

Ի դեպ, հունիսի 1-ի հեռախոսագրույցի ժամանակ Ա. Ահարոնյանը և Խ. Կարճիկյանը Բաթումի հայ պատվիրակներին հայտնեցին մաս հետևյալը. **«Բոլորդ էլ նկատի ունեցեք, որ ամբողջովին կտրված ենք Երևանից և Դիլիջանից... ճակատամարտի (Ղարաքիլիսայի – Գ. Պ.) մասին ոչինչ չգիտենք»**³⁶⁸:

Իրողություն է, որ արտաքին աշխարհի հետ երկաթուղային և հեռագրային կապի լիովին խզված լինելու պատճառով թե՛ Բաթումի հայկական պատվիրակությունը և թե՛ Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը գրեթե տեղեկություն չէին ստանում հայկական զորքերի գործողությունների մասին, և նրանց հիմնականում առաջինը իրազեկում էին թուրքերը:

Հարկ է նշել, որ հայկական պատվիրակությունը դժգոհություն հայտնեց, որ Բաթումի բանակցային գործընթացներում թուրքական կողմը չափազանց անգլիջում է: Ի պատասխան հայ պատվիրակների՝ Վեհիբ փաշան, ցույց տալով քարտեզը, ասել է. «Դուք կը տեսնեք, որ ճակատագիրը կը քաշէ Թուր-

³⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, ք. 51:

³⁶⁷ Նույն տեղում:

³⁶⁸ Նույն տեղում:

քիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք մաս Ափրիկէէն, **բայց մենք պէտք է տարածինք դէպի արեւելք. հոն է մեր արինը, մեր կրօնքը, մեր լեզուն:** Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրբէջան են: **Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն:** Եւ դուք՝ հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Ջանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզ իջնելու Կուրի հովիտը եւ երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշվիք եւ մեզ ճամբայ տաք: Ահա թէ ու՛ր է մեր հիմնական վէճը: Մեզ պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու եւ պաշտպանելու: **Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Քորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ. միւսը՝ կերթայ Շարուր-Նախիջեւան-Ջանգեզուրով Քուրի հովիտը:** Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն Նոր-Պայազէտի եւ Էջմիածնի շուրջը»³⁶⁹:

Հայ պատմիրակները Վեհիք փաշային նկատել տվեցին, որ նա հաշվի չի առնում երեք հանգամանք. «ա) որ հայերուն թողած հողամասը չափազանց փոքր է հայ ժողովրդին գոհացում տալու համար, նւագագոյն չափով իսկ. բ) որ հայկական հարցը միջազգային խնդիր մըն է եւ չի կարող այդ ձեւով վերնալ մէջտեղէն. եւ գ) որ թուրքերուն այժմ գծած Հայաստանի

³⁶⁹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 70:

սահմանները աղբիւր պիտի դառնան յալիտենական թշնամութեան հայերու եւ թուրքերու միջեւ»³⁷⁰:

Վեհիբ փաշան հակադարձում է. «Հայկական հարցը միջազգային է, կը՛սեք, եւ պիտի նկատի առնուի հաշտութեան ընդհանուր խորհրդածողովին մէջ: **Այդ բանը շատ լաւ գիտենք. բայց հէնց** ատոր **համար ալ մենք առաջինը ըլլալով յանձն կ'առնենք լուծելու գայն եւ կ'ընդունինք Հայաստանի անկախ գոյութիւնը:** Գալով թշնամութեան զգացումներուն հողամասի փոքրութեան պատճառով, պէտք է ըսեն, որ բոլոր պետութիւններն ալ քիչով սկսեր են եւ աստիճանաբար են աճեր: **Կարելորն այն է, որ մենք բարեկամներ դառնանք եւ փոխադարձաբար պաշտպանենք զիրար:** Մեզ պէտք է հայերու նպաստաւոր պրոպագանտը արտասահմանի մէջ»³⁷¹:

Ինչպէս տեսնում ենք, Վեհիբ փաշան առանց վարանելու բացահայտում է Թուրքիայի նկրտումները. «Հայերը կանգնած են պանթուրքիզմի ճանապարհին և խանգարում են այդ ծրագրի իրագործմանը»: Դժվար չէ նկատել, որ այդ դաշնագրով Օսմանյան Թուրքիան լայն հնարավորություն էր ստանում հայկական տարածքներով կարճ ճանապարհով արագ թափանցելու Բաքու, Կովկաս, Միջին Ասիա և ավելի հեռուներ: Ինչպէս վերը նշվեց, այդ ծրագրի իրագործման համար Օսմանյան Թուրքիայի ռազմավարական խնդիրն էր նաև իր հարևանությամբ «հանդուրժել» տնտեսապես թույլ, կենսունակ պետություն դառնալու հնարավորությունից ու բարենպաստ պայմաններից զուրկ, ծովից կտրված, չորս կողմից շրջափակված և

³⁷⁰ Նույն տեղում:

³⁷¹ Նույն տեղում:

վտանգ չներկայացնող փոքրիկ տարածքով Հայաստանի գոյությունը: **Դրանով մի կողմից ժամանակ կշահեր և կապահովեր իր թիկունքը հայկական գինուծի հարձակումներից, իսկ մյուս կողմից կարճ ճանապարհ կբացեր դեպի Բաբու և այլն:**

Վեհիբ փաշան, հայ պատվիրակների հարցադրումներին ի պատասխան, ինչպես վերը նշվեց, փաստորեն խոստովանեց նաև մեկ այլ կարևոր շարժառիթ, որը հարկադրեց իր կառավարությանը ճանաչել Հայաստանի անկախ գոյությունը. «Հայկական հարցը միջազգային է, կըսեք, եւ պիտի նկատի առնուի հաշտութեան ընդհանուր կոնֆերանսի մեջ: **Այդ բանը շատ լաւ գիտենք. բայց հէնց ատոր համար ալ մենք առաջինը ըլլալով յանձն կ'առնենք լուծելու գայն եւ կ'ընդունինք Հայաստանի անկախ գոյութիւնը:**» «Առհասարակ պէտք է ըսեմ,- գրում է Ալ. Խատիսյանը,- որ բանակցութեանց այս շրջանը ըստ երեւոյթին կը շոյէր թուրքերուն ինքնասիրութիւնը. կիրագործէին իրենց ծրագիրները եւ կլուծէր հայկական հարցը այնպէս, որ դիւրանար ապագայ միջազգային հաշտութեան խորհրդաժողովի մէջ ունենալիք իրենց գործը: Պէտք է նկատի ունենալ, որ թուրքերը շատ կը վախճային հայկական հարցէն ապագայ խորհրդաժողովին մէջ: Այդ մասին ես լսած եմ Ռէուֆ պէյէն, Վեհիպ փաշայէն, Խալիլ պէյէն, Էնվեր փաշայէն եւ շատ մը ուրիշ թուրք գործիչներէ: Այդ էր պատճառը, որ մինչեւ միջազգային խորհրդաժողովը թուրքերը կ'ուզէին լուծել հայկական հարցը»³⁷²:

Որքան մոտենում էր Օսմանյան Թուրքիայի պարտությունը Առաջին աշխարհամարտում, նա գիտակցում էր այդ ամենի հնարավոր հետևանքները և հարկադրված էր հաշտվելու ան-

³⁷² Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 72:

կախ Հայաստանի գոյության փաստի հետ այն պայմանով, որ այն լինելու Հարավային Կովկասի սահմաններում և ոչ թե Արևմտյան Հայաստանում: Նրանց նպատակն էր Արևմտյան և Արևելյան Հայաստանները մեկընդմիջ տանջատել միմյանցից, վերջ տալ մեծ տերությունների միջամտությանը Թուրքիայի ներքին գործերին՝ Հայկական հարցը պատրվակ բռնելով, և փորձել Հայկական հարցը համարել «լուծված» ու կանխել Արևմտյան Հայաստանի հայության համար ինքնավարություն կամ բարեփոխումներ անցկացնելու հնարավոր պահանջը Անտանտի տերությունների ապագա միջազգային վեհաժողովի կողմից: Մինչդեռ օսմանյան կառավարությունը մինչև վեհաժողովի հրավիրումը Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական կազմը արագ և հիմնովին փոխելու՝ թուրքացնելու հեռահար նպատակով վաղուց ի վեր պարբերաբար և հետևողականորեն իրականացնում էր իր ավանդական քաղաքականությունը, այն է՝ բացառել ցեղասպանության պատճառով հայրենագրված արևմտահայ փախստականների վերադարձն իրենց հայրենի օջախներ և Արևմտյան Հայաստանում բնակեցնել Անդրկովկասի ու այլ երկրամասերի մուսուլմանների և միջազգային հանրությանը հրամցնել, թե Արևելյան Անատոլիայում չկա մի տարածք, որտեղ հայերը մեծամասնություն են կազմում: Անգամ Արևմտյան Հայաստանը հայաթափելուց հետո օսմանյան ռազմաքաղաքական դեկավարությունը քրիստոնյա բնակչության նկատմամբ ճնշումներով և ուժի սպառնալիքով անցկացրեց կեղծ հանրաքվե՝ միջազգային հանրությանը ցույց տալու, թե իբր այնտեղ հայությունը ազգային փոքրամասնություն է: Մինչդեռ նրանց պաշտոնական դիրքորոշումն էր՝ այլևս թույլ

չտալ արևմտահայերի վերադարձը Արևելյան Անատոլիա³⁷³: «Թուրքերը,- գրում է Ալ. Խատիսյանը,- կ'ուզէին ունենալ, յանձին Հայաստանի (Արևելյան – Գ.Պ.), հողամաս մը, ուր կարողանային հաւաքել հայերու մնացորդները Թուրքիոյ սահմաններէն»³⁷⁴:

Անդրանիկ Օզանյանը հունիսի 2-ին, Դիլիջանում ծանոթանալով հայ-թուրքական հաշտության դաշնագրի նախատրուհու և Խաչատուրյանի բովանդակությանը, միանգամայն համոզվիչ ներկայացնում է էական շարժառիթներից մեկը, որը հարկադրեց Օսմանյան կայսրությանը ընդունելու անկախ Հայաստանի գոյությունը. «Ինչու՞, թուրքերն այդպես շտապում են հայերին անկախ տեսնել: Եթե թուրքը հայի նկատմամբ գործողության մեջ է դնում որևէ ծրագիր, ապա միայն ու միայն նրան հարվածելու և անջատելու համար: Ուրեմն Բաթումում շուտով կնքվելիք պայմանագիրը հայ ժողովրդի դեմ թուրքերի ծրագրած հերթական դավերից մեկն է: Հայը երբեք չպետք է հավատ ընծայի թուրքին, ոչ մի պարագայում չպետք է գլուխ խոնարհի նրա առջև: **Ուրեմն տվյալ պահին անկախ հայկական պետության ստեղծումը բխում է թուրքերի շահերից, ի վնաս հայ ժողովրդի ... Հայաստանի ստեղծումով Թուրքիան ուզում է մոռացության տալ Արևմտյան Հայաստանի խնդիրը**»³⁷⁵:

Մինչև հաշտության դաշնագրի **հիմնօրինակի** ստորագրելը հայկական պատվիրակությունը որոշեց Բաթումի դիվանագիտական բանակցային գործընթացներում վերջնականապես պարզել հայ-թուրքական ներկա և ապագա հարաբե-

³⁷³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 103, ց. 2, գ. 11, ք. 80:

³⁷⁴ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 72:

³⁷⁵ Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 157-158:

րությունները: Այդ հարցով սկսեց բանակցել անձամբ Վեհիբ փաշայի հետ, քանի որ բանակցային գործընթացներում խնդիրներ լուծողը հիմնականում նա էր, և ոչ թե պատվիրակության նախագահ Հալիլ բեյը³⁷⁶: Հունիսի 2-ին Վեհիբ փաշայի հետ բանակցության ժամանակ Ալ. Խատիսյանը փորձեց պարզաբանում ստանալ, թե ինչպես է Օսմանյան Թուրքիան գնահատում այդ փոխհարաբերությունները: Նա հստակորեն հայտարարեց, որ հայկական պետությունը թեկուզ և փոքր տարածքով կազմավորելու համաձայնությունը շրջադարձային է Թուրքիայի պատմության մեջ, որ դա հայերի հետ հաշտվելու առաջին քայլն է, և որ դրանից հետո դյուրին կլինի լուծել հայկական մի շարք այլ հարցեր. նրանց այդպիսի տրամադրվածությանը նպաստել են՝ ա) հայերի քաղաքականության հստակությունը (սկզբում՝ թշնամական, այժմ՝ հաշտվողական), բ) Ադրբեջանի հետ հաշտության համաձայնագիրը, գ) ճշգրիտ և ժամանակին պատասխանը վերջնագրին և դ) Ղարաբաղի խառնուրդ հայրենիքը պաշտպանող հայերի հերոսությունը, որը նրանց մեջ հարգանք առաջացրեց³⁷⁷. Իհարկե մոռացության էր մատնված Սարդարապատի հերոսամարտը:

Մինչդեռ իրողությունն ամենևին այլ էր: Ինչպես վերը նշվեց, Օսմանյան Թուրքիայի՝ հայկական պետություն կազմավորելու համաձայնությունը նախ և առաջ պայմանավորված էր նրանց շահերից բխող բազմազան ու բազմաբնույթ շարժառիթներով ու հեռահար նպատակներով և ոչ թե Վեհիբ փաշայի հիշատակած պատճառներով, որոնք ամենևին էլ չէին

³⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 56:

³⁷⁷ Տե՛ս նույն տեղը:

կարող էական դեր ու նշանակություն ունենալ: Մինչդեռ Վեհիբ փաշայի ներկայացրած չորրորդ պատճառը կամ շարժառիթը, փաստորեն, հերթական կարևոր, նոր խոստովանություն էր՝ **Ղարաքիլիսայում հայրենիքը պաշտպանող հայերի հերոսությունը պարտադրեց Օսմանյան կայսրությանը համաձայնել ճանաչելու հայկական պետության գոյությունը:** Իրադարձությունների ականատես Ա. Խաչատրյանը վկայում է. «Իրական ու կարևորը չորրորդն է՝ հայ զորքի հերոսական դիմադրությունն է, որուն չէին սպասէր և այժմ խորիել կը թելադրէ թուրք դիւանագէտներուն: Թուրք բանակը մինչեւ Ալեքսանդրապոլ գրավէր էր և Կարիմի (Էրզրում – Գ. Պ.) ու Կարսի նման բերդաքաղաքներուն տիրէր է առանց մեծ մը ընելու, և Վեհիբ, արդէն արհամարելով, կըսէր՝ «Ուզած թալէին կընայ հանդիսական զօրանցքով անցնել մինչև Ջուլֆա»: Բայց Սարդարապատի թրքական ջախջախիչ պարտութիւնը և «Ղարաքիլիսէի հերոսական դիմադրութիւնը յարգանք» ներշնչէր էին ռազմագէտ թուրքին»³⁷⁸: Ինչպէս տեսնում ենք, Վեհիբ փաշան Ղարաքիլիսայի հերոսամարտը գնահատեց որպէս եզակի ճակատամարտ պատերազմի պատմության մեջ, որտեղ հայերը ցույց տվեցին, որ կարող են համարվել աշխարհի **լավագույն զինվորներ**³⁷⁹: Ընդհանրապես Ղարաքիլիսան ամրություն է, և ինքը երջանիկ կլինէր, եթե թուրքերն ու հայերը միասին ամրացնէին Ղարաքիլիսան, քանի որ այդ պահին երկուսի քաղաքականությունը պետք է լինէր միատեսակ³⁸⁰: Ինչպէս տեսնում ենք, ինքնանպատակ չէր, երբ Բաթումի դիվանագիտական

³⁷⁸ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 101-102;

³⁷⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 63:

³⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 114:

բանակցությունների ընթացքում Վեհիբ փաշան բազմիցս խնդրանքով դիմել էր հայկական պատվիրակությանը՝ ստեղծելու հայ-թուրքական ռազմական դաշինք (entente)՝ նպատակ ունենալով 10 հազար հայ զինվոր ընդգրկել իրենց զորքերի կազմում՝ Անտանտի տերությունների դեմ կռվի նետելու համար այն պահին, երբ մոտենում էր Քառյակ դաշինքի երկրների անխուսափելի պարտությունը Առաջին աշխարհամարտում: Այդ առաջարկի հեղինակը, իհարկե, Էնվեր փաշան էր: Սակայն հայկական պատվիրակությունը բանակցությունների ընթացքում դիվանագիտորեն խուսանավեց: «Ոչ մեկ տեսակետով,- գրում է Ալ. Խատիսյանը,- չէինք կարող ընդունել այս առաջարկը եւ պատրասկ բերելով մեր ժողովրդի ծայրայեղ յոգնածությունը, մերժեցինք զայն: Վեհիպ փաշան, սակայն, ցառով յայտնեց որ այդպիսի դաշինք մը պիտի վերացնէր շատ մը թիրիմացութիւններ հայերու եւ թուրքերու միջեւ»³⁸¹: Կոստանդնուպոլսի դիվանագիտական գործընթացներում (1918 թ. հունիս-հոկտեմբեր), որոնք, փաստորեն, Բաքումի բանակցությունների շարունակությունն էին, թուրքերը դարձյալ շրջանառեցին այդ առաջարկը, սակայն հայ պատվիրակությունը (նախագահ՝ Ա. Ահարոնյան, անդամներ՝ Ալ. Խատիսյան, Մ. Պապաջանյան) դարձյալ դիվանագիտորեն խուսանավեց՝ հաշվի առնելով դրա խիստ վնասակար և անդառնալի հետևանքները հայության համար:

Հարկ է նշել՝ որքան մոտենում էր Քառյակ դաշինքի երկրների անխուսափելի պարտությունը Առաջին աշխարհամարտում, այնքան մեծանում էր Օսմանյան Թուրքիայի՝ որպես

³⁸¹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 71:

հայոց ցեղասպանություն ու հայրենագրություն իրագործողի և վերջինիս դաշնակից կայսերական Գերմանիայի՝ որպես հայոց ցեղասպանության մեղսակցի՝ պատասխանատվության կանչվելու մտավախությունը: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ օսմանյան կառավարությունը, ճանաչելով հայկական անկախ պետությունը, կարծում էր, թե իբր լուծել է Հայկական հարցը և դրանով նպատակ էր հետապնդում մի կողմից հայերի հետ համերաշխ մտնելու միջազգային վեհաժողով, իսկ մյուս կողմից մոլորության մեջ գցելու համաշխարհային հասարակական կարծիքը հայոց ցեղասպանության և հայրենագրության մասին: Դժվար չէ նկատել, թե ինչու հայոց ցեղասպանության և հայրենագրության գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Թալես փաշան, Բեռլինում Հ. Օհանջանյանի հետ հանդիպման ժամանակ ասում էր. «Տաճկաստան ել կան հայեր, **պետք է լինել հայերի հետ բարեկամական յեվ հաշտ հարաբերությունների մեջ յեվ պետք ե մեր խնդիրները մենք ինքներս մեր մեջ վերջացնենք, որ ապագայում վոչ վոր չը խառնուի մեր փոխադարձ հարաբերությունների մեջ – ակնարկ ապագա համաշխարհային կոնգրեսի վրա**»³⁸²:

Իրողություն է, որ հայերի օգտին Գերմանիայի պաշտոնական և ոչ պաշտոնական զգուշացումները օսմանյան ռազմաքաղաքական դեկավարությանը հիմնականում ունեին իրենց շահերից բխող շարժառիթներ. դրանով փորձում էին ընդամենը ձերբազատվել հայոց ցեղասպանության մեղսակցության փաստից: Բ. Բորյանը՝ իր պատմադիվանագիտական

³⁸² ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 61:

* Բագրատ Հարությունի Բորյան (1882-1937) – հեղափոխական, գիտնական, պետական գործիչ և դիվանագետ:

արժեքավոր աշխատությունում բազմաթիվ անհերքելի և հարուստ փաստերի ու նյութերի խոր և անաչառ հետազոտման հիման վրա եզրակացրել է, որ հայերի գլխավոր կոտորածը թելադրված է եղել գերմանական կայսերապետության շահերով, քանզի առանց գերմանացիների իմացության և համաձայնության թուրքերը չէին ձեռնարկի ոչ մի քայլ, իրենց գործողություններում նրանք ինքնուրույն չէին, և նրանց յուրաքանչյուր քայլը համահունչ է եղել գերմանական կայսերապետության շահերին³⁸³։ Գերմանացի դիվանագետները անթաքույց հասկացնում էին Տրապիզոնի, Բաթումի, Բեռլինի և Կոստանդնուպոլսի հայ պատվիրակներին, որ Հարավային Կովկասում ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում չեն կարող հանուն հայերի վտանգել իրենց հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ։ Մինչդեռ հայ դիվանագետները և հայ քաղաքական գործիչները Հարավային Կովկասում ստեղծված իրադրության պայմաններում չկարողացան արագ և ճիշտ գնահատել Գերմանիայի և նրա դաշնակից Օսմանյան Թուրքիայի միջև խոր հակասությունների ու շահերի բախումից սպասվող ոչ նպաստավոր պայմանները հայության համար և շարունակեցին էլ ավելի ապավինել Գերմանիայի անպտուղ աջակցությանը։ Բայց և այնպես գերմանական կողմը իր օգնության դիմաց հայերից պահանջում էր, որ հրաժարվեն հայոց ցեղասպանության մեջ իր մեղսակցության մասին քարոզչությունից։ Օրինակ. այդ հարցի շուրջ Բեռլինում Գերմանիայի արտաքին գործերի նախարարի օգնական Հ. Գյոպտերտի խնդրանքով 1918 թ. հուլիսին տեղի ունե-

³⁸³ Տե՛ս Բ. Բոքեան, Հայաստան. միջազգային դիվանագիտությունը եւ ԽՍՀՄ-ը, Հ. 1, Երևան, 2018, էջ 518։

ցավ հանդիպում Ավետիք Իսահակյանի հետ: «Գերմանական շրջաններում, - գրում է հայ մեծանուն բանաստեղծը,- այն կարծիքն է տարածված, թե նվաստիս ղեկավարությամբ Շվիցերիայում մոլվում է հակագերմանական պրոպագանդ, սակայն ճշմարտությունը այդ չէ, այլ այն, որ ես, որ մի քանի ընկերներով հիմնել ենք «**Հայ մամուլի գործակալություն**» մամուլին ստույգ լուրեր տալու եւ հերքելու ստեղծած, միտումնավոր լուրերը: Խոսակցության մեջ հայտնեց (Հ. Գյոպտերտը - Գ. Պ.), թե ավստրիական կառավարությունից հենց հիմա նամակ ստացա, որով պատրաստականություն են հայտնում հայերին օգնելու: (Օգնության ի՞նչ ձեւի մասին չասեց): Իմ հարցին, թե անհրաժեշտ է գորք ուղարկել Հայաստան, նա պատասխանեց, թե մենք մարդու կարիք ունենք, ամեն մի մարդ մեզ պետք է: Ես պատասխանեցի, թե մեկ է, դուք Վրաստան գորք եք ուղարկել եւ մեզ ո՛չ, դա արդեն շատ վատ տպավորություն է թողնելու հայ ժողովրդի վրա, եւ որն ավելի, եւ շա՛տ ավելի կարիք ունի:

.... հետո դարձավ գլխավոր խնդրին, որի համար ինձ տեսնել էին կամեցել: Ասաց, թե մեր սրտին մոտ է հայ ժողովրդի վիճակը, մենք պիտի անենք, ինչքան որ կարող ենք, չնայելով, որ **դուք հայերդ, պրոպագանդ եք արել, եւ անում եք ու ողջ աշխարհը մեր դեմ գրգռում կոտորածների պատճառով:**

Ես պատասխանեցի, ... թե մեզանից անկախ գոյություն ունի ամբողջ ուժեղ պրոպագանդ ավելի Ձեր դեմ, քան թուրքերի՝ Հայոց սարսափելի ջարդերի պատասխանատվության մեջ. Մենք չենք կարող ազդել ամերիկական-անգլիական-ֆրանսիտալական մամուլի վրա, օր չի անցնում, որ Հայկական ջարդերի մասին չգրվի եւ ձեզ չմեղադրվի. մենք մի բան կարող ենք

անել – այն, որ եթե Դուք, որ ամենակարող եք, ճանաչել տաք թուրքին բրեստյան սահմանները, եւ ջարդերը դադարեն, այն ժամանակ մենք կարող ենք մեր կողմից ամեն ջանք գործ դնել ցույց տալով Ձեր դրական աջակցությունը հայ պետություն կազմելու մեջ, ազատելու մեզ վերջնական քայքայումից, եւ դրանով կնպաստեն **պրոպագանդայի դադարեցման**»³⁸⁴:

Զրույցից հետո Ավետիք Իսահակյանը միանգամայն համոզիչ ներկայացնում է իր գնահատականը. «Իմ տպավորությունն այս ամենից, ում որ տեսանք ու խոսեցինք, այն է, որ Գերմանիան ուզում է, ցանկանում է օգնել մեզ եւ ընդունել տալ թուրքերին բրեստյան սահմանագիծը, սակայն դրա իրագործման համար, եթե թուրքերը հակառակեն, չի դիմելու ոչ մի խիստ միջոցի, ոչ թե վախենալով, թե Թուրքիան կանցնի թշնամիների կողմը (հաստատ կասեմ, որ Համաձայնությունը (Անտանտի – Գ. Պ.) չի ընդունի նրան իր ծոցը. պետք չունի. նա ուրիշ հաշիվներ ունի), այլ ուղղակի չուզենալով իր 4 տարվա դաշնակցի հետ սառել, վատանալ: **Հայերին օգնելու մեջ նա (Գերմանիան – Գ. Պ.) միմիայն մի շահ ունի – մորալ, բարոյական, որը սակայն, այնքան չի կշռում, դժբախտաբար, քան մարգանեցը կամ նավթը: Բայց այդ նավթը կամ մարգանեցը նրան չտվին ու չեն տա հատուցումը մի չնչին մասի այն հսկա վնասի, որն ստացան հայկական ջարդի պատճառով**»³⁸⁵:

Օսմանյան Թուրքիան երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գոյությունը դիտում էր իբրեւ պատմեշ, բուֆեր՝ Ռուսաստանից պաշտպան-

³⁸⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, ք. 121- 122:

³⁸⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, ք. 122- 123:

վելու համար: Թալեաթ փաշան ասում էր, որ իրենք երաշխավորել են այդ անկախ պետությունների գոյությունը՝ նպատակ ունենալով նաև, որ Թուրքիան այլևս և ոչ մի դեպքում հյուսիսային հարևան Ռուսաստանի հետ չունենա ընդհանուր սահման³⁸⁶: Բաթումում ստորագրվելիք հաշտության դաշնագրով օսմանյան կառավարությունը ձգտում էր Հայաստանի կենսագործունեության գլխավոր լծակները ներառելով իր վերահսկողության տակ ապահովելու իրենց անվտանգությունը Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իրենց սահմանների համար: 1918 թ. հունիսին Կոստանդնուպոլսում հայոց ցեղասպանության և հայրենագրկության գլխավոր կազմակերպիչներից Բեհաեդդին Շաքիր բեյը հայ պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ խոստովանել էր. «**Երիտասարդ թիւրքերի կառավարութիւնը անկարող եղաւ հայկական հարցը տեղահանութիւններով և կոտորածներով լուծել եւ սոխպուած է ճանաչել ներկա Հայաստանի անկախութիւնը ու պիտի ձգտի այդ փոքրիկ պետութիւնից պատուար ստեղծել Ռուսաստանի դէմ**»³⁸⁷:

Այսպիսով, հայոց անկախ պետության ընդունումը և ճանաչումը ոչ թե Օսմանյան Թուրքիայի «գրասրտության» դրսևորումն էին հայերի նկատմամբ, այլ ընդամենը պայմանավորված էին նրա շահերից բխող բազմազան ու բազմաբնույթ շարժառիթներով և հեռահար նպատակներով:

³⁸⁶ Տե՛ս **М. Туманян**, Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2012, էջ 58:

³⁸⁷ Բժ. **Ա. Բաբալեան**, Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 19:

Այժմ վերադառնանք Բաթումի դիվանագիտական բանակցություններին: Պետք է նկատել, որ հայ պատվիրակության անդամները, Նոթաբենից վերադառնալով Բաթում, հունիսի 3-ին նախաձեռնեցին ավարտել նախապատրաստական աշխատանքները՝ նախատեսված հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, ստորագրելու հայ-թուրքական հաշտության դաշնագրի հիմնօրինակը՝ Օսմանյան Թուրքիայի համար նպաստավոր պայմաններով:

Նույն օրը երկու պատվիրակությունների միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց Երևանում և Կոստանդնուպոլսում դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչների փոխանակման շուրջ³⁸⁸: Օգոստոսի սկզբին Մեմմեդ-Ալի փաշան (ծագումով՝ բոսնիացի) նշանակվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը կից դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչ, իսկ Ֆ. Թախտաչյանը՝ Օսմանյան Թուրքիայում:

Ի դեպ, Հալիլ բեյը անակնկալ մատուցեց հայ պատվիրակության անդամներին՝ պահանջելով անկախ Հայաստանին գրավոր պարտավորվել, որ չի մտնի դիվանագիտական հարաբերությունների մեջ Թուրքիայի հետ պատերազմող տերությունների հետ³⁸⁹: Հալիլ բեյի հետ բանակցելիս Ալ. Խատիսյանը խնդրեց վերացնել այդ պարտավորությունը Հայաստանի համար, քանի որ Վրաստանի նկատմամբ մեծ արգելքը բացակայում է: Հալիլ բեյը պատասխանեց, որ, միևնույնն է, Անգլիան և Ֆրանսիան ներկայացուցիչ չեն ունենա Վրաստանում,

³⁸⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 82, 86:

³⁸⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 115:

քանի որ վերջինիս հովանավորում է Գերմանիան, իսկ Թուրքիան այնտեղ գործ կպահի: Այնուհետև հավելեց, որ անգամ ինքը չի կարող այդ կետը հանել և խորհուրդ չի տալիս այդ պահանջը մերժել, քանի որ Հայաստանի անկախության ընդունման շուրջ այս երեք շաբաթում տարակարծությունները շատ էին Կոստանդնուպոլսում, ուստի պետք է այն փայփայել³⁹⁰: Ալ. Խատիսյանը գրում է. «Յետագային իմացայ, որ երբ մենք բանակցություններ կը վարեինք Պաթումի մէջ, կատաղի վեճեր տեղի ունեցեր են Պոլսոյ երիտասարդ թուրքերու կոմիտէին մէջ այդ մասին, թէ ո՛ր աստիճան նպատակայարմար է Կովկասի մէջ պահպանել հայկական պետութիւն մը: Այս մասին ինձ պատմեց Պոլսոյ մէջ, 1918 թ. աշնան, մեծ վեզիր Թալէաթ փաշան հետեւեալ խօսքերով. «Էներ փաշան կը գտներ, որ քանի հայերը եղած են և պետք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ չալիտի թողուն մեր Անատոլոյի նահանգները, աւելի լավ է, որ հիմնապէս բնաջնջուին անոնք նաև Կովկասի մէջ, ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ: Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մէջ պատճառ պիտի դառնայ, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները և դառնայ յալիտենական վտանգ Թուրքիոյ համար: Իսկ ես, շարունակեց Թալէաթ, պատասխանեցի, որ այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է թեկուզ այն պատճառով, որ այսպէս թէ այնպէս երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ և անհնար է զանոնց բոլորն ալ ոչնչացնել, ուստի աւելի լաւ է, որ անոնց գոհացում տրուի, որոհեալ եթէ նոյնիսկ 100 000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզ հանգիստ չալիտի տան երբեք: Եվ վերջապէս, փոքրիկ Հայաս-

³⁹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 115, գ. 11, ք. 79:

տան մը ստեղծելով՝ մենք լուծած կըլլանք հայկական հարցը և այդպես կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդածողովին»»³⁹¹:

Մեջբերելով Թալեաթի այս խոսքերը՝ Ալ. Խատիսյանն ավելացնում է. «Թալեաթ փաշայի տեսակետը յաղթեր էր և թուրքերը ստեղծեցին փոքրիք Հայաստանը: Ատկէ ետքը Էնվեր փաշան օր մը պարծենալով ըսավ ինձ. «Ես լուծեցի շատ դժուարին խնդիր մը, ստեղծեցի Հայաստանը, գոհացում տուի հայերու ազգային պահանջներուն, բայց այդ ըրի այնպիսի ձեւով մը, որ չգոհեցի թրքական հողերէն ոչ մէկ թիզ իսկ»»³⁹²:

Այնուհետև Ալ. Խատիսյանը հավելում է, որ, այնուամենայնիվ, Թուրքիայի հետ պատերազմող տերութիւնների հետ դիվանագիտական հարաբերութիւնների արգելման հարցը մնաց փոխզիջումային: Հալիլ բեյը համոզում էր հայկական պատվիրակութեանը, որ պարտավորագրի ընդունումն ընդամենը ապացույց կլինի, որ հայերը օրինապահ են³⁹³:

Այսպիսով, հունիսի 3-ին Օսմանյան Թուրքիայի ճնշման ներքո ստորագրելով այդ փաստաթուղթը՝ Ալ. Խատիսյանը ստանձնեց որոշակի պարտավորութիւն. «Հայաստանի հաշտության պատվիրակութիւնը, Ձերդ գերազանցության հետ անձնական բանակցության հիման վրա և Օսմանյան կայսերության ու Հայաստանի միջև հաշտության և բարեկամության դաշնագրի կնքման կապակցությամբ պատիվ ունի հաստատելու հետևյալը. **Հայաստանի Հանրապետության կառավարութիւնը պարտավորվում է ամբողջ ընդհանուր պատերազմի ըն-**

³⁹¹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 72:

³⁹² Նույն տեղում:

³⁹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 115, գ. 11, ք. 79:

քացքում, ոչ մի դիվանագիտական հարաբերություն չունենալ Օսմանյան կայսերության հետ պատերազմական վիճակում գտնվող պետությունների հետ»³⁹⁴: Ինչպես երևում է այդ փաստաթղթից, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր մի կողմից Առաջին աշխարհամարտի ողջ ընթացքում դիվանագիտական հարաբերություն չունենալ ոչ միայն Անտանտի տերությունների, այլ նաև Ռուսաստանի հետ, չնայած վերջինս 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով դուրս էր եկել պատերազմից: Ավելին՝ պարտավորագրի տրամաբանական ոգուց բխող մոր պարտավորություններ ամրագրվեցին Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև հունիսի 4-ին կնքված դաշնագրին կից ժամանակավոր լրացուցիչ հավելվածի 2-րդ հոդվածում, որում ասվում էր. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է իր տերիտորիայից անհապաղ հեռացնել այն երկրների սպաներին և քաղաքացիական աստիճանավորների, որոնք գտնվում են Թուրքիայի կամ նրա դաշնակիցների հետ պատերազմի վիճակի մեջ, ինչպես և նշված պատերազմող երկրների դաշնակիցներին և աստիճանավորներին: Բացի դրանից, ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր ծառայության չի ընդունի ոչ մի սպայի և առևասարակ ոչ ոքի՝ վերոհիշյալ պատերազմող երկրներից կամ նրանց դաշ-

³⁹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 32, ք. 6, գ. 23, ք. 76, **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Երևան, 2004, էջ 31:

նակիցներից»³⁹⁵: Առաջ անցնելով նշենք, որ Բաթումի հաշտության դաշնագիրը և նրան կից լրացուցիչ հոդվածները ուժի մեջ էին մտնում ստորագրման պահից: Մինչդեռ դրանք միջազգային իրավունքի տեսանկյունից իրավական ուժ չունեին, քանի որ այն չէին վավերացրել ո՛չ Օսմանյան և ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության կառավարությունները, ավելին՝ չէին ճանաչվել նաև Քառյակ դաշինքի երկրների, Անտանտի, Խորհրդային Ռուսաստանի և այլ երկրների կողմից:

Հայաստանի Հանրապետության գոյության առաջին փուլում (1918 թ. հունիս-նոյեմբեր)՝ մինչև Օսմանյան Թուրքիայի վերջնական պարտությունն Առաջին աշխարհամարտում, թե՛ հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը և թե՛ հունիսի 4-ի հայթորքական հաշտության դաշնագիրն ու նրան կից լրացուցիչ հավելվածի 2-րդ հոդվածի պահանջները լուրջ խոչընդոտներ հարուցեցին երկրի ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականության և դիվանագիտության իրականացման ոլորտում, մասնավորապես անկախ Հայաստանի համար ավելի քան **կենսական և անվտանգային նշանակություն ունեցող Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ նորմալ հարաբերություններ հաստատելու գործում**³⁹⁶: Հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանը իրավացիորեն նշում էր. «**Շարունակում էր հայության համար կործանարար համարել Ռուսաստանից նրա անջատ գոյությունը**»³⁹⁷:

³⁹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, ք. 120:

³⁹⁶ Տե՛ս մանրամասն **Գ. Սեդրակյան**, Отношения Республики Армения с Россией (1918 -1920 гг.), Ереван, 2012, էջ 29-106:

³⁹⁷ **Հ. Միսնյան**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 162:

Հունիսի 3-ի երեկոյան ավարտվեցին բոլոր նախապատ-
րաստական աշխատանքները և երկու պատվիրակությունների
վերջնական համաձայնությունները՝ հայ-թուրքական հաշտու-
թյան դաշնագրի հիմնօրինակը և նրան կից լրացուցիչ երեք
հավելվածները ստորագրելու համար:

1918 թ. հունիսի 4-ին՝ երեքշաբթի օրը, Բաքումում հանդի-
սավոր պայմաններում ստորագրվեց «Հաշտության և բարեկա-
մության դաշնագիր Օսմանյան կայսերական կառավարու-
թյան և Հայաստանի Հանրապետության միջև»³⁹⁸ (ֆրանսերե-
նով): Օսմանյան Թուրքիայի կողմից այն ստորագրեցին թուր-
քական պատվիրակության նախագահ Հալիլ բեյը, Վեհիբ փա-
շան, իսկ Հայաստանի Հանրապետության անունից՝ Ալ. Խա-
տիսյանը (պատվիրակության նախագահ), Հ. Քաջազնունին և
Մ. Պապաջանյանը:

Նույն օրը հայկական պատվիրակության անդամները հե-
ռագիր հղեցին Ամենայն հայոց վեհափառին. «Պատիվ ունենք
հայտնելու, որ այսօր ժամը մեկն անց կեսին, մեր կողմից խա-
ղաղության համատեղ պայմանագիր է կնքվել թուրք պատվի-
րակներ Վեհիբ փաշայի ու Հալիլ բեյի հետ: Վեհիբ փաշան
երեկ երեկոյան կարգադրեց դադարեցնել ռազմական գործո-
ղությունները: Էջմիածինը մնում է Հայաստանի տարածքում,
Երևանը՝ մայրաքաղաք, վաղը չէ մյուս օրը կվերադառնանք
Թիֆլիս և այնտեղից մանրամասն զեկուցում կներկայա-
ցնենք»³⁹⁹:

³⁹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 101-103:

³⁹⁹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 177, ք. 9:

Նույն օրը՝ երեկոյան ժամը 5-ին, Հալիլ բեյի նախագահությամբ գումարվեց մեկ ժամ տևած լիագումար նիստ՝ հայ-թուրքական հաշտության ու բարեկամության դաշնագրի և երեք հավելվածների պաշտոնական փոխանակման և կարգավորումների արձանագրությունը ստորագրելու համար: Նիստին մասնակցում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, պատվիրակության ամբողջ կազմը, իսկ հայկական կողմից՝ վերոհիշյալ երեք անձինք:

Նիստի բացման խոսքում Հալիլ բեյը նշեց. «Այսօր մեր ստորագրություններն ենք դնում սկզբնական արձանագրության տակ, որ միջազգային հասարակության մեջ տեղ է բացում Հայաստանի Հանրապետության համար, որ ճանաչում է Հայաստանի գոյությունն ու անկախությունը Կովկասում նոր կազմված պետությունների շարքում:

Ես չեմ ուզում կանգ առնել և հիշել պայքարի այն ցավալի դեպքերը, որ տեղի ունեցան մեր և հայերի միջև: Ես ուզում եմ միայն նշել, որ վերջին ժամանակներս Օսմանյան կայսերական կառավարությունը մեծ հաստատակամությամբ տիրեց իր զգացումների վրա և ինձ հանձնարարեց ստորագրելու մի փաստաթուղթ, որով ճանաչվում է Հայկական կառավարության գոյությունը: Վստահ եմ, որ հայ ժողովուրդը Օսմանյան կայսերական կառավարության այս որոշման կարևորությունը լավ կըմբռնի, և համաձայնության մի նոր էրա կբացվի մեր ժողովրդի և Ձեր ժողովրդի միջև»⁴⁰⁰:

Ալ. Խատիսյանն իր պատասխան ելույթում հայերեն (ինքը քարգմանեց ռուսերեն և ֆրանսերեն) նշեց. «Հայաստանը եր-

⁴⁰⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 160-161:

բեք Թուրքիայի սահմաններում չի ձգտել լրիվ ինքնուրույնության, նա միայն ինքնավարության էր ձգտում, այն էլ Թուրքիայի ամբողջական պետականության ներքո⁴⁰¹: Հայաստանը, որի անունով պատիվ ունիմ խոսելու, երկար տարիներ շատ գոհողություններ է կրել, որպեսզի ազգային գոյության իրավունք ստանա: Այսօր բացահայտ կերպով այդ իրավունքը ստացավ և մտավ անկախ պետությունների շարքը: Այս մեծ օրը մի հանդիսավոր թվական կհանդիսանա հայերի պատմության էջերում: Թեպետ նոր պետության սահմանները մեծ չեն, բայց հայ ժողովրդի ազատության ու կուլտուրայի սերը, նրա աշխատանքի ընդունակությունը, հույս ունիմ, որ արժանավոր տեղ կապահովեն հարևան պետությունների շարքում: Մենք ուզում ենք, որ կայուն խաղաղություն ու հավիտենական բարեկամություն հաստատվի Օսմանյան կայսերության և Հայաստանի Հանրապետության միջև, և մենք հաստատ համոզված ենք, որ մեր հայ եղբայրները, որոնք հեռացել էին Թյուրքիայից կկարողանան շուտով այնտեղ վերադառնալ և Օսմանյան կայսերության ազնիվ քաղաքացիներ դառնալ, որին մենք մաղթում ենք երջանկություն, բարգավաճում և խաղաղություն»⁴⁰²:

Երեկոյան ժամը 6-ին՝ լիագումար նիստի ավարտից հետո, տրվեց հանդիսավոր մեծ ճաշկերույթ, որի ավարտից հետո՝ հունիսի 5-ի լուսաբացին, Բաթումում սկսվեց հայ-թուրքական փաստաթղթերի արժանագրության ստորագրումը Հալիլ Բեյի և Ալ. Խատիսյանի կողմից: Հայկական պատվիրակությունը հու-

⁴⁰¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, ք. 115, (Ալ. Խատիսյանի «Օրագիրը»):

⁴⁰² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 161:

նիսի 6-ին վերադարձավ Թիֆլիս*։ Իրականում Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը դաշնագրի ստորագրումից հետո միայն ձեռնամուխ եղավ Հայաստանի օրենսդիր (Հայաստանի խորհրդի) և գործադիր մարմինների ձևավորմանը։

Այսպիսով, հունիսի 4-ի Բաթումի հայ-թուրքական «Հաշտության և բարեկամության դաշնագիրը» առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ ստորագրեցին անկախ Հայաստանի պատվիրակները։ Այդ դաշնագրով Հայաստանի Հանրապետությունը առաջին միջազգային իրավական ճանաչումը ստացավ⁴⁰³։

Հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից և երեք լրացուցիչ հավելվածներից*։ Ըստ այդ դաշնագրի՝ Օսմանյան Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Շարուր-Գարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կադվանը, Սարիղամիշը, Լոռին։ Հայաստանին մնում էին Նոր Բայազետի գավառը, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների՝ ընդամենը 9 հազար քառակուսի վերստ (մոտ 11 հազար քառ. կմ) կազմող տարածու-

* Ալ. Խատիսյանը փաստում է. «Մենք վերադարձանք Թիֆլիս, բերելով մեզ հետ հաշտության դաշինքը, որուն բնագիրը այժմ կը պահուի Էջմիածնի քանդարանի մէջ, իսկ պատճէնը տպուած է երեք լեզուներով՝ ռուսերէն, ֆրանսերէն եւ հայերէն»։ (Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1924, հոկտեմբեր, էջ 100)։

⁴⁰³ Տե՛ս Ա. Եսայան, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922, Երևան, 1967, էջ 34։

* Մենք հանգամանորեն չենք անդրադարձել հունիսի 4-ի դաշնագրի այն հոդվածների լուսաբանմանը, որոնք հանրահայտ են։

թյունը⁴⁰⁴: Հայաստանից խլվում էին Ալեքսանդրապոլը և երկաթուղին՝ մինչև Ջուլֆա. հանրապետությանը մնում էր ընդամենը 6 վերստ երկաթգիծ (13 կմ), երկաթուղիների վերահսկողությունը անցնում էր Օսմանյան Թուրքիային, իսկ պետական սահմանը անցնում էր Երևանից 7 կմ հեռավորության վրա⁴⁰⁵:

Փաստորեն, թուրքերը Անդրկովկասից զավթեցին 38 հազ. քառ. կմ տարածություն՝ մեկ միլիոն 250 հազար ազգաբնակչությամբ: Դրանից Վրաստանը կորցնում էր 10 հազ. քառ. կմ տարածք՝ 350 հազար բնակչությամբ, Հայաստանի Հանրապետությունը՝ 28 հազար քառ. կմ՝ 900 հազար բնակչությամբ: Թուրքերը Անդրկովկասից խլեցին նրա տարածքի 20,6 տոկոսը և ազգաբնակչության 18,5 տոկոսը⁴⁰⁶:

Ինչպես վերը նշվեց, տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական և տնտեսական հակասությունների ու շահերի բախման պայմաններում համառ պայքար ծավալվեց Բաքվի նավթի գրավման համար երկու դաշնակիցների՝ Օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի միջև: Թուրքական բանակի համար դեպի Ադրբեջան տանող ամենակարճ ճանապարհին անցնում էր Հայաստանի տարածքներով: Ուստի Առաջին աշխարհամարտում Թուրքիայի մոտալուտ պարտության պայմաններում եթե թուրքերը շարժվեին դեպի Բաքու, չէին կարող իրենց հետևում թողնել հայկական թշնամական բանակներ: Հենց այստեղից էլ Օսմանյան կայսրության շտա-

⁴⁰⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 101, **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 253:

⁴⁰⁵ Տե՛ս նույն տեղը:

⁴⁰⁶ Տե՛ս **Д. Завриев**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, էջ 70-71, տե՛ս նաև **Ե. Սարգսյան**, Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994, էջ 56-57:

պողականությունը. ընդունելով անկախ Հայաստանի գոյությունը, վերջինիս հետ Բաթումում կնքելով հաշտություն՝ **այդ դաշնագրի ուժով մի կողմից ապահովել իր թիկունքը հայկական զորամիավորումների հարձակումներից, իսկ մյուս կողմից իրավունք վերապահել իրեն խորհրդային Բաքվում ու նրա արվարձաններում տեղակայված հայկական զինյալ ջոկատները զինաթափելու և հեռացնելու տարածաշրջանից:**

Եվ իսկապես, Օսմանյան Թուրքիայի՝ վերը նշված ռազմավարական նկրտումները բովանդակող պարտավորությունները պարտադրվեցին Հայաստանի Հանրապետությանը: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ այդ դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո Վեհիբ փաշան Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջեց անհապաղ կատարել դաշնագրին կից ժամանակավոր լրացուցիչ հավելվածի 1-ին հոդվածի պարտավորությունը. «Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհապաղ ձեռնամուխ կլինի իր գորքերի գորացրմանը: Այդ գորքերի քանակը, ինչպես և այն ռազմական օկրուգները, որոնց մեջ դրանք կլինեն, կորոշվեն՝ Օսմանյան կայսերական կառավարության հետ համաձայնեցնելով, ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակաշրջանի համար»⁴⁰⁷:

Ուշագրավ է, որ այդ հոդվածից բխող տրամաբանական այլ պարտավորություն ամրագրվեց նաև հիմնական դաշնագրի 5-րդ հոդվածում, որը գրեթե ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից: Համաձայն դրա՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գոր-

⁴⁰⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, ք. 120:

ծուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չզինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»⁴⁰⁸:

Բացի դրանից՝ նույն դաշնագրի 11-րդ հոդվածը մախատեսում էր. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագրի ստորագրումից հետո Բաքու քաղաքից էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը, ինչպես և ապահովել, որ այդ էվակուացումը առիթ չտա որևէ ընդհարման»⁴⁰⁹:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստիպված էր ստանձնել եռակի պարտավորություն՝ նախ ցրել հայկական զորքը՝ թողնելով ընդամենը 1200 զինվոր... մի կողմից վերջ դնել բոլոր ռազմական գործողություններին թուրքական բանակի թիկունքում, իսկ մյուս կողմից, ինչը շատ ավելի կարևոր էր, հարկադրել հայկական զորաջոկատներին հետ քաշվել խորհրդային Բաքվից:

Փաստորեն, դաշնագրի և նրան կից լրացուցիչ հավելվածի հոդվածների իրավունքով Վեիլբ փաշան պահանջեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն անհապաղ լուծարել Անդրանիկի զորամասը և վտարել նրան Հայաստանից: Ազգային հերոսը, չընդունելով Բաթումի դաշնագիրը և Հայաս-

⁴⁰⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 102, Հայաստանի միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, էջ 534:

⁴⁰⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, ք. 103:

տանի կառավարությունը, իր գործով հեռացավ հանրապետության տարածքից⁴¹⁰:

Բաթումի հաշտության դաշնագիրը երկար չգոյատևեց՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի և նրա դաշնակիցների վերջնական պարտությամբ: Առաջին Հանրապետությունը թևակոխեց իր գոյության երկրորդ փուլը (1918 թ. դեկտեմբեր - 1920 թ. ապրիլ): Այս փուլում Հայաստանի Հանրապետությունը, քաղաքական նոր իրադրության շնորհիվ դուրս գալով շրջափակումից, առժամանակ ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքական հարաբերությունները ոչ միայն իր հարևանների, այլ նաև Արևմուտքի, քաղաքացիական պատերազմի հորձանուտում գտնվող Ռուսաստանի և այլ պետությունների հետ:

Համաձայն Մուդրոսի զինադադարի 11-րդ հոդվածի (1918 թ. հոկտեմբերի 30-ի)՝ թուրքական զորքերը մինչև դեկտեմբերի սկիզբ պետք է հեռանային Անդրկովկասից: 1919 թ. ապրիլի վերջին հայկական տարածքներն աստիճանաբար ընդարձակվեցին՝ հասնելով մոտ 70 հազար քառակուսի կիլոմետրի՝ ներառելով գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը: Բայց և այնպես այս փուլում ևս հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում սպասվում էին նոր փորձություններ ու ծանր օրեր:

⁴¹⁰ Տե՛ս Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 163-165:

**ЗАКАВКАЗЬЕ В ДИПЛОМАТИЧЕСКИХ ПЕРИПЕТИЯХ:
СТАНОВЛЕНИЕ АРМЯНСКОЙ НЕЗАВИСИМОЙ
ГОСУДАРСТВЕННОСТИ
(февраль 1917-июнь 1918 г.г.)**

РЕЗЮМЕ

В 2018 г. армянский народ отметил столетний юбилей Первой Республики Армении, которая родилась в сложнейших условиях геополитических перераспределений и мирового хаоса. Независимость была завоевана в условиях национального возрождения, освободительной борьбы, напряженных межнациональных отношений, а также в период дипломатического и военного противостояния.

Чрезвычайно важно научное исследование истории образования трех независимых республик – Армении, Грузии и Азербайджана в конце мая 1918 г. – после февральской революции и октябрьского переворота 1917 г.

По данной проблематике было издано множество трудов армянских и зарубежных авторов. По существу, в данном отрезке времени нет ни одного эпизода, который был бы обделен вниманием историков. Однако, как это ни парадоксально, до сего дня нет специального обобщающего исследования армянских историков-международников, которое представило бы мотивы и цели вовлечения Армении в военные и дипломатические переговорные процессы, а также процесс „предоставления,, Армении независимости со стороны Османской

империи. Между тем, освещение данной проблемы весьма актуально.

Проблема освещается в контексте сложнейших условий геополитических перемен в регионе в годы Первой мировой войны, острых противоречий, столкновении военно-политических и экономических интересов. Представляется переговорный процесс в Трапезунде, Батуми, турецко-закавказские и, в частности, армяно-турецкие первые и вторые дипломатические переговоры. Показаны усилия Армянского национального /центрального/ совета и его отдела внешних сношений в условиях военно-политических действий и дипломатического давления со стороны Османской Турции. Неоспоримым является тот факт, что в условиях труднейших вызовов армянская дипломатия совершила некоторые ошибки, которые сегодня нуждаются в подробном и современном анализе и комментариях, что несомненно имеет политическое, а также весьма важное научное значение, особенно с целью учета уроков прошлого и их неповторения.

В работе обстоятельно освещается сложный путь становления Первого армянского независимого государства в сложнейших геополитических условиях. Представлены мотивы и цели признания Османской Турцией независимого армянского государства.

GEGHAM PETROSYAN

**ARMENIAN INDEPENDENCE STATEHOOD
(February 1917- June 1918)**

RÉSUMÉ

In 2018 Armenian people commemorate the 100th anniversary of the first Republic of Armenia, which was born in historically very complex and geopolitically challenging times; an anniversary that is of great significance. The Republic was born amidst national awakening and national-liberation struggle, tense interethnic rivalries and conditions of harsh diplomatic and military standoffs. It is of utmost importance to academically research the emergence of 3 independent republics: Armenia, Georgia and Azerbaijan at the end of May, 1918 after the February and October Revolutions of 1917. A lot of research papers devoted to the problem have been published both by Armenian and foreign authors. As a matter of fact, there is no episode of this very important historical period that has evaded historians' attention.

Yet, strange as it may sound, there is no comprehensive research conducted by the Armenian historians, international relations specialists, particularly dedicated to the deep and novel presentation of the Ottoman Empire's motives and far-reaching objectives of involving Armenia in diplomatic and military negotiation processes and "granting" Armenian independence. However, eliciting this issue is currently of utmost importance.

The issue is investigated within the context of the geopolitical developments in the region, deep contradictions and military, political and economic conflicts that engulfed the region during WW1. The publication's special focus is on the Turkish-Transcaucasian and, particularly, the first and the second rounds of the Turkish-Armenian negotiations in Trabzon and Batumi, military and political tactics employed by the Ottoman Empire, the huge efforts of the Armenian National (Central) Council and its foreign relations department made in the state of diplomatic deadlock.

It should be acknowledged that in the face of serious regional challenges the Armenian diplomacy suffered setbacks, mistakes and uncertainties that need novel, comprehensive analysis and interpretation. The political and academic significance of these efforts is obvious, particularly in the sense of taking those mistakes into consideration and avoiding their repetition.

The present scientific study is an attempt of in-depth elucidation of the hard road to independence by the first Republic of Armenia in complex geopolitical milieu, and the main motives and goals behind the Ottoman Turkey's recognition of the Armenian statehood.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

Ֆ. 45, ց. 1, գ. 20, ք. 23,

Ֆ. 57, ց. 5, գ. 94, ք. 23, գ. 177, ք. 9,

Ֆ. 200, ց. 1, գ. 7, ք. 100-101, 152, 178-181, գ. 8, ք. 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, գ. 9, ք. 5-7, 74, 101, 159, 180-181, 188, 32-34, 43, գ. 11, ք. 51, 79, 120, գ. 21, ք. 113-120, գ. 23, ք. 13, 55, 56, 63, 76, 82, 86, 84, 101-103, 160-161, գ. 32, ք. 6, գ. 79, ք. 2, գ. 141, ք. 235, գ. 193, մաս II, ք. 434, 465, գ. 498, ք. 39, գ. 644, ք. 11, գ. 656, ք. 121- 122, 122- 123, ց. 2, գ. 11, ք. 9-125, գ. 12, ք. 22-102, գ. 19, ք. 11-12, 14, 20, 28

Ֆ. 121, ց. 2, գ. 94, ք. 103,

Ֆ. 222, ց. 1, գ. 17, ք. 1, գ. 21, ք. 8, գ. 24, մաս II, ք. 306, 307, Ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 55, գ. 122, ք. 1-4, գ. 123, ք. 11, ք. 5, ք. 1, գ. 124, ք. 1-22, գ. 141, ք. 232, ք. 233, ք. 235-236, ք. 237, ք. 238, ք. 239,

Ֆ. 276, ց. 1, գ. 119, ք. 76,

Ֆ. 313, ց. 1, գ. 1, ք. 70,

Ֆ. 4004, ց. 3, գ. 29, ք. 121, ք. 122-123, ք. 133, ք. 134, ք. 398,

Ֆ. 4033, ց. 2, գ. 962, ք. 88, 93, 96-97,

Ֆ. 4047, ց. 1, գ. 223, ք. 3, գ. 13, ք. 7-9

2. Ռուսաստանի Գաշնության արխիվ (Российский государственный военный архив (РГ ВА))

ф. 39720, оп. 1, д. 49, л. 1, 2, 3, 4, 5,

3. Թուրքիայի կառավարությանը կից օսմանյան արխիվ (BOA. YB.)

f. 21, dos. 7/4, nr. 9, f. 21, dos. 7/3, nr. 1-5, f. 21, dos. 7/4, nr. 1, f. 21, dos. 7/4, nr. 5, f. 21, dos. 7/4, nr. 7, f. 21, dos. 7/4, nr. 8, f. 21, dos. 7/4, nr. 9, f. 21, dos. 7/4, nr. 15, f. 21, dos. 7/4, nr. 14, f. 21, dos. 7/4, nr. 21

2. Տպագիր աղբյուրներ

1. «Աշխատավոր» լրագիր, 2 դեկտեմբերի 1917 թ., Թիֆլիս:
2. «Հորիզոն» լրագիր, 19 նոյեմբերի 1917 թ., Թիֆլիս:
3. «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 28 մայիսի 1918թ.:
4. «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, մարտ-ապրիլ:
5. «Վէմ», ամսագիր, 1933, Փարիզ, նոյեմբեր-դեկտեմբեր:
6. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, փետրվար:
7. «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1924, ապրիլ:
8. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, օգոստոս:
9. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, ապրիլ:
10. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, սեպտեմբեր:
11. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հոկտեմբեր:
12. «Հայագիտության հարցեր» հանդես, Եր., 2014, N 3:
13. «Հայագիտության հարցեր», հանդես, Եր., 2016, 3(9):
14. «Հայագիտության հարցեր», հանդես, Եր., 2016, թիվ 3:
15. «Հայագիտության հարցեր», հանդես, Եր., 2016, թիվ 1:
16. «Հայագիտության հարցեր», հանդես, Եր., 2016, թիվ 2:
17. Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Եր., 2017, № 3 (24):
18. Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Եր., 2018, № 1 (25),

19. Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ. Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ. Ա. Վիրաբյան.- Եր.: Հայաստանի ազգային արխիվ, 2004:

20. «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ջ. Ս. Կիրակոսյան խմբագրությամբ, Եր., 1972:

21. Անկախ իմ Միացեալ Հայաստան (Ռուրագիծ), Երեւան, 1920:

22. Հ. Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923:

23. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմող, առաջարանի, ծանոթագ. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, խմբ.՝ Ա. Ս. Վիրաբյան, Կ. Հ. Խաչատրյան, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2009:

24. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Զաղարական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000:

25. Le Statute International de l'Arménie, Dictionnaire Diplomatique, Académie Diplomatique Internationale, t. vol 1, p. 197, 1934.

26. «Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke». Herausgegeben und Eingeleitet von Dr. Johannes Lepsius. Der Tempelverlag in Potsdam, 1919:

27. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919:

28. Birinci Dünya Savaşı ve Azerbaycan (Osmanlı Arşiv belgeleri), Istanbul, 2018:

3. Մենագրություններ

1. **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997:

2. **Ավետիսյան Հ.**, Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թվականի մայիս, Երևան, 1998:

3. **Ա-Պ-ո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)**, Հայութեան երկունքը, Եր., 2014:

4. **Քայբուրդյան Վ.**, Քրդերը, Հայկական հարցը և հայքրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008:

5. **Քոբեան Բ.**, Հայաստան. միջազգային դիւանագիտութիւնը եւ ԽՍՀՄ-ը, Հ. 1, Երևան, 2018:

6. **Քաբալեան Ա.**, Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959:

7. **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967:

8. **Զոհրաբյան Է.**, Ազգամիջյան կռիվները Երևանի մահանգում, Երևան, 2000:

9. **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից, Պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէյրութ, 1956:

10. **Լեո**, Անցյալից, Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց. – Հայ հեղափոխական դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. – Հեղափոխություն, Թիֆլիս, 1925:

11. **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930:

12. **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2010:

13. **Հայրունի Ա.**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, ԵՊՀ, 2013:

14. **Մելիքյան Վ.**, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997:

15. **Մելիքյան Վ.**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Եր., 2010:

16. **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

17. **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Երևան, 2004:

18. **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., 2011:

19. **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր, Թեհրան, 1982:

20. **Սարգսյան Ե.**, Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994:

21. **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետության կազմութեան մէջ, Պեյրոթ, 1966:

22. **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձտյան, Երևան, 2016:

23. **Սիմոնյան Հ.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ., Երևան, 1996:

24. **Սիմոնյան Ա.**, Ջանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ., Եր., 2017:

25. **Չրազեան Ա.**, Հայաստանի հանրապետութիւն, Փարիզ, 1928:
26. **Авалов З.**, Независимость Грузии въ международной политикѣ 1918-1921 г.г., воспоминанія. Очерки. Paris, 1924:
27. **Завриев Д.**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947:
28. **Людendorф Э.**, Мои воспоминания о войне 1914-1918 г.г., (Военные мемуары), Москва, Вече, 2014:
29. **Петросян Г.**, Отношения Республики Армения с Россией (1918 -1920 гг.), Ереван:
30. **Пипия Г.**, Политика Германии в Закавказье в 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971.
31. **Пипия Г.**, Германский империализм в Закавказье 1910-1918 гг., Москва, 1978:
32. **Ставроский А.**, Закавказье после октября, Москва-Ленинград, 1925:
33. **Туманян М.**, Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2012:
34. **Naki Keykurun**, Azerbaycan istiklal mücadelesinden hatıralar (1905-1920), İstanbul, 1998:
35. **Serpil Sürmeli**, Türk-Gürcü İlişkileri (1918-1921), Ankara: AKDITYK Atatürk Araştırma Merkezi, 2001:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաշիձե Ա. - 12

Աբդուլ Համիդ - 80

Ա-Դոմ-185, 192

Ախունդ Մոլլա Մուհամմեդ

Փիշնամազադե - 85

Ահարոնյան Ա. - 20-21,

101, 116-118, 125, 191-

192, 194, 199, 212-213,

217, 225

Աղբալյան Ն. - 17, 20, 194

Անդրանիկ Օզանյան - 183,

204, 222, 235, 242

Ավարով Ջ. - 114, 127, 129,

133-134, 140-141, 146,

169

Բ

Բեհաեդդին Շաքիր - 139,

230

Բորյան Բ. - 226

Բունիաթյան Մ. - 35

Գ

Գվազալա Գ. - 74-75

Գեգեչկորի Ե. - 24, 38, 87,

90, 93, 95, 97, 107, 150

Գեղևանով - 89

Գյուպտերա Հ. - 227-228

Գրիգոր Զոհրապ - 141-142

Գևորգ Ե. - 163

Դ

Դեմիրխանով Զ. - 134

Դեմիկլին Ա. - 22

Է

Էնվեր - 131, 142, 220, 232-

233

Թ

Թալեաթ - 131, 191, 226,

230, 232-233

Թախտաչյան Ֆ. - 231

Թեֆիկ Սելիմ - 134

Թումանյան Միք.

(Թումանով) - 24, 35, 48,

111

Ժ

Ժորդանիա Ն. - 87, 107,

170, 177

Ի

Ինգորավա Յ. - 78

Իսահակյան Ավ. - 228-229

Իսմայիլ Համի բեյ - 59

Իրազեկ Յ. - 114, 126, 136

Լ

Լասիսիշվիլի Գ. - 65-66, 73,
75

Լեբեդինսկի - 36, 46,

Լենին - 22

Լեո - 14, 35, 43-44, 78-79,
81, 206

Լեվսիուս - 71

Լոսով - 134, 154-155, 158-
161, 164-165, 167-168,
178

Լյուդենդորֆ Է. - 128

Խ

Խաչատրյան Ա. - 17, 27,
29, 32, 36, 58, 96, 99,
201, 203, 224

Խառլամով Վ. - 12

Խաս-Մահմեդով - 73

Խատիսյան Ալ. - 13, 17, 19,
31, 34-35, 42, 47, 49, 52,
57, 59-60, 63-65, 69-72,
74, 76, 79, 82, 86-87, 89,
96-97, 100-102, 109, 114,

126, 129-130, 138-142,
154, 157-158, 161, 164-
165, 170, 177-178, 182,
185, 187, 190-191, 194,
205, 208-209, 212-213,
215, 220, 223, 225, 231-
233, 236-238

Խոնդկարյան Ա. - 108

Ծ

Ծերեթելի Ի. - 66-67, 87, 91,
93

Կ

Կարախան Լ. - 37

Կարճիկյան Խ. - 24, 55, 66,
95, 103-105, 164, 189,
212, 217

Կուլակ - 22

Կորզանյան Գ. - 215

Հ

Հալիլ բեյ (Խալիլ) - 133,
138-142, 147-152, 154,
156-158, 162, 164-167,
171-173, 180-183, 185,
191, 205, 208-209, 211-
212, 220, 223, 231, 233,
236-238

Հայդար բեյ Բամմատով -
134

Հայդարով Ի. - 65

Հաջինսկի Մ. - 56, 74, 133

Հարությունյան Մ. - 93

Հուսեյն Ռաուֆ բեյ - 45-46,
48-49, 51-53, 56, 59-60,
62, 64, 68, 80-82, 88, 97

Մ

Մեհաիս Մ. - 66

Մամիկոնյան Ս - 117

Մանուկյան Ա. - 195

Մեղիվանի - 89

Միկոյան Ա. - 15

Միհրբախ - 112, 134

Մինախորյան Վ. - 154, 166

Ն

Նազարբեկյան Թ. - 28,
187, 193, 195, 215, 217

Նասրեդդին բեյ - 134

Նաքի Բեյքուրու - 173

Նիկողաձե Ն. - 133

Նուրի փաշա-132

Շ

Շահխաթունյան - 19

Շանթ Լ. - 29

Շուլենբուրգ ֆոն Վ. - 134

Շևրի փաշա - 217

Չ

Չխեիձե Ն. - 90

Չխենկելի Ա. - 25, 35, 38,
46, 50-51, 53, 57-58, 63-
64, 67-69, 72, 79-80, 82-
84, 86-90, 94, 97-98, 107,
113-114, 125, 129, 133-
134, 144, 150, 154, 158,
162, 166-168, 170-171,
177

Պապաջանյան Մ.

(Պապաջանով) - 12, 102-
103, 133, 165, 180, 183-
184, 205, 207, 212, 225,
236

Պերկերգև Պ. - 12

Պողոս Նուբար - 199

Պրժնալսկի Մ. - 26

Ջ

Ջաֆարով Մ. - 12

Ջեմալ փաշա - 123, 134,
138, 140-142

Ռ

Ռամիշվիլի Ն. - 87, 95, 107

Ռասուլ-Ջադե Մ. - 133
Ռատֆ բեյ -143, 184, 202,
220
Ռիխիլաձե - 133
Ռուբեն Տեր-Մինասյան -
22, 26, 29, 35

Ս

Սարահ Էդդին - 80
Սասունի Կ. - 13
Սյուրմենի Ս. - 163
Ստեփան Շահումյան - 203

Վ

Վեհիբ Մահմեդ - 26, 32-34,
36, 38, 44, 83-85, 89-90,
110, 113, 125, 133-134,
138, 140-141, 155-156,
162, 164, 182-183 , 190,
205, 209, 212-213, 217-
220, 223-225, 236, 241-
242

Վեզենդոկ ֆոն Օ. - 134
Վիշինսկի Ե.- 27
Վրացյան Ս. - 5, 106, 133,
152, 186, 195-196

Տ

Տեր-Ղազարյան Գ. - 24

Ք

Քաջագունի Հ. - 15, 35,
59-60, 64-66, 69-70, 72,
74, 76, 79, 87, 90, 102-
103, 109, 111, 133, 137,
154, 157, 165, 170, 178,
182, 185, 187, 190-192,
194, 205, 236

Օ

Օղիշելիձե - 32, 36, 170
Օհանջանյան Հ. - 24, 133,
165, 226

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

- | | |
|------------------------------|--|
| Արասթուման - 96 | 135-137, 143-145, 147-150, 152-156, 158-159, |
| Աղլորեջան - 7, 85, 131, 143, | 166-169, 171-172, 177- |
| 147, 153, 172-173, 194, | 181, 183, 186, 190-191, |
| 197, 201, 218, 223, 229, | 201, 209, 221, 240, 243 |
| 240 | Աշտարակ - 214 |
| Ալագյազ (իմա Արագած) - | Ապարան - 213 |
| 213, 215 | Ավստրալիա - 89 |
| Ալաշկերտ - 70 | Ավստրո-Հունգարիա -34, |
| Ալեքսանդրապոլ - 16, 31, | 37, 99 |
| 42, 98, 101, 103, 105, | Արագած - 152 |
| 119, 131, 152, 156-160, | Արարատյան դաշտ - 163, |
| 162-165, 167, 182, 193, | 182, 206 |
| 206, 214-215, 224, 239- | Արդահան - 25, 37-38, 44, |
| 240 | 47, 49, 53, 55-56, 59, 67, |
| Ալեքսանդրեք - 64 | 79, 82-83, 114, 123, 125, |
| Ախալքալաք - 26, 110, 157, | 143, 148, 163, 181 |
| 159, 210, 213, 215, 218 | Արդվին-82, 84 |
| Ախլցխա - 25, 157, 160, 210 | Արփա - 216 |
| Ադ-Բուլաղ - 215-216 | Արփաչայ - 162 |
| Ադդաշի շրջան - 85 | Արևելյան Անատոլիա (իմա |
| Անգլիա - 64, 192, 231 | Արևմտյան Հայաստան) |
| Անդրկովկաս - 12-15, 18- | -71, 221-222 |
| 27, 31-35, 37-38, 41-53, | Արևելյան Հայաստան - 28, |
| 55-71, 73-76, 79-84, 89, | 31, 54, 59-60, 129, 179, |
| 91, 93-95, 97-100, 104- | 185, 198, 200, 221, 239, |
| 118, 123-129, 131-133, | 243 |

Արևմտյան Հայաստան -
16, 28, 31-32, 37-38, 59-
64, 69, 71-76, 124, 127,
130, 140, 185, 200, 202,
206, 221-222, 239

Ք

Քաթունի - 8, 25, 31, 37-38,
44. 47, 49, 53, 55-56, 59,
67, 77-80, 82-83, 86, 89-
90, 92, 96, 100, 106, 114-
115, 123-129, 132-138,
140, 142-144, 147-148,
152, 160, 162-169, 171-
172, 177, 180-185, 190,
194-195, 201-202, 204-
207, 209-211, 214-215,
217, 222, 225, 227, 231-
232, 235-236, 238-239,
241-243

Քաղկաններ - 80, 218

Քայազետ - 69

Քաշ-Ապարան - 167, 182,
211

Քասարգեչար - 152

Քատմանսու - 70

Քարու - 20, 25, 94, 127-128,
131-132, 156, 159, 163,
179, 202-204, 207, 214-
215, 218-220, 240-242

Բելոռուսիա - 37

Բելլին - 146, 155, 159, 162,
178, 226-227

Բիթլիս - 69

Բորչալու - 26, 213, 218

Բրեստ-Լիտովսկ - 37-38,
47, 50-53, 56, 59, 81, 83-
89, 92-95, 98-99, 101-
106, 112-114, 118, 123-
127, 132, 148-152, 158-
159, 161-162, 178, 181-
182, 202, 205, 209, 234

Բուլղարիա - 34, 37, 55, 89,
99

Գ

Գանձակ - 26, 187, 218

Գերմանիա - 33-34, 37, 50,
89, 99-100, 108, 126-
132, 134, 143-147, 158-
162, 165, 169, 171-173,
177-179, 192, 203-204,
209, 226-227, 229, 232,
240

Գյանջալի նահանգ - 85

Գորի - 25

Դ

Դաղստան - 25, 134, 218

Դարալագյազ - 152, 239

Դիլիջան - 204, 216-217,

222

Դուշեթի - 25

Ե

Եվրոպա - 183

Երզնկա - 27-28, 30-32, 163

Երևան - 101, 152, 156, 159,

181-182, 187, 191, 193,

206, 213-215, 217, 231,

236, 239

Երևանի նահանգ - 78

Զ

Զանգեզուր - 26, 152, 218

Զանգիբաթար - 197

Զաքարյալա - 25

Զեթար - 210

Է

Էջմիածին - 152, 157, 163,

182, 193, 206, 215, 218,

236, 239

Էսլանդիա - 37

Էրզրում - 55, 69, 163, 193,

224

Թ

Թավրիզ - 157, 203

Թելավի - 25

Թիանեթի - 25

Թիֆլիս - 11-12, 15, 17, 23-

24, 26, 33, 35, 38, 65, 68,

82, 86, 88, 90, 95-97, 99,

103, 105-106, 109, 113,

116, 119, 133, 142, 146,

152, 160, 170-171, 173-

174, 177, 179, 183, 185-

187, 191, 194-195, 205,

209, 211-213, 217, 236,

239

Թուրքահայաստան - 60,

62, 73, 199

Թուրքիա (Օսմանյան) - 8,

17, 29-35, 37-38, 41-42,

45, 47, 49, 51-54, 56, 59-

64, 66-71, 73-83, 85-86,

89, 91-93, 95, 98-99, 102,

104, 106-109, 112-114,

119, 123-127, 129-132,

134, 137, 140-149, 152-

154, 159, 161-164, 166,

172, 177-185, 190-191,

194, 197, 201-207, 210-

211, 216-223, 225, 227,

229-236, 238-240, 243

Ի

Իրան - 127, 131, 153, 157,

159, 162

Լ

Լիավիս - 37

Լոռի - 110, 239

Կ

Կաղզվան - 79, 239

Կարապետյան - 213

Կարեազինո - 26

Կարին - 36, 224

Կարս - 25, 37-38, 44, 47,
49, 53, 55-56, 59, 67, 78-
79, 81-84, 96, 101, 103,
106, 113-117, 119, 123,
125-127, 131, 143, 148,
152, 159-160, 163, 181,
193, 197, 206, 214-215,
218, 224, 239

Կենտրոնական Ասիա - 153

Կիլիկիա - 64

Կոստանդնուպոլիս - 43, 45,
55, 64, 80, 94, 130-131,
143, 159, 208, 210, 213,
225, 230-232

Կովկաս - 11-13, 17, 23, 27,
29-31, 36-38, 53-55, 57-
58, 96, 104, 138-139,
159-160, 173, 183-184,
219, 232, 237

Կուռլանդիա - 37

Կուր - 218

Հ

Համամլու - 214

Հայաստան - 11, 17, 27, 30,
70, 73, 147, 152, 159-160,
165-166, 177-178, 181-
183, 185, 196-201, 204,
208, 210-216, 218-222,
228-243

Հարավային Կովկաս - 85,
202, 210, 221, 227

Հյուսիսային Իռլանդիա -
153

Հյուսիսային Կովկաս - 134,
196, 204

Ղ

Ղազախ - 26, 204, 216, 218

Ղարաբաղ - 152

Ղարաբիլիսա - 162-163,
167, 182, 192, 211, 217,
223-224, 239

Ճ

Ճիաթուրա - 128-129

Մ

Մերձավոր Արևելք - 126

Միջին Ասիա - 127, 204,
219

Մոսկվա - 20, 112, 134

Մուշ - 69-70

Ն

Նախիջևան - 152, 197, 218,
239

Նոթաներ - 209, 211-212,
215, 231

Նոր Բայազետ - 218, 239

Նոր Նախիջևան - 20

Շ

Շուշի - 15, 26

Շարուր - 152, 197, 216,
218, 239

Շիրակ - 182, 206

Շվիցերիա - 228

Պ

Պարսկաստան - 214, 218

Պետրոգրադ - 19-20,

Պոլիս - 232

Ջ

Ջաջուռ - 163

Ջավանշիր - 26

Ջուլֆա - 131, 152, 156-160,
162, 164, 167, 214, 216,
224, 240

Ռ

Ռոստով - 20

Ռումինիա - 128

Ռուսաստան - 11, 15, 17-
18, 22-23, 27, 29, 31-34,
37-38, 41, 50-52, 56, 64,
66, 71, 99, 104-105, 107-
112, 115, 125, 132, 134,
138-139, 142-143, 145,
156, 173, 196-200, 229-
230, 235, 243

Ս

Սարդարապատ - 167, 182,
211, 223-224

Սարիղամիշ - 83, 163, 239

Սդնադ - 25

Ստամբուլ - 85, 112

Սուխումի - 25

Սուրմալու - 152, 157, 197,
214, 239

Սևանա լիճ - 152, 206

Սև ծով - 25, 27, 55

Վ

Վան - 70, 218

Վանա լիճ - 27

Վեդի - 197

Վիեննա - 130

Վորոնցովկա - 209

Վրաստան - 7, 29, 72, 87,
96, 108, 128-129, 131,

142-147, 161, 168-172,
177-180, 190, 194-195,
201, 209-210, 214, 228-
229, 231, 240

Տ

Տաճկահայաստան -106
Տաջկաստան - 55, 104, 226
Տիգրիս -70
Տրապիզոն - 8, 28, 31, 35,
37-38, 41-48, 50-51, 56-
58, 62-63, 65, 67-69, 77,
80, 85, 91, 94, 97-99, 102,
104, 114, 124-126, 128-
129, 136-137, 140, 143,
148-151, 154-155, 184,
201-202, 227

Ու

Ուկրաինա - 37, 128
Ուրմիա - 28
Ուրֆա - 64

Փ

Փամբակ-110
Փարիզ -197, 199
Փոքի -146, 169, 172

Ք

Քուրայիս - 96, 142, 152,
181

Օ

Օլթի - 25, 79

Ֆ

Ֆրանսիա-64, 192, 231

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	7
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917	
Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ	
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ	9
1. Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային	
խորհրդի ստեղծումը (1917 թ. փետրվար-հոկտեմբեր)	11
2. Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական	
դրությունը (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. փետրվար)	22
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԹՈՒՐԲ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ	
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՊԻՋՈՆՈՒՄ.	
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ	39
1. Տրապիզոնի բանակցություններում թուրքերի կողմից	
Անդրկովկասն անկախ հռչակելու շարժառիթներն ու	
նպատակները. Հայկական հարցի արծարծումները	41
2. Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը	
Տրապիզոնի բանակցություններում	
(1918 թ. մարտ-ապրիլ)	77
3. Պատերազմի և հաշտության հարցը Ալեքսանդրոպոլի	
արտակարգ խորհրդակցությունում. Անդրկովկասի	
անկախացումը (1918 թ. ապրիլ)	98
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ԲԱԹՈՒՄՈՒՄ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԵՎ ԱՆԿԱԽ	
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ. ԵՐԵՔ ԱՆԿԱԽ	
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ	121

1. Անդրկովկասի արտաքին քաղաքական դրությունը Բաթումի դիվանագիտական բանակցության նախօրեին (1918 թ. ապրիլ)	123
2. Անդրկովկասյան պետության կազմալուծումը. երեք անկախ հանրապետությունների ստեղծումը (1918 թ. մայիս).....	133
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼԸ.....	175
1. Հայոց անկախ պետականության կերտումը (1918 թ. մայիս).....	177
2. 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագիրը, հունիսի 4-ի հաշտության դաշնագիրը. Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները	201
PE3IOME.....	244
RÉSUMÉ	246
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	248
Անձնանունների ցանկ.....	254
Տեղանունների ցանկ.....	258

ԳԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ. ՀԱՅՈՑ ԱՆԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ
(1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1918 Թ. ՀՈՒՆԻՍ)**

ГЕГАМ АРУТЮНОВИЧ ПЕТРОСЯН

**ЗАКАВКАЗЬЕ В ДИПЛОМАТИЧЕСКИХ
ПЕРИПЕТИЯХ: СТАНОВЛЕНИЕ АРМЯНСКОЙ
НЕЗАВИСИМОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ
(февраль 1917 - июнь 1918 г.г.)**

GEGHAM PETROSYAN

**ARMENIAN INDEPENDENCE STATEHOOD
(February 1917- June 1918)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կեսոյանի

Տպագրված է «Լաքի Փրինտ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Հ. Հակոբյան 3

Ստորագրված է տպագրության՝ 10.12.2018:
Չափաը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 16.75 + 12 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



Պետրոսյան Գեղամ Հարությունի

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարանի միջազգային
հարաբերություններ ֆակուլտետի դեկան*

Պրոֆ. Գ. Պետրոսյանը ութ մենագրության և շուրջ ութսուն գիտական հոդվածների հեղինակ է: Դրանցից հիշարժան են հատկապես «Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.)» (Եր., 2002), «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.)» (Եր., 2006), «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.)» (Եր., 2011, ռուս.՝ Եր., 2012) մենագրությունները: Նա մասնավարժական հարուստ փորձ ունեցող առաջատար դասախոս է, միջազգային հարաբերությունների ֆակուլտետում երկար տարիներ վարում է մասնագիտական դասընթացներ:

Էլ. փոստ՝ gegham.petrosyan@ysu.am